ՀՐԱՆՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ, ԲՈՆԱԳԱՂԹԵՐ ՈՒ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ 1988-1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԵՐԵՎԱՆ

2010

ՀՏԴ 941 (479+.25) : 325
ԳՄԴ 63.3 (2Հ) + 66.3 (2Հ)
Բ 242

Բաղդասարյան Հ.
Բ 242 Հայերի էթնիկական մաքրում, բռնագաղթեր և ցեղասպանություն Ադրբեջանում 1988-1991 թվականներին / Հ. Բաղդասարյան. - Եր.: Տիգրան Մեծ, 2010. - 260 էջ:

ԼՂՀ Մարզի խորհրդա-ադրբեջանական վայրի շրջափակման տարիներին (1988-1991 թթ.) ինքնորոշման իրավունքների համար պայքարի ելած ղարաբաղցիներին «խրատելու» սև վարագույրի տակ քողարկված՝ Ադրբեջանի Հանրապետությունը խորհրդային բանակի, նրա ՆԳՆ հատուկ ստորաբաժանումների և իր օմոնականների ձեռքերով ամբողջ հանրապետության բնակավայրերում ապրող բնիկ հայերի լայնամասշտաբ էթնիկական մաքրումներ, բռնագաղթեր ու ցեղասպանություն է կատարել:

Հեղինակն իր այս գրքում ընթերցողների ուշադրությունը սևեռում է Ադրբեջանի Հանրապետության այդ միջնադարյան բարբարոսության անժխտելի փաստերի վրա և իր բողոքի ձայնն է բարձրացնում նրա կազմակերպիչներին ու կատարողներին միջազգային պատասխանատվության ենթարկելու համար:

ՀՏԴ 941(479+.25) : 325
ԳՄԴ 63.3 (2Հ) + 66.3 (2Հ)

ISBN 978-99941-0-397-3

Խոնարհվելով
ԼՂԻ Մարզն ազերիների լծից ազատագրելիս զոհված
ազատամարտիկների տապանաքարերի առաջ,
խորին ակնածանքով այս գիրքը նվիրում եմ նրանց
անթառամ հիշատակին:

Հեղինակ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գնալով դեպքերի ու իրադարձությունների թարմ հետքերով, ես այս գիրքը գրել եմ ԼՂԻ Մարզի խորհրդա-ադրբեջանական վայրենի շրջափակման տարիներին (1988-91թթ.):

1991թ. օգոստոսին «Խորհրդային Ղարաբաղ» մարզային թերթի խմբկոլեգան պլանավորել է բռնագաղթերի մասին իմ հոդվածները՝ որոշ կրճատումներով հրապարակել թերթի սեպտեմբեր ամսի համարներում: Սակայն օգոստոսի վերջին արտակարգ դրության գրաքննիչները, արտահերթ կարգով մտնելով խմբագրություն և ստուգումներ կատարելով՝ բոլոր մեքենագրած և ձեռագիր նյութերին ջղագրգիռ նայելով դես ու դեն են շպրտել: Նրանց ուշադրությունից չվրիպեց նաև մի քրքրված թղթապանակում ժողոված իմ հոդվածները:

-Ի՞նչ բովանդակության հոդվածներ են սրանք,-դիմելով ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ Գեղամ Բաղդասարյանին՝ հարցրեց կարմիր գլխարկավորների ավագը:

-Դրանք, ընկեր լեյտենանտ, գիտաֆանտաստիկ ու հեքիաթային ժանրի գործեր են, որոնք պլանավորել ենք հրապարակել թերթի առաջիկա համարներում, որ մեր բնակիչները, դրանք ընթերցելով, մոռանան մեր մարզի այս ժամանակավոր դժվարությունները և նորից համախմբվեն մեր հարազատ ու հոգատար կուսակցության շուրջը՝ երկրամասի առաջ ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրներն անթերի կատարելու համար,- ծուղակից դուրս գալու և ձեռագրերը փրկելու համար հորինեց սրամիտ լրագրողը:

-Պրավիլնո,- թղթապանակը ուժգին շպրտելով հատակին ասաց գրաքննիչների ավագը:

Ընդհանրացնելով ստուգման արդյունքները, նա խմբագիր Մ. Հովհաննիսյանին նորից խիստ նախազգուշացրեց, որ մարզի Շուշվա ու

Հադրութի շրջանների գյուղերի բռնագաղթերի մասին ոչ մի բան չիրապարակել, այլապես կդադարեցվի թերթի հրատարակումը...

Ըստ երևույթին, մարզի Շուշվա ու Հադրութի շրջանների 24 գյուղերի բռնագաղթերի առթիվ արտասահմանյան երկրների պետական և հասարակական գործիչների, մամուլի ու հեռուստատեսության արձագանքները ներգործել են կարմիր Կրեմլի և նրա կամակատար Ադրբեջանի վրա, և այդ իսկ պատճառով նրանք մարզի պարետից պահանջել էին, որ գրաքննությունը ուժեղացնի, որպեսզի արտասահմանը մարզից, այսինքն՝ սկզբնաղբյուրից ոչ մի ինֆորմացիա չստանա: Արտասահմանի այդ ճնշման տակ նրանք ստիպված են եղել ամբողջ ԼՂԻ Մարզի բռնագաղթեցման իրենց ֆաշիստական ծրագրի կատարումը կիսատ թողնել...

Իմանալով այդ գրաքննության մասին, ես իմ հոդվածները փրկելու նպատակով շտապեցի խմբագրատուն: Երևի բարի աստղի ժամ էր, որ խմբագրության շենքը շրջապատած զինվորների ավագը իմ անցագրին նայելով, թույլ տվեց ներս մտնեմ, թեև շրջափակման կարմիր ժապավենը դեռ չէին հանել: Ներսում ոչ ոք չկար, կարծես օդային հերթական տագնապից հետո բոլորը դարձյալ նկուղներ էին շտապել: Բոլոր աշխատասենյակների դռները բաց էին: Նրանց հատակներին բազմաթիվ մեքենագրած ու ձեռագիր նյութեր կային թափթփված ու տրորված:

Ես նրանց միջից հավաքեցի իմ հոդվածները, թաքցրի իմ ներքնաշորերում և շտապեցի դուրս...

Շրջափակման և պատերազմական պայմաններում եմ գրել նաև «Արմատների կանչը» դրաման, որը իր բովանդակությամբ սերտորեն առնչվում է գրքի նյութերի հետ, միայն այն տարբերությամբ, որ Ադրբեջանը խորհրդային տարիներին իր հանրապետության հայ բնակիչների էթնիկական մաքրումն ու «սպիտակ եղեռնը» կատարում էր ինտերնացիոնալիզմի խայտաբղետ փետուրներով նրբորեն քողարկված ձևերով, իսկ 1988-91 թվականներին՝ հիտլերյան ֆաշիզմին գերազանցած դաժանությամբ: Դրա համար նպատակահարմար եմ գտել այն ևս զետեղել սույն գրքում:

Բիշքեկի զինադադարից հետո Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան թատրոնի ռեժիսորը և մի խումբ դերասաններ, ծանոթանալով իմ այս դրամային, պլանավորեցին այն բեմականացնել, բայց ես չկարողացա դրա համար անհրաժեշտ գումարը հայթայթել, որի պատճառով էլ այն ժամանակ նրա բեմականացումը չիրականացավ: Այդ նույն պատճառով էլ մինչև օրս ձգձգվեց սույն գրքի հրատարակումը:

Կարծում եմ, որ մեր պետական ու կուսակցական գործիչները, դիվանագետներն ու լրագրողները այս գրքի փաստերը ևս կօգտագործեն Թուրքիայի ու նրա դամը պահող Ադրբեջանի պետական քարոզչական մեքենաների ձայները խլացնելու համար, մանավանդ որ նրանք իրենց և այլ թուրքալեզու ժողովուրդների 10-15 քաղաքացիների նույնիսկ մասսայական անկարգություններ կատարելիս պատահաբար զոհվելը ցեղասպանություն են որակում և իրենց պառլամենտներում էլ հաստատում ու դրանց շուրջը քաղաքական քարոզարշավ կազմակերպում, որպեսզի աշխարհին ապակողմնորոշեն, որ իրենց չդատապարտեն հայերի՝ օսմանյան Թուրքիայում և Ադրբեջանի Հանրապետությունում 1915-1923 և 1988-1991 թվականների պետական մասշտաբներով կազմակերպված էթնիկական մաքրումների, բռնագաղթերի ու ցեղասպանությունների համար: Այդ նպատակով նրանք ճարպկորեն շահարկում են իրենց նավթն ու գազը, դրանք իրենց երկրների տարածքներով դեպի Արևմուտք փոխադրող խողովակաշարերը, աշխարհի առյուծների դաշնակից ու նրանց ռազմական բլոկի անդամ լինելը ու համարձակ ամենուր պղտորում են ջրերը, ուրիշների աչքերի փշերը լկտիաբար ի ցույց դնում, բայց իրենց աչքերի գերանները քողարկում...

Սակայն այդ և այլ մանևրներով նրանց չի հաջողվի, որ աշխարհի աչքերը ընդմիշտ փակեն, նրա պետական ու հասարակական գործիչների գլուխները իրենց յուրահատուկ դիվանագիտությամբ թմրեցնեն, որպեսզի իրենք, ինչպես ցարդ, այնպես էլ այսուհետև խուսափեն պատասխանատվությունից և միջազգային դատից, քանզի երբ բացվում է գարունը, ձնաշերտերը հալչում են, և նրանց տակ գտնվող բոլոր տեսակի կեղտերը բացվում են...

Աշխարհի բոլոր երկրների մարդկության հանդեպ կատարած պետական հանցագործությունները բացահայտող գարունները դեռ առջևում են:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՐԶԻ ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ 14 ԳՅՈՒՂԵՐԻ 1991 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ-ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻ ԲՌՆԱԳԱՂԹԵՐԸ

Որպես նախաբան

Կոմունիստական ռեժիմի վերջին շնչում կարմիր Կրեմլը, զգալով, որ ղարաբաղյան ազգային-ազատագրական խաղաղ բնույթ կրող շարժումը սասանում է խորհրդային բռնապետության խարխուլ հիմքերը, իր ՆԳՆ 100 հազարանոց բանակը տրամադրեց Ադրբեջանին այն թուրքական դաժան մեթոդներով ճնշելու համար: Իսկ ինտերնացիոնալիզմի խայտաբղետ լոզունգներով քողարկված, բայց իրականում «Թուրքի բարեկամը միայն թուրքը կարող է լինել» կարգախոսով հակահայկական գործեր կատարելու ասպարեզում իր ավագ եղբոր պես վարպետացած՝ Ադրբեջանը խորհրդային այդ բանակով և իր 60 հազարանոց օմոնականներով ու զինված ուժերով 1988-91 թվականներին, այսինքն՝ ընդհուպ մինչև ԽՍՀՄ-ի անփառունակ վախճանը, կրակե օղակով շրջափակեց ԼՂԻ Մարզը և արտակարգ դրության օրենքները վահան դարձնելով՝ արգելեց արտասահմանյան երկրների լրագրողների ու հասարակական գործիչների մուտքն այդ ռեգիոնը ու աշխարհի աչքերից հեռու, «փակ դռների» ռեժիմի պայմաններում ղարաբաղցի «ապստամբներին» պատժելու սև վարագույրի տակ իր հանրապետության 600 հազար (պաշտոնական փաստաթղթերում այդ թիվը հատուկ նպատակներով փոքրացվում էր) բնիկ հայերի լայնամասշտաբ էթնիկական մաքրումներ, բռնագաղթեր ու ցեղասպանություն կատարեց...

Ինչու՞, ի՞նչ է կատարել իր ապուպապերից ժառանգած հայոց հինավուրց այդ երկրամասում դարեր շարունակ ապրող, ազատաբաղձ հայ ժողովուրդը: Մ. Ս. Գորբաչովի վերակառուցման ու դեմոկրատիայի կարգախոսով գայթակղված ղարաբաղցիները ԽՍՀՄ-ում առաջինն են խորհրդային բռնապետության ու Ադրբեջանի բացահայտ ազգային խտրականության դեմ պայքարի դրոշ պարզել: Ան-

տարակույս, անցած 70 տարիների ընթացքում խորհրդային բռնապետությունից, ստալինյան արյունոտ տեռորից յուրովի տուժել են ԽՍՀՄ-ի բոլոր ժողովուրդները և այդ թվում՝ մանավանդ ռուսները: Սակայն բոլշևիկների ռեժիմից, այնուամենայնիվ, բոլորից շատ հայերեն են վնաս կրել: Մեր ընթերցողներին հիշեցնենք, որ դարասկզբի 18-23-ական թվականներին բոլշևիկները, երբ դեռ գտնվում էին պետական գործունեության խակ էտապում, անտեսելով ցարական կայսրության փոքր ժողովուրդներին թուրքական բարբարոսություններից պաշտպանելու դարավոր փորձը, անսպասելիորեն սեղմելով դեպի իրենց պարզած թուրքական պետական գործիչների ձեռքերը, ընկան քեմալականների լարած թունոտ թակարդի մեջ, թեև աշխարհն արդեն դատապարտում էր նրանց իրենց արյունոտ գործերի և մանավանդ հայերի 15 թվականի ցեղասպանության համար: Ավելացնենք նաև, որ որպես 1-ին համաշխարհային պատերազմում պարտված, օսմանյան արնաշաղախ կայսրությունը կորցրած պետության՝ Թուրքիային Սևրի միջազգային պայմանագրով նաև զրկել էին նրա Եվրոպական մայրցամաքից զավթած տարածքներից, Արևմտյան Հայաստանի պատմական տարածքների մի մասը վերադարձրել Հայաստանի Հանրապետությանը և նրան ազատել թուրքական շրջափակումից՝ Սև ծովի Տրապիզոն քաղաքի տարածքներով կապել Եվրոպայի հետ: Թուրքերը, բնական է, չէին կարող ընդունել այդ հայամետ պայմանագիրը և դռնեդուռ ընկնելով՝ փորձում էին միջազգային հենակներ ձեռք բերել այդ պայմանագիրը անվավեր համարելու համար, բայց ոչ մի պետություն նրան չէր պաշտպանում: Իրենց քաղաքական հոտառությամբ զգալով, որ այդ բարդ պայմաններում իրենց միայն բոլշևիկները կարող էին աջակցել, մանավանդ որ աշխարհը դեռ չէր ընդունում նրանց պետական հեղաշրջումը, թեև նրանք դա հորջորջում էին հեղափոխություն անվամբ: Ուստի նրանք անհապաղ մերձեցան բոլշևիկներին, նրանց գայթակղեցին Թուրքիայում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի պատրանքով, կարմիր Մոսկվային հավատարիմ լինելու իրենց պատրաստակամությամբ, սոցիալիստական Ռուսաստանի կապիտալիստական բլոկադայի դեմ պայքարելու իրենց հաստատակամությամբ, Ափշերոնի թերակղզու նավթի ու գազի անսպառ պաշարներով: Եվ այդ ֆոնի վրա նրանք բոլշևիկներին հակահայկական թույներ սրսկելով, պահանջեցին, որ Հայաստանի Հանրապետությանը խիստ պատժեն, քանի որ նա իբրև ոչ թե դեպի սոցիալիստական Մոսկվան է ձգտում, այլ դեպի իմպերիալիստական Եվրոպան, նրա Ղարսի, Նախիջևանի, Ղարաբաղի գավառները, ինչպես նաև Հյուսիսային Արցախի հայկական շրջանները բռնակցեն Թուրքիային ու Ադրբեջանին, այլապես Հայաստանը իր այդ գավառներն ու Տրապիզոնի միջանցքը կտրամադրի իմպերիալիստական Եվրոպային կարմիր Մոսկվայի ու նրա հավատարիմ բարեկամներ Թուրքիայի ու Ադրբեջանի դեմ ռազմական գործողություններ ծավալելու համար:

Հալած յուղի տեղ ընդունելով երկու թուրքական պետությունների դիվանագետների ու պետական գործիչների այդ խարդախ ու խորամանկ մանևրները, բոլշևիկները ոչ միայն բոլոր հարցերում ընդառաջեցին թուրքերին, այլև նրանց տոննաներով ոսկի, զինամթերք, հանդերձանք, հատուկ ռազմական ջոկատներ տրամադրեցին, որոնցով քեմալականները գոտեպնդվելով՝ չեղյալ համարեցին Սևրի պայմանագիր, ֆրանսիացիներին վռնդեցին Կիլիկիայից, Ղարսի նահանգը բռնագրավեցին Հայաստանից, իսկ Նախիջևանի, Ղարաբաղի մարզերը, ինչպես նաև Հյուսիսային Արցախի տարածքների հայկական շրջանները, որտեղ դարասկզբին ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը հայեր էին՝ բռնակցեցին Ադրբեջանին, Թուրքիային էլ Նախիջևանով միջանցք տվեցին դեպի Բաքու:

Հայերը, բացի մի քանի հայ բոլշևիկներից, չէին կարող հաշտվել իրենց պատմական հայրենիքի այդպիսի վայրի անեքսիաների հետ , ճիշտ այնպես, ինչպես ո՛չ մի ընտանիք չի հաշտվի այն մտքի հետ, երբ նրա զավակներին բռնագրավեն ու նվիրեն այլ ընտանիքների: Սակայն բոլշևիկյան Մոսկվան իր հայ կոլեգաներին կերակրում էր սոցիալիստական հեղափոխության համաշխարհային հաղթանակի սին գաղափարներով, նրանով, որ շուտով աշխարհի բոլոր երկրները ապրելու են կոմունիստական դրոշի տակ, և այլևս նրանց միջև սահմաններ չեն լինելու: Եվ այդ թվում այլևս սահմաններ չեն լինելու նաև Հայաստանի ու Թուրքիայի միջև: Բոլշևիկների այդ սին ֆանտազիաներին նույնիսկ երեխաները չէին հավատում: Պատմության ընթացքը ցույց տվեց, որ 18-23 թվականներին Թուրքիային

աջակցելու իրենց խակ քաղաքականությամբ բոլշևիկները մի քոռ կոպեկ անգամ չեն շահել, ընդհակառակը, նրանք իրենց գրկում մի սառած օձ են տաքացրել, որը հետագայում, մտնելով աշխարհի ավելի հզոր առյուծների փեշերի տակ՝ ընդհուպ մինչև ԽՍՀՄ-ի վախճանը անընդհատ խայթում էր սոցիալիստական Մոսկվային, որպեսզի նրա կարմիր բլոկադայից ազատագրեր թուրքալեզու ժողովրդներին: Իսկ Հայրենական պատերազմի տարիներին իր 26 դիվիզիաներ կենտրոնացնելով Հայաստանի սահմանամերձ տարածքներում, սրտատրոփ սպասում էր ԽՍՀՄ-ի պարտությանը, որպեսզի նրանից զավթեր Անդրկովկասը և Միջին Ասիան:

Իսկ հայերը, երբ ամեն առիթով հարց էին բարձրացնում, մասնավորապես՝ ԼՂԻ Մարզը Հայաստանին վերադարձնելու մասին, կարմիր Կրեմլը կատաղում էր, այդ մասին անգամ շշուկով խոսողներին դաժանորեն պատժում, զրկում աշխատանքից, Սիբիր աքսորում: Մոսկվան ու Բաքուն ԼՂԻ Մարզի ղեկավարների ձեռքերով, մասնավորապես, դաժան դատաստան տեսան 60-ական թվականներին, երբ մի խումբ մտավորականներ, գրողներ Բագրատ Ուլուբաբյանի ու Բոգդան Ջանյանի գլխավորությամբ այդ մասին բաց նամակ են հղել Լ. Ի. Բրեժնևին: Իսկ Ադրբեջանը, հաճոյանալով Կրեմլին՝ հայոց հինավուրց գավառներում ու շրջաններում ազգային խտրականության գերանդիներով էթնիկական մաքրումներ կատարելով՝ նոսրացնում էր բնիկ հայերին: «Սպիտակ եղեռնը» 50-60 տարվա ընթացքում Նախիջևանի մարզում, Հյուսիսային Արցախի հայկական շրջաններում հաջողությամբ պսակվեցին: Իսկ ԼՂԻ Մարզում իրենց նախնիների հողին ու արմատներին կառչած հայրենասեր ղարաբաղցիները օրհասական գոտեմարտ էին մղում Բաքվի իշխանությունների ազգային անզիջում խտրականության դեմ: Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղարի պաշտոնում աշխատելիս Հ. Ա. Ալիևը ԼՂԻ Մարզի ադրբեջանցիների թիվը մեծացրել է 14-15%-ով, իսկ բնիկ հայերի քանակը կրճատել՝ 15-20%-ով: Այդ փաստարկներով Հ. Ալիևը 1990 թվականին ռեալիկ է տվել գրող, «Ազգային ճակատ» ազգայնամոլ կուսակցության ղեկավար պաշտոններից մեկում աշխատող Բայրամ Բայրամովին, որը հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջաններից մեկում փորձում էր Հ. Ալիևին մեղադրել ԼՂԻ Մարզի նկատմամբ ցուցաբերած «հայրական մեծ հոգատարության» մեջ:

Եթե Հ. Ալիևի հոգևոր հայրը՝ շքանշանների երկրպագու Լ. Ի. Բրեժնևը, ևս 2-3 տարի ապրեր, ապա ԼՂԻ Մարզի բնիկ ժողովուրդը կխորտակվեր Ադրբեջանի տարբեր շրջաններից զանգվածաբար դեպի մարզի բնակավայրեր ներխուժող ազերիների հոսանքի պղտոր ջրերի ու քրտինքների մեջ: Աստված հայերի կողմն է եղել, որ երկարակյաց բրեժնևների այդ շառավիղին շուտ է տարել իր մշտական տունը՝ Լեռնային Ղարաբաղի լրիվ հայաթափման ծրագիրը թողնելով Հ. Ալիևի կոկորդում: Եվ քանի որ ղարաբաղցիները այլևս չէին կարող մի քայլ անգամ զիջել՝ վերակառուցման առաջին իսկ օրերից ոտքի են ելել, խորապես համոզված լինելով, որ Մ. Ս. Գորբաչովի սկսած կուրսը կեղծ է և հետևաբար բոլոր պրոբլեմները, այդ թվում՝ ազգերի ինքնորոշումը լուծվելու են դեմոկրատական, ցիվիլիզացիոն ճանապարհով: Ուստի նրանք պահանջել են չեղյալ համարել ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի 1921թ. հունիսի 5-ի հակասահմանադրական որոշումը (այդ որոշումը օրենքի ուժ չուներ), որով հայաբնակ ԼՂԻ Մարզը (այն ժամանակ նրա բնակչության 94%-ը հայեր էին) բռնակցվել է Ադրբեջանին և հանրաքվեի արդյունքներով որոշել մարզի պատկանելության պրոբլեմը:

Գորբաչովյան Կրեմլը ու Ադրբեջանը տառացիորեն սրերով են դիմավորել մարզխորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի նստաշրջանի պատմական որոշումը, որը խնդիր է դրել հայկական մարզը դուրս բերել Ադրբեջանի կազմից: Կարմիր Կրեմլը փոխանակ դեմոկրատական մեթոդով լուծելու այդ պրոբլեմը, կրակի վրա բենզին է թափել, նորից դիմել ահաբեկչության ու խարդախության իր հին զինանոցին ու ղարաբաղցիներին ստիպել, որ հրաժարվեն իրենց սահմանադրական պահանջի համար մղվող պայքարից, որի համար խոստացել է 500 000 ռուբլի տրամադրել մարզին իր սոցիալ-տնտեսական պրոբլեմները լուծելու համար: Սակայն ղարաբաղցիները, գիտակցելով, որ նահանջելը մարզի մահն է, այս անգամ, բարեբախտաբար, կարմիր Կրեմլի ու Բաքվի խոստումներով չեն խաբվել ու մի նոր թափով շարունակել են իրենց պայքարը: Գորբաչովյան Կրեմլը, կատաղելով ղարաբաղցիների այդպիսի համառության դեմ, Ադրբե-

ջանի թելադրանքով դիմել է երիտթուրքերի փորձին, նրան թույլ տվել, որ հայերին խրատելու համար իր որևէ բնակավայրում կազմակերպի նրանց ջարդեր, արյունահեղություն, որպեսզի ղարաբաղցիները, վերջապես, հրաժարվեն իրենց պայքարից և անցած 70 տարվա պես խաղաղ ապրեն «ինտերնացիոնալ» ու «հոգատար» Ադրբեջանում: Կրեմլի այդ ադրբեջանամետ դիրքորոշումից արծվի թևեր առած Բաքուն, որ արդեն նախօրոք պետական մասշտաբներով պատրաստվել է այդ բարբարոսությանը, թուրքական ձևով 1988թ. փետրվարի 25-ից մինչև 29-ը իր Սումգայիթ քաղաքում կազմակերպեց հայերի վայրենի ջարդեր, ցեղասպանություն, որի ընթացքում զոհվեցին հարյուրավոր խաղաղ բնակիչներ: Հայերին խրատելու խորհրդա-ադրբեջանական այդ բարբարոսությունը ցնցեց ամբողջ աշխարհը, որը իր հուժկու ձայնով պահանջեց դատապարտել այդ ցեղասպանության կազմակերպիչներին ու կատարողներին, բայց գորբաչովյան Կրեմլը անտարբեր մնաց իր ժողովրդի դեմ կատարած այդ ոճրագործության հանդեպ և նույնիսկ մարդկային ցավակցություն չհայտնեց զոհվածների հարազատներին:

Սակայն Սումգայիթի ջարդերը, միաժամանակ, ԽՍՀՄ-ի ժողովուրդներին համոզեց, որ Կրեմլի նոր լիդերը ի վիճակի չէր խոսքից գործի անցնելու, երկիրը, իրոք, դեմոկրատացնելու համար: Հետևաբար իրենք պետք է ղարաբաղցիների օրինակով ոտքի ելնեն կոմունիստական ռեժիմի դեմ, պաշտպանեն իրենց իրավունքները: Այդպես սկսվեցին խորհրդային կայսրության փլուզման առաջին քայլերը: Այո՛, Սումգայիթի ջարդի կազմակերպիչների ու կատարողների անպատժելիության հետևանքով ԽՍՀՄ-ում սնկի աճի արագությամբ տարածվեցին հանցագործությունների, զանգվածային մարդասպանության, կողոպուտի, թալանի, այլ բնույթի ծանր հանցագործությունների վարակիչ ալիքներ: Կարմիր Մոսկվան գլուխը կորցրեց: Կոմունիստական ռեժիմը կանգնեց խոր վիհի եզրին:

Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովը հանրապետության Կոմկուսի Կենտկոմի 2-րդ քարտուղար Վիկտոր Պոլյանիչկոն Կրեմլից պահանջում էին բռնկված հրդեհը բենզինով մարելու թուրքական տարբերակի կիրառումը: Նրանք ԽՍՀՄ-ի ժողովուրդների ազգային զարթոնքի ու կոմունիստական ռեժիմից ազատագրվելու նրանց բուռն, անզիջում պայքարի պատճառը համարելով ղարաբաղյան շարժումը, կենտրոնից պահանջում էին զենք ու զրահ՝ ԼՂԻ Մարզի հայերին խրատելու, նրա շրջափակումն ուժեղացնելու, էկոնոմիկան լրիվ խաթարելու, որպեսզի սովի սպառնալիքներով ստիպեն ղարաբաղցիներին նահանջելու: Հավատալով նման գործիչներին և կոմունիստական ռեժիմի փրկությունը տեսնելով միայն ղարաբաղյան շարժումը խեղդելու մեջ, Մոսկվան պարում էր Ադրբեջանի նվագի տակ, նրան զինում ժամանակակից զենքի տարբեր տեսակներով, իսկ ազերիները այդ զենքով մի կողմից նախապատրաստվում էին լայնամասշտաբ պատերազմի, մյուս կողմից՝ տառացիորեն կողոպտում ու թալանում ԼՂԻ Մարզի բնակավայրերը, խաղաղ բնակիչներին առևանգում, սպանում: Մարզի շրջափակման երեք տարում ազերիները միայն Հադրութի շրջանից հափշտակել են 5670 գլուխ խոշոր ու մանր եղջերավոր անասուններ: Նրանք շրջանից բռնագրավել են 19719 հեկտար վարելահողեր: Մերթ հարձակվելով այս, մերթ այն բնակավայրի վրա, ադրբեջանցի զինված մարդասպանները անզեն հայերին ահաբեկում էին, նրանց անասունները հափշտակում, տանում, չնայած մարզում ու նրա հարակից շրջաններում դեռ 1988 թվականին տեղակայվել է ԽՍՀՄ-ի ՆԳՆ 100 հազարանոց բանակը ու արտակարգ վիճակ մտցվել այդ տարածաշրջանում: Արտակարգ դրության շրջանի պարետները այդ բազմաթիվ հանցագործությունների ու մարդասպանությունների դեմ չէին պայքարում: Ընդհակառակը, զինվորները ռազմական ուղղաթիռներով հաճախակի վայրէջք կատարելով հայկական գյուղերում, սանրում էին նրա տարածքները, հայերի որսորդական հրացանները, նույնիսկ խոհանոցի դանակները բռնագրավում, որպեսզի մինչև ատամները զինված ազերի բանդիտները անվտանգ պայմաններում հայերի գոմերը դատարկեին, արտերը հրկիզեին, այգիները քանդեին, տեխնիկան հափշտակեին, տները պլոկեին: Օր օրի աճում էր ադրբեջանցիների կողմից սպանված, առևանգված, ձերբակալված հայերի թիվը:

Այսուամենայնիվ, բռնությամբ, զենքով, սովի սպառնալիքով կարմիր Մոսկվային ու Բաքվին չէր հաջողվում որևէ արդյունքի հասնել, լուծել ղարաբաղյան պրոբլեմը: Զգալով, որ դրա համար ամբողջ աշխարհում խայտառակվում են, Մոսկվան, վերջապես, Ադրբեջա-

նին թույլ տվեց, որ թուրքական տարբերակով լուծի ղարաբաղյան հարցը, այսինքն՝ մարզի ամբողջ բնակչությանը բռնատեղահան անի, հատուկ ավտոշարասյուներով, ԽՍՀՄ-ի ՆԳՆ զորքի ուղեկցությամբ տեղափոխի Հայաստանի սահմանի բաց դաշտերն ու ձորերը: Պատահական չպետք է համարել, որ այդ լարված ժամանակաշրջանում Թուրքիայի նախագահ Տ. Օզալը այցելեց Մոսկվա: Շփվելով բարձրաստիճան հյուրի հետ, Մ. Գորբաչովը մի գիշերվա ընթացքում «մասնագիտացավ» պատմության բնագավառում, ապա հանդես եկավ հատուկ հայտարարությամբ և ընդգծեց, թե ԼՂԻ Մարզը Ադրբեջանի անքակտելի մասն է: Այդ նույնն է, եթե ասենք, թե Վոլգայի տարածքները Մոնղոլիայի անքակտելի մասն է, իսկ Սիբիրը՝ Ճապոնիայի: Իր այդ սադրիչ հայտարարությամբ Մ. Գորբաչովը իր վարկը գցեց քաղաքակիրթ աշխարհում, որովհետև մինչ այդ աշխարահռչակ շատ գիտնականներ, պատմաբաններ և այդ թվում՝ Ա. Սախարովը, Ա. Սոլժենիցինը և այլք պատմական անժխտելի փաստերով ցույց են տվել, որ ԼՂԻ Մարզը հայոց Արցախ գավառի մի մասն է, ուր այժմ էլ դեռ կան ավելի քան 2500 հայկական եկեղեցիներ, խաչքարեր, այլ հուշարձաններ: Մ. Գորբաչովի այդ ադրբեջանամետ հայտարարությամբ գոտեպնդված՝ Ա. Մութալիբովը և Վ. Պոլյանիչկոն վճռեցին անմիջապես սկսել հանրապետության և այդ թվում՝ ԼՂԻ Մարզի զանգվածային հայաթափման ծրագրի կենսագործումը: Նրանք առաջինը խորհրդային 4-րդ բանակի իրենց տրամադրության տակ գտնվող զորամասերի ու ՆԳՆ հատուկ ջոկատների, հանրապետության օմոնի ուժերը ուղղեցին Հյուսիսային Արցախի՝ չորս տարի շրջափակման հրե օղակում մաքառող, դարավոր պատմություն ունեցող բնակավայրին և այդ թվում՝ Գետաշեն ու Մարտունաշեն գյուղերին: Դրան հաջորդեց Շահումյանի շրջանի հայաթափումը: Արյուն է հեղվել: Տասնյակ հայեր, իրենց օջախների պատիվը խորհրդային բանակի հրե հարվածներից պաշտպանելիս զոհվել են: Նրանց բնակավայրերը օրը ցերեկով կողոպտել են, թալանել: Այդ գյուղերի բնակիչներին տանկերով բռնագաղթել են, տարել թափել Հայաստանի սահմանների բաց դաշտերում, իսկ նրանց ազատված բնակարաններում անմիջապես վերաբնակեցրել ազերիներին, նրանց էլ պետության կողմից հատուկ ֆինանսական նպաստներ տվել: Քանի որ պետական մասշտաբով կազմակերպված այդ հանցագործության (ցեղասպանության) համար ԽՍՀՄ-ի դեմոկրատական ուժերին չի հաջողվել նրա կազմակերպիչներին և առաջին հերթին Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովին, Գերագույն խորհրդի նախագահ Էլմիրա Կաֆարովային, ՆԳ նախարար Մամեդ Ասադովին, Ղարաբաղի կազմկոմիտեի նախագահ Վիկտոր Պոլյանիչկոյին, խորհրդային 4-րդ բանակի հրամանատարին և նրանց մոսկովյան հովանավորողներին դատաստանի առաջ կանգնեցնել, հեղած արյան հոտից կատաղած՝ Ադրբեջանը մի նոր հարձակման է անցել՝ 1991 թվականի մայիս-հունիս ամիսներին պետական մասշտաբով մի նոր ոճրագործություն-ցեղասպանություն կատարել՝ իրենց դարավոր հայրենի հողից բռնագաղթել ԼՂԻ Մարզի Հադրութի ու Շուշվա շրջանների Հայաստանի սահմանին հարող 24 գյուղերի բնակչությանը, նրանց հանրապետության տարբեր շրջաններից նախօրոք մոբիլիզացված ավտոմեքենաներով տարել միչև Հայաստանի Գորիսի շրջանի սահմանները, թափել բաց երկնքի տակ: Այդ հանցագործության կատարման մասին պարծանքով խոսելով հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջաններից մեկում, ՆԳ նախարար Մ. Ասադովը գոհունակությամբ ընդգծել է, որ մարզի լրիվ հայաթափած գյուղերը ոչ թե սովորական բնակավայրեր են, այլ ստրատեգիական կարևոր կետեր, որոնց միջոցով Հայաստանը կարող է թիկունքից հարվածել Ադրբեջանին: Այդ վայրենի բռնագաղթերը, փաստորեն, ԽՍՀՄ-ի մահախոսականը դարձան, որովհետև նրա ժողովուրդները խորապես համոզվեցին, որ դեմոկրատիայի անունից խոսող գորբաչովյան Կրեմլը դեմոկրատական ճանապարհով ոչ մի հարց էլ չի լուծելու: Ընդհակառակը, նա սևացնում էր ԽՍՀՄ-ի ամենամեծ նվաճումներից մեկը՝ ժողովուրդների անշահախնդիր բարեկամությունը, որոնք ահա 250-300 տարի մի աշխարհածավալ կայսրության մեջ սիրով աղ ու հաց էին կիսում:

Զենքի ուժով Հադրութի շրջանի հարավ-արևմտյան տարածքի Առաքել, Բանաձոր, Ցոր, Քարագլուխ, Մուլքաղարա (Զրաբերդ), Ջիլան, Բինյաթլու (Կարմիր քար), Ծամձոր, Սարինշեն, Խանձաձոր, Սպիտակաշեն, Պետրոսաշեն, Դոլանլար (Արևշատ), Արփագյադուկ գյուղերի բնակիչներին ԽՍՀՄ-ի ՆԳՆ հատուկ զորքերը և Ադրբեջա-

նի օմոնականները մայիսին և հունիսին հանրապետության Ջեբրայիլի շրջանից մեկնարկած հատուկ ավտոշարասյուններով փոխադրել են Հայաստանի Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղի սահմանամերձ դաշտը, թափել բաց երկնքի տակ: Նրանց բնակիչների ունեցվածքը, տարիների քրտնաջան վաստակով կուտակած հարստությունը, անասունները ադրբեջանցի ավազակախմբերը իսկույն հափշտակել են, նրանց բնակավայրերը հողին հավասարեցրել, հրկիզել: Թալանչիները քարուքանդ են արել այդ տարածքում գտնվող 5 կոլտնտեսությունների և 2 խորհտնտեսության պահեստները: Նրանց տեխնիկան, ավտոմեքենաները հափշտակել: Քարուքանդ են արել նաև այդ գյուղերում գործող խանութները, կապի բաժանմունքները, խնայդրամարկղերը, դպրոցները, հասարակական սննդի կետերը, հիվանդանոցները, բուժկետերը, մշակույթի օջախները: Բռնատեղահան արած յուրաքանչյուր ընտանիք 1991 թ. գներով, միջին հաշվով կորցրել է 35-40 հազար ռուբլի: 1991թ. մայիս-հունիս ամիսներին այդ գյուղերից Ադրբեջանը մասնագետների հաշվարկումներով 7,5 միլիոն ռուբլի է յուրացրել[1]:

Ինձ հաջողվել է այդ բռնագաղթի արյունոտ հետքերով լինել մեր այդ բոլոր գյուղերում, հանդիպել իրենց դարավոր արմատներից, հարազատ օջախներից զրկված տասնյակ տուժածների, 21-րդ դարի շեմին կատարած այդ ցեղասպանության ականատեսների հետ: Ուստի չեմ կարող այդ գյուղերի բռնատեղահանությունների որոշ մանրամասնություններ չներկայացնել ընթերցողների դատին:

Ձեզ ծանոթացնելով ԽՍՀՄ-ի ու Ադրբեջանի իշխանությունների ձեռքերով կատարված պետական այդ ոճրագործությունների հետ, էթնիկական պրոբլեմի լուծման ավազակային, թուրքական տարբերակի կրկնության հետ, կարծում եմ, որ դուք ևս ձեր բողոքի ձայնը կբարձրացնեք, որ նրա կազմակերպիչներն ու անմիջական կատարողները կանգնեն միջազգայի դատարանի առաջ:

Այժմ, հարգելի ընթերցողներ, ձեզ տանում եմ այդ բռնագաղթերի հետքերով:

1. Ինչպես այս, այնպես էլ գրքում հրապարակված մյուս թվական տվյալներն ինձ տրամադրել են բռնագաղթած գյուղերի բնակիչները և շրջանային մարմինների մասնագետները:

ԱՄՊԵՐԸ ԿՈՒՏԱԿՎՈՒՄ ԷԻՆ, ՓՈԹՈՐԻԿՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ԷՐ...

ԼՂԻ Մարզի հարավայի դարբաս Առաքել գյուղից մինչև մայր Արաքսը 10-12 կիլոմետր է: Նրա կենտրոնի բարձունքին հպարտ կանգնած է Սուրբ Աստվածածին եկեղեցու վեհաշուք շենքը, որի կառուցումը, նրա ճակատի սրբատաշ քարի վրա դաջված գրության համաձայն, ավարտվել է 1621 թվին:

1987թ.-ին իրենց նախնիների հիշատակը հավերժացնող այդ տաճարի վերանորոգման համար գյուղական խորհրդի նախագահ Ալեքսանդր Սեյրանյանի և ուսուցիչ Երվանդ Ղահրամանյանի ջանքերը, վերջապես, հաջողությամբ էին պսակվել: Մայր Հայաստանից հրավիրված մասնագետները ձեռնամուխ էին եղել եկեղեցու վերանորոգման գործին, որպեսզի նրա գոց դռները նորից բացվեին հավատացյալների առաջ: Թեև մարզը շնչահեղձ էր լինում շրջափակման շիկացած աքցանում, առաքելցիները շտապում էին ավարտել այդ գործը, որ եկեղեցու զանգակատունը իր ղողանջներով արթուն պահեր ենթաշրջանի հարթավայրային տարածքում գտնվող նուշ ու ծիրանի՝ Բինյաթլու (Կարմիր քար), սեգ սարերի հովերը շուրթերին՝ Ջիլան, ժայռերի բարձունքին թառած՝ Քարագլուխ, Յոթխաչ և Պրտոս սարերի ճոճքում ընկղմված՝ Մուլքադարա (Ջրաբերդ), Եռաձորի հանգույցում ծվարած՝ Ծամձոր, իր փեշերով Արաքս գետից ջուր ըմպող՝ Բանաձոր, մեր պատմիչների երկերում հաճախակի հիշատակվող՝ Ցոր, տեղանքի ամենից բարձր կետի՝ Սարինշեն գյուղերը, վտանգի պահին նրանց համախմբեր հարևանների ոտնձգությունների դեմ պայքարելու, հայրենի հողը պաշտպանելու համար: Ավա՜ղ, մարզի վայրենի շրջափակումը հնարավորություն չընձեռեց, որ արցախահայերի ստեղծագործական մտքի և շինարար ձեռքերի փայլուն մարմնացումը հանդիսացող այդ կոթողից մաքրվեն դարերի փոշին: Չվերականգնվեց նաև նրա զանգակատունը, հետևաբար վերոհիշյալ գյուղերի համախմբման գործը դարձյալ մնաց բախտի քմահաճույքին...

-Հայերը շտապում են, որ Հառաքյուլի (ազերիներն այդպես են կոչում մեր այդ գյուղը) եկեղեցին վերանորոգեն, վերականգնեն իրենց

խաթարված հավատը, ժողովրդի մեռած հոգուն հարություն տան, իրենց խամրած վաղեմի փառքով գոտեպնդվեն ու հարատևեն հայրենի հողում:...

Ամեն կերպ պետք է խանգարենք այդ գործը: Եթե այսօր Հառաքյուլի եկեղեցին վերանորոգեն, ապա վաղը՝ Ցորաբերդին, մյուս օրը Դիզափայտի կատարի մատուռին, Սպիտակ խաչի վանքին, Տողասարի Գտիչ տաճարին, մյուս բազմաթիվ հնություններին շունչ կտան, կկառչեն իրենց արմատներին ու հողին: Հետո էլ մեր տարածքների հայկական հուշարձանների փլատակների նորոգման մասին կմտահոգվեն: Մենք էլ չենք կարողանա ԼՂԻ Մարզը Զեբրայիլի, Կուբաթլիի, Ֆիզուլու, Աղդամի, Միր Բաշիրի, Քելբաջարի և Լաչինի շրջանների մեջ ծվատելու, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև մեր նախնիների ձեռքերով ստեղծված քրդական պատը ավելի ամրապնդելու մեր ծրագիրը կատարել:

Այս կարգախոսով առաջնորդվող Բաքվի իշխանությունները ԽՍՀՄ-ի ՆԳՆ հատուկ ստորաբաժանումների միջոցով օր օրի ամրապնդում էին մարզի շրջափակման սև օղակը, փակում ճանապարհները, Հայաստանից Արցախ փոխադրվող ասեղն անգամ մանրադիտակով զննում: Դրան զուգընթաց նրանք զենք էին կենտրոնացնում Զեբրայիլում, որի համար վաղօրոք պարարտ հող էին ստեղծել՝ բարբարոսաբար քանդել խորհրդա-իրանական 750 կիլոմետր սահմանի կառույցներն ու ամրությունները, որպեսզի արտասահմանից զենք ներմուծեին: Այդ բարբարոսությունը կատարելով՝ ազերի թուրքերը հետապնդում էին նաև մի սև-խարդախ նպատակ՝ ոչնչացնել սահմանագծի արգելված գոտում գտնվող հայկական, քրիստոնեական հուշարձանները, մասնավորապես՝ խաչքարերն ու եկեղեցիները: Մի կատաղի մոլեգնությամբ նրանք ոչնչացրին հայկական Զուղա քաղաքի գերեզմանատան խաչքարերի անտառը:

Ադրբեջանի Հանրապետության ՆԳ նախարար, զանգելանցի գեներալ Մամեդ Ասադովը, որը դեռևս 1988 թվականի գարնանը, որպես Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի վարչական մարմինների բաժնի վարիչ, այցելելով Ստեփանակերտ՝ ղարաբաղցիներին սպառնում էր 100 հազարանոց ազգային բանակով երկրամասը ոչնչացնելու իր ֆաշիստական պլանով, երեք տարի անց՝ 1991 թվականի գարնանը, միլիցիայի հատուկ ջոկատներ էր կենտրոնացնում Զեբրայիլում, նրանց վարժեցնում զենք գործածելու մեջ՝ այս անգամ արդեն գործով մարզի հայերին և, մասնավորապես, նրա Հադրութի շրջանի հարավ-արևմտյան տարածքի գյուղերի բնակիչներին դաս տալու ու խրատելու համար: Մայիսի սկզբներին, ինչպես վկայում են ականատեսները, Հադրութի շրջանին հարող Հորադիզ և Մահմուդլու երկաթուղային կայարաններում կենտրոնացվել է ռազմական տեխնիկա, որը մարտական պատրաստ վիճակում ելման գծի է դրվել բամբակի վերամշակման գործարանի և բոժոժի ընդունման կետի ընդարձակ բակերում:

Քանի որ Առաքել-Արփագյադուկ (Քարինգ) ստրատեգիական նշանակություն ունեցող տարածքի հայկական գյուղերի հայաթափման հաջողությունը մեծապես կախված էր Առաքելի գրավմամբ և ադրբեջանցիներով վերաբնակեցմամբ՝ Բաքուն անընդհատ հանրապետության Զեբրայիլի, Կուբաթլիի, Լաչինի շրջաններն էր գործուղում Նախարարների խորհրդի նախագահ Հասան Հասանովին, ՆԳ նախարար Մամեդ Ասադովին, նրա առաջին տեղակալ, գնդապետ Ռամիզ Մամեդովին: Զեբրայիլ քաղաքը դարձել էր հակահայկական, մոլի շովինիստական գործողություններ ծավալելու նենգ մի շտաբ: Ղարաբաղյան ազգային-ազատագրական շարժումը ճնշելու նպատակով այստեղ ևս հանրահավաքներ են կազմակերպվել՝ «Մա՜հ հայերին», «Էրմանի սան, օլմալի սան»[1] նշանաբանով: Ովքեր հայերի հետ նախկինում փոխհարաբերությունների մեջ էին, գյադա-գյուդայի կողմից հալածվում էին: Դրա զոհն է դարձել Շքյուրբեյլի գյուղի Բաքվի 26 կոմիսարների անվան կոլտնտեսության նախագահ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, պատերազմի վետերան Քյոչարի Բաբաևը, որը փորձել է ազդել իր հայրենակիցների վրա, մի միտինգում հայտարարել, թե «Մա՜հ հայերին», «Էրմանի սան, օլմալի սան» միջնադարյան կարգախոսերը ոչ միայն հակասահմանադրական են, այլև մի սև բիծ են թողնելու ադրբեջանական ժողովրդի պատվի վրա: Այդ բովանդակության ելույթից հետո անհայտ անձինք ատրճանակով նրան վիրավորել են, որի հետևանքով նա մահացել է:

1. «Հայ ես, պիտի մահանաս»:

Ստեփանակերտից ռազմական ուղղաթիռով ստեպ-ստեպ Ջեբրայիլ էր գալիս Վ. Պոլյանիչկոն, որի հետ Բաքուն կապում էր ղարաբաղյան շարժման ճնշման, մարզի հայթայթման հույսերը, քանի որ նա այդ ասպարեզում Աֆղանստանում մասնագիտացել է, բավականին փորձ ձեռք բերել...

Սև ամպերը մարզի հարավային տարածքում, այո, կուտակվում էին, փոթորիկն անխուսափելի էր: Դա զգում էին նաև առաքելցիները, ստեղծված վիճակից դուրս գալու ելք որոնում: Շրջանային մարմինները այդ ելքը տեսնում էին հարևան Ջեբրայիլի շրջանի հետ երկխոսություն սկսելու մեջ: Խորհրդային զորքերի և Ադրբեջանի օմոնականների ուժերով Հյուսիսային Արցախի հայկական բնակավայրերի, ամբողջ Շահումյանի շրջանի ավերումը, նրանց բնակիչների զանգվածային բռնատեղահանումը Ջեբրայիլին հարող առաքելցիներին հուշում էր, որ շտապեն երկխոսության: Պետք է փորձել, ջուրն ընկածը ծղոտից էլ է բռնում, գնալ երկխոսության, գուցե դա գյուղը փրկեր վերահաս աղետից:

Մայիսի երկուսին՝ ավանդական տոնի օրը, երկխոսության երկու կողմի պատվիրակները հավաքվել էին գյուղի՝ Ջեբրայիլին հարող այգու գողտրիկ մի անկյունում գտնվող Սամվել Հայրյանին պատկանող կոոպերատիվ խորտկարանում: Ադրբեջանական պատվիրակությունը գլխավորում էր շրջմիլպետ, փոխգնդապետ Ռաշիդ Մամեդովը, հայկականը՝ շրջխորհրդի գործկոմի նախագահ էլմիր Նավասարդյանը: Պատվիրակության կազմում էին կուսշրջկոմի երկրորդ քարտուղար Վանյա Սաֆարյանը, ագրոարդի միավորման խորհրդի նախագահ Վալերի Գևորգյանը, Առաքելի Բաղրամյանի անվան խորհտնտեսության տնօրեն Ռազմիկ Գրիգորյանը և այլք:

Ջեբրայիլի պատվիրակության անդամները մռայլ էին, տխուր, ասես հենց Առաքել ճանապարհվելիս թաղել էին իրենց հարազատներից մեկին: Ամլիկ գառան մսից պատրաստած տաք խորովածը, բուրումնավետ թթի օղին նրանց դեմքերից մութ, կարկտաբեր ամպերը չէին ցրում:

-Հառաքյուլում զենք, գրոհայիններ կա՞ն,-երրորդ բաժակը կոնծելուց հետո ասաց Ռաշիդ Մամեդովը:

Նրա հարցի տոնից թույն ու կրակ էր թափվում: Այնուամենայնիվ, Ռազմիկ Գրիգորյանը նրան պատշաճ տոնով պատասխանեց.

-Մենք զենքի ու գրոհայինների կարիք չենք զգում, որովհետև համոզված ենք մեր և ձեր անշահախնդիր բարեկամության մեջ: Վստահ ենք, որ դուք թույլ չեք տա, որպեսզի Ջեբրայիլի բնակչությունը իրենց հարևանների նկատմամբ որևէ հակաօրինական բան կատարի: Առաջարկում եմ խմել ձեր կենացը...

Խմել են, միլպետի գովքը երգել, բարեմասնությունները շեշտել:

Շոյված, կիսահարբած փոխգնդապետը պատասխան խոսքով խոցել է.

-Այնուամենայնիվ, պետք է սկսենք, չենք կարող չսկսել: Այս երկխոսությունն արդեն ուշ է, որովհետև կենտրոնը և Բաքուն ձեր մարզը հոշոտելու գնով ձգտում են հասնել իրենց քաղաքական նպատակներին: Դուք չե՞ք զգում, որ ձեր գլխատված մարզի խորհրդների վերականգման (ղարաբաղյան շարժման առաջին օրերին Մոսկվան լուծարքի է ենթարկել մարզխորհուրդը) բոլոր փորձերը զարնվում են Մոսկվայի ժայռե սառույցին...

Պատվիրակության մի անդամ, որն, ըստ երևույթին, հանրապետության ՊԱԿ-ի պատասխանատու աշխատող էր (այդ մահն ինձ պատմել է մեր պատվիրակներից մեկը) միլպետի ոտքը կոխել է, նախազգուշացրել, որպեսզի այլ տոնով խոսի:

-Ինչե՞ր եմ ասում, գուցե թթի օղին ինձ վրա ազդել է, հարբել եմ, Ռազմիկ Խաչատուրովիչ, երևի մեր երկնակամարի սև ամպերը ցրվեն, մենք նորից բարեկամություն անենք: Թռչունը թևերով է հզոր, մարդը՝ բարեկամությամբ:

Բիրտ ու վայրենի չորսամյա շրջափակման մեջ հյուծվել է մարզը և այդ թվում՝ նրա հեռավոր Առաքել գյուղը: Երեք տարվա ընթացքում Ջեբրայիլի շրջանի տարածքից ավազակախմբերը 37 անգամ հարձակվել են Առաքելի և նրա խորհտնտեսության մեջ միավորված Քարագլուխ, Մուլքադարա, Բինյաթլու, Ջիլան գյուղերի վրա, հափշտակել, տարել ավելի քան 4400 գլուխ հանրային և անձնական անասուններ: Խորհտնտեսության Ջրաբերդ, Ահմադլու, Ջիարտեր, Կալին արտ, Չայլաղի այգիները, փաստորեն, դարձել են Ջեբրայիլի շրջանի Յուխարի մազրա, Ղարար, Խիբարլու, Խալաֆլու, Մուսուս-

լու, Թաքար, Ղոչալար գյուղերի անասունների արոտավայրերը: Ո՛չ շրջմիլիցիան, ո՛չ արտակարգ դրության շրջանի պարետատունը կոնկրետ միջոցառումներ չէին իրականացնում անասունների և տեխնիկայի հափշտակումների, այգիների և արտերի փչացման դեմ պայքարելու ուղղությամբ: Եվ ընդհակառակը՝ արտակարգ դրության հատուկ շրջանի Հադրութի պարետատունը պարբերաբար սանրում էր շրջանի հայկական գյուղերը, բնակչությունից խլում անգամ որսորդական հրացանները, նույնիսկ խոհանոցի դանակները՝ ավտոմատներով զինված ադրբեջանցի անասնագողերի դեմ հայ անասնապահերին թողնում մահակի հույսին:

Արդարև, Առաքելն այն աստիճանի հյուծվել էր ու ուժասպառ եղել, որ մի թույլ հարվածն էլ նրան կարող էր կործանել, մանավանդ որ շրջանային մարմինների ձեռքերն էլ կապել էին և զրկել շրջանի ինքնապաշտպանության գործի կազմակերպման հնարավորությունից: Իսկ նրանցից 3-4 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Ջեբրայիլում արդեն պատրաստ էին Առաքելը թաղելու գործին: Եվ պատահական չէ, որ գինովացած միլպետ Ռաշիդ Մամեդովը խորտկարանում չի թաքցրել ադրբեջանական կողմի մտադրությունը՝ «Այնուամենայնիվ պետք է սկսենք, չենք կարող չսկսել»:

Ինչպիսի՜ երախտամոռություն.. Ուրեմն կե՞ղծ են եղել բարեկամության մասին 70 տարի ջեբրայիլցիների շռայլ խոսքերը: Եթե Բաքուն պլանավորել է Ջեբրայիլի ձեռքով ավերել Առաքել-Քարինգ տարածաշրջանի հայկական գյուղերը, Ջեբրայիլը, այնուամենայնիվ, պիտի ձեռնպահ մնար, հրաժարվեր այդ ոճրագործությունից, որովհետև վերոհիշյալ հայկական գյուղերը քիչ բան չեն կատարել Ադրբեջանի այդ շրջկենտրոնի բարգավաճման համար: Նախապատերազմյան և հետպատերազմյան տարիներին Ջեբրայիլի հիմնարկ-ձեռնարկություններում, մյուս կոլեկտիվներում աշխատում էին շուրջ 150 հայեր: Նրանցից շատերը պատասխանատու դիրքեր էին զբաղեցնում: Այսպես, կուսշրջկոմի առաջին քարտուղարի օգնականն էր Դավիթ Միրզոյանը (Բինյաթլու), ֆինբաժնի վարիչ էր առաքելցի Պավել Սաֆարյանը, շրջսպառկոոպի նախագահի տեղակալ էր ծամձորցի Պավել Գրիգորյանը, այդ հիմնարկության գլխավոր հաշվապահ էր առաքելցի Արամայիս Պետրոսյանը, շրջանի գլխավոր անասնաբույժն էր առաքելցի Սարգիս Հովհաննիսյանը, շրջսպառկոոպի գլխավոր պահեստապետն էր բինյաթլվեցի Պավել Միրզոյանը և այլն: Մի խումբ ուսուցիչներ և այդ թվում՝ առաքելցիներ Երվանդ Ղահրամանյանը, Միսակ Դավթյանը, Արտավազդ Խաչյանը, քարագլխեցիներ Մուշեղ Հայրապետյանը, Պավել Ստեփանյանը, Սեդրակ Գրիգորյանը, Ժորա Ստեփանյանը, Մադաթ Աթայանը, Բագրատ Խաչյանը, Բորիս Հայրապետյանը և այլք շրջանի գյուղերի դպրոցներում ռուսաց լեզու էին դասավանդում: Երվանդ Ղահրամանյանի ձեռքով պատրաստած պլակատներն ու յուղաներկ նկարները մի առանձին շուք էին տալիս Ջեբրայիլին: Արաքսամերձ այդ շրջկենտրոնի արհեստավորները ևս գլխավորապես հայեր էին: Նրա վարսավիրներն ու կոշկակարներն էին Մարտիրոս, Ավագ, Արմենակ Հայրապետյանները, Բենիկ Ստեփանյանը, Յուրի Ավանեսյանը, Արսեն Պետրոսյանը, Արմիկ Ղուկասյանը, Ասլան Գրիգորյանը և այլք: Այդտեղ դարբիններ էին աշխատում Պետրոս Ստեփանյանը, Բենիկ և Սերգեյ Մելքումյանները:

Հայ շինարարները նախկին եղեգնածեփ տների փոխարեն ջեբրայիլցիների համար քարակերտ տներ էին կառուցում: Այդ գործը նրանք շարունակում էին ընդհուպ մինչև 1988 թվականը: Բենիկ Հայրապետյանը, Ալեքսան Ալեքսանյանը 80-ական թվականներին էլ Ջեբրայիլի հարգված շինարար-վարպետներն էին:

Հայերի այդ ավանդը մոռացած՝ 1991 թվականի մայիսին Ջեբրայիլում հույժ գաղտնի պայմաններում վճռվում էր Առաքելի վրա հարձակվելու օրը: Վերջապես որոշվեց ընտրել մայիսի 13-ը, հիմնավորելով, որ հայերը սնոտիապաշտ են, 13-ը նրանց համար չարագուշակ օր է:

Մայիսի 8-ից մինչև 13-ը չորս-հինգ ռազմական ու քաղաքացիական ուղղաթիռներ անընդհատ պտտվում էին տարածաշրջանի գյուղերի վրա, ընդհուպ քսվում նրանց բնակարանների տանիքներին, իբրև գրոհայիններ էին որոնում, բայց, փաստորեն, հետախուզություն էին կատարում, ահաբեկում մարդկանց, նկարահանում տեղանքը:

Մի խոսքով, մթնոլորտը շիկացել էր, և գյուղի վրա հարձակման շունչը առաքելցիները, փաստորեն, զգում էին իրենց ծոծրակներին,

սակայն գյուղի ինքնապաշտպանության ուղղությամբ ոչ մի բան չէր կատարվում: Ճիշտ է, առաքելցիներն անհանգիստ ահազանգում էին շրջանային մարմինների ղեկավարներին, խնդրում, որ համապատասխան ուժեր կենտրոնացնեն մարզի հարավային դարպասում:

Ամեն անգամ, սակայն, նրանց պատասխանում էին «Ոչ մի բան չի լինելու, մնացեք գյուղում, երբեք խուճապի չմատնվեք: Եթե ձեր գյուղի վրա հարձակվեն, արտակարգ դրության հատուկ շրջանի պարետատունը ձեզ ամեն գնով պաշտպանելու է»...

-Պարետատան վրա հույս մի դրեք: Նրա ղեկավարները դարձել են Ջեբրայիլի միլպետի գործիքը: Ըստ մեզ հասած տվյալների, նրանք հաճախակի են հանդիպում, միասին ճաշում, կոնծում: Քանի դեռ ուշ չէ, մոբիլիզացրեք շրջանի հայրենասեր մարդկանց, օգնություն խնդրեք նաև մարզկենտրոնից, այլապես Ջեբրայիլում կենտրոնացված օմոնականները, խորհրդային բանակի ստորաբաժանումները մեր գյուղը կործանելու են,- հուսահատ հուշում էին առաքելցիները:

-Մենք ձեզ հասկանում ենք, դուք էլ մեզ հասկացեք, որ մեր ոտքերն ու ձեռքերը կապել են, մեզ ամեն ինչից զրկել, բայց և այնպես մի բան կմտածենք,-հուսահատ պատասխանում էին շրջանի ղեկավարները:

Անելանելի վիճակում գտնվող, խորհրդային բանակի հատուկ զորքերի ստորաբաժանումների հրե օղակում խեղդվող մարզը շունչը պահած սպասում էր դեպքերի հետագա ընթացքին...

Գորբաչովյան Մոսկվան անտարբեր, սառնասիրտ էր դարձել Լեռնային Ղարաբաղի հանդեպ: Դա զգացվում էր նույնիսկ մոսկովյան հաղորդումների տոնից...

Այնուամենայնիվ, փոթորիկը սկսվեց Ջեբրայիլից...

ՉԱՐԱԲԱՍՏԻԿ 13-Ը. ԱԳՌԱՎԻ ԱՆՀԱՆԳԻՍՏ ԿԱՆՉԸ

Մայիսի 13-ի այգաբացին մի ագռավ Առաքելի կենտրոնի աղբյուրին կքած ծառերից մեկի կանաչ կատարից անընդհատ կռկռում էր, գյուղի բնակիչներին հուշում, որ արթնանան քնից, փրկվեն վերահաս աղետից: Հարյուրամյա Նախշուն Առաքելյանն արթնանալով՝ որդուն տագնապահար ասաց.

-Կառլեն, մի դար է, որ էս շենում ապրում եմ, բայց դեռ ագռավի էսպիսի ձայն չեմ լսել: Մեզ ինչ-որ սել է սպասվում, շուտ գյուղն արթնացրու, թող բոլորը՝ տղամարդիկ, կանայք ոտքի ելնեն, փրկեն իրենց գլուխները...

Կառլեն Առաքելյանի ահազանգ արդեն ուշ էր:

Գյուղի հարավային մուտքի մոտ արդեն հռնդում էին վեց զրահամեքենա և տանկ, 25 «ՈւԱԶ» մակնիշի ավտոմեքենա, երկու ավտոբուս, որոնք բերում էին ավելի քան 200 օմոնականներ և 50-60 զինվորներ: Առաքելցիները դեռ չէին ըմբոշխնել վաղորդյան թարմ, գարնանաբույր օդը, երբ գյուղի ելումուտի բոլոր կետերը փակել էին տանկերը և զրահամեքենաները, իրենց փողերը ուղղել դեպի տները, կրակ բացել, որը, ինչ խոսք, սարսափի զգացում է առաջացրել նրա բնակիչների, մանավանդ կանանց և երեխաների մեջ: Մի խոսքող, առավոտյան ժամը 6-ին Առաքելն արդեն ԽՍՀՄ-ի ՆԳՆ զորքերի և Ադրբեջանի Հանրապետության օմոնականների շիկացած աքցանի մեջ էր: Իսկ ագռավը պապանձվել է, նեղացել, որ առաքելցիները ուշադրություն չեն դարձրել իր տագնապահունչ ձայնին:

Առանց դատախազի թույլտվության, գյուղական իշխանությանը ոչ մի բանի մասին իրազեկ չդարձնելով՝ ավտոմատներով, ատրճանակներով և դանակներով զինված օմոնականները, բաժանվելով խմբերի, սկսել են խուժել առաքելցիների տները: Գյուղի ներքին թաղամասում նրանք առաջինը մտել են Սեդրակ Բաբայանի, Ժուլետա Խաչյանի, Ծովիկ Բալայանի, Վոլոդյա Ավանեսյանի, Վոլոդյա Դավթյանի տները: Երկու օմոնական զբաղվում էին բնակիչների անձնագրերի ստուգմամբ, մյուսներն անարգել մտնում էին տների ներսը, տակն ու վրա անում ամեն ինչ, ջարդում, փշրում ամեն բան, հափշտակում ոսկեղենը, թանկագին իրերը, փողերը, պատառոտում

հայերեն գրքերը, նկարները: «Ամենաարդար» խորհրդային բանակի մասին լեգենդներ լսած առաքելցիները մնացել էին ապշած: Ինչու՞ նրա զինվորներն անտարբեր մի կողմ են կանգնել, չեն կասեցնում գյուղը կործանող օմոնականների գործողությունները:

Ունկնդրենք գյուղի բնակիչներին:

Բաբկեն Գյուլիշանյան: Հանկարծակի մեր բակ են ներխուժել 10 զինվորներ ու օմոնականներ:

-Ձեր տանը զենք կա՞, դուք գրոհայիններ ե՞ք պահում,- դեպի ինձ գալով ասաց խմբի ավագը:

Նրա աչքերից արյուն էր թափվում:

Չսպասելով իմ պատասխանին, հարցաքննողը, որը Ջեբրայիլի շրջմիլիցիայի աշխատող լեյտենանտ Հյուսեյնով Հաջին էր, աղայական տոնով ավելացրեց.

-Ձեր բոլոր անձնագրերը ցույց տվեք:

Հինգ հոգի կնոջս՝ Էմմային, ավտոմատով մի կողմ հրելով՝ մտան բնակարան և սկսեցին փող, ոսկի, գորգեր, թանկագին այլ իրեր որոնել:

-Սեյրան Գյուլիշանյանը քո որդին չէ, որովհետև նա Հայաստանի Ղաֆան քաղաքում է անձնագիր ստացել: Դու այդ երիտասարդին այստեղ ես բերել, որպեսզի մարզի դեմոգրաֆիան փոխես, որի համար քեզ ծերբակալում ենք,- տղայիս անձնագիրը դնելով գրպանում՝ ասաց լեյտենանտը:

-Սեյրանի 16 տարին լրացել է Ղաֆանի պրոֆտեխուսումնարանում սովորելիս, ուստի այնտեղ անձնագիր է ստացել, մեկնել բանակ, այնտեղից էլ վերադարձել հայրենի գյուղ: Կարող եք ռազմական գրքույկն էլ ստուգել,- բացատրեցի ես:

Մինչ ես լեյտենանտին ապացուցում էի, որ Սեյրանը իմ որդին է, կինս ներսից աղեկտուր ձայնով կանչեց. «Բաբկեն, տունը թալանում են, մեր ոսկեղենը, փողը, թանկարժեք իրերը կողոպտում են, օգնիր»:

Ես փորձեցի օգնել կնոջս: Լեյտենանտը ատրճանակի փողի ծայրը խրելով ականջիս մեջ գոռաց.

-Տեղիցդ չշարժվես, շուն, այլապես դիակդ կփռեմ գետնին:

Մի ինչ-որ սառը քրտինք պատեց դեմքիս: Սա ի՞նչ քրտինք է: Վախի՞, ամոթի՞, անպատկառությա՞ն: Ոչ, սա այն վայրենի երկրի, որտեղ մենք ապրում էինք, նկատմամբ մեր հավատի վերջին կաթիլների ցնդման քրտինքն է:

Ինձ տեսնելով ապշած՝ լեյտենանտը ավտոմատի կոթով մի հարված հասցրեց գլխիս և լկտիաբար ծիծաղելով գնաց մեր բակից:

Վոլոդյա Համբարձումյան: Ութ օմոնականներ, որոնց ավագը լեյտենանտ Հուսեյն Նամազովն էր, իսկ մյուսներն Արաքսի ափի Մարջանլու գյուղից էին, մտնելով մեր բակը՝ կարգադրեցին.

-Մեքենան հանի՛ր գարաժից, ավազակ:

-Դուք բնակիչների անձնագրերն եք ստուգու՞մ, թե՞ անձնական ավտոմեքենաները,- չհամբերելով՝ ռեպլիկ եմ տվել ես:

Դեռ խոսքը բերանումս էր, որ ավտոմատի կոթը իջավ գլխիս: Այդ հարվածից աչքերս սևացան:

-Մեքենան հանի՛ր գարաժից, խոզ, թե չէ քեզ շան պես կսպանենք,-կրկնեց լեյտենանտը:

Ես չէի կարող մեքենան գարաժից չհանել:

Օմոնականներից մեկը ճարպկորեն հրազենի մի քանի գնդակներ գցեց մեքենայի հետևի նստատեղի վրա:

-Այս գնդակների համար է, որ չես ուզու՞մ մեքենան գարաժից հանել,-կատաղած հարցրեց լեյտենանտը:

-Այդ կարող ես քո հրամանին հնազանդ այն օմոնականին հարցնել, թե ինչ նպատակով է գնդակները իմ մեքենայի մեջ դրել,- ցույց տալով նրան՝ անզիջում ասացի ես:

-Լեզուդ երկար է, խոստանում եմ կարճացնել,-ասաց լեյտենանտը և կարգադրեց, որ մեքենաս տանեն գյուղի ֆուտբոլի հրապարակ, ուր օմոնականների մյուս խմբերը ժողովում էին մեր բնակիչների անձնական մեքենաները, գորգերը, մյուս թանկարժեք իրերը:

-Այս փաստաթուղթը ստորագրիր,- մեքենագրված մի թուղթ մեկնելով ինձ՝ ասաց Հաջիևը:

-Ի՞նչ փաստաթուղթ է դա,- եղավ իմ պատասխանը:

Մինչ այդ փաստաթղթի հետ ծանոթանալը, օմոնականներից մեկը լեյտենանտի ականջին ինչ-որ բան շշնջաց: Վերջինս իմ ձեռքից խլելով իր տված թուղթը, ասաց.

-Ինչ թելադրեմ, այն էլ գրիր:

Ապա ինձ թուղթ ու գրիչ մեկնելով՝ թելադրեց հետևյալը.

-Գրիր, որ մենք հարևան ադրբեջացիների հետ ապրում էինք խաղաղ: Նրանք մեզ ամեն մի հարցում ընդառաջում էին, իրենց մի կտոր հացը մեզ հետ կիսում, բայց ղարաբաղյան իրադարձությունների կապակցությամբ ամաչում ենք նրանց կողքին ապրել, ուստի խնդրում ենք ձեզ , ընկ. Վ. Պոլյանիչկո, որ մեր ընտանիքները փոխադրես Հայաստան: Մենք այդ քայլին դիմում ենք կամավոր:

-Նախ՝ մենք Պոլյանիչկոյին չենք ճանաչում: Երկրորդը՝ մենք այս գյուղում ծնվել ենք, այս գյուղում էլ կմեռնենք...

Ավտոմատի կոթով գլխիս մի այնպիսի հարված իջավ, որ ես փռվեցի գետնին: Ինձ ուշքի բերեց կինս՝ արիասիրտ Մարոն:

-Մեր գորգերը, մատանիները, 4500 ռուբլին հափշտակել են,-երբ ուշքի եկա, ասաց նա:

Տեսնելով, որ օմոնականները Առաքել են եկել ոչ թե անձնագրային ռեժիմի ստուգում կատարելու, այլ բնակչությանն ահաբեկելու, նրա ունեցվածքը թալանելու համար, առաքելցիները խնդրեցին ծերունազարդ ուսուցիչ Գուրգեն Գյուլիշանյանին, որ գնա նրանց ավագի մոտ, խնդրի, որ վերջ տան թալանին:

-Ես աշխարհ տեսած մարդ եմ, բայց այսպիսի բռնության մասին դեռ չեմ լսել: Դուք անձնագրեր եք ստուգո՞ւմ, թե՞ մարդկանց խոշտանգում, նրանց ունեցվածքը թալանում, զենքի ուժով ստիպում, որ ստորագրեն, թե կամավոր ուզում եք տեղափոխվել Հայաստան: Չորս տարի վայրենի մեթոդներով շրջափակված մարզում ապրել ենք, որ դեմոկրատական ճանապարհով բարձրացրած սահմանադրական հարցը լուծվի , իսկ հիմա դիմում գրենք, որ ցանկանում ենք տեղափոխվել Հայաստա՞ն: Դա հակատրամաբանական է: Ամո՛թ է, կարգադրեցեք, որ օմոնականները մեր տներից ոսկի ու մարջան չհափշտակեն, մեր ունեցվածքը չկողոպտեն, կարգին անձնագրերը ստուգեն, գնան: Չե՞ որ մենք իրար հետ աղ ու հաց ենք կիսել,- նրանց ավագին՝ բարձրահասակ մի մայորի ասաց ճերմակահեր ուսուցիչը:

-Ճիշտ է, աղ ու հաց ենք կիսել, բայց ձեր Իգոր Մուրադյանը, Զորի Բալայանը մեր և ձեր հացը հարամել են, մեզ գժտեցրել:

-Մեզ և ձեզ ոչ թե մեր Իգոր Մուրադյանը, Զորի Բալայանը, այլ ձեր Զիա Բունյաթովի, Հեյդար Ալիևի, Անարի, Բախտիյար Վահաբզադեի նման գործիչներն են գժտեցրել, երբեմնի ինտերնացիոնալ Բաքուն դարձրել պանթուրքական գաղափարների տարածման, հետևաբար՝ հայերի հալածման կենտրոն:

Գուրգեն Գյուլիշանյանին այդ համարձակ մտքի համար ավտոմատի կոթի ուժգին հարվածով մի օմոնական տապալեց գետնին: Արյունը հոսեց նրա գլխի վերքից: Այդ տեսարանի ականատես Նադյա Ավետիսյանը փորձեց օգնել գիտակցությունը կորցրած ծերունուն: Իր զոհով հրճված օմոնականը կանգնեցրեց գեղեցիկ արտաքինով այդ հարսին.

-Կորի՛ր այստեղից, եթե չես ուզում այս ժողովրդի մեջ քեզ բռնաբարեմ: Այդ հարվածը աղսախկալ ուսուցչին դեռ քիչ է, նրան պետք է թիքա-թիքա անել, որովհետև մեջլիսներում միշտ էլ այդ բովանդակության ելույթներ էր ունենում, կոչ անում, որ Ղարաբաղը Հայաստանի հողն է:

-Սարմազ Ջիրֆուղար օղլի, գիտենք, օրենքից չեք վախենում, որովհետև կաշառակերների ձեռքին Մոսկվան գլուխը կորցրել է, բայց գոնե Ալլահից վախեցեք,-մոտենալով օմոնականների խորհրդատու, Յուխարի մազրա գյուղի բնակիչ, նախկինում հանցագործության համար երեք տարով ազատազրկված, Ջեբրայիլի շրջիվանդանոցի ավտովարորդ Ռահիմովին,- ասաց ուսուցիչ Երվանդ Ղահրամանյանը:

Ալլահի անունը լսելով, մոլեռանդ ադրբեջանցին մի պահ խղճի խայթ զգաց, ապա սթափվեց և աչքով իր մոտ կանգնած աժդահա օմոնականին կարգադրեց, որ իր ընդդիմախոսին կալանավորեն: Երկու օմոնական իսկույն ոլորեցին Երվանդ Ղահրամանյանի ձեռքերը և ավտոմատի փողով հրելով՝ տարան դեպի սև կառեթը:

-Երվանդ մուալլիմ, ես փոքր մարդ եմ,- ուղեկցելով նրան՝ ասաց Սարմազ Ռահիմովը,- դու պետք է գաս Ջեբրայիլ, պատասխան տաս, թե ինչու՞ քո լեկցիաներով մոլորեցնում ես հառաքյուլցիներին, ամեն անգամ նրանց ականջներին զուռնա փչում, որ արքնանան նիրհից, միանան Հայաստանին: Դրանով չբավարարվելով, հիմա էլ գյուղի եկեղեցին ես վերանորոգել տալիս, որ Ջեբրայիլի քթի տակին Վազգեն կաթողիկոսի քրիստոնեական գաղափարները տարածե՞ս:

Անասնաբույժ Գրիշա Գյուլիշանյանին այս լկտիությունը հանեց ափերից: Նա համարձակ կանգնեցրեց Երվանդ Ղահրամանյանին տանող օմոնականին.

-Ես պատերազմի վետերան եմ, ֆաշիստները ոչ մի ժողովրդի հետ այդպես գազանաբար չէին վարվում, ինչպես դուք եք հիմա հայերի հետ վարվում: Ի՞նչ է արել այդ մտավորականը, որ ձերբակալել, Չեբրայիլ եք տանում...

-Թքեմ քո և մյուս բոլոր վետերանների վրա, այդ դուք եք մեղավոր, որ Հիտլերը պարտվել է, այլապես Թուրքիան վերջնականապես կգրավեր Անդրկովկասը և Միջին Ասիան, մեզ կազատեր ալկաշ ռուսներից, ձեր քյոքին էլ վերջ կտար: Մենք էլ ձեր պատճառով աշխարհում չէինք խայտառակվի, մարդակերի անուն չէինք վաստակի,- ավտոմատով հրելով նրան՝ ասաց բողկի պես տձև մի օմոնական:

Օմոնականները ժամը 7-ից մինչև 12-ը անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով Սերոժյա Սաֆարյանի ընտանիքից կողոպտել են 5400 ռուբլի, 500 ռուբլի ոսկե փոխառություն, երեք մատանի, քսան լիտր թթի օղի, Սերգեյ Համբարձումյանի ընտանիքից՝ 5 շիշ երևանյան կոնյակ, յոթ լիտր թթի օղի, երեք ոսկե շղթա, չորս մատանի, կանացի հինգ ներքնազգեստ, երկու գորգ, Արմիկ Գրիգորյանի ընտանիքից՝ 45 լիտր թթի օղի, երեք մատանի, 1600 ռուբլի, երկու գորգ, Վանյա Հովհաննիսյանի ընտանիքից՝ երկու գորգ, 4579 ռուբլի, երկու մատանի և այլն: Նրանք միաժամանակ մի քանի բնակիչներից դիմում են կորզել այն մասին, որ իրենք ցանկանում են տեղափոխվել Հայաստան: Չորս ժամվա ընթացքում օմոնականները ավերել են մարզի այս գյուղը, ջարդել տների դռները, պատուհանները, կահ-կարասին, տակնուվրա արել տեղաշորերը, գորգերը, ամանեղենը, պարենային մթերքները:

Դպրոցի տնօրեն Շահեն Իսախանյանը դպրոցի բակում հավաքված մի խումբ օմոնականներից լսել է հետևյալ խոսակցությունը.

-Հայերն այս քար ու քոլ գյուղում այնքան հարստություն են կուտակել, որ հազար ուղտ չեն կարող տանել: Եվ դեռ բողոքում են, թե վատ են ապրում,-ատամները սրելով ասաց մի օմոնական:

-Էշն աշխատում է, ձին ուտում է: Մի երկու օրից հետո այս հարստությունը մեր մուսուլմանների մեջ բաշխելու ենք, հայերի տները աճուրդի ենք դնելու, քրիստոնեական այս՝ հինավուրց օջախը ևս մարելու ենք, մահմեդականացնելու ենք: Եվ եթե ԼՂԻ Մարզը մարսենք, հավատացեք, որ Ռուսիայում, Եվրոպայում էլ հեշտությամբ Մուհամեդի ջահն ենք վառելու:

-Թալանի մոլուցքը մեր ժողովրդին հեռու ափեր է տանելու: Ինձ էլ հրապուրել են թալանով, որ մեր Լենքորանը թողել, այստեղ եմ եկել:

-Ուրեմն քո երակներում հայրենասիրական արյուն չկա՞,- կատաղեց կապիտանի տարբերանշանով սպան:

-Հայ խաղաղ, անզեն բնակչությանը հալածելը, նրա ինչքը թալանելը, անասունները հափշտակելը հայրենասիրությու՞ն է, թե՞ ավազակություն,- չտանելով սպայի ճոռոմ խոսքերը՝ ռեպլիկ տվեց լենքորանցի թալիշը, որի հայրենակիցներին անցած 70 տարում Ադրբեջանի իշխանությունները բռնի միաձուլել են ազերի թուրքերի մեջ, աշխարհից ի սպառ վերացրել պարսկալեզու այդ ժողովրդին:-Կգա ժամանակ, որ այս խայտառակության համար մեզ պատասխանատվության կկանչեն:

-Վերջ տվեք այդ տհաճ խոսակցությանը,- մոտենալով նրանց՝ սաստեց քաղաքացիական հագուստի մեջ քողարկված Ռաշիդ Մամեդովը:

Մի փոքր դադարից հետո անձնագրային ռեժիմի ստուգման արդյունքներից դժգոհ միլպետը շարունակեց.

-Գյուղի երիտասարդներից, տղամարդկանցից, կանանցից շատերը թաքնվում են, մինչդեռ ես ձեր առաջ մարտական խնդիր եմ դրել, որ երկու-երեք ժամվա ընթացքում բոլոր բնակիչներին անխտիր ձերբակալեք, որ տանենք Չեբրայիլ, մեր հողում նրանց քիթն ու մռութը ջարդեք, որ ոչ միայն մոռանան «ինքնորոշում», «դեմոկրատիա», «Հայաստան» բառերը, այլև մեծ գումարի գնով ազատվեն մեր ձեռքերից: Հրամանս կատարելու փոխարեն դատարկ բաներով եք զբաղվում, ցեղային կրքեր բորբոքում...

Երեկ ինձ հետ հեռախոսով կապվել էր գեներալ Ասադովը և կարգադրել, որ իր անունից ձեզ հայտնեմ, թե Միլից, Մուղանից, Արաքսի հովտից Զանգեզուր տանող լեռնային կարճ ճանապարհի գրավման օպերացիայի հաջողությունը կախված է դարպաս գյուղի՝ Հառաքյուլի հայաթափումից: Այդ գյուղի գրավման հաջողությամբ են

պայմանավորված ինչպես իմ, այնպես էլ ձեր պաշտոնների բարձրացումը, հայերի հաշվին միլիոնատեր դառնալը: Շուտ ցրվեցեք, տները, այգիները, բոլոր խոռոչները ստուգեցեք, այսօր առնվազը 50-60 հոգու պետք է ձերբակալենք, Զեբրայիլ տանենք, յուրաքանչյուրից 25-30 հազար ռուբլի վերցնենք, մեր ծախսը փակենք, հարստանանք...

Սակայն նրանց հաջողվել է այդ օրը ձերբակալել, Զեբրայիլ տանել միայն երեսուներեք հոգու: Ձերբակալվածների մեջ էին Գագիկ, Գայանե, Սիմոն Առաքելյանները, Սամվել Իսախանյանը, Բորիկ Հայրյանը, Ալեքսան Պետրոսյանը, Արմեն և Սլավիկ Սեյրանյանները, Արև Համբարձումյանը, խորհրդտնտեսության տնօրեն Ռազմիկ Գրիգորյանը, գյուղատնտես Մարտիկ Հայրյանը, տնտեսագետ Միքայել Ստեփանյանը, բրիգադավար Յուրի Բաղդասարյանը, ուսուցիչ Երվանդ Ղահրամանյանը և այլք:

Չարագուշակ 13-ին օմոնականները Առաքելից հափշտակել-տարել են նաև Զավեն Բաբայանի «Մոսկվիչ-412» մակնիշի, Անդրանիկ Բալայանի «Պոբեդա» մակնիշի, Վոլոդյա Համբարձումյանի և Սամվել Իսախանյանի «Ժիգուլի» մակնիշի ավտոմեքենաները, ինչպես նաև խորհրդտնտեսության ամբողջ տեխնիկան (2 կոմբայն, 12 տրակտոր, 6 բեռնատար ավտոմեքենա և այլ տեխնիկա):

Ձերբակալվածների ճակատագրերը մինչև հաջորդ օրն անհայտ էր: Նրանց հարազատների աչքերն ամբողջ գիշեր չէր փակվում...

- Իսկ մեզ Զեբրայիլի միլիցիայի շենքի տարբեր աշխատասենյակներում մինչև հաջորդ օրվա ժամը 15-ը խոշտանգում էին, կտտանքների ենթարկում, մեղադրում այնպիսի հանցագործությունների մեջ, որի մասին երևակայել անգամ չէինք կարող,-պատմում է Սամվել Իսախանյանը:

- Բան է, եթե այս անգամ էլ ձեր նկատմամբ մարդասիրություն ցուցաբերենք, ձեզ ազատենք, թեև դուք մեղադրվում եք Ադրբեջանի Հանրապետության դեմ քայքայիչ, տեռորիստական գործողություններ ծավալելու մեջ, որի համար մեր օրենքը պահանջում է կախաղանի ենթարկել այդպիսի գործով զբաղվողներին, մի ժամ անգամ չպետք է մնաք Ղարաբաղի հողում,- բոլոր ձերբակալվածներիս հավաքելով միլիցիայի ապակեպատ պատշգամբում՝ ասաց Բաքվից եկած մի չինովնիկ,- ավելացնում է Յուրի Բաղդասարյանը:

-Ղարաբաղում մի հայ անգամ չպիտի մնա, քանի դեռ ուշ չէ, ձեր հարազատների հետ սրբվեցեք մեր հողից,- մեզ տանելով Զեբրայիլի և Առաքելի սահմանագլուխը և ազատելով կալանքից՝ ասում էին միլիցիայի աշխատողները,- պատմում է Ալեքսանդր Պետրոսյանը:

ՎԵՐՋՆԱԳԻՐ՝ ԴԻՄՈՒՄ ԳՐԵԼ Վ. ՊՈԼՅԱՆԻՉԿՈՅԻՆ

Մի օր դադար տալուց հետո, մայիսի 15-ի առավոտյան Առաքելը նորից շրջապատել էին ԽՍՀՄ-ի ՆԳՆ զորքերի ստորաբաժանումները և Ադրբեջանի օմոնականները: Գյուղի փողոցներով մանրևում էին զրահամեքենաները, իսկ օմոնականների զինված խմբերը մտնելով տնից-տուն՝ ոսկեղեն, փող, թանկագին իրեր էին կողոպտում և բնակիչներին ստիպում, որ դիմում գրեն Վ. Պոլյանիչկոյին, որպեսզի իրենց փոխադրեն Հայաստան: Ովքեր փորձում էին հրաժարվել դիմում գրելուց, նրանց մինչև գիտակցությունը կորցնելը խոշտանգում էին: Օմոնականների սանձարձակ գործողություններից վրդովված պատերազմի և աշխատանքի վետերան Անդրանիկ Բալայանը փորձեց դիմել ռուս զինվորներին, կանգնեց մի զրահամեքենայի առաջ:

-Հեռացե՛ք ճանապարհից, ինչ է, ուզում եք զրահամեքենայի անիվների տակ կոտլե՞տ դառնաք,-գլուխը բարձրացնելով՝ բղավեց մի սերժանտ:

-Լավ է զրահամեքենայի տակ ջարդվել, քան այս բարբարոսությունները տեսնել: Որդի, ես պատերազմի մասնակից եմ, մենք թույլ չէինք տալիս, որ հիտլերականները Ուկրաինայի, Ռուսաստանի, Բելոռուսիայի բնակիչներին ծաղրուծանակի ենթարկեն, խոշտանգեն: Պատերազմի ավարտից 46 տարի հետո, որպես դրա պատասխան, դուք Ադրբեջանի կաշառքով հարբած՝ մարդասպան օմոնականներին թևութիկունք եք դարձել, որ մեր գյուղերն ավերեն, թալանեն, մեզ անպատվեն: Այդ հանցագործությունների համար օրենքն այսօր ձեզ չի մեղադրում, բայց Աստծո պատժից ոչ ոք չի խուսափի...

Ռուսական ճիշտ շեշտադրությամբ ասած այդ խոսքերը մխրճվեցին զինվորների սրտերը:

-Հայրիկ, մեզանից մի նեղացեք: Այո՛, կաշառքը մեր հրամանատարների գլուխները ևս թմրեցրել է: Մենք զինվորներ ենք, չենք կարող նրանց հրամանները չկատարել, թե չէ մեզ կարող են խիստ պատժել, նույնիսկ գնդակահարել և հայտարարեն, թե դա հայերն են կատարել...

Բազմաթիվ ահազանգերից հետո կեսօրին շրջկենտրոնից Առաքել են այցելել շրջմիլիցիայի ութ աշխատողներ, միլպետի տեղակալ Վլադիմիր Մարտիրոսյանի գլխավորությամբ: Առաքելում գտնվող հանրապետության ՆԳՆ նախարարի առաջին տեղակա Ռամիզ Մամեդովը միայն ատրճանակով զինված հայ միլիցիոներներին (ղարաբաղյան շարժման առաջին իսկ օրերից մարզի միլիցիայի բաժանմունքներից խլել են ավտոմատները) մեկուսացրել է ժողովրդից: Հետո նրանց բոլորին ձերբակալել է, ուղարկել Ջեբրայիլ: Մեկուսարանում նրանց պահել են երկու շաբաթ, այնտեղ նրանց այնքան խոշտանգել են, որ ազատվելուց հետո մինչև օրս էլ չեն ապաքինվում:

Այդ օրը Կիմ Սեյրանյանը, Վանյա Հովհաննիսյանը, Վասիլի Սարգսյանը, Սարգիս Հովհաննիսյանը, Սերյոժա Սաֆարյանը, Արմիկ Գրիգորյանը, Կառլեն Առաքելյանը, Սամվել Հայրյանը, Անդրանիկ Բալայանը և այլք հրաժարվել են Վ. Պոլյանիչկոյին դիմում գրելուց, որի համար մի լավ ծեծ են կերել, խոշտանգվել: Այսուամենայնիվ, օմոնականներին հաջողվել է զենքի ուժով մի քանի դիմում ևս կորզել, տանել Ջեբրայիլ:

Երեկոյան դեմ ամսի 13-ին ձերբակալվածներից առաջինը գյուղ է վերադարձել խորհտնտեսության տնօրեն Ռազմիկ Գրիգորյանը: Նա ոտքի վրա մի բան է կերել և շտապել գրասենյակ: Նրա հայրը՝ պատերազմի և աշխատանքի վետերան Խաչատուր Գրիգորյանը, որդու անսպասելի գալուց վատ բան է զգացել: «Ինչու՞ են Ռազմիկին այդքան շուտ արձակել, մինչդեռ մյուս ձերբակալվածները դեռ Ջեբրայիլում են: Եթե Ռազմիկը ինչ-որ բան է մատնել կամ ժողովրդի անունից նրանց խոստումներ է տվել, ապա նրան հավիտյան կանիծեմ»: Այդ մտորումներով նա որդու հետևից շտապեց գրասենյակ: Ճանապարհին համագյուղացիները նրան խեթ-խեթ նայեցին: Միթե՞ այն շշուկները, թե Ռազմիկը բոլոր առաքելցիների անունից ստորագրություն է տվել Ջեբրայիլի շրջմիլպետին, որ իրենք ցանկանում են փոխադրվել Հայաստան, ճիշտ են: Գյուղի երիտասարդներից ոմանք գրասենյակում Ռազմիկ Գրիգորյանին արդեն պատին էին սեղմել.

-Դու ոչ մի իրավունք չունես Առաքելի անունից, խորհտնտեսության մեջ միավորված գյուղերի անունից ստորագրություն տալ Ջեբրայիլի միլիցիային, որ, իբրև, իրենք կամավոր ցանկանում են փոխադրվել Հայաստան: Դու միայն քեզ համար ես պատասխանատու...

Երբ հայրը մտավ գրասենյակ, Մելո Համբարձումյանը արդեն կատաղած կանգնել էր իր որդու դիմաց, հարձակվելու դիրք ընդունել:

-Դու խորհտնտեսության հաշվին արդեն հարստացել ես և, երևի, ուզում ես Սև ծովի ափին տուն գնես, բայց ես, իմ հարազատները, մյուս առաքելցիները մտադիր չենք լքել մեր ապուպապերից ժառանգած գյուղը: Ուստի պահանջում ենք մեր անունից ոչ մի փաստաթուղթ չտալ Մամեդովին:

-Ռազմիկ, քեզ ինչու՞ են բոլորից շուտ արձակել,- երբ ամբոխը փոքր-ինչ խաղաղվեց, հարցրեց հայրը:

Որդին կմկմալով ասաց.

-Ես միայն իմ անունից եմ դիմում գրել, որ մեր ընտանիքը փոխադրեն Հայաստան: Եթե չգրեի, ինձ Ադրբեջանի բանտերում կփտեցնեին...

-Ես քեզ հավիտյան կանիծեմ, եթե դու անգամ թիքա-թիքա անելու սպառնալիքի տակ որևէ ստոր բան կանես այս ժողովրդի հանդեպ:

Նույն օրվա երեկոյան Ջեբրայիլի շրջմիլպետը ուրախ տրամադրությամբ կապվեց գեներալ Ասադովի հետ (նրա ձայնը լսել է ձերբակալվածներից մեկը և այդ մասին պատմել է ինձ).

-Մամեդ Նաբիևիչ, տովարիշչ գեներալ, Առաքելից 10-15 դիմում եմ կորզել, նրա խորհտնտեսության դիրեկտորից ևս համապատասխան դիմում եմ վերցրել, դրել գործերի մեջ: Նրանք բոլորն էլ խնդրում են Ադրբեջանի կառավարությանը, որպեսզի իրենց Հայաստան փոխադրեն:

-Էտո նե գոդիդցա,[1]- ասես յոթերորդ երկնքից հնչեց նախարարի

1. Այդպես պետք չէ:

ձայնը: - Պետք է գրեն, որ իրենք խաղաղ ապրում էին ադրբեջանցիների հետ, բայց Զորի Բալայանը, Իգոր Մուրադյանը խառնել են իրենց հաշիվները, իրենց կռվեցրել ադրբեջանցիների հետ: Հետևաբար իրենք այլևս չեն կարող ապրել Ադրբեջանի հողում, ուստի խնդրում են Վ. Պոլյանիչկոյին և ոչ թե Ադրբեջանի կառավարությանը, որպեսզի իրենց մեքենաներ տրամադրի կամավոր Հայաստան մեկնելու համար:

-Ճիշտ այդպես կձևակերպեմ, յոլդաշ գեներալ:

-Վոտ, տակ: Մյուս գյուղերի բնակիչներից է՞լ ես դիմումներ վերցրել:

-Այո:

-Վաղը, մյուս օրը սկսեք օպերացիան: Միանգամից Առաքել, Բինյաթլու, Ջիլան, Դաշբաշի, Մուլքադարա, Դոլանլար, Բանածոր ուղարկեք 900-1000 բեռնատար ավտոմեքենաներ, որպեսզի քամու արագությամբ այդ գյուղերի բոլոր բնակիչներին տեղափոխեն Հայաստանի սահմանը: Մեր օմոնականները և խորհրդային զինվորականները սահմանագլխին սպասում են, որ ձեր ուղարկած մարդկանց ընդունեն, ապա Հայաստանին հանձնեն: Օ նաչալե օպերացի պոզվոնիտե տոլկո մնե[1]:

-Բաշ ուստա:

Կես ժամ հետո Ռազմիկ Գրիգորյանին նորից հրավիրեցին Ջեբրայիլ: Փոխգնդապետը ուրախ տրամադրության մեջ էր: Նրա աչքերի մեջ խինդ էր շողում:

-Նստիր, Ռազմիկ Խաչատուրովիչ, ինչ թելադրեմ այն էլ գրիր:

Երբ վերջացրեց թելադրությունը խորհրդավոր ժպտաց.

-Քո այդ դիմումը հաստատիր ստորագրությամբ ու կնիքով:

Ապա դիմումը դնելով պողպատակուռ սեյֆի մեջ՝ ասաց.

-Քո այդ ծառայության համար, խոսք եմ տալիս, քո ընտանիքը, ունեցվածքդ առոք-փառոք փոխադրել Գորիսի սահման: Այնուհետև Ալլահը թող քեզ հետ լինի: Հիմա կարող ես գնալ գյուղ, բայց տեղահանության մասին առայժմ ոչ ոքի դեռ բան չասես: Աշխարհի բանը չի իմացվի, գուցե փալանգը մեր հաշիվները խառնի: Քո ունեցվածքը դասավորիր, պատրաստիր, որ մեր ուղարկած մեքենաներով տեղափոխես: Ինչ անենք, Զորի Բալայանը, Իգոր Մուրադյանը և նրանց արբանյակները ձեր գլխին մի այնպիսի փորձանք են բերել, որ չեք կարող մեզ հետ ապրել...

Մայիսի 16-ի առավոտյան գյուղը նորից շրջափակել էին ռազմական տեխնիկայով: Նրա փողոցներում, հրապարակներում ավելի քան 250 բեռնատար ավտոմեքենաներ էին մեկնարկել բնակչությանը բռնագաղթելու համար: Շարժվելու տեղ չկար: 150-200 օմոնականներ, բաժանվելով խմբերի, խուժում էին առաքելցիների տները: Մի օմոնական խռպոտ ձայնով, բարձրախոսով հայտարարում էր.

-Հառաքյուլցիներ, ձեզ 2-3 ժամ ենք հատկացնում, շուտ հավաքվեք մեքենաների մոտ, որպեսզի ձեզ տեղափոխենք Հայաստան, որին միանալու մասին ահա չորս-հինգ տարի է աղմկում եք: Տեղահանությունից խուսափողներին գնդակահարելու ենք:

Տասը-տասնհինգ անգամ կրկնվեց այդ հայտարարությունը, բայց ոչ մի առաքելցի տնից դուրս չեկավ, որ մեկնի Հայաստան: Դա կատաղեցրեց օպերացիայի կազմակերպիչ, բարձրաստիճան խանին: Նա կարգադրեց բոլոր առաքելցիներին քաշքշելով մեքենաների մոտ բերել, տեղավորել նրանց թափքերում: Երկու օմոնական բռնելով ուսուցիչ Վանյա Հովհաննիսյանի թևերից՝ քաշեցին դեպի իրենց տան մոտ կանգնած բեռնատարն, ասելով՝ գնա Հայաստան, թող հիմա նրա ղեկավարները ձեզ հաց տան: Բավական է, ինչքան մեր հացը կերել եք:

Գյուղի մյուս թաղում էլ երկու օմոնական Սվետա Սեյրանյանին տանում էին դեպի մեքենան, շատ ես միացու՛մ, միացու՛մ բացականչել, հիմա գնա միացիր Հայաստանին, որ հացը մեզ հերիքի, չէ՞ որ մենք յոթ միլիոն ժողովուրդ ենք...

-Ես ոչ մի տեղ չեմ գնա, նոր հողին հանձնած իմ ամուսնուն մենակ չեմ թողնի, աղաչում եմ, թողեք մնամ գյուղում,- արցունքներն աչքերին ասում էր սգավոր այրին:

-Արխային մնա, ձեր նախնիների գերեզմանատունը չեք մոռանա, հողին կհավասարեցնենք, տապանաքարերն էլ կվաճառենք, որ փող վաստակենք...

1. Օպերացիան սկսելու մասին կզանգահարեք միայն ինձ:

-Ինձ խնայեք, թողեք մնամ գյուղում, իմ կինն ադրբեջանուհի է, որի հետ ահա քառորդ դար է, ինչ սիրով ապրում եմ,-դեպի մեքենան իրեն քաշող օմոնականներին ասում էր անասնաբույժ Հրանտ Սահյանը:

-Քո կինն արժանի է կախաղանի, քանի որ հայի հետ ընտանիք է կազմել, գյավուրների համար երեխաներ ծնել...

-Գյավուրն, անաստվածը դուք եք,- խոշտանգվող ամուսնուն փրկելու նպատակով թաքստոցից դուրս գալով՝ ասաց Էլմիրան:

Մի օմոնական մոտեցավ դողացող կնոջը , թքեց նրա դեմքին և ձգելով՝ տարավ դեպի բեռնատարը. գնա, քեզ նման քած շունը իրավունք չունի ապրելու մեր այս սուրբ հողում...

-Հալվա-հալվա ասելով՝ բերանը չի քաղցրանում: Այնպես որ այս հողը Ադրբեջանինն է ասելով՝ Ադրբեջանինը չի դառնա, որովհետև հայերի նախնիներն են այստեղ հուշարձաններ կառուցել, և այդ հուշարձանների ճակատներին հայկական տառերով գրություններ կան, իսկ դուք դեռ սեփական գիր չունեք, գոնե ամաչեք ձեր բռնած գործից: Վաղն էլ կարող եք հայտարարել, թե Կանադան Ադրբեջանի հողն է: Ո՞վ կհավատա ձեզ:

Լսելով այդ ճշմարտությունը ադրբեջանուհու բերանից, օմոնի խմբի ավագը կատաղեց և ուժգին մի ապտակ հասցրեց Էլմիրային: Նա երերալով ընկավ գետնին: Ամուսինը փորձեց իր կնոջն անպատվելու համար վրեժ լուծել օմոնականից, սակայն նրան էլ արժանացրին կնոջ բախտին:

Այո, առաքելցիները համառորեն չէին ուզում թողնել իրենց օջախները, բայց օմոնականները ավտոմատներով սպառնալով՝ նրանց քշում էին դեպի բեռնատարները, թույլ չէին տալիս, որ գյուղից հեռանային: Ոմանք իրենց տեղաշորերը, պարենային մթերքները օմոնականների ուղեկցությամբ տանում էին ավտոմեքենաների մոտ: Օմոնականներն ակնապիշ զննում էին, թե որ թափքի կապոցներն են չաղ, յուղալի, որպեսզի ճանապարհին խլեին, յուրացնեին:

-Այս ի՞նչ վայրենություն է, ու՞ր էք մեզ տանում: Մենք չենք կարող մեր նախնիների տապանաքարերն անտեր թողնել,-իր տան դարպասին կառչելով՝ ասում էր Սերյոժա Սաֆարյանը:

-Քո տղային ձերբակալել ենք, որ այստեղից գնաս, ռադ լինես: Սակայն նոր ես լեզուդ բլբլացնում,-ավտոմատով հարվածելով նրա երիկամներին՝ ասաց մի օմոնական:

-Ինչու՞ իմ երկու տղային, աղջկանը ձերբակալել էք, Ջեբրայիլ տարել, որ ձեր կամքը կատարենք, գյուղը թողնենք գնանք,- իր բակում ասում էր Կառլեն Առաքելյանը: Այս բռնության համար դուք, միևնույն է դատարանում պատասխան եք տալու...

-Դուք՝ հայերդ, 1915թ.-ից մինչև հիմա Թուրքիային սպառնում եք դատարանով, բայց ոչ նրա՝ ձեզնից հափշտակած հողերն եք վերադարձնում, ոչ էլ նրա ձեռքով մորթած 1,5-2 միլիոն հայերին եք հարություն տալիս: Ուրեմն ավելի լավ չէ՞ լռեք, մեր պահանջները կատարեք և ոչ թե սպառնալիքներ կարդաք մեր գլխին,-նրան տապալելով գետնին՝ ասաց վավաշոտ դեմքով մի օմոնական:

Շահեն Իսախանյանին քաշքշելով՝ բերելով բեռնատարի մոտ, օմոնականներից մեկը դառնալով այդտեղ գտնվող Բաքվից գործուղված աղային, ասաց.

-Յոլդաշ մայոր, բնակիչներից շատերը իրենց տուն-տեղը թողած՝ տեղահանությունից փախչում են, Ղարաբաղի հողից չեն ուզում պոկվել, մինչդեռ մեր նպատակն է, որ այստեղ մի հայ էլ չմնա...

-Ինչպե՞ս են փախչում, չէ՞ որ ռուս զինվորները զրահամեքենաներով ու տանկերով գյուղի ելումուտը փակել են:

-Ռուսներին չպետք է հավատալ: Նրանք ևս հայերի պես քրիստոնյաներ են,-միջամտեց սևամորթ մի լեյտենանտ:

-Հետևաբար պետք է շարժման հրաման տանք, այլապես մեքենաների մոտ բերվածներն էլ կփախչեն, և մենք գեներալի մոտ կխայտառակվենք:

Օմոնականների այս վայրենի գործողությունները իր տան պատշգամբից դիտող, նախօրեին Ջեբրայիլում խոշտանգված Երվանդ Ղահրամանյանը ինքնին մտորում էր. «Այս վայրենի հանրապետությունում մենք ինչպե՞ս ենք ապրել: Կոմունիստները դեռ մեղադրում են ցարին: Համենայն դեպս, նա թույլ չէր տա, որ իր երկրի ներսում մի ազգ մյուսին հոշոտի, չորս-հինգ տարի նրան շրջափակի, որ նրա բնակչությանը խեղդամահ անի, նրան կողոպտի: Այսպիսի հանցագործությունների համար չպատժելով Ադրբեջանին, նրա իշխա-

նությունները հիմա էլ զենքի ուժով Ղարաբաղի բնիկ ժողովրդին բռնագաղթում են...»:

Այդ մտորումների մեջ էր նա, երբ հինգ օմոնական մտան նրա բակ:

-Երվանդ մուալլիմ, շուտ մի պայուսակ, երկու-երեք տեղաշոր վերցրու, տնից դուրս եկ,-հրամայեց նրանց ավագը:

-Իսկ ունեցվածքս, տարիների հալալ վաստակով ստեղծած հարստությունս, գրքերս, - լացակումած հարցրեց նա:

-Մի անհանգստանա, հառաքյուլցիների հարստությունն արդեն բաժանել ենք մեր միջև: Շուտ, շուտ դուրս եկ տնից,-ավտոմատը ուղղելով նրան ավելացրեց իր նախկին աշակերտի որդին, որ մինչև ղարաբաղյան դեպքերը բազմիցս հյուրընկալվել էր իր տանը:

Երվանդ Ղահրամանյանը հայացքով մի անգամ ևս չափեց հայրենի գյուղը, հիշեց ուսուցիչ իր ընկերոջը՝ Արտաշես Աբրահամյանին: Նոր էին վերադարձել Հայրենական պատերազմից և լծվել գյուղի ապաքինման դժվար գործին: Արտաշեսն աշխատում էր Բանաձորի միջնակարգ դպրոցում, ինքը՝ Ջեբրայիլի: Գործից հետո վերադառնում էին գյուղ, մտորում նրա ապագայի մասին:

-Ես որոշել եմ թողնել գյուղը, քաղաք գնալ, որովհետև Ադրբեջանը միշտ էլ ծգծգելու է մեր մարզի սոցիալական պրոբլեմների լուծումը: Թույլ չի տալու, որ մեր գյուղերն ազատ շունչ քաշեն,-մի օր ասաց Արտաշեսը:

-Ես մնալու եմ գյուղում, չեմ կարծում, որ նրա վաղը, ապագան վատ լինի: Ժամանակավոր դժվարությունները պատերազմի հետևանք են:

-Երվանդ, դու միշտ ինչ-որ ռոմանտիկայով ես հրապուրվել, բայց այս անգամ ինձ լսիր, մի կողմ թող Ջեբրայիլի քթի տակ գտնվող մեր գյուղի ապագայի հետ կապված վարդագույն երազները: Կոմունիստական ֆրազներով մեր աչքին թոզ փչող Ադրբեջանի իշխանությունները հայերի նկատմամբ թուրքական քաղաքականություն են վարում: Նրանց գլխավոր նպատակը մեր հայկական մարզը ադրբեջանականացնելն է: Կգա ժամանակ, որ մեր բնակավայրերն անգամ խմելու ջրի կարոտ կմնան: Քանի դեռ երիտասարդ ենք, արի քաղաք մեկնենք, մի քանի տարի մարդավարի ապրենք...

Արտաշեսը մեկնել է քաղաք, բայց ինքը մնացել է գյուղում, նրա համար գեղեցիկ շատ գործեր կատարել: Նրա անմիջական նախաձեռնությամբ է, որ գյուղում վեր է խոյացել մեծ Հայրենականում զոհված առաքելցիների հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթողը, որ գտնվում է իր տան դիմացի հրապարակում: Երվանդը մի առանձին սիրով է ստեղծել հայ ժողովրդի մեծ զորավար Հովհաննես Բաղրամյանի նկարը, որի կուրծքը զարդարում են Խորհրդային Միության հերոսի երկու աստղը, մյուս շքանշանները: Նա ակամա նայեց այն հրապարակին, որտեղ հառնում էր հուշարծանը, մարշալի նկարը: Հինգ-վեց օմոնական պղծում էին հուշարծանը, քանդում, ջարդում այն: Նրանք գնդակոծում էին մարշալի նկարը:

-Երվանդ մուալլիմ, ի՞նչ ես մտորում, դունյա բելա գյալդի, բելա դա գյեդաջաք[1]: Ուժեղը միշտ թույլին ճնշելու է: Այդ հասարակ բանը դուք չեք հասկանում: Վերակառուցման, դեմոկրատիայի գորբաչովյան կեղծ գաղափարներով գայթակղվել եք, Մոսկվային հազարավոր դիմումներ ուղարկել, որ միանաք Հայաստանին: Մենք էլ միլիոններով փող ենք ժողովել, Մոսկվային կաշառել: Ի՞նչ ես կարծում, դիմումները, բաց նամակները կհաղթե՞ն, թե՞ ոսկին: Մեր ծախսած միլիոնները պետք է ձեզնից վերցնենք: Քո տուն-տեղը 35-45 հազար ռուբլի չարժե՞: Արժե: Սակայն մի քանի ժամից հետո նա արդեն մերն է: Յուրաքանչյուր հառաքյուլցուց այդքան գումար ենք վերցնելու: Հաշվիր, թե քանի միլիոն է դառնալու: Այդ գումարի մի մասը մենք ենք վերցնելու, մի մասն էլ Մոսկվային ենք տալու, որպեսզի մեր այս հանցագործությունն էլ քողարկի, աշխարհին հայտնի, որ Հառաքյուլի հայերը կամավոր են մեկնել Հայաստան: Կարևորն այն է, որ այդպես հայտարարեն: Իսկ թե դրան կհավատան, չեն հավատա, դա կարևոր չէ: Մինչև կպարզվի, թե ո՞վ է արդարացի, ո՞վ մեղավոր, տարիներ կանցնեն, և ամեն ինչ կմոռացվի: Յոթանասուն տարի մեր մեջ ապրել եք, բայց մեզանից մի բան չեք սովորել, որի համար տուժում եք:

Դունյա բելա գյալդի, բելա դա գյեդաջաք,- ընդհանրացնելով իր

1. Աշխարհն այսպես եկել է, այսպես էլ գնալու է:

«փիլիսոփայությունը»՝ օմոնականը Երվանդին հրելով տարավ դեպի մարդատար ավտոմեքենան:

Ջեբրայիլի մուտքի մոտ քառասուներկու ընտանիք բռնագաղթող ավտոշարասյունը, որի առջևից և հետևից ուղեկցում էին օմոնականներով լի «ՈՒԱԶ» մակնիշի ավտոմեքենաներ, առաջին կանգառը կատարեց: Այդտեղ շարասյանը սպասում էին հանրապետության ՊԱԿ-ի մի խումբ աշխատողներ: Նրանք պահանջեցին, որ բոլոր մեկնողները Վ. Պոլյանիչկոյի հասցեով դիմում գրեն, որ իրենք կամավոր են մեկնում Հայաստան: Եվ առաքելցիներին տվեցին այդ բովանդակության պատրաստի դիմումների տեքստերն ու կարգադրեցին, որ ստորագրեն:

-Ես չեմ ստորագրի: Ես կամավոր չեմ թողնում մեր երկրամասը, Չինգիզ խանը, Նադիր շահի հորդաններն անգամ այսպիսի բարբարոսություն չեն կատարել, իրենց բնակավայրերից բնակչությանը զանգվածաբար բռնատեղահան չեն արել, ինչպես դուք եք կատարում: Այժմ հարցերը ավտոմատով, զենքով չեն լուծում,- ասաց Վոլոդյա Ավանեսյանը:

-Հիտլերի բանակն այսպես մարդկանց չէր խոշտանգում, ինչպես դուք եք խոշտանգում հայերին: Կաշառված կենտրոնն էլ լռում է,- Վոլոդյայի համարձակ խոսքերով գոտեպնդված՝ ասաց Կիմ Սեյրանյանը:

Ավտոմատի կոթի հարվածով երկուսի ձայն էլ խլացվեց:

Կյանքի 80-ամյակի շեմին գտնվող Գուրգեն Գյուլիշանյանը, դիմելով համագյուղացիներին ասաց. «Հարգելի համագյուղացիներ, զինված ավազակախմբերին անզեն չենք կարող դիմադրել: Գրեցեք ինչ թելադրում են: Միևնույն է, այդ թղթերով նրանք չեն կարող աշխարհին խաբել, ապակողմնորոշել...»:

-Չէ, ես չեմ գրի, թող ինձ այստեղ սպանեն: Ես իմ ցանած ոսկեգանգուր արտերից չեմ բաժանվի: Բաքուն ուզում է համապատասխան փաստաթուղթ ստեղծի, որպեսզի դրանով արդարացնի այս բռնագաղթի փաստը: Կրավչենկոն էլ, փառք Աստծո, իսկույն «Ժամանակ» ծրագրով ինֆորմացիա է տալու, որ Առաքելի հայերը որոշել են մեկնել Հայաստան,- ասաց տրակտորիստ Սերյոժա Սաֆարյանը:

Հաղթանդամ մի օմոնական ատրճանակի կոթով խփեց Սերյոժայի գլխին: Կապիտանի տարազի մեջ փքված մի աղա դիմելով առաքելցիներին, ասաց. «Եթե չստորագրեք, ապա ձեզ այս (նա ձեռքը ուղղեց ավտոշարասյան մոտ վխտացողներին) մոլեռանդ մուսուլմանների կերակուրն եմ դարձնելու»...

...Լեռներում նորից ամպեր էին կուտակվում, մթնոլորտը խոնավանում էր, երբ ավտոշարասյունը մեկնեց Ջեբրայիլից: Բնությունը ԽՍՀՄ-ի ՆԳՆ զորքերի և Ադրբեջանի օմոնականների այդ վայրենության համար ասես ամաչում էր և ահա-ահա լաց է լինելու, որ երկրի երեսից մաքրի ադրբեջանցիների ձեռքով կատարված այս ոճրագործության արյունոտ հետքերը:

Մինչև Գորիսի սահմանագլուխը հասնելը, ավտոշարասյունը կանգ է առել Իմամբաղ, Շքյուրբեյլի, Սոլթանլու, Գոյաչի Վեյսալի, Աղալար, Խանլիք ադրբեջանական գյուղերում: Այդ գյուղերի նախորոք հրահանգավորված բնակիչներն իսկույն շրջապատում էին նրան, հայերին ծաղրուծանակի ենթարկում, զենքով սպառնալով նրանց, ինչքը թալանում: Հայաստանի հողը մտնելիս բեռնատարների թափքերը գրեթե դատարկ էին, թալանչի ադրբեջանցիներն արդեն հասցրել էին հափշտակել բեռների վերջին ընտիր ապրանքները: Սահմանագլխին գտնվող օմոնականները և զինվորները բռնագաղթվածներին «ընդունել» են: Նրանք երեք օր հյուրընկալվել են բաց երկնքի տակ: Նրանց ունեցվածքի մի մասն էլ այդտեղ է անհետացել:

Բռնատեղահանությունից խուսափած քառասունվեց ընտանիքներ, թաքնվելով գյուղի այգիներում, հանդերում, մի քանի օրվա ընթացքում տեղափոխվեցին Հադրութ: Շրջկենտրոնի բնակիչներն այդ ընտանիքներին ընդունեցին գրկաբաց:

ՄԱՐՇԱԼԸ ԳՆԴԱԿՈՃՎԱԾ Է, ՍՊԱՆԵՐԸ ԽՈՒՃԱՊԻ ԵՆ ՄԱՏՆՎԵԼՈՒ

ԽՍՀՄ-ի ՆԳՆ ստորաբաժանումների և Ադրբեջանի Հանրապետության օմոնի համատեղ ջանքերով ԼՂԻ Մարզի հարավային դարպաս Առաքել գյուղի ավերման, նրա խաղաղ բնակչության բռնագաղթի, 33

երիտասարդների, կանանց ու տղամարդկանց անօրեն ձերբակալման լուրը հավքի թևով հասավ Արցախի ամեն մի անկյուն:

Իմ կոլեգաների հետ տաք-տաք վիճաբանում էինք այդ բռնագաղթի մասին, գուշակում, թե այս անգամ ԽՍՀՄ-ի նախագահ Մ. Գորբաչովը ինչպես է արդարացնելու, սվաղելու պետական այդ հանցագործությունը, ինչպես փորձել է արդարացնել հայերի սումգայիթյան ջարդը, ցեղասպանությունը, ընդգծել, որ բանակը հայերին օգնելու համար ընդամենը երեք ժամ է ուշացել, մինչդեռ Սումգայիթում երեք օր հայերի արյուն էր հեղում: Այդ խոսակցության ժամանակ մեր աշխատասենյակ մտավ մի զինվոր և խնդրեց, որ մի քանի րոպե իր հետ առանձնանամ:

-Խնդրում եմ, որ իմ անձի ու պաշտոնի մասին ոչ մի բան չհրապարակեք, որովհետև ձեր մարզում մի այնպիսի խճճված քաոսային վիճակ է ստեղծվել, որ ցանկացած րոպեում, ցանկացած մարդու կարող են կուլ տալ, անհետացնել: Այսուամենայնիվ, ես ձեզ մի փաստաթուղթ եմ տրամադրում, կարծում եմ, դա պետք կգա սերունդներին:

Ստորև հրապարակու եմ այդ փաստաթղթը:

«Ես ազգությամբ ռուս եմ, շարքային զինվոր: Ես էլ մեր զրահամեքենաների խմբում մասնակցել եմ Առաքել գյուղի բռնագաղթի խայտառակ գործին: Բռնատեղահանության նախօրեին մեզ՝ ռուս զինվորներիս, հավատացնում էին, թե ԼՂԻ Մարզի հայկական գյուղերում մինչև ատամները արտասահմանյան զենքով զինված գրոհայիններ կան, որոնք, իբրև, երդվել են բնաջնջել ադրբեջանցիներին ու ռուս զինվորներին: Հետևաբար նրանց պետք է ձերբակալել, Ադրբեջանի բանտերը տանել: Սակայն Առաքելում ամսի 13-ին անձնագրային ռեժիմը ստուգելիս, որը փաստորեն ոչնչով չէր տարբերվում թալանից, ոչ մի գրոհայինի չենք հանդիպել: Այսուամենայնիվ, օմոնականները ձերբակալում էին բոլոր երիտասարդներին, աչքաբաց տղամարդկանց, կանանց: «Դրանք գյուղի սովորական բնակիչներ են, ինչու՞ եք ձեռբակալում»: Մեր այդ հարցին օմոնականները պատասխանում էին. «Հայկական գյուղերի բոլոր բնակիչներն էլ գրոհայիններ են, որովհետև ահա 3-4 տարի է, ինչ համախմբվել են ինքնորոշման համար պայքարի դրոշի տակ, մեզ չեն ենթարկվում»: Գյուղի խորհրդեսության գրասենյակի մոտ փակցված էր մարշալ Հովհաննես Բաղրամյանի յուղաներկ նկարը (հայերը իրավունք ունեն հպարտանալու տաղանդավոր այդ զորավարով): Օմոնականները ավտոմատներով և ատրճանակներով գնդակոծել, այլանդակել են մարշալի նկարը: Այդ վանդալիզմը մեզ վրա տհաճ տպավորություն թողեց: Եթե այդ բարբարոսությանը վերջ չտրվի, վաղն էլ կարող են գնդակոծել մարշալ Ժուկովի, գեներալիսիմուս Սուվորովի, հանրահռչակ օդաչու Կոժեդուբի նկարները, այլանդակել Նևսկի պողոտայի Կուտուզովի հուշարձանը, Ձմեռային այգու կոթողները և այլն: Հետևաբար մեր երկրում ոչ մի սրբություն չի մնա: Իմ այս մտորումների մասին ես համարձակ պատմել եմ իմ ընկերներին: Նրանցից շատերը ինձ խեթ-խեթ են նայել, իսկ ինձ հետ շատ մտերիմ սերժանտ Ա. Բ.-ն ինձ նախազգուշացրել է. «Այսուհետև բարձրաձայն այդպիսի դատողություններ չանես, այլապես քո գլուխը կթռցնեն»:

Ես նկատում էի, որ օմոնականները, ադրբեջանցի չինովնիկները մի առանձին լկտիությամբ էին խոսում հայ ազգի նշանավոր մարդկանց մասին, ժխտում նրանց այս կամ այն բնագավառում կատարած ակնառու դերը: Մի անգամ ռիսկ անելով՝ նրանց ասացի՝ հայերը շախմատի աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյան, Գարի Կասպարով, ավիակոնստրուկտոր Արտյոմ Միկոյան, գունավոր հեռուստացույցների գյուտարար Ադամյան, սև մետալուրգիայի խոշոր մասնագետ Իվան Թևոսյան, Հայրենական պատերազմի կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյան, հանրահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյան և հարյուրավոր այլ գործիչներ են տվել աշխարհին: Ոչ ոք դա չի ժխտում, ձեզնից բացի...»

Առաքելում էլ չհամբերելով՝ մի օմոնականի կոպտել եմ. «Ի՞նչ է արել ձեզ մարշալ Բաղրամյանը, որ նրա նկարը գնդակոծել, այլանդակել եք»: «Մարշալը գնդակոծվել է, սպաները՝ խուճապի են մատնվելու»,- լկտիաբար քրքջալով պատասխանեց նա և մեկնաբանեց իր «գյուտը». «Մարշալ Բաղրամյանի անվան խորհրդեսության կենտրոնական ագարակ Հառաքյուլ գյուղը գրավել ենք, նրա մեջ միավորված մյուս չորս գյուղերը խուճապի են մատնվելու»:

Բնիկ ժողովրդին իր գյուղերից բռնատեղահան անելու խայտառակ գործից խուսափելու համար ես ինձ հիվանդ եմ ձևացրել, հոսպիտալ ընկել: Օմոնականները, այո՛, առանց ԽՍՀՄ-ի ՆԳՆ ստորա-

բաժանումների օգնության չէին կարող հայկական գյուղերը դատարկել: Մեր հրամանատարները անխտիր պաշտպանում էին արբեջանցիներին, նրանց ղեկավարների հետ օր ու գիշեր խորհված ուտում, խմում: Նրանցից մեր հրամանատարները թանկագին գորգեր, գունավոր հեռուստացույցեր, այլ իրեր էին ստանում: Մենք դա տեսնում էինք, ատելությամբ լցվում նրանց նկատմամբ: Եվ չէինք զարմանում, թե ինչու հայերի արդար գործը թողած՝ ադրբեջանցիների անօրեն գործերն էին պաշտպանում: Իսկ հայերի և ադրբեջանցիների առճակատումն, ըստ իս, կարմիր Մոսկվայի կամքն էր: Նա ցանկանում էր խեղդել ղարաբաղյան շարժումը, որպեսզի երկրի մյուս ազգերն ազատագրական դրոշ չպարզեին: Տարբեր ազգեր իրար դեմ հրահրելու այդ նենգ ծրագրի համար հայերն ու ադրբեջանցիներն անթիվ զոհեր էին տալիս: Հետևաբար մարզի հիմնահարցը պետք է լուծել ոչ թե զենքի ուժով, կենտրոնի, Բաքվի կամ Երևանի կամքով, այլ մարզի բնակչության կամքով, հանրաքվեի միջոցով, ինչպես նման բնույթի հարցեր լուծում են քաղաքակիրթ երկրները: Մի օմոնականի, որը հարբած էր, ես հարցրել եմ, թե ինչու 1988 թվականի գարնանը, երբ Ստեփանակերտը ինքնորոշման դրոշ է պարզել, Բաքուն զենքի ուժով չի ստիպել, որ Ղարաբաղի հայերը հրաժարվեն ինքնորոշման պայքարից, ինչպես դրան ձեռնամուխ է եղել 1991 թվականի գարնանը: Նա ինձ պատասխանեց. «Հարցերն ու պրոբլեմները լուծում են հերթականությամբ: Այն ժամանակ Բաքվում, Գանձակում, Շամխորում, Իսմայլիում, Մինգեչաուրում և Ադրբեջանի այլ բնակավայրերում ավելի քան 350-400 հազար հայեր էին ապրում: Մենք առաջին հերթին նրանցից ազատվել ենք, նրանց վռնդել մեր հողերից, նրանց գույքը, ունեցվածքը կողոպտել, բնակարաններում էլ ազերիներ վերաբնակեցրել: Հիմա էլ, օգտվելով երկրում տիրող քաոսից, ուզում ենք փոքր Հայաստան հանդիսացող Ղարաբաղն ազատել հայերից, որպեսզի պարարտ հող ստեղծենք Զանգեզուրը ու ողջ Հայաստանը գրավելու համար: Դրանից հետո Ադրբեջանը իր ավագ եղբոր՝ Թուրքիայի հետ իրականացնելու է Անդրկովկասը մյուս ազգերից մաքրելու ծրագիրը...»:

Քանի դեռ ուշ չէ, պետք է խափանել Ադրբեջանի այդ ծրագիրը, ազգային թշնամության հունդեր սերմանողներին խիստ պատժել: Չպատժելով Սումգայիթի ջարդի կազմակերպիչներին՝ երկրում Ֆերգանայի, Օրշի, Վիլնյուսի, Թբիլիսիի միկրոապստամբություններ եղան: Չդատապարտելով Ղարաբաղի բնիկ ժողովրդի այս բռնագաղթը, վաղը կարող են Մոսկվայից բռնագաղթել ռուսներին, այնտեղ վերաբնակեցնեն թուրքերին:

Հարգանքներով՝ Օ. Ս»:

07.07.1991

Ադրբեջանի օմոնականներն, այո՛, ռուս զինվորներից չէին թաքցնում իրենց պլանները. Առաքելի բռնագաղթից հետո նրա խորհրդատեսության մեջ միավորված սակավամարդ Բինյաթլու, Ջիլան, Քարագլուխ, Մուլքադարա գյուղերի բռնագաղթը իրենց համար խաղ ու պարի գործ է լինելու: Նրանք առաջինը շրջափակել էին Բինյաթլու գյուղը: Դեռևս մայիսի 10-ին, երբ օմոնականները դեռ Առաքել չէին մտել, Ջեբրայիլի շրջանի Խիբարլու գյուղի բնակիչներ Կարա Սալման Օղլին, Շամիլ Ջամիլ օղլին, Գաբիլ և Ֆամիլ Աբիլ օղլի եղբայրները վխտում էին Բինյաթլվիի շուրջը, բայց չէին հանդգնում գյուղ մտնել: Բանն այն է, որ դեռ 1989 թվականի աշնանը, երբ հրապարակվել է կոոպերացիայի մասին օրենքը, մի խումբ հայ երիտասարդներ նախաձեռնել են հարթավայրային այս գյուղում հացահատիկի և սիսեռի արտադրության կոոպերատիվ ստեղծել: Նրանք վերանորոգել են գյուղի լքված տները, որպեսզի այդտեղ ապրեն, հաց ու սիսեռ արարեն: Սակայն Ջեբրայիլը դրա մեջ տեսել էր իր դեմ ռազմական օբյեկտների շինարարության նման մի բան և հանրահավաք կազմակերպել, պահանջել, որ արգելվի այդ կոոպերատիվի գործունեությունը: Այդ հանրահավաքից հետո 100-150 ադրբեջանցի բաշիբուզուկներ անսպասելիորեն հարձակվել են Բինյաթլվի վրա: Գյուղի երիտասարդները, մյուս բնակիչները նրա բարձունքում լավ դիրք բռնելով՝ ադրբեջանցի «իգիթներին» դիմավորել են որսորդական հրացաններով: Ջեբրայիլցիները չեն կարողացել ճեղքել պաշտպանության գիծը, թեև զինված էին նաև ավտոմատներով: Նրանք ստիպված թողել են Բինյաթլուն, բայց կոոպերատիվի խափանման գործից չեն հրաժարվել: Ջեբրայիլի կուսշրջկոմի թելադրանքով Հադրութի կուսշրջկոմի բյուրոկրատ-չինովնիկ քարտու-

ղարները ոչ միայն վետո են դրել Բինյաթլվի կոոպերատիվի վրա, այլև նրա կազմակերպիչներին հեռացրել են գյուղից:

... Կարծելով, թե գյուղում դեռ նման երիտասարդներ կային, խիբարլվեցիներն, այնուամենայնիվ, չէին համարձակվում գյուղ մտնել:

Մայիսի 13-ին, մոտավորապես ժամը 10-ին երկու զրահամեքենա են ուղարկվել Բինյաթլու նրա առաջնորդ Ժորա Ավագյանին ձերբակալելու համար: Այդ հրամանին անտեղյակ՝ Ժորան Առաքել էր գնում իմանալու, թե ինչ է սպասվում իրենց գյուղի բնակչությանը: Զրահամեքենաները նրան ձերբակալել են ճանապարհին: Համոզվելով, որ գյուղից 1989 թվականի դեպքերի մասնակիցները հեռացել են, իսկ Ժորան ձերբակալված է, թալանի մոլուցքով արբեցածները և օմոնականները մայիսի 13-ի երեկոյան դեմ, վերջապես, գյուղ են մտել:

-Զեբրայիլում երկու գիշեր ինձ «դաս» տալուց, խոշտանգելուց հետո արձակել են, սպառնալով՝ «Եթե մինչև երկու օր չթողնես Բինյաթլուն, ջիաններդը չգնաս, ապա քեզ թիքա-թիքա ենք անելու...,-մեր հանդիպման ժամանակ ասաց Ժորա Ավագյանը: Երբ վերադարձել եմ գյուղ, միայն ավերակներ եմ տեսել: Խիբարլվեցիները գյուղի վերջին անասունը, տեղաշորները, գորգերը, արժեքավոր մյուս իրերը տարել էին: Իմ տան միայն մերկ պատերն էին մնացել: Մեր «քիրվաները» հափշտակել, տարել են իմ երկու գլուխ խոշոր և 51 գլուխ մանր եղջերավոր անասունները, երկու տոննա հացահատիկը, երկու տոննա խտացրած կերը, 7 անկողնու տեղաշորը, երկու գորգը, ոսկեղենը (երկու շղթա, հինգ մատանի), 35 ման-չման, 50 լիտր թթի օղին, 15 հազար ռուբլի փողը և ոսկե փոխառությունը: Ես զրկվել եմ երեք սենյականոց տնից, երկու գոմից, այգուց: Մի խոսքով, թալանչիները ինձ ավելի քան 34-35 հազար ռուբլու վնաս են հասցրել (այս թվերը մեջ եմ բերում նրա՝ ԽՍՀՄ-ի գլխավոր դատախազին հասցեագրած դիմումից):

Ու՞ր են գնացել մյուս բնակիչները:

Օմոնականները բոլոր բնակիչներին ստիպել են, որ դիմում գրեն Վ. Պոլյանիչկոյին, որպեսզի իրենց ընտանիքները փոխադրեն Հայաստան: Սկզբում բոլորը հրաժարվել են նման բնույթի դիմում գրելուց, բայց ծեծամահությունից ազատվելու համար զիջել են, ստորագրել նրանց ներկայացված դիմումների տեքստերը: Տասներկու ընտանիք մայիսի 15-ին առաքելցիների հետ բռնագաղթացրել են, մյուսները փախել են գյուղից, թաքնվել, գիշերները ճանապարհ կտրելով՝ հասել Հադրութ: Բոլորի ունեցվածքը, գույքը կողոպտել են, անասունները հափշտակել: Յուրաքանչյուր ընտանիք առնվազն 34-35 հազար ռուբլու վնաս է կրել:

Առաքելի դեմ-դիմաց դալար լեռան արևելյան մի տափարակում ծվարած Ջիլան գյուղը թեև փոքր է, սակավամարդ, բայց այնտեղ երկու զրահամեքենա, 15 օմոնական են ուղարկել, որպեսզի անձնագրային ռեժիմի ստուգում կատարեն: Ոտնահարելով իրենց «առաքելության» նպատակը՝ օմոնականները իսկույն անցել են թալանի, ահաբեկել բնակչությանը, որ ստորագրեն Հայաստան մեկնելու մասին պատրաստի դիմումների տեքստերը: Նրանց հետ անմիջապես գյուղ են մտել Զեբրայիլի շրջանի Խալաֆլու և Ղարար գյուղերի բնակիչներ Բալօղլան և Գյուլօղլան Շքյուրովները, տրակտորիստ Ալլահվերդի Աղաևը, չոբան Թովմասի որդի Մահսումալին, Շքյուր Շքյուրովի կինը, Հուսեյնալի Մամեդովը, Իլդրիմ Զաֆարովը իր հինգ տղաներով և այլք[1]: Նրանք Սուրեն Բախտամյանի տնից կողոպտել են երեք մատանի, 795 ռուբլի, 5490 ռուբլի ոսկե փոխառություն, երկու գորգ, չորս ղարաբաղյան կարպետ, տղամարդու և կանացի չօգտագործված 5 հագուստներ, 19 կիլոգրամ պանիր, 14 կիլոգրամ յուղ: Համանման արժեքներ են հանել նաև Սաշա Մովսիսյանի, Մաշո Հովսեփյանի, Ռաֆայել Մելքումյանի տներից:

Թալանչիներն ամսի 13-ին գյուղից քշել տարել են 87 գլուխ խոշոր, 560 գլուխ մանր եղջերավոր անասուններ:

-Ես այստեղ եմ ծնվել: Այստեղ են իմ ապուպապերի տապանաքարերը: Սումգայիթում 1988 թվականին գազանաբար սպանված իմ եղբոր, նրա կնոջ, զավակների հուշարձանը: Ես կմեռնեմ, բայց նրանց մենակ չեմ թողնի այս բարձունքում,-օմոնականների ավագին՝ փքված մի կապիտանի ասաց Ռաֆայել Մելքումյանը:

-Սումգայիթը քեզ խրատ չեղավ, խոզ էրմանի: Եվ հուշարձան էլ ես կանգնեցրել զոհերի հիշատակին: Մենք ձեզ սպանելով-ջարդելով, դուք զոհվածների հիշատակին հուշարձաններ կանգնեցնելով

1. Թալանչիների անունները ինձ հայտնել են տարածաշրջանի բնակիչները:

ուզում եք աշխարհին ի՞նչ ասել, հը՞: Այս որպեին քո շունչն էլ կհանեմ, որ այլևս զոհվածների հիշատակին հուշարձաններ կառուցողներ չլինեն...

-Խալաֆլվեցիները մինչև մեր գյուղ մտնելը, այդ հուշարձանն արդեն ջարդել են,-կապիտանին հաղորդեց խոզի պես չաղ մի օմոնական:

-Հուշարձանն, այո, պղծել եք, բայց պատմությունը, մարդկանց հիշողությունը չեք կարող պղծել, մանավանդ որ աշխարհում դեմոկրատիան է ճանապարհ հարթում: Կգա ժամանակ, որ այդ հանցագործության համար դուք ևս պատասխան կտաք:

Երկրորդ հարվածը խլացրեց նրա համարձակ ձայնը: Ռաֆայելը երերաց տեղում, ապա ընկավ գետնին: Մաշո Հովսեփյանը ձեռքերը վեր կարկառելով՝ մոտեցավ կապիտանին, որ իր չոր մատներով նրան խեղդեր: Սակայն չաղ օմոնականը պառավին ևս փռեց գետնին:

Թալանչիական ու ահաբեկչական այս նախապատրաստությունից հետո օմոնականները և զինվորները մայիսի 16-ին Ջիլան բերելով բեռնատար ավտոմեքենաներ, իրենց դարավոր օջախներից Հայաստան բռնագաղթեցին գյուղի բոլոր ընտանիքներին: Միայն Ալբերտ Արզումանյանին է հաջողվել իր ընտանիքով խուսափել բռնատեղահանությունից: Նա իր մեքենայով մի կերպ ընտանիքը փոխադրել է Հադրութ, որտեղ մի քանի ամիս սպասելով գյուղ վերադառնալու հույսով՝ հուսալքվել է, տեղափոխվել Հյուսիսային Կովկաս:

ԳՅԱԴԱՅԻՑ ԲԵԿ ՉԻ ԼԻՆԻ...

Շեկ ժայռերի բարձունքին ահա քանի՞-քանի դար ամուր կառչել է Քարագլուխ գյուղը: Ցածում՝ լերկ ժայռաշղթայից սկսվող արգավանդ հովտում է գտնվում Ջեբրայիլի շրջանի Յուխարի մազրա գյուղը: ԼՂԻ Մարզի Հադրութի շրջանի Առաքել, Քարագլուխ, Մուլքադարա, Ծամձոր գյուղերի տարածքի մեջ մխրճված ադրբեջանական այս գյուղը, ինչպես պատմում են տեղացիները, Հուսեյին անունով մի աղա է անցյալ դարի 70-ական թվականներին հափշտակել Քարագլխից: 1923 թվականներին ԼՂԻ Մարզի սահմանները գծելիս Նարիմանովի խորամանկ կանխագծումներով Բաքուն հայկական մարզի տարածքում Յուխարի մազրայի նման մի շարք գյուղ-օբաներ է պահպանել, որոնք ենթարկվում էին մարզի սահմաններից դուրս գտնվող ադրբեջանական շրջաններին: Այդ հենակետերն օգնում էին, որ Ադրբեջանը իրականացներ մարզի դեմոգրաֆիայի փոփոխման ծրագիրը:

Ղարաբաղյան ազգային-ազատագրական շարժման առաջին օրերից Յուխարի մազրա գյուղը փակել է Հին թաղերի ենթաշրջանի համանուն, Խանձաձոր, Խծաբերդ, Արփագյադուկ, Սպիտակաշեն, Պետրոսաշեն, Թեզխարաբ, ինչպես նաև իրեն հարող Քարագլուխ, Մուլքադար, Ծամձոր գյուղերից Հադրութ շրջկենտրոն տանող ճանապարհը: Շրջափակման մեջ չխեղդվելու համար այդ գյուղերը միանգամայն դժվար պայմաններում ստիպված ամեն ինչ սկսել են զրո կետից, որպեսզի դեպի իրենց շրջկենտրոնը միանալու նոր ուղիներ կառուցեն:

Մազրացիները նախկինում մի ոչխարով, մի հնդկահավով, 100-200 ռուբլով գայթակղում էին Առաքելի, Բանաձորի, Ծամձորի տնտեսությունների ղեկավարներին, այդտեղ աշխատանքի մտնում, այդ տնտեսությունների հաշվին անասուններ պահում, հարստանում, հայերի գաղտնիքները իմանում: Հենց որ դարաբաղցիները ազգային-ազատագրական պայքարի դրոշ պարզեցին, մազրացիները դարձան միլիցիայի և ապա օմոնականների աջ թևը վերոհիշյալ հայկական գյուղերի կործանման գործում: Այդ բնագավառում օմոնականներին ակտիվ աջակցում էր յուխարիմազրացի Սարմազ Ռահիմովը: Նրա անմիջական թելադրանքով էր Ջեբրայիլի շրջմիլիցիան գործում՝ ձերբակալում տարածաշրջանի գյուղերի երիտասարդներին, կանանց, տղամարդկանց:

Մայիսի 16-ի առավոտյան Սարմազ Ռահիմովի ուղեկցությամբ Քարագլուխ են մտել երեք զրահամեքենա, 30 բեռնատար ավտոմեքենա, 60 օմոնականներ: Մինչ այդ անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով այս գյուղը ներխուժել էին ևս մի խումբ օմոնականներ՝ բարձրահասակ մի մայորի գլխավորությամբ: Նրանք և՛ կողոպուտով են զբաղվել, և՛ դիմումներ կորզելով, որոնց բովանդակու-

թյունը հար և նման է մյուս գյուղերից վերցրած դիմումների բովանդակությանը:

Այս անգամ մտնելով Քարագլուխ, նրանք անմիջապես փակեցին նրա ելումուտը, որպեսզի ոչ ոք բռնագաղթից չխուսափեր:

-Դաշբաշըլլար (քարագլխեցիներ), ձեր տրամադրության տակ 1-2 ժամ կա: Շուտափույթ ձեր իրերն ավտոմեքենաները բարձեցեք, որպեսզի տեղափոխվեք Հայաստան: Տեղափոխությունից փախչողներին գնդակահարելու ենք,- գյուղի պահեստի հրապարակից բարձրախոսով հայտարարում էր մի օմոնական: -Ինչպես գիտեք, նախօրեին ձեր գյուղից ձերբակալված Արծվիկ Գասպարյանին, Շուրա Աթայանին, Յուրի Գասպարյանին, Հենրիկ Ստեփանյանին, Վարուժան Գասպարյանին արդեն ազատել ենք այն պայմանով, որ Ղարաբաղի հողից իրենց ընտանիքներով ռադ լինեն: Շտապեցե՛ք, ժամանակը սահում է...

Այդ հայտարարությունը 4-5 անգամ կրկնվեց: Ժայռերն արձագանքեցին օմոնականի խռպոտ ձայնին, իսկ մազրացիներն ուրախությունից ճաքում էին. «Թող գնան ջհանամը, որ նրանց տները, ունեցվածքը, անասունները, արտերը, այգիները վերցնենք բոլ-բոլ այս լեն աշխարհում ապրենք...»:

Գյուղի նախկին կոլտնտեսության ֆերմայի վարիչ, կուսկազմակերպության քարտուղար, աշխատանքի և պատերազմի վետերան Մամիկոն Գասպարյանին այդ հայտարարությունը ցնցեց. «Ուրեմն այս երկրում օրենք չկա: Բարձրաստիճան չինովնիկները ինչ ուզում են, այն էլ կատարում են: Մի կողմից դատապարտվում է չեչենների, ինգուշների, մյուս ազգերի բռնագաղթերը, մյուս կողմից էլ հիմա մեզ՝ Արցախի հայերիս են բռնագաղթում: Սա ի՞նչ առեղծված է...»:

Այդ մտորումներով պաշարված՝ նա դուրս եկավ տնից, գնաց գյուղի կենտրոն կոչված հրապարակը: Այդտեղ սիրախաղի մեջ մտած հնդկահավի աքլորի պես փքված, ավտոմատը կրծքին, ատրճանակը ձեռքին կարգադրություններ էր անում Սարմազ Ռահիմովը:

-Սարմազ Զիրֆուղար օղլի, սա ի՞նչ փորձանք է, որ մեր գլխին ես բերել: Չէ՞ որ մենք մազրացիների հետ անկեղծորեն աղուհաց ենք կիսել: Դու երևի չգիտես, ուստի հիշեցնում եմ, որ ձեր համագյուղացի Թեյմուր Կուլիևը, որը երկար տարիներ Ադրբեջանական ԽՍՀ-ի Նախարարների խորհրդի նախագահ է եղել, հետպատերազմյան ծանր տարիներին ընդունել է մեր կոլտնտեսության պատվիրակությանը, հյուրասիրել, ապա հանրապետության ֆոնդից մեզ մի բեռնատար ավտոմեքենա հատկացրել: Իսկ դու հիմա գյուղ ես եկել քարագլխեցիներին իրենց արմատներից, հողից, տնից-տեղից պոկելու առաքելությամբ: Ամոթ է: Եթե մեզ ստիպեն, որ ձեզ քոչեցնենք Յուխարի մազրայից, կհրաժարվենք այդ խայտառակ գործից: Իսկ դու ուրախանում ես, որ մեզ բռնատեղահան են անում: Ինչու՞, ո՞ր մեղքի համար:

-Այն վաղ էր, որ էշը կաղ էր, Մամիկոն քիշի: Հիմա խառը տարիներ են, և ոչ ոք չի հրաժարվում հարստանալու, ուրիշի ունեցվածքը կողոպտելու, փող կուտակելու, ոսկի դիզելու, աղա դառնալու կարիերայից,-հոխորտաց Սարմազը:- Քեզ էլ ոչ ոք իրավունք չի տվել, որ ինձ՝ պետական կարևոր հարցով այստեղ եկածիս, այսքան զբաղեցնես: Շուտ սրբվիր այստեղից և պատրաստվիր Հայաստան մեկնելու համար, թե չէ գնդակի զոհ կդառնաս:

-Գյադայից բեկ չի լինի,- շպրտեց Մամիկոն Գասպարյանը և գնաց իր տան ուղղությամբ:

Սարմազ Ռահիմովի շուրջը պտտվում էին մազրացիներ Շափաղաթ Իսա օղլին, Մամեդ Ալիևը, Նուրադդին Շամամա օղլին, Բալաքիշի Ահմեդովը, Միսեիբ Բանդիալի օղլին, Աբաս Իբրահիմ օղլին, Միրզափար Գոնչա օղլին և այլք: Նրանք սպասում էին Սարմազի կարգադրությանը, որպեսզի թալանը սկսեին: Իրենց կեղծ ձևացնելով քարագլխեցիների բարեկամներ, նրանք հետախուզական նպատակով մտնում էին նրանց տները, վաղօրոք ուսումնասիրում, թե ինչ են կողոպտելու: Մյուս կողմից էլ ակնապիշ դիտում էին, թե ովքեր ինչ են կապկպում, որ իրենց հետ փոխադրեն: Այդ նրանց համար հույժ կարևոր է, որպեսզի թալանչիների մյուս օղակներին հեռախոսով իրազեկ դարձնեին, թե որ մեքենաներում ինչպիսի չաղ կտորներ կան:

- Հայկ,- հևիհև մտնելով Հայկ Ստեփանյանի տուն, ասաց տրակտորիստ Վանյա Սարգսյանը,-շրջանին իրազե՞կ ես դարձրել, որ մեր գյուղը ևս բռնատեղահան են անում:

-Ոչ, չեմ հայտնել: Ասենք, հայտնելն էլ ոչ մի օգուտ չի տա: Ադրբե-

ջանը առանց կենտրոնի թողտվության չի հանդգնի այդպիսի հանցագործության դիմելու: Մենք մի հսկա պետության դեմ ինչ կարող ենք անել, եթե նույնիսկ ատոմային ռումբ էլ ունենայինք: Չես զգու՞մ, որ սա պետական մասշտաբի հանցագործություն է Ղարաբաղի հայերի նկատմամբ,-սառնասրտորեն պատասխանեց Հայկը:

Այնուամենայնիվ, պետք է շրջանին հայտնենք,- վրդովված շարունակեց Վանյան և հավաքեց շրջխորհրդի համապատասխան համարները:

-Մենք ձեզ հասկանում ենք, դուք էլ մեզ հասկացեք, որ մեր ձեռքերը կապել են, մեզ ամեն մի ֆունկցիայից զրկել:

Արտակարգ դրության հատուկ պարետատանը խնդրել ենք, որ միջամտեն գործին, բայց մեզ պատասխանում են, որ դա պլանավորված գործ է, և զինվորները չեն կարող Վ. Պոլյանիչկոյի և Ա. Մութալիբովի կարգադրությունը բեկանել,- հնչեց շրջկենտրոնի ձայնը:

-Չէ, շրջանը ևս գլուխը կորցրել է,- հեռախոսի ընկալուչը շպրտելով ցած ասաց տրակտորիստը և դուրս եկավ Հայկ Ստեփանյանի տնից:

-Վանյա, այս ի՞նչ կրակ է, որ մեր գլխին են թափում,-փողոցում նրան հանդիպելով՝ ասաց Լարիսա Ղուկասյանը,-Ես 80-ամյա իմ հիվանդ սկեսրոջս ու՞ր կարող եմ տանել: Նա գյուղում որդու, ամուսնու տապանաքարեր ունի, չի ուզում դրանք թողնել: Ասում է, թող ինձ սպանեն, որ որդուս կողքին լինեմ... Հիմա ես նրան տարել թաքցրել եմ իր քրոջ աղջկա՝ Արաքսյայի տանը, հետո ի՞նչ կարող եմ անել...

-Լարիսա, ես որոշել եմ բռնագաղթից փախչել, բայց դու չես կարող Վալինկա մորաքրոջ հետ փախչել: Լավ կլինի, որ նրա հետ դու էլ գնաս Հայաստան: Աշխարհն այսպես խավար չի մնա, երևի մեզ համար էլ մի լույս ծագի, բայց հիմա խորհրդային բանակին և կատաղած օմոնականներին չենք կարող դիմադրել: Գոտեպնդվիր, որ Վալինկա աքիրն էլ չվախենա:

-Դաշբաշըլլար, ուշանում եք, շտապեցեք: Հառաքյուլցիների, դոլանլարցիների, բանածորցիների ավտոշարասյուներն ահա-ահա շարժվում են դեպի Հայաստան: Միևնույն է, գիշեր էլ լինի ձեզ տանելու ենք,-բարձրախոսով գոռգոռում էր աժդահա օմոնականը:

Մի երկու ժամից հետո, այսինքն՝ ժամը մոտավորապես 14-ին, երբ Օխտըխաչ սարին ամպեր էին կուտակվել, ավտոշարասյունը 29 ընտանիքների ունեցվածքը բարձած, շարժվեց դեպի Չեբրայիլ: Նրա մուտքի ծախ թևի քահրիզի մոտ շարասյունը կանգնեց: Մոլեռանդ մահմեդականները իսկույն շրջապատեցին հայերին և թալանի մոլուցքով լի աչքերով նայելով նրանց սպառնացին. «Մի բան տվեք, թե չէ թույլ չենք տա, որ մեր հարստությունը Հայաստան տանեք»: Չսպասելով, որ գաղթականները իրենց մի բան տային, նրանք բարձրանում էին բեռնատարների թափքերը, քարագլխեցիներին հրում այս ու այն կողմ, իրենց ցանկացած կապոցները վերցնում, շտապում մի այլ մեքենա, ավելի չաղ կապոցներ վերցնում: Երբ այդ թալանչիները ավտոմեքենաներից թռցրել էին իրենց անհրաժեշտ կապոցները, շրջմիլպետ Ռաշիդ Մամեդովը ավտոմատով կրակ բացեց նրանց գլխավերևի ուղղությամբ: Դա ազդանշան էր, որ թալանչիները բավարարվեն ձեռք բերած ավարով, ցրվեն: Եվ նրանք ոչխարի հոտի պես կազմակերպված ցրվեցին՝ ասպարեզը տալով հանրապետության ՊԱԿ-ի աշխատողներին:

-Եթե բոլոր մեկնողներդ չստորագրեք այս դիմումները, որ կամավոր եք գնում Հայաստան, որովհետև այլևս հնարավոր չէ ապրել ադրբեջանցիների կողքին, ապա այս մասսային կարգադրելու ենք, որ ձեզ հետ հաշվեհաղար տեսնեն,-դիմումների պատրաստի տեքստերը ցրելով մեկնողներին ասաց ՊԱԿ-ի բարձրաստիճան մի չինովնիկ աղա:

-Գրիշա, ի՞նչ անենք,-դիմելով կոլտնտեսության նախկին նախագահ Գրիշա Գրիգորյանին՝ ասաց Գրիգոր Ստեփանյանը:

-Ավազակներին հակաճառելը անիմաստ է, պետք է Հայաստան հասնենք, որ բողոքի ձայն բարձրացնենք, աշխարհին իմաց տանք, որ իրենց ինտերնացիոնալ բարբաջող ադրբեջանցիները դեռ գտնվում են միջնադարի բարբարոս ցեղերի մակարդակին...

Քարագլխեցիների մյուս 10 ընտանիքները փախել են բռնատեղահանությունից, թաքնվել այգիներում, ժայռածերպերում, ձորերում կամ գնացել հարևան Ծամձոր գյուղի ուղղությամբ: Նրանց հոգնած ներկայացուցիչները մի քանի օրից հետո հասել էին շրջկենտրոն: Սարմազ Ռահիմովի կարգադրությամբ ադրբեջանական գյուղերից Քարագլուխ եկած թալանչիները անմիջապես գործի են անցել, թալանել-տարել նրանց տներում մնացած ունեցվածքը, գույ-

քը, պարենային մթերքները: Թալանը տևել է երեք օր: Մայիսի 18-ին զինվորների ուղեկցությամբ գյուղ են վերադարձել շրջկենտրոնում ապաստան գտած մի խումբ քարագլխեցիներ: Ահա նրանց պատմածների սղագրությունները:

Շուշիկ Սարգսյան: Գյուղի մի ծայրում գտնվող մեր տանը միայն մերկ պատերն են մնացել: Թե ինչպես են հասցրել 3 օրվա ընթացքում մեր ունեցվածքը լրիվ թալանել, դժվարանում եմ ասել: Ինչը չեն կարողացել տանել, ջարդել-փշրել են: Մեր ընտանիքը զրկվել է 6 յորղան-դոշակից, 5 գորգից, տասը կարպետից, երկու սեղանից, վեց մահճակալից, 30-40 ամանեղենից, նույնքան բաժակներից, մի տոննա հացահատիկից, մեկ կովից, 15 ոչխարից, քսան մեղվաընտանիքից և այլ պարագաներից: Մեր վնասը չափվում է 28-30 հազար ռուբլով (1989-90 թվականների գներով):

Արաքսյա Բաղդասարյան: Թալանչիները իմ ընտանիքին 26-27 հազար ռուբլու վնաս են հասցրել: Ես այդ մասին հայտնել եմ ինչպես երկրի գլխավոր դատախազին, այնպես էլ մարզային և շրջանային դատախազներին: Իմ դիմումների մեջ փաստերով հիմնավորված է ինձ հասցված նյութական վնասը:

Յուրի Ալեքսանյան: Ինձ հասցված վնասը չափվում է 32-33 հազար ռուբլով: Ադրբեջանցի թալանչիները իմ տունը հողին են հավասարեցրել, հափշտակել-տարել երկու գլուխ խոշոր, 45 գլուխ մանր եղջերավոր անասունները, 270 կգ. բուրդը, մեկ տոննա հացահատիկը, տան ամբողջ կահ-կարասին:

Ռիտա Գասպարյան: Ես ևս դիմել եմ ԽՍՀՄ-ի գլխավոր դատախազին իմ ունեցվածքը թալանողներին պատժելու համար: Չեմ կարող կողոպտած իրերը թվարկել, որովհետև տեղ շատ կգրավի: Այնքանը կասեմ միայն, որ զրկվել ենք 25-26 հազար ռուբլուց...

Էմմա Ղուկասյան: Իմ ընտանիքին հասցված նյութական վնասը շուրջ 27-30 հազար ռուբլի է: Ահա իմ կորցրած գույքի ցուցակը, նա ինձ է տրամադրում մարզդատախազին հասցեագրված իր դիմումի պատճենը, որի հրապարակումը, կարծում եմ, իմաստ չունի:

Էդուարդ Պետրոսյան: ԽՍՀՄ-ի գլխավոր դատախազ Տրուբինին հասցեագրված իմ դիմումում ես հիմնավորել եմ ինձ հասցրած 29-30 հազար ռուբլու վնասը: Ահա իմ դիմումի պատճենը (այդ փաստաթուղթը ես պահում եմ բռնագաղթին վերաբերվող մյուս փաստաթղթերի հետ):

Միամիտ մարդիկ, միթե՞ հույս ունեք, թե փլուզման վիհին գտնվող աշխարհածավալ բռնապետությունը կարող է վերադարձնել ձեր ունեցվածքը: Մի քանի ամսից հետո բոլշևիզմը իր մահախոսականն է կնքելու, իսկ ձեր դիմումները կրծելու են արխիվների մկները...

ՄՈՒԼՔԱԴԱՐԱՅԻ (ՋՐԱԲԵՐԴ) ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես որ պլանավորված էր, օմոնականները և խորհրդային ՆԳՆ զորքերի ստորաբաժանումները Մուլքադարայի բռնատեղահանության գործին ձեռնամուխ եղան մայիսի 16-ի առավոտյան: Հարևան Առաքել, Քարագլուխ գյուղերում մայիսի 13-ին կատարած անօրեն ձերբակալությունները մուլքադարացիների մեջ ևս սարսափ են առաջացրել: Առանց որևէ պատճառի մարդկանց զանգվածաբար ձերբակալելու ադրբեջանական այդ պրակտիկան նրանց մեջ արթնացրեց ստալինյան արյունոտ տեռորի տարիների սարսափը: Նրանք երիտասարդներին խորհուրդ տվեցին, որ թողնեն գյուղը, թաքնվեն անտառներում, ձորերում, սակայն երիտասարդները դեռ չէին հասցրել հեռանալ գյուղից, երբ երեք զրահամեքենա փակեցին նրա չորսբոլորը և 40-45 օմոնականներ խուժեցին գյուղ: Միայն Կամո Սարգսյանին հաջողվեց ճեղքել օմոնականների պաշարած օղակը, խուսափել բռնատեղահանությունից, թաքնվել Օխտըխաչ սարի փեշերին:

-Մուլքադարացիներ, ահա 3-4 տարի է, ինչ դուք ևս պայքարի դրոշ եք պարզել, որ վերամիավորվեք Հայաստանի հետ: Մենք եկել ենք, որ ձեզ տեղափոխենք Հայաստան, որպեսզի կատարվի ձեր սրտի փափագը: Շուտ ձեր ունեցածը բարձեք մեր բեռնատարները, որ ճանապարհվենք Հայաստան: Այսօր նաև Հառաքյուլի, Դաշբաշու, Բանաձորի, Ջիլանի, Բինյաթլվի, Դոլանլարի բնակիչները կամավոր մեկնում են Հայաստան, որոնք վաղորոք դիմել են Պոլյանիչկոյին իրենց տեղափոխության համար համապատասխան տրանսպորտ հատկացնելու համար: Դուք ևս պետք է դիմում գրեք նրան, որ ձեզ էլ տեղափոխենք Հայաստանի սահ-

մանագլուխ, թե չէ Յուխարի մազրայի մուսուլմանները ձեզ այստեղ հանգիստ չեն տա,- դերասանի պես բարձրախոսով ասաց մի օմոնական:

Օմոնականների այդ սանձարձակության դեմ Մուլքադարայում առաջինը հոխորտացել է Բաքվի ջարդից մազապուրծ ազատված Շահեն Գաբրիելյանը.

-Մեր գյուղն Արցախ աշխարհի հինավուրց բնակավայրերից մեկն է: Նրա տարածքի երկու տեղամասի՝ Վերին և Ներքին շինատեղերի մեր նախնիների բնակավայրերը օտար նվաճողների ձեռքերով ավերվել են, բայց նրանք այժմյան գյուղի տեղը նոր գյուղ են կերտել, հարատևել այստեղ: Ինչպես վկայում են մեր ապուպապերի խաչքարերի և գերեզմանաքարերի գրությունները, մեր նախնիները Պլպլան և Օխտըխաչ սարերի գրկախառնման տարածքում բնակություն են հաստատել դեռևս չորրորդ դարում: Այնպես որ մենք կամավոր չենք լքի գյուղը...

-Երևում է, որ Բաքվում քեզ ինչպես հարկն է չեն մկրտել,-ավտոմատի փողով խփելով նրա ուսին՝ ասաց մի ավագ լեյտենանտ,-բայց հիմա քո լեզուն կկտրենք, որպեսզի այլևս չհամարձակվես այդպիսի պրոպագանդայով զբաղվել, քավթառ շուն:

Եվ նա կարգադրեց շարքային մի օմոնականի, որ նրա ձեռքերը կապեն, մեքենայի թափքը գցեն և պարծենալով ավելացրեց. «Այդպիսի վտանգավոր խոզերի գլուխը պետք է կտրել, որ իրենց կեղտոտ պատմությունը մոռանան...»:

-Առիթից օգտվելով, որ երկրում իշխանություն չկա, ուզում եք իրականացնել ձեր վաղօրոք մշակած՝ մարզը հայաթափելու ծրագիրը, բայց դա ձեր կոկորդին է մնալու,-չվախենալով օմոնականների զենքերից՝ ասաց ուսուցիչ Աշոտ Սևյանը:

Նա դեռ խոսքը չէր վերջացրել, երբ ավտոմատի կոթի հուժկու հարված զգաց ծոծրակին: Աշոտը ծառս եղավ, երերաց տեղում: Ռուբեն Ջհանյանը և Սոկրատ Ալեքսանյանը փորձեցին վրեժ լուծել նրան հարվածող օմոնականից: Ուսուցիչ Միշա Բաղդասարյանը կանգնեց նրանց առջև և ասաց. «Ավտոմատներով զինված բանդիտներին չեն գրգռի, այլապես բոլորիս կարող են գնդակահարել, որովհետև ԽՍՀՄ-ը գլուխը կորցրել է, հանցագործներին չի պատժում: Ասել է թե, հանցագործները իրենք են երկրի իշխանությունը իրենց ձեռքը վերցրել»:

Արտասովոր այդ աղմուկը չվրիպեց զինվորների աչքերից և բորբոքված մուլքադարացիներին մոտեցան երեք զինվորներ: Նրանց ավագը՝ բարձրահասակ մի սերժանտ, դիմելով օմոնականներին՝ ասաց.

-Եթե վերջ չտաք բռնությանը, ապա մենք թողնելու ենք գյուղը, վերադառնալու ենք Ջեբրայիլ:

Օմոնականների նորաթուխ ավագը նրանց ադրբեջաներեն հայհոյեց և չհամբերելով՝ թափեց իր սրտի մաղձը. «Դուք միշտ էլ հայ քրիստոնյային եք պաշտպանում: Եվ հիմա էլ թեև մեզ հետ հաց եք ուտում, օղի կոնծում, դարձյալ հայերին եք պաշտպանում...»:

-Ապերախտ: Նախ մենք քրիստոնեական և իսլամական հավատի համար մարդկանց չենք հալածում: Իսկ եթե հայերին պաշտպանեինք, այստեղ չէինք գա, այս բարբարոսություններին վկա չէինք լինի: Մենք ընդամենը մեր հրամանատարների կամքն ենք կատարում, իսկ թե ո՞վ է այս պետական հանցագործության համար պատասխան տալու, կապրենք, կիմանանք: Այնպես որ դրանք մի կողմ թողեք, բնակչության բռնատեղահանումը կատարեք առանց մարդկանց խոշտանգելու, նրանց վիրավորելու, արժանապատվությունը ոտնահարելու...

Երեք-չորս ժամ հետո, ավտոշարասյունը, որը գյուղից բռնագաղթեցնում էր 28 ընտանիք, կանգնեց Ջեբրայիլ քաղաքի չայլաղի շուկայի մոտ,-պատմում է բրիգադավար Բորիս Սևյանը,-այդտեղ մեզ դիմավորեցին քաղաքացիական տարազի մեջ քողարկված 4 աղաներ: Նրանք պահանջեցին, որ բոլոր մեկնողներս ստորագրենք իրենց ներկայացրած դիմումները, որովհետև Զորի Բալայանը, Իգոր Մուրադյանը այնպես են խառնել հայերի և ադրբեջանցիների հաշիվները, որ այլևս հնարավոր չէ, կողք-կողքի ապրելը: Ուստի մենք պետք է շնորհակալություն հայտնենք Ադրբեջանի կառավարությանը, որ մեզ տեղափոխում է Հայաստան:

-Ես այդ դիմումը չեմ ստորագրի, որովհետև չեմ ուզում լքել մեր ապուպապերից ժառանգած գյուղը, հարազատ օջախը,-ասաց ավտովարորդ Էդուարդ Ալեքսանյանը:

-Ես էլ չեմ ստորագրի,-արձագանքեց Սեդա Ղազարյանը:

-Ես էլ չեմ ստորագրի,-ասաց Սամվել Ջհանյանը:

-Անմիջապես այդ գորտերի աղմուկը դադարեցնել, այլապես շուկա են բացելու,-կարգադրեց մեզ դիմավորող աղաներից մեկը:

3-4 րոպե հետո մոլեռանդ ամբոխը շրջապատեց շարասյունը և քարկոծեց հայերին: Նրանք հազիվ կարողանում էին գլուխները թաքցնել բեռների մեջ: Քարկոծումը շարունակվեց 4-5 րոպե: Ապա մուսուլմանները բարձրացան բեռնատարների թափքերը և սկսեցին բեռները հափշտակել: 10-15 րոպեից հետո թալանի տեսարանը հաճույքով դիտող աղաներից մեկը ատրճանակով կրակ բացեց օդում և դիմելով թալանչիներին՝ ասաց.

-Բավական է, հիմա բոլորը սիրով դիմում կգրեն, որ ուզում են կամավոր գնալ Հայաստան, թե չէ թույլ կտանք, որ դուք նրանց այստեղ թիքա-թիքա անեք...

Մոլեռանդ մահմեդականները, որոնք թալանի մոլուցքով տարված տակնուվրա էին անում ավտոմեքենաների թափքերի բեռները, մի մարդու պես իջան ասպարեզից, մի կողմ կանգնեցին: Տրակտորիստ Սոկրատ Սարգսյանի 100-ամյա մայրը՝ Թագուհի Սարգսյանը, որդուն ասաց. «Ջահելները թող դիմում գրեն, ազատվեն այս վայրենիների ձեռքից, բայց ես չեմ ստորագրի: Միևնույն է, մեր հողից դուրս ինձ համար ապրելը մահ է»:

-Չէ, մամա, դու դեռ պետք է ապրես, որ բողոքի ձայն բարձրացնես մեր նկատմամբ այսպիսի բարբարոսություն կատարող պետության դեմ: Դու պետք է հանդիպես արտասահմանյան լրագրողներին, որպեսզի աշխարհը իմանա այս բռնության մասին: Իսկ ԽՍՀՄ-ի լրագրողները դեռ պարում են կուսակցության, Կրավչենկոյի պես ծախու լրագրող ղեկավարների սրնգի տակ...

Բոլոր մեկնողներից համապատասխան դիմումներ ստանալուց հետո ինձ և Սոկրատ Սեյանին ձերբակալեցին, տարան շրջմիլիցիա, իսկ մնացած մուլքադարացիներին տարան Հայաստան,-ավելացրեց Բորիս Սեյանը:

Ինչպես մեզ պատմեցին Հայաստան բռնագաղթած մուլքադարացիները, երեք ադրբեջանական գյուղերում՝ Սոլթանլուում, Մամեդբայլիում, Խանլիքում ավտոշարասյունը կանգնել է: Այդ գյուղերի բնակիչները թալանել են բեռները: Մամեդբայլիի և Խանլիքի արանքում, օմոնականները հենց մեքենայի թափքում բռնաբարել են մի աղջկա: Նրա հայրը, տեսնելով այդ անամոթությունը, կատաղել է, հարձակվել օմոնականի վրա: Սակայն նրան այնքան ծեծել են, որ շունչը կտրվել է: Նրան օգնելու փորձ են արել Սոկրատ Ալեքսանյանը: Նրան ևս շնչահեղձ են արել: Սոկրատ Ալեքսանյանին և Շահեն Գաբրիելյանին ծանր վիճակում տարել են Գորիսի հիվանդանոց:

Մուլքադարացիներին հաջողվե՞լ է իրենց ունեցվածքը փրկել, Հայաստան տեղափոխել:

Ունկնդրենք տուժածներին:

Բորիս Սեյան: Ինչպես արդեն ասել եմ վերը՝ ինձ Ջեբրայիլում ձերբակալել են, բայց կինս ավտոշարասյան հետ գնացել է Հայաստան: Նրան հաջողվել է փրկել միայն երկու տեղաշոր, իսկ մնացած ունեցվածքս ադրբեջանցիները ճանապարհին կողոպտել են: Իմ ընտանիքը 31-32 հազար ռուբլու վնաս է կրել: Ո՞վ է հատուցելու այդ գումարը. արտասահմանից օգնություն մուրացող Մ. Գորբաչովը՞, թե՞ կաշառակերության մեջ թրծված Ա. Մութալիբովը:

Ջավեն Ավանյան: Մեզ օմոնականները գյուղում ասում էին, որ մեր բոլոր ունեցվածքը տեղափոխենք Հայաստան: Մենք էլ ամեն ինչ բեռնել էինք ավտոմեքենաները: Սակայն ճանապարհին մեզ պլոկել են: Ավազակախմբերը խլել-տարել են նաև մեր ձեռքերի ժամացույցները, մատանիները: Մեր ժողովրդի ունեցվածքի թալանի մասին շատ բան ենք լսել, բայց այդ բնույթի թալանի մասին երևակայել անգամ չէինք կարող:

Փառանձեմ Օհանյան: Մութալիբովը օմոնի և բանակի միջոցով ոչ միայն մեզ բռնատեղահան է արել, այլև ամբոխի ձեռքերով թալանել է մեր տարիների վաստակով կուտակած ունեցվածքը: Ինձ թվում է, թե աշխարհը պետք է մտածի այս վայրենությունը արմատախիլ անելու մասին: Ես ևս ամբողջ ձայնով բողոքում եմ, որ Ա. Մութալիբովը դատարանի առաջ պատասխան տա այս բռնագաղթի համար, վերադարձնի իմ կորցրած 25-26 հազար ռուբլին: Եթե մի ավազակ նրա ընտանիքին մի ռուբլու վնաս պատճառի, ապա նա ամբողջ աշխարհին կհայտնի, իսկ մեր բռնագաղթի և թալանի մասին լռում է:

Սեդա Ղազարյան: Թող Աստված պատժի մեզ մեր գյուղից, տնից-տեղից բռնատեղահան անողների կազմակերպիչներին, որոնք ղարաբաղյան հարցով քաղաքական կապիտալ են դիզում: Ես պահանջում եմ, որ ինձ հասցված 24-25 հազար ռուբլու վնասը վերադարձվի:

Ռուբեն Ջհանյան: Ինչպես մեզ հաղորդել են, մեր թալանված և լքված տները ադրբեջանցիները ավերել են: Նրանց ղեկավար Սարմազ Ռահիմովը դարձել է մեր լքված, ավերված գյուղերի աղան: Պահանջում եմ, որ նրան պատասխանատվության ենթարկեն...

Կամո Սարգսյան: Մուլքադարայի ողբերգությունը կայանում է նրանում, որ զենք չի ունեցել օմոնականներին Դռդռոնի ծորաբերանում կրակով դիմավորեր և գյուղի անառիկ դարպասը բաց չաներ նրանց առաջ:

ԵՐԲ ԲԱՑԱԿԱՅՈՒՄ Է ԲՌՈՒՆՑՔԸ

Մարզկենտրոնից և շրջկենտրոններից Արցախ աշխարհի գյուղերը մեկնելը 1988-1991 թվականների շրջափակման պայմաններում պրոբլեմ էր, անհնարին բան: Մարզի առավել ծայրամասային գյուղերը խեղդվում էին եռակի-քառակի շրջափակման աքցանի մեջ: Այդ գյուղերի շարքում էր նաև Դոլանլարը (Արևշատ): Ինձ, այնուամենայնիվ, հաջողվել է բռնագաղթի տառացիորեն նախօրեին լինել Դոլանլարում, շփվել նրա ըմբոստ մարդկանց հետ: Վայրենի շրջափակումը իր կնիքն էր դրել նրանց դեմքերին: Մարդիկ հուսալքվում էին: Նրանց ձեռքերը թուլացնում էին մանավանդ մարզային և շրջանային մարմինների ղեկավարների անգործությունը: Գյուղը էլեկտրական հոսանք ստանում էր հարևան Ջեբրայիլի շրջանի Իսախլու գյուղից, որը ցանկացած րոպեին անջատում էր գիծը, նրան թողնում խավարի մեջ: Դոլանլարցիները կարծում էին, թե շրջափակման պայմաններում շրջանը ցանկացած գնով այդ հարցը լուծելու է՝ գյուղի էլեկտրական գիծը միացվելու էր 3-4 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Հին թաղեր գյուղից: Սակայն նրանց միայն խոստումներով էին կերակրում:

Դոլանլարցիներին վրդովեցնում էր նաև շրջանային որոշ ղեկավարների անհեռատեսությունը: Գյուղի չորս կողմի ադրբեջանական գյուղերում մարդիկ զինվում էին, իսկ Հադրութի շրջմիլիցիայի աշխատողները, անընդհատ այցելելով Դոլանլար, հավաքում էին նրա բնակիչների որսորդական հրացանները:

Դոլանլարը, այո, կքել էր հոգսերի բեռան տակ: Գյուղից մարզկենտրոն գնալու համար առնվազն պետք է ծախսել 700-800 ռուբլի: Նրան հարող ադրբեջանական Ջեբրայիլի և Կուբաթլիի շրջանների Իսաղշլաղ, Իսախլու, Սիրիկ, Բաշարաթ գյուղերից հաճախակի հարձակվում էին նրա վրա, նրա բնակչությանը հրազենով ահաբեկում, հափշտակում նրանց անասունները, պատանդ վերցնում մարդկանց: Այսուամենայնիվ, դոլանլարցիները համոզված էին, որ ղարաբաղյան հարցը լուծվելու էր դեմոկրատական ճանապարհով:

Ադրբեջանի ազգային խտրական քաղաքականության հետևանքով անցած 70 տարում Դոլանլարի սոցիալական պրոբլեմները ևս չէին լուծվում: Նա, փաստորեն, զրկված էր կանոնավոր ճանապարհներից, որի հետևանքով տարվա մեջ 4-5 ամիս կտրվում էր բանուկ ուղիներից: Գյուղի ակումբի դերը նախկին եկեղեցին էր կատարում: Կոլտնտեսության գրասենյակը խարխուլ մի շենք էր, թեև նրա՝ Ստ. Շահումյանի անվան կոլտնտեսությունը տարեկան պետությանը վաճառում էր 300-400 տոննա հացահատիկ, 600-700 տոննա կաթ, 70-75 տոննա միս, 50-60 տոննա բանջարեղեն, 4-5 տոննա բուրդ: Իսկ նրա ազերի հարևան Մ. Ազիզբեկովի անվան խորհտնտեսությունը, որի հողատարածությունները 10-12 անգամ գերազանցում էր Դոլանլարինը՝ հազիվ 20-25 տոննա միս, 250-260 տոննա կաթ էր վաճառում պետությանը: Ծանր պլանները, ինչպես նախկին ծանր հարկերը, խեղդում էին և՛ այս, և՛ մարզի մյուս տնտեսություններին: Կոլտնտեսականներն էլ իրենց վաստակի դիմաց չնչին վարձ էին ստանում: Դրա համար դոլանլարցիները ևս թողնում էին գյուղը, քաղաք մեկնում: Ղարաբաղյան ազգային-ազատագրական շարժման նախօրեին Դոլանլարը երկրի տարբեր ծայրերում ավելի քան 450 ընտանիք ուներ: Վերջին երեք-չորս տարում տասնյակ երիտասարդներ իրենց ընտանիքներով վերադարձել էին Դոլանլար, որոշել իրենց բախտը կապել հայրենի երկրամասի հետ: Գյուղի երիտասարդների պահանջով կոլտնտեսության նախագահի պարտակա-

նությունը ստանձնել է երիտասարդ մասնագետ Արթուր Հայրապետյանը: Խանդավառ նախագահը, չխնայելով իր առողջությունը, գիշեր ու զօր մնում էր ճանապարհներին, մերթ մարզկենտրոն գնում, մերթ Հադրութ, ամեն ինչ անում հեռավոր այս գյուղի կյանքի ռիթմը չխաթարելու համար: Մայր Հայաստանը ևս օգնում էր դոլանլարցիներին: Նա նրանց համար առաքել է մոտ 7-8 տոննա ալյուր, կես տոննա շաքարավազ, տարբեր տեսակի դեղորայք, դպրոցական տարազ, դիզելային էլեկտրակայաններ և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ:

ԽՍՀՄ-ի ՆԳՆ ստորաբաժանումները մինչև անձնագրային ռեժիմի ստուգումը զենք և զրահ որոնելու նպատակով երեք անգամ սանրել են Դոլանլարը և նրա տարածքը: Իմանալով, որ հայերի որսորդական հրացանները ևս հավաքել են, հարևան ադրբեջանական գյուղերից ավտոմատներով զինված խաշնարածները հարձակվում էին կոլտնտեսության ֆերմաների, գյուղի նախրի վրա, անասուններ հափշտակում: Մինչև բռնագաղթը նրանք Դոլանլարից հափշտակել էին 3800 գլուխ խոշոր և մանր եղջերավոր անասուններ, 470 գլուխ խոզեր, 17 գլուխ ձիեր: Մթնոլորտը Դոլանլարում ևս շիկանում էր: Հյուսիսային Արցախի հայկական բնակավայրերի, ամբողջ Շահումյանի շրջանի բռնագաղթերից հետո, դոլանլարցիները զգում էին, որ հերթը իրենց է հասնում, մանավանդ որ 1918-20 թվականներին ադրբեջանցիները Ղարաբաղը օկուպացրած թուրքական բանակից օժանդակություն ստանալով՝ երկու անգամ հրդեհել են իրենց գյուղը: Այս անգամ էլ ադրբեջանցիներին թուրքական ասկյարների նման խորհրդային զորքերն են սատար կանգնել, որ բնաջնջեն ԼՂԻ Մարզը:

Ի՞նչ անել: Ավտոմատներով, զրահամեքենաներով, տանկերով զինված օմոնականներից և խորհրդային զինվորներից ինչպե՞ս պաշտպանել գյուղը: Դոլանլարցիները դեռ այս հարցերի պատասխանները հստակ չէին վճռել, երբ ռազմական և քաղաքացիական ուղղաթիռներ երևացին գյուղի «առաստաղում»: Նրանք մայիսի 15-ին նորից սանրեցին գյուղի անտառները, հանդերը, լեռները: Այդ հետախուզությունից հետո կեսօրին գյուղը հանկարծակի շրջափակեցին հինգ զրահամեքենա, կրակ բացեցին տների վրայով: Սարերն ու ձորերը թնդացին: Դրանից անմիջապես հետո «ՈՒԱԶ» մակնիշի 25 ավտոմեքենաներով գյուղ խուժեցին 100-120 օմոնականներ: Բաժանվելով 10-15 խմբերի՝ նրանք անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով անմիջապես թալանում էին դոլանլարցիների տները: Հայրենական պատերազմի երկրորդ կարգի հաշմանդամ Միսակ Հայրապետյանին օմոնականների լկտիությունը հանեց հավասարակշռությունից:

-Ձեզ մեր բնակիչների անձնագրերն են հետաքրքրու՞մ, թե՞ նրանց ունեցվածքը, մթերքները,- իր ներքնատուն մտած օմոնականին ասաց նա:

-Միսակ քիշի, այս գյուղի տեր ու տնօրենը հիմա մենք ենք, ձեզ այլևս խոսք չի հասնում,-ավտոմատով հրելով ծերունուն՝ ասաց չաղ մի լեյտենանտ և նկատելով օղիով լի բալոնները՝ ավելացրեց.

-Սա ի՞նչ արաղ է, որ պահում ես պադվալումդ:

-Դա մեր թթենի ծառերի բարիքն է, որ օգտագործում ենք կլոր տարին:

-Գառներ ունե՞ս:

-Ունեմ:

-Գնա չորս-հինգը բեր այստեղ:

Միսակ Հայրապետյանը գոմում թաքցրած գառները քշեց, բերեց օմոնականների մոտ: Մսավաճառի արտաքինով մի օմոնական իսկույն գառները մորթեց: Մյուսները սկսեցին քերթել անմեղ, արյան մեջ թավալվող գառներին: Ապա խարույկ վառեցին, խորովածի բուրմունքը երկինք բարձրացավ: Այդ բուրմունքից գրգռված՝ Միսակ Հայրապետյանի բակում հավաքվեցին գրեթե բոլոր օմոնականները:

-Այստեղ լավ արաղ կա: Նախ մեր փորի պրոբլեմը լուծենք, հետո էլ Ղարաբաղի պրոբլեմով կզբաղվենք: Միևնույն է «Դունյանը իշը նաթահը թութասան, հեյլա դա գյեդար»[1],- հավաքվածներին դիմելով բութ փիլիսոփայեց մի լեյտենանտ:

Նրանք գայլի ախորժակով բոլորեցին խորովածի շուրջը: Օդին խմում էին մեծ բաժակներով, միսը, պանիրը, մեղրը խժռում: Տանտերը սեղանին մատուցեց նաև թթու պեքի:

1. Աշխարհի գործը ինչպես որ բռնես, այնպես էլ կգնա:

Մի քանի գառ էլ են պետք, որ փորներս մի բան ընկնի, զինվորներին էլ հաց տանք,-դառնալով տանտիրոջն ասաց լեյտենանտը: - Շուտ երեք-չորս գառ էլ բեր, միևնույն է մի քանի օրից հետո ձեզ տանելու ենք Հայաստան, իսկ ձեր հարևաններն էլ ձեր գյուղը պլոկելու են...

Մի ժամվա ընթացքում երեք գառն էլ կերան, 10-15 լիտր թթի օղին էլ կոնծեցին: Բոլորի գլուխները տաքացան, աչքերն արյունով լցվեցին: Թալանի կիրքը նրանց մեջ օձի պես գլուխ բարձրացրեց:

-Այն ու՞մ տունն է,- ձեռքը մեկնելով դեպի Սուրեն Ղասումյանի տան կողմը՝ հարցրեց մարջանլվեցի մի օմոնական: - Ոչ ոք այդ տանը ձեռք չտա, դա ես եմ վերցնելու, որ ամռանը Արազի տոթ ափից իմ ընտանիքը փոխադրեմ այս դրախտավայրը:

-Իսկ այն տունը իմն է,- ցուց տալով Մարո Զաքարյանի տունը՝ ասաց սոլթանլվեցի մի օմոնական:

-Չէ, այդ տունը իմն է,- հոխորտաց խալաֆլեցի մի օմոնական:

Եվ այդպես գինովացած օմոնականները ատամները սրած, լկտիաբար իրար մեջ բաժանում էին հայերի տները, իրար հետ տաք-տաք վիճաբանում: Նրանց վեճն այն աստիճանի սրվեց, որ փորձեցին զենքի դիմել: Այդ սարսափը զգալով, նրանց ավագն ասաց.

-Եթե վերջ չտաք այդ դատարկ վիճաբանություններին, ապա այդ մասին զեկուցելու եմ Մամեդովին:

-Զարափաթ ենք անում, նաչալնիկ, հիմա կտեսնես, թե դոլանլարցիների գլխին ինչ խաղ կխաղանք: Նրանց հավիտյան կգրկենք ոսկուց, փողից, հարստությունից,-Մամեդովի անունը լսելով՝ սթափվեց հարբածներից մեկը:

Հիրավի, 2-3 ժամվա ընթացքում նրանք ամբողջ գյուղը տակնուվրա արին, ջարդեցին դարբասները, դռները, պատուհանները, կահկարասիները: Նրանք Լևոն Բաղալյանի, Արամ Ամիրջանյանի, Սիմոն Բաղալյանի, Լևոն Սավադյանի, Միշա Գրիգորյանի, Իվան Հակոբյանի, Զաքար Զաքարյանի, Արամ Գևորգյանի, Էդիկ Գասպարյանի, Աբրիկ Զաքարյանի, Ալագին Գրիգորյանի, Աղասի Զաքարյանի, Եղիշե Զաքարյանի տներից կողոպտեցին 97 ոսկե մատանի, 76 ոսկե շղթա, 76 ձեռքի ժամացույց, 45 հազար ռուբլի, 540 հազար ոսկե փոխառություն, հարյուրավոր կանացի և տղամարդու հագուստներ, սփռոցներ, գորգեր, կարպետներ և այլ թանկագին իրեր: Միաժամանակ դոլանլարցիների մառաններից հանել են 2,5 տոննա պանիր, 2,5 հազար լիտր թթի օղի, 2,5-3 տոննա հացահատիկ: Օրվա ավարը բարձելով բեռնատար ավտոմեքենաները, նրանք դիմելով իրենց ավագին՝ լկտիաբար ասացին. «Հը, մեր այս աշխատանքին ի՞նչ գնահատական կտաս, նաչալնիկ»:

-Այս ամենը պետք է ուղարկենք Ռաշիդ Մամեդովի բակը, որպեսզի մեր չինի բարձրացման համար գեներալ Ասադովին համարձակ զեկուցի:

Այդ ավարով ոգևորված՝ նրանք դիմեցին կոլտնտեսության նախագահ Արթուր Հայրապետյանին, որ բոլոր կոլտնտեսականների և գյուղի մյուս բնակիչների անունից դիմում գրի Վ. Պոլյանիչկոյին այն մասին, որ իրենք ցանկանում են կամավոր մեկնել Հայաստան, որովհետև Զորի Բալայանը, Իգոր Մուրադյանը և ղարաբաղյան շարժման մյուս լիդերներ հայերի և ադրբեջանցիների հարաբերությունները այն աստիճանի են սրել, որ այլևս նրանք չեն կարող իրար հետ կողք կողքի ապրել:

-Ես իրավունք չունեմ ժողովրդի անունից այդպիսի դիմում գրելու: Ճակատագրական այդ հարցն ամեն մարդ ինքը կարող է վճռել,-համարձակ պատասխանել է նախագահը:

-Նախ քո անունից այդ բովանդակության դիմում գրիր, որ ժողովուրդն էլ քեզնից օրինակ վերցնի,-ատրճանակը վեր բարձրացնելով ասաց լեյտենանտը:

-Ես չեմ լքելու Դոլանլարը, հետևաբար ժողովուրդն էլ հետևելու է իմ օրինակին:

Ավագը կատաղեց, նրա տրամադրությունը մռայլվեց: Կարգադրեց, որ նախագահին ձերբակալեն:

-Ի՞նչ իրավունքով եք ինձ ձերբակալում,-վրդովված հարցրեց նախագահը:

Ապտակը շառաչեց նրա դեմքին: Անարգված նախագահը դառնալով համագյուղացիներին, ասաց. «Ինձ տանելու են Զեբրայիլ, բայց դուք գյուղը երբեք չլքեք, մինչև վերջ կդիմադրեք, արդարությունը մեր կողմն է...»:

Մյուս օրվա՝ մայիսի 16-ի առավոտյան Դոլանլարը ևս շրջափակել են ռազմական տեխնիկայով: Նրա փողոցներում շարժվելու տեղ

չկար: Ամեն մի տան մոտ տառացիորեն մի բեռնատար էին կանգնեցրել: Գյուղի վերևի հարթակում վայրէջք էին կատարել երկու ռազմական ուղղաթիռ: 30-40 «ՈւԱԶ» մակնիշի ավտոմեքենաներ, որոնք գյուղ էին բերել 100-120 օմոնականներ, մանևրում էին գյուղի փողոցներում, հերթապահում Հին թաղեր գյուղից եկող ճանապարհի անտառից դուրս եկող տարածքի մոտ:

-Դոլանլարցիներ, ահա 3-4 տարի է, որ դուք ևս ցանկանում եք դուրս գալ Ադրբեջանի կազմից, վերամիավորվել Հայաստանի հետ: Մենք եկել ենք, որ արագացնենք ձեր սրտի փափագի կատարումը: Ձեր հարևան գյուղերի բնակիչներն արդեն դիմել են Պոլյանիչկոյին, որ իրենց փոխադրեն Հայաստան, որ իրենց եղբայրների հետ ապրեն: Դուք էլ շտապեցեք, որ նրա ուղարկած բեռնատարներով գնաք Հայաստան: Իզուր եք մնում այս խուլ գյուղում,-բարձրախոսով անընդհատ հայտարարում էր մի օմոնական:

-Ի՞նչ անենք,-շտապելով գյուղական խորհրդի նախագահ Աբրիկ Հակոբյանի մոտ՝ ասաց փոստի կառավարիչ Իվան Գաբրիելյանը:- Մի քանի որսորդական հրացաններով ինչպե՞ս դիմադրենք ավտոմատներով, զրահամեքենաներով, ուղղաթիռներով զինված բանակին և օմոնականներին:

-Նրանց դիմադրել, երևի, իմաստ չունի, բայց ես պետք է շրջափակման օղակից դուրս գամ, Հին թաղեր մեկնեմ, կապվեմ շրջանային ղեկավարների հետ, նրանց իրազեկ դարձնեմ, թե ինչ է կատարվում մեր գյուղում: Գուցե նրանք շրջանը մոբիլիզացնեն, ուժերը կենտրոնացնեն այստեղ, որպեսզի թույլ չտան գյուղը բռնագաղթեցնեն,- ասաց գյուղխորհրդի նախագահը:

-Ճիշտ ես ասում, գյուղի արևելյան թևի թթենիների այգիների միջով կուզեկուզ գնա, անտառ մտիր, Հին թաղեր հասիր, խնդրիր շրջանին, որ բոլոր տղամարդկանց, կանանց ոտքի կանգնեցնեն մեզ փրկելու համար: Գնա, սպասելը վտանգավոր է: Քո փոխարեն ես նախագահություն կանեմ:

Նրանք գրկախառնվեցին: Աբրիկը խոնավացած աչքերով վերջին անգամ նայեց գարնան գույների մեջ մխրճված գյուղին և շարժվեց դեպի թթենիների այգի: Մի ինչ-որ նախազգացում կաշկանդում էր նրա քայլերը: Նոր է հեռացել գյուղխորհրդի շենքից, երբ չորս օմոնականներ դարպասը փշրելով մտան նրա բակ:

-Դու գյուղխորհրդի նախագահն ե՞ս, խոզ,- դիմելով Իվանին ասաց նրանցից մեկը:

-Այո, բայց ես մարդ եմ և ոչ թե խոզ,- հանգիստ ասաց Իվանը:

Նրա խոսակցության տոնը օմոնականների ավագին կատաղացրեց:

-Ինչու՞ ես նստել այստեղ: Շուտ կարգադրիր, որ բոլոր դոլանլարցիները իրենց ունեցած-չունեցածը բարձեն մեքենաները, որպեսզի մեր հողից ջհանամը գնան: Չե՞ս զգում, որ անձրև է սպասվում, հետևաբար գյուղի ճանապարհները փակվելու են,- ավտոմատի կոթով հարվածելով նրան՝ ասաց ավագ օմոնականը:

-Դուք այդ մասին բարձրախոսով բազմիցս հայտարարել եք, յուրաքանչյուր տան մոտ էլ մի մեքենա կանգնեցրել: Ես ավելացնելու բան չունեմ,- պատասխանեց Իվանը:

-Սակայն ոչ ոք մեքենայի մոտ չի գալիս:

-Նշանակում է չեն ուզում իրենց օջախները թողնել:

-Գորբաչովյան դեմոկրատիայով խափվել եք, մեզնից բաժանվելու կոչ արել: Կարծում եք, թե մենք էլ ենք ճառերով գայթակղվելու՞,- ավտոմատով նորից հրելով նրան, ասաց աչքերը արյունով լի օմոնականը: - Շուտ դուրս եկ այս խոզի բնից, գնա ունեցվածքդ մեքենայի մոտ բեր, որ մյուսներն էլ քեզ հետևեն: Եթե ուշանաս, քեզ սատկացնելու ենք, որ մյուսների համար դաս լինի:

Իվան Գաբրիելյանը դուրս եկավ գրասենյակից, և քանի որ օմոնականները դեռ ներսում էին, փորձեց փախչել, ճեղքել պաշարման օղակը: Թթենիների արանքով ճողոպրելիս, նրան մի օմոնական նկատեց և ավտոմատով կրակ բացեց նրա վրա: Շիկացած գնդակները թռչում էին նրա գլխավերևով: Բարեբախտաբար, խոտերի մեջ մի փոս կար: Իվանը թաքնվեց նրա մեջ: Կրակող օմոնականը կարծելով, թե նա այգուց դուրս է եկել, շտապեց նրա մյուս ծայրը: Եվ նրան չհաջողվեց ճեղքել պաշարման օղակը: Ստիպված ժողովեց տան ունեցվածքը, որպեսզի փոխադրի Հայաստան, թեև համոզված էր, որ ճանապարհին իրենց պլոկելու են:

Մինչ այս, մինչ այն Աբրիկ Հակոբյանը, Մեխակ Ամիրյանը և Բագրատ Հակոբյանը հասան Հին թաղեր գյուղը: «Ի՞նչ է կատար-

վում ձեր գյուղում», «Ի՞նչ են անում օմոնականները», «Քանի՞ մարդ են սպանել»: Այս հարցերով էին դիմում նրանց հինգաղեցիները:

Գյուղխորհրդի նախագահին հաջողվեց կապվել շրջխորհրդի նախագահի հետ.

-Ընկեր Նավասարդյան, օմոնը և զինվորները մեր գյուղը բռնագաղթեցնում են, թեև ոչ մի բնակիչ չի ուզում թողնել գյուղը: Կարծում եմ, թե շրջանի հայրենասեր տղամարդկանց միջոցով կարելի է խափանել այդ հանցագործությունը:

-Նախ մենք ձեզ հասկանում ենք, դուք էլ մեզ հասկացեք, որ մեր ձեռքերը ևս կապել են: Երկրորդը՝ շրջկենտրոնից մինչև Դոլանլար գալը 3-4 ժամ կտևի: Մյուս կողմից էլ ոչնչով չենք կարող դիմադրել ժամանակակից ռազմական տեխնիկայով զինված օմոնին և բանակին: Հատուկ շրջանի պարետատունն էլ մի կողմ է կանգնել: Ասում է, որ ինքը չի կարող Վ. Պոլյանիչկոյի և Ա. Մութալիբովի կարգադրությունը փոխել:

-Ուրեմն թողնենք, որ գյուղը դատարկեն, թալանե՞ն...

...Հենց որ Դոլանլարից 103 ընտանիք բռնագաղթեցնող ավտոշարասյունը ճանապարհվեց, մթնոլորտը խոնավացավ, և սկսեց անձրև տեղալ: Կես ժամից հետո անձրևը դադարեց և լեռների վրա կախվեց երկնքի լազուրը: Արևի մայրամուտի ճառագայթները ծիածան դարձան և կամրջեցին Դիզափայտ լեռը Դոլանլարի թիկունքի Խութին արտի բարձունքի հետ:

-Հայկ, նայիր սուրբ Դիզափայտ լեռը ծիածանի գույներով կապվել է Խութին արտի լեռան հետ: Դա խորհրդավոր բան է, այս բռնատեղահանության կազմակերպիչները պատժվելու են, մեզ նորից մեր գյուղն են վերադարձնելու,-դիմելով մեքենայի թափքում կուչ եկած ամուսնուն, ասաց Զաբելա Աբրահամյանը:

-Իհարկե, մեզ բռնագաղթողները կախաղանի են արժանի, բայց հազիվ այս վայրենի երկրում, որը կոչվում է ԽՍՀՄ, դեմոկրատիան հաղթանակի: Կոլտնտեսության և մարդկանց անձնական ամբողջ անասունները ադրբեջանցիները հափշտակել են, բայց ոչ ոք դրանով չի հետաքրքրվում: Էլ ինչու՞ են մեզ մոտ ներքին զորքեր ուղարկել,- անփութորեն պատասխանեց ամուսինը:

-Դու այս նեղ օրում էլ կոլտնտեսության անասունների մասին ես մտածում,-փաթաթվելով վերմակի մեջ ասաց կինը:

Ջեբրայիլի Հափսլու գյուղի մերձակայքում ավտոշարասյանը անհանգիստ սպասող Ադրբեջանի ՊԱԿ-ից գործուղված երկու աղա պահանջեցին, որ բոլոր մեկնողները դիմում գրեն, թե իրենք կամավոր են մեկնում Հայաստան:

-Ես այդ բովանդակության դիմում չեմ գրի,-առաջինը նրանց պատասխանեց Միքայել Գրիգորյանը:

-Ես էլ ոչ մի դիմում չեմ գրի,- ասաց Լևոն Բաղալյանը:

-Ես ել եմ ձեզ հետ համամիտ,- դա էլ Սուրեն Ղասումյանի պատասխանն էր:

-Անմիջապես լռեցնել այդ խոզերին,- կատաղած կարգադրեց ՊԱԿ-ի աղան: Նրա խոսքը դեռ բերանում էր, երբ մոլեռանդ ամբոխը շրջապատեց ավտոշարասյունը և սկսեց անպատվել ու խոշտանգել հայերին: Նրանք անգամ փորձում էին մեքենաների թափքերում բռնաբարել կանանց, աղջիկներին: Ռիմա Ամիրջանյանը իր 17-ամյա աղջկան փրկելու համար քողարկել է պառավի հագուստների մեջ: Այդ խորամանկությանը դիմել են նաև մյուսները: Երիտասարդ մի օմոնական բռնել է Մարո Զաքարյանի մազերից, որ քաշի դեպի իր գիրկը, բայց այնպիսի շիկացած ապտակ է կերել, որ անմիջապես թողել է նրան, որպեսզի ընկերները իր «իգիթության» վրա չծիծաղեն:

Աղասի Զաքարյանը, որը ադրբեջաներեն ադրբեջանցուց լավ գիտեր, դիմելով ՊԱԿ-ի աղաներին, ասաց.

-Դուք ձեր ժողովրդին խայտառակում եք: Ամո՛թ է: Կարգադրեցեք, որ ամբոխը հեռանա ավտոշարասյունից: Իրեն ինտերնացիոնալ հորջորջող ժողովուրդը այդպես ֆաշիստական գործով չի զբաղվի...

Նրա խոսքերը ներգործեցին ՊԱԿ-ի աղաների վրա: Նրանցից մեկը ավտոմատով կրակ բացելով ամբոխի ուղղությամբ, գոռաց. «Եթե թալանը չթողնեք այստեղ, ապա բոլորին գնդակահարելու եմ: Հեռացե՛ք, սոված շներ»:

Երբ ամբոխը դատարկածեռն հեռացավ ավտոմեքենաներից, նույն պաշտոնյան բարձրաձայն ասաց. «Ես ձեզ փրկեցի մոլեռանդ մուսուլմաններից: Դուք էլ ինձ մի լավություն արեք՝ այս դիմումները ստորագրեք: Միևնույն է, այլևս հնարավոր չէ, որ հայերը և ադրբե-

ջանցիները կողք կողքի ապրեն: Ձեր դպրոցի դիրեկտոր Յուրի Ձաքարյանը մեզ այդպիսի մի դիմում է տվել, խնդրել, որ իր ընտանիքը տեղափոխենք Դերբենդ: Մենք նրա ընտանիքը առոք-փառոք տարել ենք այնտեղ: Մի կարծեք, թե բոլոր ադրբեջանցիներն են գազան: Մեր մեջ էլ մարդիկ կան, որ դատապարտում են Ա. Մութալիբովի, Վ. Պոլյանիչկոյի, Մ. Գորբաչովի կողմից ծրագրված այս պետական հանցագործությունը՝ բռնագաղթը: Այս ամբոխից ազատվելու միակ երաշխիքը դիմումների ստորագրումն է»:

Փոքր-ինչ հեռվում կատաղի գալարվում էր Մայր Արաքսը: Նրա փրփրաբաշ ջրերի աղմուկի մեջ ասես հնչում էր հայերի շուրթերից անպակաս երգի տողերը.

Քանի որ իմ զավակունք
Այսպես կու մնան պանդուխտ՝
Ինձ միշտ սգավոր կտեսնեք,-
Այս է անբախտ իմ սուրբ ուխտ...

Մինչև ե՞րբ է հայոց քարավանը քայլամոլոր գնալու օտար բավիղներով,- նայելով Մայր գետի կողմը՝ մտամոլոր հարցնում էին դոլանլարցիները: - Միթե՞ պանդխտությունը միշտ ուղեկցելու է հայերին:

-Եթե ձեր ժողովրդի մեջ բռունցք, միասնություն չլինի, օտարները միշտ ձեզ հալածելու են,- քամու սուլոցի մեջ լսվեց Արաքսի պատասխանը:

Իսկ ավտոշարասյունը հայրենի հողից պոկած դոլանլարցիներին տանում էր Մամեդբայլի, Աղալար, Խանլիք գյուղերի միջով: Նախկինում այդ գյուղերում 5-6 քոչվոր քրդերի ու ազերիների վրաններ կային, որոնց այդտեղ էին վերաբնակեցրել 18-20 թվականներին հայերին այդ տարածքներում թուրքական օկուպացիոն բանակի միջոցով գլխատելուց հետո: Անցած 70 տարում այդ գյուղերը լայն թևեր են տարածել, դարձել բազմամարդ:

«Ադրբեջանցիները պլանավորած կերպով աճելով, բազմանալով՝ մեզ գերազանցել են: Մինչդեռ մենք մեր զավակներին օտարություն ուղարկելով՝ մեր գյուղերը ցամաքացրել ենք:

Եթե մեր դրսի 450-460 ընտանիքների գոնե կեսը գյուղերում լիներ, ոչ ոք մեզ չէր կարող բռնատեղահան անել»-, հայացքը չկտրելով լեռներից՝ ինքն իրեն մտորում էր կոլտնտեսության ոչխարաբուծական ֆերմայի նախկին վարիչ Տիգրան Ավագյանը:

Հեռվում արևը գլորվում էր սեգ սարի անդին: Մութը իջնում էր, իսկ ավտոշարասյունն անհամաչափ ընթանում էր դեպի Սյունյաց լեռնաշխարհ:

-Մեր ժողովրդի մեջ դեռ բացակայում է բռունցքը,-ասաց Տիգրանը և աչքերը փակեց:

ԿՀԱՐԱՏԵՎԵՆՔ ՄԻԱՅՆ ՀՈՂՈՒՄ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ

Բանաձորը իր հանդերով, ինչպես ասում են, ջուր է ըմպում Մայր Արաքսից: Երբ քաշաթղպերի ուղտերը չոքում են Արաքսի հովտում, նրանց գլուխը հասնում է Բանաձոր: Ադրբեջանական երեք գյուղ՝ Աֆանդիլարը, Հորալուն և Գյուջաղը, որոնք նախկինում միայն 10-15 եղեգնածեփ տներ ունեին, իսկ խորհրդային իշխանության տարիներին ծավալվել են աջ ու ձախ, խոշոր, բազմամարդ բնակավայրեր դարձել, Բանաձորին բաժանում են պատմական Հայաստանի այդ շոնդահոս երակից:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ռահվիրաներից մեկի՝ մեծատաղանդ բանաստեղծ, արձակագիր Ռափայել Պատկանյանի «Արաքսի արտասուքը» հանրահռչակ բանաստեղծությունը միշտ հնչում էր նաև բանաձորցիների շուրթերից, նրանց ոգևորում հայրենի հողի պաշտպանության, կորսված փառքի վերականգնման գործում: Եվ օտար հավքն անգամ վախենում էր թռչել Բանաձորի տարածքով:

Կոմունիստական գաղափարախոսությունը 70 տարում բանաձորցիների հայրենասիրական ոգին ևս թրծել է սառը ջրավազանում: Այնուամենայնիվ, գյուղը պահպանում էր իր ազգային ավանդույթները: Հմուտ, աշխատասեր, հնարամիտ բանաձորցիների արդի սերունդը հաց ու խաղող էր արարում, թթի օղի թորում, հարատևում հողում իր նախնիների: Նրանք հպարտանում էին իրենց «Բանաձոր» մակնիշի գինիով: Այդ հպարտությունը կոտրելու, հողի և այգու նկատմամբ նրանց յուրահատուկ սիրո վրա ջուր մաղելու նպատա-

կով Բաքուն «Բանաձոր» մակնիշի գինու շշերից ջնջել է հայերեն տառերը և դրա փոխարեն ադրբեջանական, այսինքն՝ ռուսական գրերով շշեր արտադրել:

-Թեև մեր գինուց ջնջել են մեսրոպատառ գրերը, բայց մեր սրտերից չեն կարող ջնջել: «Բանաձոր» գինին վերացնելու առիթով ասում էին հայրենասեր տղերքը, բողոքի հեռագրեր առաքում Բաքու, Մոսկվա...

-Տղերք,- ամեն անգամ իր սաներին հանդիպելով , ասում էր ուսուցիչ Ասլան Հովսեփյանը,- բոլոր տվյալները վկայում են, որ Ադրբեջանը ցանկանում է մեր մարզը ևս Նախիջևանի օրինակով հայաթափել: Որպես դրա պատասխան, դուք պետք է գյուղում մնաք, մեր հողում տուն-տեղ հիմնեք, որպեսզի Բանաձորը հուր-հավիտյան գոյատևի Մայր Արաքսի հարևանությամբ...

Երիտասարդներից շատերը հասկանալով բանի էությունը, մնում էին գյուղում, օջախներ հիմնում իրենց պապերի հողում: Գյուղի ներքևի թաղամասի նորակառույցները մի առանձին շուք էին տալիս հինավուրց Բանաձորին:

Մայիսի 15-ի վաղ առավոտյան Ջեբրայիլի շրջանի Աֆանդիլար, Հորալու և Չարաքյան գյուղերից ավելի քան 60-70 թալանչիներ կանգնել էին այդ նոր թաղամասի բնակարանների մոտ և ատամները կրճտացնելով որոշում էին, թե ով ում բնակարանն է սեփականացնելու: Այդ թալանչիների մեջ էին չարաքանցի տրակտորիստ Հիլալ Ազիզովը, հորալվեցի Իզյաթը, աֆանդիլվեցիներ Գարաշ Աբդուլաևը, Մուբարիզ Իսլամ օղլին, Օրուջ Աբիլ օղլին, Ֆամիլ Աբդուլաևը, Թելման Թեյմուր օղլին, Ուզուն Մամեդը և այլք: Նրանք մինչև դարաբաղյան ազգային-ազատագրական շարժումը գրեթե ամեն օր շփվում էին բանաձորցիների հետ, քաջ տեղյակ էին գյուղի անցուդարձին, գիտեին, թե ովքեր ինչքան անասուններ, ինչպիսի գույք ունեին:

-Ռաֆիկ Սաֆարյանի տունը ես եմ վերցնելու, ոչխարի հոտին նայող սոված գայլի ախորժակով ասաց Օրուջ Աբիլ օղլին:

-Իմ քիրվա Պետյայի որդու՝ Սլավիկի տունն էլ իմն է, ոչ ոք չհանդգնի նրան մոտենալ,-ասաց Ուզուն Մամեդը:

-Ես էլ տրակտորիստ Մակար Ալահվերդյանի տունն եմ վերցնելու,- ասաց չարաքյանցի Հիլալը:

-Ես էլ սովխոզի ամբարն եմ վերցնելու: Եթե որևէ մեկը մտնի նրա մեջ, ապա շան պես սատկացնելու եմ,- ասաց հորոլվեցի Իզյաթը:

-Չայնդ կտրի՛ր, ավազակ: Սովխոզի ամբարներում 200-300 տոննա հացահատիկ և խտացված կեր կա, այդքանը ինչպե՞ս ես տեղափոխելու,- հորալվեցու ախորժակին քացախ ածեց Ուզուն Մամեդը:

-Այդ քո գործը չէ: Ամբողջ Հորալու գյուղը այստեղ եմ բերելու, որ հացահատիկը տանենք:

Իր որդու տան ցանկապատի հետևից ունկնդրելով այդ խոսակցությունը՝ Պետրոս Պետրոսյանը համբերությունից դուրս եկավ:

-Ինչու՞ եք հավաքվել այստեղ, բանաձորցիները մեռե՞լ են, որ նրանց տները իրար միջև բաժանում եք...

-Պետյա գաղա (հայր-հեղ.), զարափաթ ենք անում: Մենք ձեր գյուղն ենք եկել, որ անասուններ գնենք, որովհետև ձեզ Հայաստան են քոչեցնելու,-ասաց Գարաշ Աբդուլաևը:

-Եթե դուք Միջին Ասիայի ավազուտները գնաք, որտեղից ձեր նախնիները 11-րդ դարում Անդրկովկաս են ներխուժել, մենք դարձյալ մնալու ենք մեր հողում: Ոչ մի բանաձորցի մտադիր չէ թողնելու իր նախնիների վաղնջական երկրամասը:

-Մի պարծենա, ընդամենը 1-2 օր է մնացել, որ ձեզ այս հողից քշեն-տանեն, որպեսզի այս գյուղին մենք տիրություն անենք, քանի դեռ ուշ չէ ձեր անասունները էժան գներով վաճառեք մեզ, թե չէ վաղը, մյուս օրը դրանք մենք ձրի կտանենք,-ասաց Մուբարիզ Իսլամ օղլին:

-Բանաձորցիներն այժմ ոչ գյուղից քոչելու են, ոչ էլ ձեզ անասուն են ծախելու, կարող եք գնալ,- վրդովված ասաց խորհրդային տնտեսության զոոտեխնիկ Պետրոսյանը:

Նա դեռ չէր հեռացել ցանկապատից, երբ զրահամեքենաների հռնդյունը հասավ ականջներին: Չայլաղի ճանապարհով դեպի գյուղ էին գալիս չորս զրահամեքենա: Օդով նրանց ուղեկցում էր երկու ռազմական ուղղաթիռ: Զրահամեքենաների հետևից դեպի Բանաձոր էին գալիս 15-20 «ՈՒԱԶ» մակնիշի ավտոմեքենաներ, որոնք գյուղ էին բերում օմոնականներին:

-Գալիս են, այլևս սպասելու կարիք չկա,- զրահամեքենաների և ուղղաթիռների կողմը նայելով բացականչեց Մուբարիզ Իսլամ օղ-

լին, դե, տղեք, գործի անցեք, Բանաձորում մի անասուն էլ չթողնեք...

Հեռվից՝ Աֆանդալարի կողմից դեպի Բանաձոր էին շտապում ևս 100-150 թալանչիներ: Իսկ զրահամեքենաները, մարդատար ու բեռնատար ավտոմեքենաները ձգվում էին Չայլաղի այգիներից մինչև դպրոցի շենքը: Հանկարծակիի եկած բանաձորցիներն առաջին պահ գլուխները կորցրին, խուճապի մատնվեցին: Դեռևս մայիսի 13-ին, երբ անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով խորհրդային զինվորները և օմոնականները մտել էին Առաքել, ձերբակալել երիտասարդներին, տարել Չեբրայիլ, բանաձորցիներից շատերը իրենց երեխաներին, կանանց փոխադրել էին շրջկենտրոն: Այդ օրվա երկրորդ կեսին ԽՍՀՄ-ի զորքերի ստորաբաժանումները և օմոնականները Բանաձոր էին մտել թալանի և հետախուզության համար: Իսկ հիմա գյուղ են եկել այն ավերելու, նրա քարը քարի վրա չթողնելու մոլուցքով: Շրջանային մարմիններից օգնություն ստանալու հույսը բանաձորցիների սրտերում մարել է. «Մենք ոչինչ էլ չենք կարող կատարել, որովհետև մեր ձեռքերը կապել են...»: Համախմբվելու, մի բռունցք դառնալու հնարավորություն չկար: Ամեն մարդ սկսեց հոգալ իր կաշվի մասին: Բնավ էլ այդպիսի հաջող ընթացքի չսպասելով՝ թալանչիները 2-3 ժամվա ընթացքում գյուղից, նրա հանդերից քշեցին-տարան ավելի քան 200 գլուխ խոշոր, 2500 գլուխ մանր եղջերավոր անասուններ: Բոլոր բանաձորցիները 1-2 ժամվա ընթացքում զրկվեցին իրենց անասուններից: Մասնավորապես, Բորիս Սաղաթելյանը զրկվեց 2 գլուխ խոշոր և 20 գլուխ մանր եղջերավոր անասուններից: Ռաֆիկ Սաֆարյանը՝ 1 գլուխ խոշոր, 17 գլուխ մանրից, Համլետ Բալայանը՝ 2 գլուխ խոշորից, 46 ոչխարից, Պետրոս Պետրոսյանը՝ 2 խոշորից, 12 ոչխարից, Արմիկ Մելքումյանը՝ 1 խոշորից, 16 ոչխարից, Արտավազդ Դավթյանը 2 խոշորից, 11 մանրից, Խորեն Հովհաննիսյանը՝ 2 խոշորից, 45 մանրից, Սուրեն Հովհաննիսյանը՝ 25 մանրից: Սուրեն Վարդանյանը՝ 1 խոշորից, 15 մանրից և այլն:

-Այդ ձեզ դեռ քիչ է,- բանաձորցիների անասունները քշելով դեպի Աֆանդիլար ասաց Ռամիզ Աբդուլաևը: - Քիչ առաջ մարդավարի առաջարկում էինք, որ իրենց անասունները էժան գնով ծախեն:

-Հո՜, հո՜,- մահակը բարձրացնելով անասունների վրա՝ ոգևորված ասաց Օրուջի կին Մաստանը,-Ալլահը Մութալիբովին շատ պահի, որ հայերին այստեղից քշում է, մեզ էլ նրանց անասունները, գույքը, տները պարգևում:

-Այո՛, անհավատ հայերին միայն պետք է այդպես պատժել: Մեր հողում ապրում են, անասուն պահում, բայց սոված Բաքվին մի կտոր հաց էլ չեն տալիս, - քռքռալով ասաց Դոնգա Աբդուլաևան:

Բանաձորցիները բնավ էլ չէին կարող թալանչիներից իրենց անասունները հետ վերադարձնել, որովհետև նրանց պաշտպանները՝ զորքը և օմոնը՝ արդեն գյուղում էին և խում-խումբ ներխուժում էին մարդկանց տները:

Գյուղը մտած առաջին զրահամեքենան փոքր-ինչ կանգնեց Հայրենական պատերազմում զոհված բանաձորցիների հիշատակին կանգնեցրած հուշարձանի մոտ: Կապուտաչյա ռուս սերժանտը գլուխը հանեց խցիկից և դիմելով այնտեղ կանգնածներին, հարցրեց.

-Սա Բանաձոր գյո՞ղն է:

-Այո՛, Բանաձորն է, որը 250 կտրիճ է ուղարկել Հայրենական պատերազմ, որոնցից 150-ը զոհվել են Ուկրաինիայի, Բելոռուսիայի, Ռուսաստանի հողում: Ահա նրանց պատվին երախտապարտ սերնդի կողմից կանգնեցրած հուշարձան-կոթողը: Սակայն ուկրաինացիների, բելոռուսների, ռուսների՝ խորհրդային բանակում ծառայող զինվորները, Ադրբեջանի օմոնականներին թև ու թիկունք դարձած, ավերում են ԼՂԻ Մարզի հայկական գյուղերը, պղծում մեզ համար սրբություն դարձած հուշարձանները, մեր հարևան Առաքել գյուղում օմոնականները այլանդակել են մարշալ Բաղրամյանի նկարը, պղծել պատերազմում զոհվածների հուշարձանը: Եվ դուք՝ «ազատարար» բանակի մարտիկներդ, զրահամեքենաներից անտարբեր դիտել եք այդ ամենը: Վայրենիներն այսօր էլ երևի այս հուշարձանն են պղծելու: Եթե նրանց այդ արշավը չկանգնեցվի, ապա վաղն էլ Լենինգրադի Իսակովյան տաճարը, Չմեռային այգու կոթողներն են ավերելու,-ասաց համարձակ ազատամարտիկ Վանիկ Հովհաննիսյանը:

Խոսքի այդ գնդակը հասավ զինվորների սրտերին:

-Պետք է հետ դառնանք, ամոթ է, օմոնի ձեռքին գործիք դարձած բարբարոսություն ենք կատարում, որի համար մեր ծնողները, հա-

ռազատները մեզ չեն ներելու,- դառնալով ընկերներին՝ ասաց մի սերժանտ:

-Ես ել եմ այդ կարծիքին: Մենք, կաշառքով հղփացած հրամանատարներին լսելով՝ աղտոտում ենք ռուս ժողովրդի անունը,- ասաց հաղթանդամ մի զինվոր:

-Ինչ են արել Ղարաբաղի հայերը: Ընդամենը ուզում են անկախություն ձեռք բերել, վերամիավորվել Հայաստանի հետ: Օգտվելով աշխարհի դեմոկրատացման մթնոլորտից՝ երկու գերմանական պետությունները վերամիավորվել են: Ադրբեջանն էլ ուզում է սուվերեն Իրանի հյուսիսային տարածքը պոկի, միացնի իր տարածքին: Այդպիսի ախորժակ ունեցող հանրապետությունը, իհարկե, թույլ չի տա, որ ԼՂԻ Մարզը ինքնորոշվի: Ահա թե ինչու հայերին Ղարաբաղի իրենց բնակավայրերից բռնատեղահան են անում, նրանց ինչքը թալանում և պրոբլեմը այդպես լուծում:

Ռուս զինվորներն այդպես մտորում էին, երբ «ՈւԱԶ» մեքենան կանգնեց նրանց մոտ: Դուրս գալով ավտոմեքենայից, փոխգնդապետ Ռաշիդ Մամեդովը արհամարհական տոնով դիմելով զինվորներին՝ ամբողջ ձայնով բղավեց.

-Ռուսներ, ձեզ այստեղ ենք ուղարկել, որ հայ գրոհայիններին ձերբակալեք և ոչ թե նրանց հուշարձաններով տարվեք: Միևնույն է, այդ հուշարձանը 1-2 ժամից հետո հողին է հավասարեցվելու: Շուտ զրահամեքենան տարեք գյուղի վերևի թաղամաս, փակեցեք ճանապարհը, որպեսզի ոչ ոք չփորձի գյուղից փախչել...

-Մեր զրահամեքենայի անձնակազմը հրաժարվում է ձեր հրամանը կատարել: Այս գյուղի մարդիկ ահա այստեղ կանգնած մարդկանց պես սովորական մարդիկ են, մինչդեռ դուք բոլոր բնակիչներին գրոհայիներ եք համարում, պահանջում, որ հայկական գյուղերը ազատենք նրանցից, այսինքն՝ հայերի վաղնջական օջախները դատարկենք, որ այստեղ ադրբեջանցիներ վերաբնակեցնեք: Եթե մեր պարետը չգա այստեղ, մենք ոչ մի հրաման չենք կատարելու,- սառնասրտորեն ասաց մի սերժանտ:

-Եթե իմ հրամանը չկատարեք, ձեզ այստեղ գնդակահարելու ենք,-հավասարակշռությունից դուրս գալով՝ ասաց ինքնահավան միլպետը:

Զինվորները նրա սպառնալիքից վախենալով՝ տատանվեցին: Մի զինվորական, ինչպես հետո մեզ ասացին, սերժանտի ականջին շշնջաց. «Ադրբեջանցիները մեզ կարող են այստեղ գնդակահարել ու ամբողջ աշխարհին հայտարարել, թե հայերը Բանաձորում սպանել են ռուս զինվորներին, դրանով իսկ բանին անտեղյակ մեր ընկերներին, մեր ծնողներին գրգռեն հայերի դեմ: Հետևաբար պետք է կատարենք հրամանը...»:

Տասը-տասնհինգ րոպե հետո զրահամեքենան կանգնեց գյուղի վերևի թաղամասում, օդում կրակեց, պտտվեց, փողը ուղղեց գյուղի կողմը:

Մինչ այս, մինչ այն օմոնականները և թալանչիները խմբերի բաժանված՝ անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով թալանում էին բանաձորցիների հարուստ տները: Ահա թե ինչ են ասում այդ մասին դեպքերին ականատես բանաձորցիները.

Սուրեն Հովհաննիսյան: Ժամը մոտավորապես 10-ին իմ բակ են մտել չորս օմոնականներ և տասը թալանչիներ: Օմոնի խմբի ավագը՝ չաղ մի կապիտան, ատրճանակի փողի ծայրը ուղղելով ճակատիս, ասաց.

-Քեզ պետք է սպանենք, որ մինչև հիմա մնացել ես գյուղում, իմացել ես, թե զարափաթ ենք անում, երբ մայիսի 13-ին այստեղ գալով՝ հայտարարել ենք, թե բոլորդ գյուղը թողեք, գնացեք ջհանամը, թե չէ ինքներս ենք ձեզ տեղափոխելու:

-Ես իմ ո՞ր մեղքի համար օջախս թողնեմ, գնամ...

-Ձայնդ կտրիր, խոզ: Վերցրու այս գրիչը և թուղթը ու գրիր այն, ինչ կթելադրեմ:

Դու թուրքերեն կամ ռուսերեն կարող ես թելադրել, բայց ես միայն հայերեն գիտեմ:

-Ինձ մոտ գտնվող տեքստը ռուսերեն է, թող կինդ գրի:

Եվ նա կնոջս թելադրեց հետևյալ տեքստը. «Մենք՝ Բանաձորի հայերս, ադրբեջանցիներից գոհ ենք: Նրանք հյուրասեր, ինտերնացիոնալ, հայրենասեր ժողովուրդ են: Մենք նախկինում առևտուր էինք անում Ջեբրայիլում, մեր օղին, պարենային մթերքներն այնտեղ վաճառում և մեզ համար ամեն ինչ գնում: Սակայն վերջին երկու-երեք տարիներին Ջ. Բալայանը, Ի. Մուրադյանը և այլք մեր և

ադրբեջանցիների հարաբերությունը սրել են: Այժմ այլևս հնարավոր չէ, որ Բանաձորը ապրի Աֆանդալարի և Չարաքյանի կողքին: Ուստի, ընկ. Վ. Պոլյանիչկո, խնդրում ենք ձեզ, որ մեզ փոխադրեք Հայաստանի Գորիսի շրջան: Այնտեղից մենք կգնանք մեր հարազատների մոտ»:

Մինչև կինս այդ երկարաշունչ դիմում գրելը, մյուս օմոնականները և թալանչիները տունս տակնուվրա էին անում: Նրանք այդ օրը մեր տնից կողոպտել են 4500 ռուբլի, երեք մատանի, երկու ժամացույց, երկու ոսկե շղթա, 16 լիտր թթի օղի, 15 կիլոգրամ պանիր: Կաթսայից հանել-տարել են նաև մեր եփած հնդկահավը: Ես փորձել եմ հարձակվել իմ տունը թալանողների վրա, գոնե նրանցից մեկից վրեժ հանեմ, բայց կապիտանը ատրճանակի փողը դնելով ճակատիս, բղավել է. «Գիժ էրմանի, տեղիցդ չշարժվես: Մենք այսօր բավարարվում ենք քիչ ավարով: Քեզ էլ մինչև առավոտ ժամանակ ենք տալիս, որ պատրաստվես Հայաստան մեկնելու համար»:

Բռնագաղթից փախչելու համար ես և կինս կեսգիշերին դուրս եկանք գյուղից և սարալանջով գնացինք Սարինշեն գյուղի ուղղությամբ: Գյուղի ծորով ձգվող ճանապարհը օմոնն արդեն փակել էր:

Պետրոս Պետրոսյան: Մեր գյուղի կազմակերպված թալանը մեզ հանել էր հավասարակշռությունից: Ես և կինս էլ առաջին պահ գլուխներս կորցրել էինք, ապա սթափվելով՝ աղջկաս օժիտը թաքցրել տանիքի խոտերի մեջ: Հազիվ էինք այդ գործը վերջացրել, երբ մեր բակ մտան մի խումբ օմոնականներ:

-Դու դեռ այստե՞ղ ես,- ատրճանակի փողը դնելով քթիս՝ ասաց մի լեյտենանտ: Քեզ ամսի 13-ին անձամբ նախազգուշացրել եմ, որ Բանաձորից հեռանաս, գնաս...

Ինձ և կնոջս սեղմելով պատին, լեյտենանտը կարգադրեց թալանչիներին, որ գործի անցնեն: Նրանք նախօրոք վարժեցրած կապիկների ճարպկությամբ 10-15 րոպեի ընթացքում տունս դատարկեցին, ինձանից կողոպտեցին երեք գորգ, 6 անկողին, երեք մատանի, մեկ ժամացույց, 50-60 աման-չաման, տարբեր տեսակի հագուստներ, 25 լիտր թթի օղի, 15 կգ պանիր: Այդ ամենը բարձելով մեր դարպասի մոտ կանգնած բեռնատարը, լկտիաբար քրքջալով շտապեցին մյուսների տները: Իսկ լեյտենանտը չմոռացավ ինձ նախազգուշացնել. «Մինչև վաղը ժամանակ եմ տալիս, պատրաստվեցեք, որ Հայաստան քոչեք: Իսկ հիմա ստորագրիր այս դիմումը»...

Նրանք նոր էին դուրս եկել իմ բակից, երբ իմ քիրվա Ուզուն Մամեդը եկավ մեզ մոտ:

-Պետյա քիրվա, հրամանը հրաման է: Ձեզ քոչեցնելու են, որպեսզի ձեր տներում ադրբեջանցիներ վերաբնակեցնեն: Արդեն հայտնի է, թե մեր գյուղից ովքեր են ձեր գյուղում մշտապես ապրելու: Այստեղ ապրելու համար իրենց համաձայնությունն են տվել նաև Արաքսի հովտի, Միլի, Մուղանի մի շարք գյուղերի ադրբեջանցիներ, որոնց յուրաքանչյուրին Ադրբեջանի կառավարությունը ամսական 2500 ռուբլի նպաստ է տալու: Նրանք արդեն առաջին ռոճիկը ստացել են: Քեֆիդ թող չդիպչի՝ քո տունն էլ ես եմ վերցրել: Չեմ թողնի, որ իմ քիրվայի տունը գյադա-գյուդայի ձեռք ընկնի: Դու ինչ ունես-չունես, հիմա ինձ տուր, թե չէ վաղը թալանչիները կտանեն: Արխային մնա, հետագայում, երբ մեր ժողովուրդը Ադրբեջանի իշխանություններից կվռնդի ազգայնամոլներին, որոնցից յուրաքանչյուրը իր հրապարակային ճառը ավարտում է «Մա՜հ հայերին» շովինիստական լոզունգով, որտեղ էլ լինեմ, քո ունեցվածքը քեզ եմ վերադարձնելու: Ճիշտ է, Ադրբեջանի գլուխն անցած ազգայնամոլ կաշառակերները մեր ժողովրդի վարկը միջազգային ասպարեզում գցել են, բայց մեր մեջ էլ դեռ քիշի մարդիկ կան,- անկեղծորեն ասաց նա:

-Մամեդ քիրվա, դու գիտես, որ աղջկանս համար օժիտ եմ պատրաստել: Եթե դա փրկես թալանչիներից, քո տանը պահես, ապա կապացուցես, որ իրոք քիշի քիրվա ես,- ասացի ես:

Ալլահը վկա, ես քո աղջկա օժիտը երբ էլ լինի կվերադարձնեմ,- երդվեց Մամեդը:

Աղջկաս օժիտը, մեր տան մյուս ունեցվածքը բարձելով ավտոմեքենան, Ուզուն Մամեդը ինձ նորից նախազգուշացրեց. «Առավոտյան դեմ գյուղից դուրս կգաս, թե չէ կարող ես գնդակի զոհ դառնալ»:

Մարգո Հովհաննիսյան: Ճաշ էի պատրաստել, սեղան բացել և սպասում էի որդուս՝ Վանիկին և հարսիս՝ Կարինեին, երբ վեց օմոնականներ, որոնցից երկուսը՝ Թելմանը և Հուսեյնը, նախկինում մեր խորհրդտնտեսությունում հովիվներ էին աշխատում, մտան իմ տուն:

-Մարգո մուալլիմ, այս ճաշը ու՞մ համար ես պատրաստել, գրոհայինների՞, թե՞ հյուրերի,-ասաց Թելմանը:

-Բանածորցին ոչ Աստծո հյուրի համար է հաց խնայում, ոչ էլ, դուք լավ գիտեք, իրենց հարևանների: Ինչ վերաբերվում է գրոհայիններին, ապա կարող եմ հաստատել, որ մեր գյուղում ոչ մի գրոհային չկա, թեև պրեզիդենտ Ա. Մութալիբովը և նրա կամակատար Վ. Պոլյանիչկոն աշխարհով մեկ տարածում են, թե մարզի բոլոր գյուղերում գրոհայիններ կան: Այդ աղմուկով նրանք փորձում են քողարկել մարզի գյուղերի բռնագաղթի խայտառակ փաստը: Սումգայիթում էլ գրոհայիններ են եղե՞լ, որ հայերին ջարդել եք, նրանց գույքը յուրացրել, ձեզ ամբողջ աշխարհում խայտառակել...

-Մարգո մուալլիմ, լավ, դա մի կողմ թողնենք, որտեղ է Կոլյա մուալլիմը, մենք նրա հետ աղ ու հաց ենք կերել,-միջամտեց Հուսեյնը:

-Նա նոր է մահացել:

-Աստված ողորմի, լավ քիշի է եղել: Տանը արաղ ունես՞,- շարունակեց Հուսեյնը:

-Ինչու՞ չունեմ: Դուք լավ գիտեք, որ յուրաքանչյուր բանածորցու տանն առնվազը 40-50 լիտր թթի օղի է լինում,- ասացի և սեղանին նաև օղի դրի:

Նրանք օղին կոնծելով՝ ճաշեցին:

-Այս ինչ հաշվիչ մեքենա է,- գինովացած նայելով որդուս հաշվիչ մեքենային՝ ասաց Թելմանը և ատրճանակի փողի ծայրը դրեց ճակատիս ու ավելացրեց.

-Մենք եկել ենք, որ Ադրբեջանի հողում վաստակած մեր հարստությունը տանենք, որովհետև մեզ հետ չեք ուզում ապրել, ուզում եք միանալ Հայաստանին: Մենք թույլ չենք տա, որ մեր հարստությունը Հայաստան տանեք,- թղթախաղերը բացելով՝ ասաց նախկին հովիվ Թելմանը:

-Ես, որպես պատմության մասնագետ, լավ գիտեմ, թե այս հողը ու՞մ է պատկանում, իսկ դուք, որպես նախկին անասնապահներ, հիմա օմոնի տարազ հագած պաշտոնյաներ, պատմությունն անասնապահության հետ մի շփոթեք,-ատրճանակի ծայրը հեռացնելով ինձանից՝ ասացի ես ու անմիջապես ավելացրեցի. «Կնոջ վրա զենք բարձրացնելը բոլորովին իգիթություն չէ, մանավանդ որ նոր եք վայելել նրա պատրաստած հացը: Իսկ ձեր առածն ասում է, ո՞վ որ հացը մոռանա, նրա աչքերը կկուրանան»:

-Մեզ համբերությունից մի հանի,-ատրճանակով խփելով գլխիս՝ ասաց Հուսեյնը,- պատմություն-մատմություն մենք չգտիտենք, մեզ քո հարստությունն է հետաքրքրում,- ասաց Թելմանը և ձեռքը խրեց ծոցս, Իսկ Հուսեյնը սկսեց ներքնաշորերս շփել, կարծելով, թե ես փող ու ոսկեղեն եմ թաքցրել իմ ներքնաշորերում:

Սակայն ոչինչ չգտնելով, կատաղեցին և սկսեցին տանս ունեցվածքը ժողովել մի անկունում: Երբ վերջացրին, բակի թթենու ճյուղը կտրեցին և «ԿամԱԶ» մակնիշի մեքենան մոտեցրին ընդհուպ սանդուխքին, ապա ավարը՝ 4 գորգ, 5 կարպետ, 8 անկողին, 4 սերվիզ, տարբեր հագուստներ, սպիտակեղեն, սփռոցներ բարձեցին մեքենան: Ինձ հաջողվեց նրանցից խլել մի գորգ, որի վրա ամուր նստեցի: Թելմանը ավտոմատով կրակեց իմ գլխավերևով և ասաց. «Եթե այդ գորգից վեր չկենաս, ապա դիակդ փռելու եմ այստեղ, քաջ քավթառ»: Այնուհետև ես չիմացա, թե ինչ կատարվեց ինձ հետ: Ես նրանց ոտքերի տակ ջարդվելով, ուշագնաց եղա: Երբ աչքերս բացեցի, ինձ մոտ կանգնած էր Մանյա Դավթյանը, որը 1990 թվականի Բաքվի հունվարյան ջարդից մազապուրծ ազատվել էր, այնտեղ թողնելով իր չորս սենյականոց սեփական տունը, որը լի էր ընտիր կահկարասիով: Նա եկել է հայրենի գյուղ, որ մոռանա իր վիշտը, խոշտանգումից ապաքինվի:

-Վեր կաց Մարգո, գնանք մեր տուն, այնտեղ գիշերենք, որ լուսաբացին հեռանանք գյուղից, ազատվենք այս զուլումից: Մեր տունը գյուղի ծայրին է, երևի վախենան, գիշերը այնտեղ չգան:

Մայիսի 16-ի այգաբացը Բանածորի համար ևս սև էր: Ժամը 7-ը դեռ չկար, երբ ամեն մի տան մոտ մի բեռնատար էր կանգնած՝ գյուղը բռնագաղթելու համար: Երեք զրահամեքենա, երկու ուղղաթիռ փակել էին նրա ելումուտը, իսկ 150-200 օմոնականներ մարդկանց քաշքշելով ավտոմեքենաների մոտ էին բերում, որ տեղափոխեն Հայաստան: Սակայն բռնակալներին հաջողվեց միայն 20 ընտանիք պոկել հարազատ հողից, տանել Հայաստան: Գյուղի մյուս 74 ընտանիքները ճեղքել են շրջափակման օղակը, սարալանջով, անտառներով հասել շրջկենտրոն: Ուղղաթիռները մի քանի անգամ պտտվել

են բռնագաղթից խուսափողների վրա, կրակ բացել, բայց չեն կարողացել կոտրել Ղարաբաղում մնալու նրանց համառությունը:

Իմ ձեռքի տակ է Բանաձորից Գորիս բռնագաղթած ուսուցիչ Ասլան Հովսեփյանի նամակը՝ հասցեագրված իր հայրենակիցներին: Ահավասիկ. «Հարգելի համագյուղացիներ, մեզ տեղափոխող ավտոշարասյունը ադրբեջանական գյուղերում տանջանքների ու խոշտանգումների ենթարկվելով՝ Գորիսի սահմանին է հասել ուշ գիշերին: Նախ Ջեբրայիլում մեզ ստիպել են, որ ստորագրենք պատրաստի դիմումները առ այն մասին, որ մենք կամավոր ենք մեկնում Հայաստան, որովհետև ադրբեջանցիներին այնպիսի վատություն ենք արել, որ ամաչում ենք նրանց մոտ ապրել: Բնական է, որ շատերը հրաժարվել են դիմումներ ստորագրելուց: Ավետիս և Եղիշե Տոնոյաններին այդ բանի համար այնքան են խոշտանգել, որ կենդանի դիակ դարձած տեղափոխել ենք Գորիս, ուր նրանք մահացել են:

Ադրբեջանական ամեն մի բնակավայրում նախօրոք հրահանգավորված մասսաները մեզ քարկոծում էին, անպատվում, բռնաբարության փորձեր անում, մեքենաների բեռները դատարկում, ասելով. «Դուք իրավունք չունեք Ադրբեջանի հողի հարստությունը Հայաստան տանելու: Շուտ բեռները մեքենաներից թափեցեք, թե չէ ձեր գլուխները միայն կհասնի Հայաստան»: Եվ այսպես մեզ ամեն մի գյուղում թալանում էին, խլում էին անգամ մեր ձեռքերի ժամացույցները, մատանիները, հանում մեր հագած կոշիկները: Մի խոսքով, մինչև Հայաստան հասնելը մեզ լրիվ պլոկել են:

Հարգելի համագյուղացիներ, մեր պետական մասշտաբով կազմակերպված բռնագաղթը ոչնչով չի տարբերվում 1915 թվականի Մեծ եղեռնի ժամանակ կատարած բռնագաղթից: Թուրքիան այն կատարել է դարասկզբին, մնացել անպատիժ, Ադրբեջանը՝ դարավերջին, համոզված լինելով, որ դարձյալ կմնա անպատիժ...

Գրելով այս նամակը, ուզում եմ ձեզ իրազեկ դարձնել, որ բոլոր բռնագաղթված բանաձորցիները մտադիր են վերադառնալ իրենց ավերված գյուղը, նոր Բանաձոր հիմնելու համար:

Մենք կհարատևենք միայն հողում մեր հայրենի...»:

-Առաջարկում եմ մեր անունից հեռագիր տալ ընկեր Ասլանին, որ Հադրութում ապաստան գտած բանաձորցիները ևս մտադիր են վերադառնալ ավերված գյուղը և մեր հարևանների ջգրու, այո՛, մի նոր Բանաձոր կերտելու,- ասաց ուսուցիչ, լրագրող Կամո Բալայանը:

ԿԱՄՈՒՐՋ ԳՅՈՒՂԸ ՍԵՎ ՇՐՋԱՆԱԿԻ ՄԵՋ

Արփագյադուկ (Քարինգ) գյուղը Սյունյաց և Արցախ աշխարհների կամուրջներից մեկն է: Եթե գյուղի բարձունքներից ձեռքերդ մեկնես, ապա Սյունյաց սարերին կհասնի: Ընդամենը 16-17 կիլոմետր մի միջանցք է բաժանում Հայաստանի Գորիսի շրջանից:

Ո՞վ է այդ միջանցքը ստեղծել, հայկական հզոր մելիքությունները իրարից բաժանել, ջլատել նրանց ուժերը: Պատմաբանները հավաստի փաստերով ապացուցում են, որ դա Պարսկաստանի խորամանկ արքա Շահ Աբաս Առաջինի ձեռագիրն է: Այդ նա է, որ հայկական Զուղա հռչակավոր քաղաքից, նրա մերձակա հայկական գյուղերից 1603 թվականին 400-450 հազար հայերի բռնագաղթեցրել է Իրանի Իսպահան քաղաք, ամայացրել միջնադարյան այդ մեծահամբավ բնակավայրը: Նույն ժամանակաշրջանում նա Պարսկաստանից քրդեր է վերաբնակեցրել հայկական Բերդաձոր և Քարավաճառ (այժմյան Լաչինի և Քելբաջարի շրջանները) գավառներում, քրդերով պատ ստեղծել Արցախ և Սյունյաց աշխարհների միջև:

1918-20 թվականներին մուսավաթները թուրքական բանակի միջոցով հիմնահատակ ավերել են այդ միջանցքի հայկական Հարար, Սիֆիան, Ֆարաջա, Մին Քենդ և այլ գյուղերը: Նրանց բնակիչների մի մասը սրի է քաշվել, մյուս մասը փախել է հարազատ բնակավայրերից, ապաստան գտել Արցախի տարբեր բնակավայրերում, Հյուսիսային Կովկասում:

ԼՂԻ Մարզի և Հայաստանի միջև կամուրջ հանդիսացող Արփագյադուկ գյուղը, նրան հարող Սպիտակաշեն, Թեզխարաբ, Պետրոսաշեն գյուղերը, նրանց ստրատեգիական տարածքը միշտ էլ հետաքրքրել է Ադրբեջանի իշխանություններին: Խորհրդային ժամանակաշրջանում Բաքուն ամեն ինչ ձեռնարկում էր այդ գյուղերը ամայացնելու համար, դեռևս հետպատերազմյան տարիներին՝ հմտորեն օգտվելով լեռնային գյուղերի անհեռանկար լինելու մասին կենտրոնի որոշումից, Բաքվի կարգադրությամբ Հադրութի կուսշրջ-

կոմը դատարկել է վերոհիշյալ գյուղերը, նրա բնակչությանը միլիցիայի ուժերով վտարել հարազատ օջախներից: Տասնյակ ընտանիքներ այդ բռնատեղահանության հետևանքով լքել են Հադրութի շրջանը, տեղափոխվել երկրի տարբեր բնակավայրեր, կտրվել իրենց արմատներից: Մինչդեռ լեռնային գյուղերի անհեռանկար լինելը չի վերաբերվել հայկական այդ գյուղերի հարևանությամբ բարգավաճող Լաչինի և Կուբաթլիի շրջանների՝ Սուարասի, Ֆարաջա, Սիֆյան, Բաշարաթ և այլ բնակավայրերին:

Բաքվի թելադրանքով Հադրութի կուսշրջկոմի ձեռքերով կատարած այդ միկրոբռնագաղթը սկիզբ է դրել Հադրութի շրջանի բնակչության մասսայական էմիգրացիային: Մյուս հարվածը այս գյուղերը ստացել են Խծաբերդի կոլտնտեսության մեջ միավորվելուց հետո: Դա էլ այս գյուղերը զրկել էր իրենց ղեկավարներից: Այնուամենայնիվ, այդ բնակավայրերում դեռ բնակիչներ կային: Ղարաբաղյան շարժման ազդեցության տակ այդ գյուղերից օտար ափերում ապրող շառավիղները որոշել են վերադառնալ իրենց նախնիների հողը, բայց ադրբեջանցիները ամուր փակում էին տունդարձի ճամփաները, իսկ կենտրոնն էլ անտարբեր մի կողմ էր կանգնում:

Առաքել-Արփագյադուկ տարածքի հայկական գյուղերի բռնագաղթը պլանավորելիս Ա. Մութալիբովը և Վ. Պոլյանիչկոն քարտեզի վրա Արփագյադուկ գյուղը սև շրջանակի մեջ էին առել: Ասել է, թե այդ կամուրջ գյուղը պետք է անհապաղ բնաջնջել:

Մինչև անձնագրային ռեժիմի մասսայական ստուգումը, ԽՍՀՄ-ի ՆԳՆ զորքերի ԼՂԻ Մարզում և նրա հարակից շրջաններում պարետություն անող ստորաբաժանումները հինգ անգամ ռազմական ուղղաթիռով պտտվել են Արփագյադուկ և Սպիտակաշեն գյուղերի տարածքներում, գրոհայիններ որոնելու պատրվակով տեղանքը նկարահանել, բնակիչներին ահաբեկել, կրակ բացել սարերի, ձորերի ու անտառների վրա: Մայիսի 15-ին Արփագյադուկի վրա նորից պտտվել է մի ուղղաթիռ, վայրէջք կատարել նրա գերեզմանատան հարթակում, գյուղ բերելով 20-25 զինվորներ և օմոնականներ: Կես ժամից հետո օմոնականները հրթիռներ են արձակել: Հազիվ 5-10 րոպե է անցել, երբ Լաչինի շրջանի Արփագյուղակին հարող Ֆարաջա, Սուարասի, Սիֆիան գյուղերի կողմից ավտոմատներով զինված 50-60 ավազակներ են երևացել «Յուրդու» կոչվող բարձունքում, կրակ բացել օդում և շարժվել դեպի ուղղաթիռ: Իսկ օմոնականները անձնագրային ռեժիմը թողնելով մի կողմ, անցել են թալանի:

-Չորս օմոնականներ, մտնելով մեր տուն, պահանջել են, որ մեր ունեցած փողը, ոսկին տանք իրենց,- պատմում է Թևան Բաղդասարյանը:

-Մեր եղած-չեղած փողերը խնայդրամարկղում ենք պահում, բայց ձեզ կարող ենք հյուրասիրել գառի մսով, փլավ պատրաստել ձեզ համար,- փորձել է սիրաշահել տանտերը:

-Այնպիսի հայ չի լինի, որ իր տանը 4-5 հազար ռուբլի, 10-15 մատանի, ոսկե շղթաներ չունենա,- ավտոմատի փողը դնելով ուսիս՝ սպառնաց կարճահասակ մի լեյտենանտ և հարձակվեց ինձ մոտ կանգնած կնոջս վրա, ձեռքը խցկեց նրա ծոցը, հանեց թաքցրած 6000 ռուբլին:

-Որտե՞ղ ես թաքցրել ոսկեղենը, քավթառ շուն, տեղը ցույց տուր, թե չէ քեզ մերկացնելու եմ, Լաչին տանեմ,- ավարով ոգևորված՝ բղավեց լեյտենանտը:

-Ոսկեղեն չունենք,-պատասխանեց կինս:

Այդ պատասխանը նրան կատաղեցրեց: Եվ նա սկսեց կնոջս մերկացնել, որպեսզի նրա շորերում ոսկեղեն գտնի: Սակայն ոչինչ էլ չգտնելով՝ նրա ձեռքի մատանին հանեց: Չբավարարվելով դրանով՝ նրանք հափշտակեցին մեր երկու գորգը, չորս կարպետը ութ անկողինը, 5 կիլոգրամ յուղը, 15 կիլոգրամ պանիրը և այլ մթերքներ:

Գյուղի մյուս բնակիչների անձնագրերի ստուգումը ևս վերածվեց թալանի: Նրանցից լսենք Սերյոժա Միրզոյանին. «Օմոնականները իմ տնից կողոպտել են 7900 ռուբլի, հինգ մատանի, չորս գորգ, մեկ հեռուստացույց, մեկ սառնարան, 6 անկողին: Նրանք պոկել են նաև կնոջս բերանի երեք ոսկե ատամը»:

Այդ օրը օրինականության պաշտպանները Հայասեր Հակոբյանի տնից կողոպտել են 5600 ռուբլի, չորս մատանի, երեք գորգ, 25 կգ պանիր, 15 կգ յուղ, 17 կգ մեղր և այլ մթերքներ: Սուրեն Մանասյանի տնից՝ 7950 ռուբլի, մեկ ոսկե ժամացույց, երեք մատանի, երկու գորգ, չորս կարպետ, 10 կգ յուղ, 60 կգ պանիր: Սուրեն Կարապետ-

յանի տնից՝ 6790 ռուբլի, երեք գորգ, հինգ կարպետ, չորս մատանի, մեկ ժամացույց, 6 կգ յուղ, 20 կգ պանիր:

Օմոնականների հետ ձեռք ձեռքի տված արփագյադուկցիների տները թալանում էին նաև ադրբեջանական վերոհիշյալ գյուղերի բնակիչներ Ջաբբար Հյուսի օղլին, Սարուխան Աքըխան օղլին, Մահմուդ Իբաթ օղլին, Թայիր Մուսեիբ օղլին, Շահսուարը (ինձ չհաջողվեց նրա ազգանունը կամ հայրանունը ճշտել) և այլք, որոնք մինչև ղարաբաղյան դեպքերը հաճախակի Արփագյադուկ էին գալիս, բարեկամության, երկու ժողովրդի քիրվայական կապերի մասին շաղակրատում: Մոռանալով այդ ամենը՝ նրանք մի քանի ժամվա ընթացքում տառացիորեն ավերեցին լեռնալանջի այդ բնակավայրը, նրա բնակիչների ամբողջ ունեցվածքը և այդ թվում՝ 50 գլուխ խոշոր, 500 գլուխ մանր եղջերավոր անասունները տարան Լաչին, որ վաճառեն, զենք գնեն:

Գյուղի մի ծայրում կանգնած՝ խորհրդային զինվորները ծխում էին, անեկդոտներ պատմում, անտարբեր դիտում օմոնականների և թալանչիների կողմից կատարվող այդ հանցագործությունները:

-Արփագյադուկցիներ, ձեզ մի օր ժամանակ ենք տալիս, Լաչինի քթի տակ գտնվող այս գյուղը թողեք, ջհանամը գնացեք: Եթե վաղն այստեղ մարդ լինի, ապա բոլորին գնդակահարելու ենք,- սպառնալով բնակիչներին՝ օրվա արդյունքները ընդհանրացրեց մի լեյտենանտ:

Այդ ահաբեկումից սարսափած՝ գյուղի բնակիչներից ոմանք մայիսի 16-ի այգաբացին դուրս են եկել տներից, թաքնվել մոտակա անտառներում, լեռնածերպերում: Սակայն Սուրեն Կարապետյանը, նրա կին Էմման որոշել են գյուղից դուրս չգալ, մենակ չթողնել նրա գերեզմանատանը հանգչող իրենց միանուագար տղային, որը չորս աղջիկների եղբայր էր: Չնայած դրան՝, Հակոբին «Մարդն ամենամեծ կապիտալն է» հորջորջող երկիրը նրան տարել է բանակ, ուղարկել Աֆղանստան, այնտեղ նրա գլուխը կերել, ոսկորները ցինկե դագաղում ամփոփած ուղարկել են գյուղ:

-Թող այստեղ մեզ սպանեն, բայց Հակոբին մենակ չենք թողնի:

Մարդ ու կին այդպես երդվեցին, մնացին գյուղում: Գյուղից չէին հեռացել նաև ամուսիններ Սուրեն և Հայկանուշ Մանասյանները, Հայասեր ու Փառանձեմ Հակոբյանները, Նունիկ և Սերյոժա Միրզոյանները: Երբ օմոնականները մայիսի 16-ին շրջապատեցին գյուղը, արդեն հնարավոր չէր ոչ մի տեղ գնալ:

-Նրանք մեզ հավաքելով գյուղի գրասենյակի մոտ գտնվող հարթակում, կարգադրեցին, որ շղթա կազմենք, ճանապարհվենք դեպի Լաչին, որպեսզի այնտեղ բացատրենք, թե ինչու՞ ենք ցանկանում բաժանվել Ադրբեջանից,- պատմում է Սուրեն Մանասյանը:- Բացի այդ, դուք պետք է դիմում գրեք, որ ցանկանում եք քոչել Հայաստան,- ավտոմատը ուղղելով մեզ վրա՝ սպառնում էին մեր քիրվաների՝ օմոնի տարազ հագած բանդիտները,-ավելացրեց նա:

-Դուք Լաչինի շրջանից եք: Ձեր ծնողներին՝ Շահսուվարին, Այիբին, Սարուխանին լավ ճանաչում ենք: Ձեր երկրամասը ընդհուպ մինչև խորհրդա-գերմանական պատերազմը կոչվում էր Կարմիր Քրդստան: Լաչինում հրատարակվում էր «Սովետ Քրդստան» անունով շրջանային թերթ: Ու՞ր են գնացել այդ երկրամասի քրդերը, ինչու՞ նրանց անունը այլևս չեն տալիս: Ինչու՞ նրանք ծուլվել են ադրբեջանցիների հետ, իրենց լեզուն, ազգային ավանդույթները մոռացել: Նույն ձևով անհետացել են նաև ձեր շրջանին հարող Կուբաթլիի և Քելբաջարի քրդերը: Իհարկե, դա ձեր կամքով չի կատարվել, այլ ազերիների՝ փոքր ազգերին կուլ տալու պլանով է կատարվել: Նրանք էլ հետևել են Թուրքիայի օրինակին, որը Փոքր Ասիայի, այսինքն՝ նախկին Բյուզանդիայի ու Հայաստանի տարածքի բոլոր քրիստոնյաներին միածուլել է թուրքերի հետ կամ նրանց սրի քաշել, վտարել իրենց վաղնջական բնակավայրերից: Դուք ծուլվել եք ազերիների հետ, բայց մենք չենք ուզում մեր արմատներից կտրվել, մեր լեզուն մոռանալ: Ազերիները ամեն կերպ ցանկանում են մեր մարզը ևս Նախիջևանի օրինակով լրիվ հայաթափել: Ահա թե ինչու մենք պայքարի դրոշ ենք պարզել և ցանկանում ենք հասնել քաղաքական անկախության,- ասաց Հայասեր Հակոբյանը, որը սիրում էր պատմական վեպեր, մենագրություններ կարդալ, իսկ վերջին տարիներին կարդում էր ղարաբաղյան շարժման մասին գրած գրեթե բոլոր լրագրային և ամսագրային հոդվածները:

Նախնիների արյունը եռաց օմոնի տարազ հագած քրդերի մեջ:

Նրանք Հայասերի խոսքերից շիկնեցին: Իրար ինչ-որ բան ասացին, ապա ասպարեզ տվին Շահսուվարի որդուն: Նա ասաց. «Դուք ճիշտ եք ասում, հայեր: Սակայն մեր մի առածն ասում է. «Դուզ դուզդա գալար»[1]: Միևնույն է, դուք չեք կարողանալու թուրքերի ձեռքից ազատվել: Սադամ Հուսեյնը ցանկացել է Իրաքի նախկին հողերը վերադարձնել Իրաքին, բայց ամբողջ աշխարհը ոտքի է կանգնել, նրան պատժել: Իսկ Թուրքիան Կիպրոսի մի մասը օկուպացրել է, բայց ոչ մի երկիր ձայն չի հանում, վախենում է նրա բարբարոսությունից: Ապագան խորամանկ Թուրքիայինն է: Նա իր նպատակին է հասել՝ Գորբաչովի ձեռքերով կործանել ԽՍՀՄ–ը: Հիմա էլ ցանկանում է մի դրոշի տակ համախմբել բոլոր թուրքալեզու ազգերին և համաշխարհային մի կայսրություն ստեղծել: Այնպես որ Թուրքիան թույլ չի տա, որ ԼՂԻ Մարզը Հայաստանի հետ վերամիավորվի: Հայերը չեն զգում, որ Ա. Մութալիբովը Գորբաչովի թելադրանքով է գործում: Տ. Օզալի Մոսկվա այցելելուց հետո Գորբաչովը պաշտոնական հայտարարություն է արել, թե Ղարաբաղը Ադրբեջանի անքակտելի մասն է: Ինչու՞ նա այդ հայտարարությունը 1988 թվականին չի արել: Մինչդեռ ակադեմիկոս Սախարովը, ռուս, համաշխարհային այլ հանրահռչակ գիտնականներ հայտարարում են, որ Ղարաբաղը Հայաստանինն է: Ու՞մ հավատա ադրբեջանցի ժողովուրդը: Այո՛, դուք թուրքերից չեք կարող ազատվել, ինչպես մենք չենք կարողացել ազատվել նրանցից, ձուլվել ենք նրանց հետ:

Անշուշտ, ձեր խոսքը մեզ վրա ազդել է, ուստի ձեզ չենք գնդակահարում, թեև մեզ Բաքվից գործուղել են Լաչին, որ հայերի հետ դատաստան տեսնենք: Ձեր գյուղը մեր հատուկ քարտեզի վրա սև շրջանակի մեջ է: Այդ նշանակում է՝ Արփագյադուկը պետք է բնաջնջել:

Հետո նրանք գյուղի բնակիչներին քշել են մինչև Սարալանջի աղբյուրը: Այնտեղ նրանք իրար հետ վիճաբանել են: Վերջապես ընդհանուր եզրակացության գալով՝ խոսքը տվել են Այիբի որդուն: Նա, դառնալով գերվածներին, ասաց. «Հայեր, մենք չենք կարող ձեզ վրա կրակ չբացել, այլապես մեզ մահ է սպասվում: Բայց մահից առաջ մեկ-երկու րոպե ձեզ ազատություն ենք տալիս, որ Ալլահը մեզ չպատժի: Դե շուտ չքվեցեք, ազատվեցեք ավտոմատի գնդակներից...»:

Անակնկալի եկած արփագյադուկցիները դեռ չէին հասցրել փախչել, թաքնվել թփերի մեջ, երբ ավտոմատի գնդակները նախ դեպի վերև թռան, ապա նաև իրենց ուղղությամբ:

Բարեբախտաբար, տեղանքը արդեն ծածկվել էր քաշաթղպերի մեջ ու բանդիտների տեսադաշտը պղտորել...

Ավտոմատների գնդակներից հրաշքով փրկվեցին Սուրեն Մանասյանը, Նունիկ Միրզոյանը, Փառանձեմ Հակոբյանը: Նրանք գիշերը մնացին անտառում, իսկ առավոտյան հասան Խծաբերդ գյուղ: Մյուս օրը Խծաբերդցիները ամուսիններ Էմմա և Սուրեն Կարապետյանների, Հայասեր Հակոբյանի ու Հայկանուշ Մանասյանի մարմինները ամփոփեցին գյուղի գերեզմանատանը:

Նույն օրը ավազակախմբերը հիմնահատակ ավերեցին Սպիտակաշեն գյուղը, այնտեղ վերջին տարիներին կառուցած տները հրկիզեցին: Գյուղում մնացած բնակիչների ճակատագիրը ցարդ անհայտ է: Կրակի, գնդակի զո՞հ են դարձել, թե՞ նահատակվել են իրենց թաքստոցներում...

ՁՈՐԱՎԻԳ Է ԴԻԶԱՓԱՅՏ ԼԵՌԸ ՍՈՒՐԲ

Բարձրաբերդ Դիզափայտ սուրբ լեռը հսկա նահապետի պես ահա քանի՜, քանի դար է, որ գիշեր ու զօր հսկում է իր շուրջը բոլորած հայկական գյուղերի անդորրը: Նրա վեհությունը ամեն քայլափոխում զգում էին այդ գյուղերի բնակիչները և հարգանքի տուրք մատուցում նրան: Նրանք արհամարհելով կոմունիստական վարչակարգի հալածանքները՝ հաճախակի բարձրանում էին նրա ժայռերեն գագաթը, այնտեղ 17-րդ դարում կառուցած Աստծո տաճարում մոմ վառում, վերհիշում երկրամասի ազատագրական պայքարում նահատակվածների անունները: Սուրբ լեռան թարթիչների տակ է նաև Խանձաձոր գյուղը (ամենայն հավանականությամբ այս անունը Գանձաձոր բառի ձևափոխությունից է ծագել), որն ասես զգում է նրա շնչառությունը, շոշափում նրա զարկերակի բաբախյունը:

Ադրբեջանի՝ Հադրութի շրջանի հարավ-արևմտյան տարածքի

1. Ճիշտ խոսողը դրսում է մնում:

գյուղերի հայաթափման ծրագրում Խանձաձորը կարմիր շրջանակի մեջ է առնված: Եվ դա հասկանալի է, գրավելով Խանձաձորը, նշանակում է տիրանալ նաև երկնի մովի մեջ մխրճված Դիզափայտ լեռանը, նրա բարձունքից վերահսկել ոչ միայն ԼՂԻ Մարզի տարածքի մի մասը, ընդհուպ նաև մարզկենտրոնը, Շուշին, այլև Արաքսի հովիտը, Միլի դաշտը, Լաչինի միջանցքը, Սյունյաց աշխարհը:

Մինչև անձնագրային ռեժիմի մասսայական ստուգումները 4-5 ռազմական և քաղաքացիական ուղղաթիռներ մայիսի վեցից մինչև 9-ը անընդհատ պտտվում էին Դիզափայտի վրա, ցածրանում, նկարահանում տեղանքը, բնակավայրերը, հետախուզում նրա փեշերի անտառները, խորունկ ձորերը: Բնակչությանը ահաբեկելու նպատակով ուղղաթիռները տարբեր մասշտաբի հրանոթներով կրակ էին բացում անտառների ու լեռների վրա: Լեռները որոտում էին, ձորերը դղրդում, բնակարանների պատուհանները դողում:

...«Աղաջաքենդում ևս ոչ մի գրոհային չկա»:

Մայիսի 11-ի երեկոյան Զեբրայիլից 1-2 կմ հեռավորության վրա գտնվող Չարաքան գյուղի այգու մեջ մխրճված «Չինար» խորտկարանի փակ սենյակում խորոված ի ընտիր կտորներ մատուցելով հանրապետության ՊԱԿ-ի բարձրաստիճան պաշտոնյային, զեկուցեց շրջմիլպետ Ռաշիդ Մամեդովը:

ՊԱԿ-ի աղա-չինովնիկը խորոված ի քաղցր կտորը կուլ տվեց, բացեց իրենից անբաժան թղթապանակը և նայելով քարտեզին, անշտապ ասաց. «Աղաջաքենդը (Խանձաձորը) այն գյուղն է, որ սոցիալիստական Ռուսիայի 11-րդ բանակին 1920 թվականին երկու ամիս դիմադրել է: Ինչո՞վ ես համոզված, որ հիմա էլ սովետական բանակի ստորաբաժանումներին և մեր օմոնականներին անակնկալի չի բերի: Ուստի չպետք է շտապել: Թող ուղղաթիռները նրա անտառները, ձորերը, տները և անգամ Չիարաթը (ադրբեջանցիները մեր այդ լեռը ևս սեփականացրել են՝ կոչելով այդ անվամբ) այնքան գնդակոծեն, որ գյուղի քարը քարի վրա չմնա...

-Բաշ ուստա,- ասաց ինքնահավան միլպետը և հյուրերի բաժակները օղի լցրեց:

Բաքվից գործուղված չինովնիկ- աղան օղու բաժակը բարձրացնելով՝ հաղթանակ տարած մարդու տոնով ասաց. «Աղաջաքենդի, այսինքն՝ Չիարաթի գրավման կենացը: Եթե մեզ հաջողվի այդ գյուղը նվաճել, նշանակում է ոչ միայն Հառաքյուլ-Արփագյադուկ տարածքը, այլև Ստեփանակերտը մեր ձեռքին է: Չիարաթի բարձունքից մենք կվերահսկենք Արաքսի հովիտը, Միլի դաշտը: Հետևաբար լեռնային կարճ ճանապարհով տոթակեզ Միլի, Մուղանի դաշտը կմիացնենք հովասուն Զանգեզուրի հետ: Իսկ երբ երկրում Գորբաչովի համախոհները հաղթանակեն, ոչ միայն ԼՂԻ Մարզը կդատարկենք հայերից, այլև Զանգեզուրը կհափշտակենք: Այդ նպատակով արդեն ՍՄԿԿ կենտկոմ ենք ուղարկել 60 հազար ադրբեջանցիների ստորագրությամբ դիմում, որոնք խնդրում են իրենց վերադարձնել իրենց հայրենիքը: Մեր ազգի համար ահա թե ինչպիսի գործեր ենք կատարում»:

Մայիսի 12-ին դեղին գույնի մի ուղղաթիռ, որը գտնվում էր Ռաշիդ Մամեդովի տրամադրության տակ, Խանձաձորի, նրա անտառների, Դիզափայտ լեռան վրա ինտենսիվ կրակ է բացել: Արոտավայրերում արածող անասունները, վայրի կենդանիները, թռչունները լեղապատառ դես ու դեն էին փախչում, բայց տեղ չէին գտնում իրենց գլուխները թաքցնելու համար: Խանձաձորցիները թաքնվում էին ներքնատներում, որպեսզի գնդակի զոհ չդառնային: Բնակչությանը նախօրոք այդպես ահաբեկելուց հետո մայիսի 13-ի առավոտյան ժամը մոտավորապես 8-ին Առաքել-Խանձաձոր ճանապարհի Ղարղաջի բարձունքում երևաց ռազմական տեխնիկայի տուտը: Առջևից գալիս էին չորս զրահամեքենա: Նրանց հետևում էին ութ «ՈւԱԶ» մակնիշի ավտոմեքենաներ, երկու ավտոբուս, 20 բեռնատար մեքենա:

-Նպատակահարմար է, որ աղջիկները, ջահել կանայք, երիտասարդները, կոլտնտեսության ղեկավարները գյուղից հեռանան, որովհետև, ինչպես հաղորդում են Առաքելից, նրանց ձերբակալում են, տանում Զեբրայիլ, որ նրանցից փող կորզեն,- հուշարձանի մոտ կանգնած մարդկանց մեջ հայտարարեց դպրոցի տնօրեն Սուրեն Հովհաննիսյանը: - Մենք էլ գյուղում կմնանք, նրանց հարվածները մեզ վրա կվերցնենք:

Մի քանի երիտասարդներ հազիվ էին դուրս եկել գյուղից, երբ զրահամեքենաները փակեցին նրա ելումուտը և կրակ բացեցին աջ ու ձախ: Գյուղը լցվեց օմոնականներով:

Ի՞նչ են արել նրանք այդ օրը: Ունկնդրենք խանձածորցիներին:

Արզուման Բաղդասարյան: Մենք կանգնել էինք հուշարձանի մոտ, երբ 20-25 օմոնականներ, իջնելով ավտոմեքենաներից, շրջապատեցին մեզ:

-Ինչու՞ այս գյուղը չեք դատարկում, ջհանամը չեք գնում, Ադրբեջանի հողը չեք ազատում, որպեսզի Արաքսի ափի Միլի, Մուղանի տոթ վայրերում ապրող ազերիներին, մսխեթի թուրքերին, Հայաստանից վտարված ադրբեջանցիներին վերաբնակեցնենք այս հովասուն լեռներում,-ասաց նրանց ավագը, կապիտանի տարազի մեջ փքված մի կարճահասակ մարդ:

-Նախ այս հողը հայերինն է, մեր նախնիներն են Դիզափայտի բարձունքին մատուռ կառուցել և ոչ թե ձեր քոչվոր նախնիները: Ինչ վերաբերվում է Հայաստանից վտարված ադրբեջանցիներին, ապա կարող եմ ասել, որ նրանց Ադրբեջան է հրավիրել Աբդուլռահիմ Վեզիրովը (նա Ք. Բագիրովից հետո եղել է Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար): Այդ նպատակով նա Հայաստան է ուղարկել հազարավոր բեռնատար ավտոմեքենաներ, որ նրանք իրենց ունեցվածքը փոխադրեն Ադրբեջան: Նրանք բոլորովին խաղաղ պայմաններում իրենց տները փոխանակել են կամ վաճառել, տեղափոխվել Ադրբեջան: Միայն Բաքվում 300-350 հազար հայերից բռնագրավված բնակարանները բավական են, որ Հայաստանից փոխադրված 160 հազար ադրբեջանցիները ապահովվեն բնակարանով: Հայաստանից դուք ադրբեջանցիներին տեղափոխել եք այն նպատակով, որ կենտրոնին ապակողմնորոշեք, երկրում քաոս ստեղծեք, թույլ չտաք Ղարաբաղի հիմնահարցը դեմոկրատական ճանապարհով լուծվի,- ասաց ուսուցիչ Սերգեյ Բաբայանը:

-Այդ պրոպագանդայի համար լեզուդ կկտրեմ,- կատաղեց կապիտանը և կարգադրեց, որ նրան ձերբակալեն Ջեբրայիլ տանելու համար:

-Ի՞նչ եք անում,- հարձակվելով համարձակ ուսուցչին շնչահեղձ անող օմոնականների վրա՝ ասաց Մակար Քարամյանը: Նրան հետևեցին Աշոտ Բաբայանը, Արամ Քարամյանը, Սեդրակ Համբարձումյանը, Գյանջում Գրիգորյանը:

Զգալով, որ այդ կոնֆլիկտից լավ բան չի սպասվում, կապիտանը կարգադրեց, որ ուսուցչին արձակեն

-Մատաղ լինես այս մարդկանց, թե չէ քեզ այդ պրոպագանդայի համար Ադրբեջանի բանտերում փտեցնել կտանք...

-Այդ առաջ էր, կապիտան, որ պրոպագանդայի, տարբեր հայացքների համար մարդկանց հալածում էին, ձերբակալում: Հիմա Գորբաչովը դեմոկրատիա է հայտարարել, որը հնարավորություն է ընձեռում, որ ամեն մարդ ազատ, համարձակ իր կարծիքն արտահայտի, ազատ խոսի: Ինչու՞ այդ բանը ձեզ ուշ է հասնում: Երևի դա ձեզ ձեռնտու չէ,- հեգնեց Մակար Քարամյանը:

-Երևում է, որ քո լեզուն էլ է երկար: Ոչինչ, մի երկու օրից հետո քո գլխին մի այնպիսի խաղ խաղամ, որ լեզուդ էլ մոռանաս, քո հոր գերեզմանն էլ,- արդեն այլ տոնով ասաց կապիտանը և անցավ բանակցությունների:

Սուրեն Հովհաննիսյան: Այդ «նախերգանքից» հետո կապիտանը դառնալով հրապարակում կանգնած բնակչությանը, ասաց. «Այստեղ դիմումներ կան, դուք բոլորդ պետք է ստորագրեք, վերադարձնեք մեզ: Հառաքյուլցիները, բանաձորցիները և հարևան մյուս գյուղերի բնակիչները սիրով ստորագրել են: Դա միայն ձեր օգտին է»:

-Այդ ինչպե՞ս է, որ 3-4 տարի մեզ շրջափակման մեջ խեղդող Ադրբեջանի իշխանությունների սրտերը գութ է մտել, մեր օգտին դիմումներ են պատրաստել, մեր դուռը ուղարկել, որ ստորագրենք,- կծու հեգնանքով ասաց կենսաթոշակառու բժիշկ Սամվել Գրիգորյանը:

- Դու վարագույրը անցնում ես գոջա,- փրփրեց խմբի ավագը և օմոնականներին աչքով արեց, որ նրան տանեն ավտոբուսի մոտ:

Խանձածորցիները նրա այդ մտադրությունը ևս խափանեցին: Քիչ մնաց, որ նրանց և օմոնականների միջև ձեռնամարտ տեղի ունենար: Կապիտանը դիմեց ատրճանակին, կրակեց նրանց գլխավերևով և բղավեց, «Դադարեցնել այդ անկարգությունը, այլապես բոլորին կգնդակահարեմ»:

Ամբոխը և օմոնականները խաղաղվեցին: Կապիտանը փշրված տրամադրությամբ դառնալով հավաքվածներին, ասաց. «Դուք պետք է Պոլյանիչկոյին դիմում գրեք, որ կամավոր գնում եք Հայաս-

տան, որովհետև ադրբեջանցիների կողքին ապրել այլևս հնարավոր չէ, քանի որ նրանց հանել եք համբերությունից: Նրանք էլ նամուսի համար ձեր ճանապարհները փակել են, թույլ չեն տալիս, որ Ալլահի ճանապարհով էլ գնաք: Մենք չենք կարող ձեր անվտանգությունը ապահովել: Պոլյանիչկոն խոսք է տալիս ձեզ ապահովել տրանսպորտով, տեղափոխել Հայաստան: Գնացեք ձեր հայերի մեջ ապրեցեք, ի՞նչ կա այս սարերում»:

-Լավ, այդ դիմումները բաժանեցեք, որ ծանոթանանք,-ասաց Անն Սարգսյանը:

Մի օմոնական դիմումները բաժանեց հրապարակում գտնվողներին: Ռուսաց լեզվի ուսուցիչ Նապոլեոն Հայրյանը թարգմանեց դիմումների բովանդակությունը. «Մենք՝ խանձածորցիներս, ադրբեջանցիներից դժգոհ չենք: Ահա 70 տարի է, որ մենք հաշտ ու խաղաղ ապրում ենք նրանց մեջ, բայց խաբվելով Զ. Բալայանի, Ի. Մուրադյանի կոչերով, ինքնորոշման պայքարի ենք ելել, ադրբեջանցիների ինքնասիրությունը, նամուսը ոտնահարել: Դրա համար նրանք պահանջում են, որ իրենց հողը ազատենք, Հայաստան մեկնենք: Այդ ամենը հաշվի առնելով, խնդրում ենք մեզ տեղափոխել Հայաստան, քանի որ Սիրիգ և Մուսուսլու ադրբեջանական գյուղերի կողքին մենք չենք կարող ապրել»:

-Լավ եք հորինել, բայց եթե անգամ Թուրքիան իր՝ Բյուզանդիայից և Հայաստանից հափշտակած հողերը թողնի, ձեզ էլ, որպես կրտսեր եղբոր, իր հետ Միջին Ասիա տանի, որտեղից ձեր քոչվոր նախնիները 11-րդ դարում Անդրկովկաս են խուժել, մենք դարձյալ մեր հողից չենք գնա: Ոչ մի ուժ էլ մեզ այստեղից չի հանի, որովհետև մեզ զորավիգ է Դիզափայտ սուրբ լեռը,- նորից խոսակցությանը միջամտեց Սերգեյ Բաբայանը:

-Մեզ ծաղրում եք, վերադարձրեք դիմումները: Ոչինչ, երեք օր էլ կսպասենք և կտեսնենք, թե ում կինը տղա կծնի,- ասաց կապիտանը: - Հիմա գնացեք տները, բոլորի անձնագրերը ստուգելու ենք, զենք ու զրահը բռնագրավելու ենք...

Սերյոժա Ալեքսանյան: Հինգ օմոնականներ մտնելով իմ տուն, պահանջել են անձնագրերը: Նրանցից մեկը սկսել է թերթել անձնագրերը, իսկ մյուսներն անմիջապես անցել են թալանի: Նախ կնոջս

օղերն ու մատանին են հանել: Հետո կողոպտել տան մյուս ոսկեղենը՝ երեք մատանի, երկու շղթա, մեկ ժամացույց, 4590 ռուբլի, տան եղած-չեղած մթերքները, գորգեր, կարպետներ, անկողիններ:

-Շտապեցեք մյուս տները, թե չէ խոզերը կթաքցնեն ոսկեղենը, - անձնագիրը շպրտելով գետնին՝ ասաց խմբի ավագը:

Ռազմիկ Գրիգորյան: Չորս օմոնականներ մտնելով մեր բակ, առաջինը ահաբեկեցին իմ երեխաներին: Նրանցից մեկը նույնիսկ չթաքցրեց իր գազանությունը՝ «Ափսոս, որ մեզ կարգադրել են, որպեսզի դեռ հայերին չսպանենք, այլ նրանց տանջենք, ստիպենք, որ թողնեն իրենց տները, հարստությունը, գնան Հայաստան, թե չէ նախ այս երեխաների արյունը կխմեմ, որ հայերի քյոքը կտրվի...»:

Ձեր ավագ եղբայրները՝ օսման թուրքերն էլ ցանկացել են հայերի արմատները կտրել, 1915 թվականին, օգտվելով աշխարհի խառը վիճակից, կազմակերպել են հայերի ցեղասպանություն: Սակայն, ինչպես տեսնում եք, հայերի արմատները չեն կտրվել, այլ խորացել են իրենց հողում: Ձեզ առավել ևս այդ բանը չի հաջողվի,- չհամբերելով ասացի ես:

-Ձայնդ կտրի՛ր, խոզ, շուտ ձեր անձնագրերը բեր այստեղ,- ասաց քաչալ մի օմոնական:

Ես անձնագրերը տվեցի նրան, իսկ կինս՝ Ալվինան, փորձեց երեխաներին մի կողմ տանել, ազատել օմոնականների արյունոտ հայացքներից:

-Ու՞ր ես գնում,- անձնագրերը շպրտելով գետնին՝ ասաց քաչալ օմոնականը և հետապնդեց կնոջս, նրա մազերից բռնելով քաշեց իր կողմը, քրքջալով ավելացրեց. «Ես երազում էի այսպիսի մի գեղեցիկ կին էլ ունենալ, որ ազերիները շատացնենք: Ուստի քեզ տանելու եմ Ջեբրայիլ, որ ազատվես այս խոզ հայից»:

Ալվինան մի ուժգին ապտակ հասցրեց նրա դեմքին: Քաչալի գլուխը ծռվեց: Նա պատասխան հարված հասցրեց կնոջս: Նա ընկավ գետնին: Քաչալը նրա ականջներից հանեց օղերը, մատից՝ մատանին: Նրանք իմ տանից վերցրին նաև 490 հազար ռուբլի, որը, որպես գանձապահ, պիտի բաժանեի կոլտնտեսականներին:

-Չփորձես ձայնդ բարձրացնել, թե չէ կնոջդ էլ կտանենք և քեզ

կթողնենք Սիրիգ գյուղի քած էշերի հույսին,- ընդհանրացնելով անձնագրերի «ստուգման» արդյունքները՝ ասաց քաչալը:

Արամ Քարամյան: Մտնելով մեր բակ, օմոնականները աչքերը չռեցին մեր պատշգամբին ամրացված քարայծի եղջյուրներին, որը հիշատակ է մնացել աննկուն որսորդ, մեր հարևան Գրիգոր Գասպարյանից: Օմոնականներից մեկը զննելով ինձ, ասաց. «Այս մարդը մեր ավագին ծաղրել է, պետք է նրանից վրեժ լուծենք»:

Բոլորովին էլ չհետաքրքրվելով մեր անձնագրերով, նրանք անմիջապես սկսեցին կողոպտել տունս: Նախ կոտրեցին թթի օղիով լի 20 լիտրանոց բալոնը, 25-30 ամանեղենը, ապա մեր տանից վերցրեցին 4 մատանի, երկու շղթա, մեկ կոստյում, 3 գորգ, 5 անկողին, 7600 ռուբլի:

-Հիմա , երևի, խելքդ գլուխդ գա,- ատրճանակը ուղղելով ճակատիս՝ ասաց նրանցից մեկը և մի մեքենագրած թուղթ մեկնելով ինձ՝ ավելացրեց. «Այս դիմումը ստորագրիր, թե չէ ամեն անգամ գալու ենք այստեղ, մեր ցանկացած գույքն էլ տանելու ենք: Ո՞վ կարող է մեր ներքին գործերին խառնվել, մենք սուվերեն հանրապետության միլիցիայի հատուկ ջոկատի աշխատողներն ենք և ենթարկվում ենք մեր ալլահ, մինիստր Ասադովին»:

Ես նրա ձեռքից վերցրի այդ թուղթը և շպրտեցի գետնին:

-Ոչինչ, քեզ երեք օրից հետո այնպես շպրտենք այս գյուղից, որ նրա անունը ընդմիշտ մոռանաս, հիմա շտապում ենք, թե չէ խոզերը ոսկին կթաքցնեն,- ասաց նրանցից մեկը, և հեռացան իմ տանից:

Վանյա Բաղդասարյան: Մեր բակն են մտել հինգ օմոնականներ: Նրանցից մեկը դառնալով ինձ՝ ասաց. «Գոջա, երևում է դու ծանրակշիռ մարդ ես, այս դիմումը ստորագրիր, թե չէ քեզ ճիպոտահար կանենք»:

-Ի՞նչ դիմում է դա, որի ստորագրման համար իմ բակն եք եկել:

-Դիմում է հասցեագրված Պոլյանիչկոյին:

-Բովանդակությանը չծանոթացած, ինչպե՞ս ստորագրեմ:

-Բովանդակությունը այս է՝ դու խնդրում ես Պոլյանիչկոյին, որ քո ընտանիքը փոխադրի Հայաստան:

-Ես իմ հորը բան չեմ խնդրել, ինչու՞ պիտի Պոլյանիչկոյին բան խնդրեմ, որի երեսը դեռ չեմ տեսել: Մյուս կողմից էլ ես մեր հողից ոչ մի տեղ չեմ գնա:

-Հողը ձերը չէ, այլ մերն է:

-Որ ձերն է, ինչու՞ մեր նախնիներն են սուրբ Դիզափայտի գագաթին 17-րդ դարում մատուռ, իսկ գյուղի կենտրոնում 1698 թվականին եկեղեցի կառուցել և ոչ թե ձեր քոչվոր նախնիները:

-Դուք 1828 թվականին Իրանից եք եկել այստեղ: Մեր նախնիներն էլ ձեր նախնիներին հյուրընկալել են այս հողում:

-Եթե այս հողը ձերն է, ապա ինչու՞ 1813 և 1828 թվականներին Ռուսաստանի հետ Իրանն է պայմանագիր ստորագրել՝ Ղարաբաղի, Նախիջևանի, Երևանի, Գանձակի, Շամախու, Բաքվի, Թալիշի իխանություններն էլ զիջել նրան: Այդ ասելով, ես գրադարակից հանեցի Շ. Մկրտչյանի «ԼՂԻ Մարզի պատմաճարտարապետական հուշարձաններ» ռուսերեն հրատարակված գիրքը և ցույց տալով նրանց՝ ասացի.

-Այս հուշարձանները Արցախ աշխարհում մեր նախնիները կառուցել են դեռ այն ժամանակ, երբ ձեր նախնիները դեռ չէին ներխուժել Անդրկովկաս...

Օմոնականներից մեկը գիրքը խլեց իմ ձեռքից, պատռեց և ատրճանակի կոթով մի քանի անգամ հարվածեց գլխիս: Ես ուշաթափ ընկա գետնին, իսկ նրանք մի կողմ հրելով կնոջս, իմ տնից կողոպտելով 4 գորգ, 5 կարպետ, 2 մատանի, մեկ վերարկու, 5 անկողին, 7400 ռուբլի, շտապեցին ուրիշ տներ:

Աղալար Բաղասյան: Ինձ մեր բակում կանգնեցրեց մի կապիտան և ասաց. «Աղալար քիշի, ամբողջ Զեբրայիլը քեզ լավ է ճանաչում: Դու ֆերմայի վարիչ ես աշխատել, հաճախակի ես եղել մեր կողմերում, շփվել ադրբեջանցիների հետ: Դու պետք է մեզ մի լավություն անես՝ Հայաստանի դրոշը հանես գյուղի վերևի թաղի տան տանիքից: Եթե դա կատարես՝ քեզ չենք ձերբակալի, որ քո տղաներին Երևանից բերել ես այստեղ: Նրանցից մեկը գյուղում նույնիսկ հացի փուռ է կառուցել»:

-Դա հանցագործություն չէ, որ իմ տղաները ինստիտուտը վերջացնելուց հետո հայրենի գյուղ են վերադարձել,- պատասխանեցի ես:

-Հանցագործություն է, մանավանդ, որ նրանցից մեկի կինն էլ հայաստանցի է, փրփրեց նա:

-Ոչ մի օրենք չի արգելում, որ ղարաբաղցին ուրիշ ռեգիոնից հարս բերի,-չզիջելով՝ ասացի ես:

-Մենք արգելում ենք, որովհետև մարզի դեմոգրաֆիան ոչ միայն փոխում եք, այլև ծնված երեխաներն էլ Անդրանիկի, Վազգեն կաթողիկոսի ոգով եք դաստիարակում,- արյունով լի աչքերը ուղղելով ինձ՝ շարունակեց նա:

Արյունը խփեց գլխիս: Ու ասացի. «Ես ոչ մի դրոշ չեմ հանի: Դու ինձանից ջահել ես, ինքդ կարող ես բարձրանալ տանիք, դրոշը հանել»:

-Ես կարգադրում եմ դրոշը հանես,-բղավեց նա:

-Տղերք, սրա ոսկորները պինդ են, մի լավ փափկեցրեք,- դառնալով օմոնականներին՝ ասաց ավագը:

Եվ նրանք ինձ տապալեցին գետնին, ջարդեցին իրենց ոտքերի տակ: Կինս աղմուկ-աղաղակով իմ կողմը եկավ, որ ինձ փրկի: Նրան ևս տապալեցին գետնին: Ու մտան մեր տուն, մեզ լրիվ պլոկեցին՝ տարան 5 անկողին, 6 գորգ, 4 կարպետ, 5 ոսկե մատանի և շղթա, 9000 ռուբլի, տարբեր հագուստներ:

Անձնագրային ռեժիմի նման վայրենի ստուգումները, ինչ խոսք, մեկնաբանությունների կարիք չեն զգում:

ԹԵՐԹԵԼՈՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՕՐԱԳԻՐԸ

1991 թվականի մայիսի 16-ին Ադրբեջանի օմոնականներին և ԽՍՀՄ-ի ՆԳ նախարարության զորքերի ստորաբաժանումներին հաջողվել է Խանծաձորից բռնատեղահան անել Վարսի Համբարձումյանի, Աղալար Բաղասյանի, Բագրատ Ալեքսանյանի, Գյանջում Գրիգորյանի, Սանթրի Ալեքսանյանի ընտանիքները, տանել տառացիորեն թափել Հայաստանի Գորիսի շրջանի սահմանագլխին: Թե ադրբեջանական տասնյակ գյուղերի միջով անցնելիս ինչպես են նրանց խոշտանգել, ստիպել, որ դիմում գրեն Պոլյանիչկոյին առ այն մասին, որ իրենք կամավոր են մեկնում Հայաստան, ծաղրել, բեռները կողոպտել, թողնենք մի կողմ, որովհետև դրանք հար և նման են նախորդ հոդվածներում նկարագրված պատկերներին: Աստեղ, հարգելի ընթերցողներ, ես ձեր ուշադրությունը սևեռում եմ իմ տրամադրության տակ գտնվող գյուղի ինքնապաշտպանների հրամանատար, քաջասիրտ ազատամարտիկ Վահան Բաղասյանի գրառումներին:

Նրա խմբի խիզախ, հայրենասեր տղերքը ավելի քան 10-12 օր գյուղը պաշտպանել են մինչև ատամները զինված օմոնականներից ու խորհրդային զինվորներից:

18 մայիսի, 1991թ, առավոտյան, երբ արևը իր ծիրանին փռեց Դիզափայտի կատարին, Խանծաձորը լքեցին այնտեղ գտնվող վերջին բնակիչները՝ Լուսիկ Բաղասյանը, Աննա Սարգսյանը, շտապեցին դեպի Հարսնաքարի փեշի թաքստոցը, որ միանային շրջկենտրոն գնացող մյուս բնակիչներին: Ժամը մոտավորապես 12-ին 100-150 օմոնականներ և զինվորներ օղակեցին գյուղը: Զրահամեքենաները փակեցին գյուղից դեպի Հին թաղեր և Առաքել տանող ճամփաները: Բարձունքից տեսնելով այդ ամենը, մեր տղաներից մի քանիսը առաջարկեցին դիմել ռիսկի, հարձակվել գյուղի ներքին թաղը թալանող օմոնականների և թալանչիների վրա, բռնագրավել նրանց զենքերը: Սակայն մյուսները պահանջեցին սպասել մինչև մութն ընկնելը: Երբ ստվերները խտացան ձորերում, թալանչիների առաջին խմբերը, գյուղի անասունները քշելով, մեր համագյուղացիների ունեցվածքը բարձելով ավտոմեքենաները, ձիերին ու էշերին, շտապեցին, որ օրվա ավարը տեղ հասցնեն:

Գյուղի մի ծայրում գտնվող դպրոցի շենքի մոտ խորոված խժռող օմոնականները բարձր տրամադրության մեջ էին. «Արխային տարեք, մենք թույլ չենք տա, որ ձեր մի մազին էլ դիպչեն: Ադրբեջանի հողում հիմա մենք ենք տիրություն անում: Սակայն հայերի հարստությունը մենակ չուտեք: Մոսկվայից, Բաքվից մինչև այստեղ նրանից բաժին պետք է ստանան...»:

Վրեժխնդրությունից մեր սրտերն արագ էր բաբախում: Եթե զոհեր էլ տայինք, չպիտի թողնեինք, որ թալանը, մեր անասունները տեղ հասցնեին: Թալանչիների առաջին խումբը արդեն հասել էր Զրաղացաձորը: Նապոլեոն Հայրյանի բանջարանոցի թփուտների մեջ թաքնված տղերքն անսպասելիորեն կրակ բացեցին նրանց վրա: Ձորերը որոտացին: Թալանչիները, անակնկալի գալով՝ անասունները և թալանը թողնելով ճանապարհին, ճողոպրեցին ձորն ի վար, դեպի Սիրիգ ադրբեջանական գյուղի տարածքը: Օմոնականներն էլ կիսատ թողեցին խորոված, փախան թալանչիների

հետևից: Զրահամեքենաներն էլ ջղագրգիռ կրակ բացելով, ճանապարհվեցին դեպի Ջեբրայիլ: Այդ խուճապը մեզ ոգևորեց: Լավ դիրք էինք բռնել: Կարող էինք զրահամեքենաները պայթեցնել: Սակայն կաշառակեր հրամանատարների պատճառով ինչու՞ ռուս անմեղ զինվորների արյունը հեղել մեր զուլալ ձորերում: Կգա ժամանակ, որ նրանք իրենց զենքը կուղղեն իրենց կաշառակեր հրամանատարներին և ոչ թե հայ խաղաղ բնակչությանը: Մյուս կողմից էլ, եթե նրանց մեր ձորերում սպանեինք, ապա դա Ադրբեջանը մատի փաթաթան կդարձնի, ամբողջ երկրում աղմուկ կբարձրացնի, ռուս ժողովրդին կգրգռի մեր դեմ, ուստի ես թույլ չտվեցի, որ զրահամեքենաների վրա կրակ բացեն:

19 մայիսի, 91թ.: Հոգնած տղաները նոր են Դիզափայտի ծերպերում մի քիչ ննջել: Սեգ սարերի կատարներին ծագում էր մայիսի 19-ը, երբ ռազմական տեխնիկայի, ավտոմեքենաների հռնդյունը լսվեց Ղարղաջի բարձունքից: Գյուղի ինքնապաշտպաններից՝ մայիսի 18-ի պարտության համար վրեժ լուծելու համար Ջեբրայիլի շրջմիլպետը, Հադրութի պարետատունը որոշել էին մեզ բնաջնջել: Կես ժամից հետո գյուղի առաստաղում երևաց նաև դեղին ուղղաթիռը, պտտվեց և կրակ բացեց գյուղի, լեռների, ձորերի ուղղությամբ: Նրա արձակած գնդակները ընդհուպ հասնում էին նաև մեզ: Ուղղաթիռը, երևի, նկատեց, Հարսնաքարի փեշերին թաքնված մեր բնակիչներին, կտրուկ ուղղություն վերցրեց դեպի այն կողմը, գնդակոծեց նրանց: Մենք ստիպված կրակ բացեցինք ուղղաթիռի վրա, որը հավասարակշռությունը կորցնելով շտապեց դեպի Մուսուսլու ադրբեջանական գյուղի տարածքը, այնտեղ վայրէջք կատարեց: Ինչպես մենք հետո իմացանք այդ ուղղաթիռի մեջ էր գրող Բայրամ Բայրամովը: Մի ժամից հետո մեր գլխավերևում երևաց ռազմական մի ուղղաթիռ, որը շատ բարձր էր թռչում:

Զգալով, որ իրենց անվտանգությունը ապահովված է, թալանչիները օրվա երկրորդ կեսին շարժվեցին դեպի Խանձաձոր: Ովքե՞ր էին նրանք: Մինչև ղարաբաղյան դեպքերը նրանցից շատերը լինում էին մեր գյուղերում, գնումներ կատարում, որովհետև ապրանքները մեզ մոտ իրենց գներով էին վաճառում, իրենց մոտ՝ կրկնակի-քառակի անգամ բարձր գներով: Մենք թաքստոցից ճանաչում էինք նրանց:

Ահա այդ անամոթ քիրվաների անունները՝ Իսպահան Շամիլ օղլի, Բահալի Բիլալ օղլի, Աբզար Աբզար օղլի, Գուդրաթ Բաբաշ օղլի, Հուսեյն Բիլալ օղլի, Մուսա Բիլալ օղլի, Մուհամեդ Հյուսան օղլի, Հաջի Հաջիև, Իսպանդիար Հյուսեյն օղլի և այլն: Բոլորի անունները հնարավոր չէ թվարկել:

Երեկոյան դեմ այդ թալանչիներին մի լավ դաս տվեցինք, ստիպեցինք, որ դատարկածեռն վերադառնան տուն:

20 մայիսի, 91թ: Տղերքը գիշերը մտել են գյուղ: Օմոնականները թողել են պահակակետերը, ճողոպրել դեպի Սիրիգ գյուղը: Ի՞նչ վիճակում էին մեր տները: Հիշեցի Վ. Հյուգոյի խոսքերը՝ այստեղով թուրքեր են անցել: Պատկերացնու՞մ եք, թե պատկերը ինչպիսին կլինի, եթե ասենք՝ գյուղում ահա երեք օր է, որ ազերի թուրքեր են վխտում: Նրանք լրիվ քանդել են բոլոր տների դարպասները, դռները, պատուհանները, մարդկանց տարիների վաստակը կողոպտել, տարել: Առանձնապես բարբարոսաբար են վերաբերվել պարենային մթերքների նկատմամբ: Երևի տեսել եք, թե սոված անգղները ինչպես են հավաքվում սատկած լեշի վրա: Ճիշտ այդպես նրանք ծվատել են խանձաձորցիների պարենային մթերքները: Ալյուրի, հացահատիկի, կարտոֆիլի հետքերը տներից ձգվում էին մինչև Զրաղացաձոր:

21 մայիսի 91թ.: Առաջին մեքենան, որը գյուղ էր բերում հրահանգավորված օմոնականների մի նոր խումբ, անսպասելի կրակոցներից շփոթված՝ մխվեց տեղում: Դուրս գալով մեքենայից, օմոնականները ավտոմատով կրակեցին չորս բոլորը: Մեր տղաներից մեկը նրանցից մեկին գլորեց ցած: Մենք կարող էինք մյուսներին ևս շարքից հանել, բայց օգնության հասած 10-12 «ՈւԱԶ» ավտոմեքենաների մեջ գտնվող մեծաթիվ օմոնականներին չէինք կարող դիմադրել: Ուստի աննկատ հեռացանք դեպի Մուլքադարայի բարձունքը: Իսկ նրանք և թալանչիները Խանձաձոր մտան նրա քարը քարի վրա չթողնելու մոլուցքով լի: Մինչև գիշերը մեզ չհաջողվեց հետևել նրանց գործողություններին: Երեկոյան դեմ էլ չկարողացանք փակել թալանչիների հետդարձի ճանապարհը, որովհետև մեր ռազմամթերքները սպառվում էին: Մեզ մատակարարող տղերքը ուշանում էին, հավանական է, որ ծուղակի մեջ էին ըն-

կել: Այո, չես կարող իմանալ, թե քո դիմացինը ինչ դիմակ է հագել: Շատերը միտինգներում հայրենասիրական ճառեր էին արտասանում, բայց իրականում միայն իրենց գրպանների ուռճացման մասին հոգում:

Ինչևիցե, մեզնից և շրջապատից դժգոհ՝ այդ գիշեր էլ քնեցինք արծիվների բներում:

ՏԵՂԵԿԱՆՔ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՄ՝ ՁԻՈՎ ՔԱՅԼ

1991 թվականի մայիսի 16-ի և 17-ի ԼՂԻ Մարզի Հադրութի և Շուշվա շրջանների 24 գյուղերի բռնագաղթի առիթով Հայաստանի կառավարությունը աշխարհի տարբեր երկրներից ներկայացուցիչներ, լրագրողներ է հրավիրել Գորիսի շրջան, որպեսզի նրանք հանդիպեն իրենց մշտական բնակավայրերից զենքի ուժով արտաքսված բնակիչների հետ: Արտասահմանյան դիվանագետները, լրագրողները հանդիպելով այդ բնակիչների հետ՝ համոզվում էին, որ Ադրբեջանը պետական մասշտաբով, բարբարոսական մեթոդներով է նրանց վտարել իրենց օջախներից, նրանց ամբողջ ունեցվածքը հափշտակել, տները ջարդել, գյուղերը ավերել, թեև նրա պրոպագանդիստական մեքենան պնդում է, թե այդ հայերը կամավոր են մեկնել Հայաստան: Այդ կապակցությամբ հանրապետության Կոմկուսի Կենտկոմի քարտուղար Դաշտամիրովը մամուլի ասուլիսում մեղադրել է Հայաստանի կառավարությանը, որ Ղարաբաղի այդ 24 գյուղերի բնակիչներին չի ընդունում, ապաստան չի տալիս: Հայերը պահանջում էին, որ միջազգային մասշտաբով ճանաչվեր Ղարաբաղի 24 գյուղերի բռնագաղթը, սակայն գորբաչովյան պրոպագանդիստական մեքենան այս հանցագործությունն էլ անմիջապես սվաղեց: Այս անգամ էլ պատասխանատվությունից խուսափելով՝ Ադրբեջանի իշխանություններն էլ դիմեցին մի նոր խորամանկության, ինչպես ասում են՝ ձիով քայլ կատարեցին, ռուսների ձեռքերով փորձեցին Ղարաբաղի գյուղերի բռնագաղթը բարդել մարզի, նրա շրջանների ղեկավարների վրա: Այդ նպատակով արտակարգ դրության Հադրութի պարետատանը Վ. Պոլյանիչկոն կարգադրեց Հադրութի մյուս գյուղերի և, մասնավորապես, Խանձաձորի, Ծամձորի,

Ցորի և Սարինշենի հայաթափումը կազմակերպել շրջանի ղեկավարների միջոցով և հայտարարել, որ մյուս գյուղերն էլ նրանք են բռնատեղահան արել:

Արտակարգ դրության շրջանի Հադրութի պարետ, մայոր Ն. Վ. Կրավչենկոն և նրա քաղբաժնի պետ Վ. Ա. Կոբալկոն խնդիր դրեցին շրջխորհրդի գործկոմի նախագահ Է. Նավասարդյանի առաջ, որ նա սեփական ուժերով կազմակերպի Խանձաձորի, Ծամձորի, Ցորի և Սարինշենի բռնագաղթերը: Այցելելով նրա աշխատասենյակ, պարետատան ղեկավարներն ասել են. «Ադրբեջանը պլանավորել է ձեր այդ գյուղերը ևս հայաթափել, որպեսզի իր տափաստաններից ոչխարի հոտերը ապահով Լաչինի լեռները փոխադրի: Եթե ուզում եք, որ ոչ մի արյունահեղություն չլինի, այդ գործը դուք կազմակերպեցեք: Ձեզ կարող ենք օգնել տրանսպորտով, բենզինով: Հակառակ դեպքում օմոնն է խառնվելու գործին»: Բարեբախտաբար, Նավասարդյանը այդ հարցում գտնվեց իր կոչման բարձունքին, հրաժարվեց պարետատան կամքը կատարելուց: Դրանով իսկ նա խուսափեց 14 գյուղերի բռնագաղթը իր վզին փաթաթելու պատասխանատվությունից:

Սակայն Ն. Կրավչենկոն, Վ. Կոբալկոն չէին կարող հրաժարվել Վ. Պոլյանիչկոյի կարգադրությունը կատարելուց: Եվ նրանք օմոնին ձեռք ձեռքի տված՝ ձեռնամուխ եղան Խանձաձորի, Ծամձորի, Ցորի և Սարինշենի լրիվ հայաթափման գործին: Մայիսի 20-ից մինչև հունիսի 6-ը նրանք սիստեմատիկաբար այցելում էին Ջեբրայիլ, միլպետ Ռ. Մամեդովի հետ պլանավորում իրենց համատեղ գործողությունները:

Շարունակենք ինքնապաշտպանների գրառումների թերթումը:

25 մայիսի, 91թ.: Ջեբրայիլը տենդագին ուժեր էր կենտրոնացնում Խանձաձորը վերջնականապես գրավելու համար: Երկու զրահամեքենա, 100-120 օմոնականներ վաղ առավոտյան արդեն Ջրաղացաձորում էին: Նրանք վճռել էին նախ մեզ ջարդել, վտարել գյուղի տարածքից: Ստացած զինամթերքները քիչ էին, դրանով չէինք կարող դիմադրել 50-60 անգամ մեզ գերազանցող ուժերին: Այնուամենայնիվ, որոշեցինք ջրաղացաձորում կրակ բացել, օմոնի ուշադրությունը շեղել մեզ վրա, որպեսզի նախօրեին խաբուսիկ խաղաղությամբ հրապուր-

ված և իրենց օջախները վերադարձած բնակիչները էվակուացնեինք: Եվ մի քանի հոգի ծորում թշնամուն դիմավորեցին հրազենի կրակով, նռնակների պայթյուններով: Երկու-երեք ժամ թշնամուն թույլ չտվեցինք, որ շարժվեր առաջ: Այդ ժամանակամիջոցում գյուղ վերադարձածները հեռացան գյուղից, շտապեցին Խեժի անտառը: Հետո մենք նահանջեցինք: Օմոնականները և զինվորները մտան գյուղ:

26 մայիսի, 91թ: Մոտ ժամը 12-ին դեղին անգղը նորից երևաց գյուղի առաստաղում: Մենք արծվի բներից նայում էինք, բայց ոչինչ չէինք կարող անել: Դու մի ասի, օմոնականների հետ գյուղ է եկել նաև Հադրութի պարետ Ն. Վ. Կրավչենկոն: Հեռադիտակով նրան լավ ճանաչեցինք: Մենք համոզված էինք, որ նա Դիզափայտի փեշերն է գալու մեզ ծուղակի մեջ գցելու նպատակով: Երկերեսանի, խորամանկ, վտանգավոր տիպ էր նա: Ոտք դնելով Հադրութում, որպես պարետ, նա շրջկենտրոնի մշակույթի տան դահլիճի մարդաշատ միտինգում արտասանած ճառում հադրութցիներին հավատացրել է, որ օմոնականները միայն իր դիակի վրայով կարող են մտնել շրջանի գյուղերը: Այդ հայտարարությամբ նա միամիտ, հաճախակի պաշտոնական անձանց առաջ խոնարհվող հադրութցիներին, մանավանդ ղեկավար աշխատողներին, նարկոզ է ներարկել: Մինչդեռ Զեբրայիլի միլպետը նրան օգտագործում էր վերոհիշյալ չորս գյուղը ևս դատարկելու, մարդկանց ծերբակալելու համար: Ու ահա այդ երկերեսանին եկել էր Խանձածոր, գրոհայիններին ծերբակալելու, Զեբրայիլին հանձնելու համար: Իսկ մենք ոչ թե գրոհայիններ էինք, այլև շրջանից սերված, նրա պատվի, ինքնապաշտպանության համար ոտքի ելած մի խումբ երիտասարդներ: Արի ապացուցիր, որ մենք գրոհայիններ չենք: Ուստի որոշեցինք դուրս չգալ թաքստոցից: Բանակցությունների համար Կրավչենկոյի մոտ ուղարկեցինք տարիքավոր մի մարդու, որը գյուղը լքող վերջին բնակիչների հետ գտնվում էր Խեժի անտառում: Երկու ժամից հետո մեզնից մեկը պայմանավորված տեղում հանդիպեց բանագնացի հետ: Նա տխուր էր. «Պարետը հրամայել է, որ դուք թողնեք գյուղի տարածքը և այլևս ոչ մի գնդակ չարձակեք: Ադրբեջանը պլանավորել է այս գյուղում թուրքեր վերաբնակեցնել: Ալլահն էլ նրա այդ պլանի իրականացումը չի կարող խափանել: Գյուղի երիտասարդներն առավել ևս ոչինչ անել

չեն կարող, ուստի, հոխորտալով ասաց պարետը, նրանց հայտնիր, որ հեռանան-գնան, Խանձածորն էլ ընդմիշտ մոռանան»:

27 մայիսի, 91թ.: Գիշերը նորից հարձակվել ենք գյուղում հերթապահություն անող օմոնականների խմբի վրա: Մարտի ժամանակ երկու օմոնական զոհվել են, իսկ մյուսները հեռացել են գյուղից: Մինչև առավոտ գյուղը պահում էինք մեր ձեռքին:

28 մայիսի, 91թ.: Ն. Վ. Կրավչենկոն, օմոնականներն այս անգամ Խանձածոր էին մտել կատաղած: Հետո էլ Հարսնաքարի բարձունքում երևացել է դեղին ուղղաթիռը: Նա գնդակների կարկուտ է թափել անտառների, ծորերի, դաշտերի ուղղությամբ: Կես ժամ հետո օմոնականները բաժանվելով խմբերի, սկսել են սանրել գյուղի տարածքը: Հասկանալի էր՝ մեզ էին որոնում: Որոշեցինք թաքնվել Դիզափայտի ժայռեղեն բարձունքում, սպասել իրադարձությունների ընթացքին:

29 մայիսի, 91թ.: Մենք շատ ուրախացանք՝ հարևան գյուղերից մեզ օգնության եկան մի խումբ հայրենասերներ: Նրանց հետ միասին գոնե մի քանի օր էլ կարող էինք դիմադրել թշնամուն, այդքան ժամանակ էլ նրան զրկել հաղթանակը տոնելու հրճվանքից:

30 մայիսի, 91թ.: Օմոնականները և թալանչիները մի նոր մոլուցքով քանդում, տակնուվրա էին անում գյուղը, տանիքների թիթեղները, կոմինդրները, մյուս շինանյութերը տանում: Քանի որ պահակակետերը ուժեղացրել էին, չէինք կարող հարձակման փորձեր կատարել:

1 հունիսի, 91թ.: Տղաներից մեկը չհամբերեց, գիշերը մտավ գյուղ, կրակ բացեց թշնամու պահակակետի թիկունքից: Անսպասելի այդ կրակոցից օմոնականները նախ խուճապի մատնվեցին, հետո ջղագրգիռ կրակ բացեցին գիշերային խավարի մեջ: Առավոտյան դեմ Սիրիգից ավելի քան 200 օմոնականներ և զինված թալանչիներ գյուղը մտան և բաժանվելով խմբերի, սկսեցին սանրել գյուղի տարածքը: Երեք ժամվա ընթացքում նրանք հասան Հարսնաքարի ստորոտը: Նրանց մեջ էր Զեբրայիլի շրջմիլպետ Ռաշիդ Մամեդովը: Երևի եկել էր Խանձածորը գրավելու, հաղթանակ տոնելու: Որոշեցինք մի անակնկալ հարված էլ հասցնել թշնամուն, ապա հեռանալ, ուժեր ժողովել, նորից գյուղը ազատագրելու համար:

2 հունիսի, 91թ: Մեր այդ մտադրության կատարումը խաթարվեց: Օրվա 2-րդ կեսին դեղին ուղղաթիռը նորից երևաց գյուղի վրա: Օմոնականների խմբերը շարժվեցին դեպի Դիզափայտ: Մենք արդեն փոխել էինք մեր տեղը:

3 հունիսի, 91թ: Գիշերը նորից հարձակվեցինք օմոնականների պահակակետի վրա: Պատասխան կրակոցը մինչև առավոտ չէր դադարում: Դա մեր վերջին հարձակումն էր: Ավելին կատարել չէինք կարող, որովհետև մեզ այլևս չէին աջակցում, երևի բոլոր գծերը փակել էին:

4 հունիսի, 91թ: Առավոտյան օմոնականների շղթան շարունակեց գյուղի տարածքի սանրումը: Մենք այդ շղթայի վրա մերթ այս, մերթ այն թաքստոցից կրակ բացելով, նահանջում էինք: Վերջապես մենք մտանք Խեժի անտառը, նրանք էլ գրավեցին Հարսնաքարի բարձունքը:

5 հունիսի, 91թ: Մենք՝ ինքնապաշտպաններս, նահանջեցինք: Ո՛չ զինամթերք ունեինք, ոչ էլ համալրման էինք սպասում: Մեր վեհաշուք Դիզափայտ լեռը թողնելով գերության մեջ, հեռանում էինք մեր մանկության օրրանից: Քամու սուլոցի մեջ մեր ականջներին էր հասնում սուրբ լեռան ձայնը. «Դարեր շարունակ ես այս երկրամասին զորավիգ եմ եղել, բայց մարզի բնակչությունը մի ամիս ինձ զորավիգ չեղավ, որովհետև նրա միասնությունը ջլատվել է: Դուք՝ մի բուռ հայրենասերներդ, մենակ ոչինչ էլ չէիք կարող անել, մանավանդ որ ձեզ այլևս մատակարարելու հնարավորություն չկար: Դրա համար նահանջում եք՝ մարզի սուրբ լեռը թշնամուն հանձնելով: Ես ձեզ չեմ կարող մեղադրել, այդ իսկ պատճառով ձեզ չեմ անիծում: Համոզված եմ, որ ոչ միայն դուք, այև ամբողջ հայերը, վերջապես, դասեր կառնեն մեր ժողովրդի դառը փորձից և համախմբվելով՝ ինձ կազատագրեք օտարներից և հուր հավիտյան սատար կլինեք ինձ, ես էլ՝ ձեզ վահան...»:

Սուրբ լեռան այս խոսքերը ականջի օղ դարձնելով՝ մենք վերադարձանք շրջկենտրոն:

Վահան Աղալարի Բաղասյան
(Խանձաձորի ինքնապաշտպանների ղեկավար)

ՄԵՍՐՈՊԱՏԱՌ ԳԻՐԸ ՄԵՐ

Ցոր գյուղը Արցախ աշխարհի ամենից հինավուրց բնակավայրերից մեկն է: Սեգ լեռների գրկում գտնվող այդ գյուղը իր բնական պաշտպանական դիրքերի շնորհիվ, անառիկ մի բերդ է դարձել: Օտար նվաճողների բազմաթիվ հարվածներից հետո այդ բերդ-գյուղի փառքը դարերի ընթացքում խամրել է: Սերունդները նրա փլատակների վրա կերտելով մի նոր բնակավայր, երդվել էին. «Մենք այս արևկող սարալանջում հարատևելու ենք այնքան ժամանակ, որքան արևն է հարատևելու, մեզ ջերմություն տալու»: Ու ապրել են, դիմացել ոչ միայն դարերի հողմերին, այլև ամեն անգամ իրենց հողից շպրտել բոլոր բարբարոս նվաճողներին:

Կոմունիստական բռնապետության տարիներին ինչպես երկրամասի ամեն մի բնակավայր, այնպես էլ Ցորը Ադրբեջանի ԼՂԻ Մարզի նկատմամբ վարած ազգային խտրական քաղաքականության հետևանքով ցամաքել է, ամայացել: Ահա-ահա նրա շունչը կտրվում էր: Նրա բնակիչները հոգեվարքի մեջ գտնվող գյուղի փրկությունը տեսնելով մարդկանց իր շուրջը համախմբող մի կազմակերպություն ստեղծելու մեջ, որոշել են բաժանվել Բանաձորի խորհրդանշությունից, գյուղում անկախ կոլտնտեսություն ստեղծել: Կուսշրջկոմի չինովնիկ-բյուրոկրատները այդ առաջարկությանը սրերով են դիմավորել, բայց գյուղը ոտքի է կանգնել, որի անզիջում պայքարը, վերջապես, հաջողությամբ է պսակվել:

Ղարաբաղյան շարժման առաջին օրերին Ցորում առանձին կոլտնտեսություն է ստեղծվել: Ցորեցիները միաձայն իրենց կոլտնտեսությունը կոչել են Մ. Մաշտոցի անունով, քանի որ, ըստ մեզ հասած ավանդույթների, հայոց գրերի քանքարավոր ստեղծողը դպրոց է հիմնել նաև Արցախ աշխարհի այս գյուղում: Ղարաբաղյան շարժման տարիներին Ադրբեջանի տարբեր բնակավայրերում հալածված ու խոշտանգված 12 ընտանիքներ վերադարձել են իրենց նախնիների հայրենիքը: Եվ գյուղը սկսել է աշխուժանալ, հարություն առնել: Կարճ ժամանակամիջոցում կառուցվել է Ցոր-Հադրութ ճանապարհը՝ ցորեցիներին ազատել 3-4 ադրբեջանական գյուղերի միջով շրջկենտրոն մեկնելու հոգսից: Կոլտնտեսության պահեստը նորից լցվել

է հացով: Նորաստեղծ կոլտնտեսությունը ձեռնամուխ է եղել նաև գյուղի տարածքի պատմաճարտարապետական հուշարձանների վերանորոգման գործին: Առաջին քայլերն է կատարվել գյուղի կենտրոնի Ամենափրկիչ եկեղեցու, որը կառուցվել է 951 թվականին (մի շարք մասնագետներ պնդում են, որ նրա ավերակների վրա 18-րդ դարում նոր եկեղեցի է կառուցվել), վերանորոգման ուղղությամբ:

Ցորի աշխուժացման այդ քայլերը կատաղեցրել է ադրբեջանցի հարևաններին. «Մենք ամեն ինչ անում ենք, որ Ցոր գյուղը ևս պրիշակ դառնա, հայաթափվի, որպեսզի մեր անասունները ամառ ու ձմեռ պահենք նրա արևկող լանջերին, մինչդեռ ցորեցիները, համախմբվելով նորաստեղծ կոլխոզի շուրջը, վերանորոգում են իրենց լքված տները, տարբեր բնակավայրերից վերադառնում գյուղ, մեր անասուններին էլ արգելում արածել իր տերետորիայում, այսինքն՝ Ադրբեջանի հողում»:

Նրանք ատամները սրելով՝ հարմար առիթի, իրադարձության էին սպասում, որ հիմնահատակ անեին Ցորը: Մայիսի 15-ին և 16-ին այս գյուղը ևս շրջափակել էին տանկերը և զրահամեքենաները: Նրա փողոցները լցվել էին օմոնականներով: Ըստ նախօրոք մշակած ծրագրի, գյուղի բռնատեղահանությունը ևս պետք է կատարվեր ամսի 16-ին, բայց քանի որ հանրապետության տարբեր շրջաններից Ջեբրայիլում մոբիլիզացված ավտոմեքենաները չէին հերիքում, մի ուղերթով 14 գյուղերի բնակչությանը տեղափոխել Գորիս, Ռաշիդ Մամեդովը, գեներալ Մամեդ Ասադովի համաձայնությամբ, մասնակի փոփոխություն է մտցրել բռնագաղթի գրաֆիկի մեջ, որոշել Ցորի, Ծամձորի, Սարինշենի, մասամբ էլ Խանձաձորի բռնագաղթը մեկ-երկու օրով հետաձգել, սպասել, որ մյուս գյուղերի հայերին Գորիս տեղափոխած մեքենաները վերադառնային, երկրորդ ուղերթը կատարեին: Ուստի օմոնականները մայիսի 16-ին Ցորում բավարարվել էին բնակչությունից դիմումներ կորզելով, մի շարք ընտանիքներից ոսկեղեն, գորգեր, անկողին, պարենային մթերքներ հափշտակելով: Միաժամանակ բնակչությանը վերջնագիր են ներկայացրել՝ թողնեն գյուղը, հեռանան: Մայիսի 17-ի առավոտյան գյուղը նորից շրջափակել են զրահամեքենաները՝ նշանակետ բռնելով նրա թիկունքի անտառը, ինտենսիվ գնդակոծել այն, որպեսզի ինքնապաշտպանները

հեռանային այնտեղից: Մոտ կես ժամ սպասելով գյուղի մուտքի մոտ, ինչպես պատմում են Սերյոժա Մկրտչյանը և Ստյոպա Կարապետյանը, օմոնականները գործողություններ չէին ծավալում: Անհանգստանում էին նաև բեռնատար ավտոմեքենաների վարորդները: Օմոնականներից մեկը, որի ախորժակը գրգռում էր թալանը, հավասարակշռությունից դուրս գալով, ջղագրգիռ դիմեց Ջեբրայիլի շրջմիլիցիայի աշխատակից լեյտենանտ Զաքարան Կարաևին. «Ու՞մ ենք սպասում, ինչու՞ հրաման չես տալիս, որ գործի անցնենք...»:

-Ռաշիդ Մամեդովը սպասում է գեներալի հեռախոսազանգին, որը տառացիորեն Ցորի ուղղությամբ շարժվելու նախօրեին կարգադրել է, որ սպասենք իր հերթական հրամանին: Գեներալն էլ սպասում է Մութալիբովի կարգադրությանը, իսկ նա էլ սպասում էր Մոսկվային:

Կես ժամ հետո Զաքարան Կարաևին օդային հեռախոսով հայտնեցին. «Մութալիբովը կարգադրել է, որ այլևս հայերին Ադրբեջանի ավտոմեքենաներով չտանել Հայաստան, այլև նրանց իրենց գյուղերից արտաքսել, որովհետև Գորիս տեղափոխված հայերը աղմուկ են բարձրացրել, իսկ Հայաստանի կառավարությունն էլ ամեն ինչ անում է, որ արտասահմանյան լրագրողները շփվեն նրանց հետ: Ասել է, թե այս բռնագաղթի համար ամբողջ աշխարհը մեզ խայտառակելու է, պահանջելու է, որ հայերին վերադարձնենք իրենց բնակավայրերը...»:

-Ի՞նչ ենք անելու այս գյուղի, Ծամձորի, Սարինշենի և Աղաջաքենդի բնակչության հետ,- միաբերան հարցրեցին օմոնականները:

-Մամեդովը կարգադրել է, որ տակտիկան փոխենք, այդ գյուղերի բնակչությանը վտարենք իրենց տներից, որ այնտեղ մերոնց վերաբնակեցնենք: Ուստի հրամայում եմ գործի անցնել՝ Ցորը ազատել հայերից, ստիպել, որ նրանք թողնեն գյուղը, հեռանան:

-Իսկ Հին թաղերը՞, Խծաբերդը՞,- հարցրեց օմոնի տարազ հագած մի հովիվ:

-Ռուսները այժմ թույլ չեն տալիս, որ այդ գյուղերը դատարկենք: Երևի վախենում են, որ դրանից հետո էլ կազատագրենք Զանգեզուրը, ամբողջ Հայաստանը:

Օմոնականները և Ցորի հարևան ադրբեջանական Ղշլաղ, Սուլեյ-

մանլու, Բալյանդ գյուղերից եկած թալանչիներ Ալեքպեր Նովրուզովը, Սեիդալի Կարաևը, Ազիզ Թեյմուր օղլին, Իդրիս Խալաֆլվեցին, Գիազ Մահադդին օղլին, Իսրաֆիլ Մահադդին օղլին, Զաման Քերիմովը և այլք, հազիվ էին գյուղ մտել, որ ցորեցիների ունեցվածքը, ամբողջ գյուղը թալանեն, անասունները հափշտակեն, երբ օդային հեռախոսով Կարաևին Ռ. Մամեդովը հրամայեց. «Անպայման Զեբրայիլ ես բերում Ցորի կոլխոզի նախագահ Եփրեմ Մկրտչյանին, որ նրա հետ սեպարատ հաշտություն կնքենք»:

Համբերատար ընթերցողներ, երևի դուք էլ համաձայն լինեք, որ այժմ ունկնդրենք դեպքերի ականատեսներին:

Սերյոժա Մկրտչյան: Հինգ օմոնականներ և չորս թալանչիներ են մտել իմ բակ: Օմոնի խմբի ղեկավարը ատրճանակը ուղղելով ճակատիս, ասաց. «Խոզ էրմանի, ինչու՞ մեր հողից դուրս չես գալիս, ինչքա՞ն կարող ենք ձեզ կերակրել, հաց տալ»:

Ես ինձ չկորցնելով, ասացի. «Այս գյուղը իմ նախնիներն են կերտել: Այստեղ 4-5-րդ դարերից կառուցված բերդերի, շենքերի փլատակներ կան, որոնց վրա դեռ կան մեսրոպատառ գրերը մեր»:

-Դուք շատ եք հպարտանում ձեր գրերով, դրա համար ձեր գյուղն այնպես կավերենք, որ ձեր գիրն էլ մոռանաք, ձեր գերեզմանատունն էլ,- ֆշշացրեց նա,- շուտ այս գյուղը ազատեք, որ մեր ադրբեջանցիներին վերաբնակեցնենք այստեղ:

-Ես կմեռնեմ, բայց այս գյուղը չեմ լքի,-սանձարձակ օմոնականին չզիջեցի ես:

-Սրա լեզուն երկար է, թևերից բռնեցեք, քաշելով գյուղից հանեցեք, որ չիմանա, թե զարափաթ ենք անում,- կարգադրեց նա:

Երկու հոգի բռնեցին իմ թևերից և քաշելով տարան մինչև դարպասը: Կինս տեսնելով այդ վայրենությունը, ձեռքերը վեր կարկառած հարձակվեց նրանց վրա: Օմոնականներից մեկը բռնեց կնոջս ձեռքերից և շպրտեց դեպի իմ կողմը, ապա ավտոմատով կրակեց մեր ձայնի վրա հավաքվածների ուղղությամբ: Նրանք քար կտրեցին: Իսկ օմոնականները և թալանչիները իմ տնից կողոպտելով 3 գորգ, մեկ կարի մեքենա, 5 անկողին, 7600 ռուբլի, 10-15 կանացի և տղամարդու հագուստներ, դուրս եկան իմ տնից, հայտարարելով. «Եթե վաղը այստեղ լինեք, երկուսիդ էլ գնդակահարելու ենք»:

Ստյոպա Կարապետյան: Մարդ երևի չհավատա, եթե ասեմ, որ մեր աչքի առաջ մեր տները թալանել են: Սկզբում ես հոխորտացել եմ թալանչիների վրա, փորձել մեկից վրեժ լուծել, բայց ատրճանակի գնդակը սուլել է իմ գլխավերևով:

-Եթե փորձես տեղից շարժվել, ապա երկրորդ գնդակը քյալադ է խրվելու,- ասաց խոզի պես չաղ մի օմոնական:

Եվ ոչ մի անձնագիր էլ չստուգելով՝ նրանք կողոպտել են իմ ունեցվածքը, մասնավորապես՝ տանելով 2 գորգ, 4 կարպետ, 3 մատանի, 5600 ռուբլի ոսկե փոխառություն: Նրանց ավագը դառնալով ինձ, ասաց. «Դու ուսուցիչ ես, լավ պետք է իմանաս և ձեր ժողովրդին բացատրես, որ յոթ միլիոնանոց Ադրբեջանը հիմա սուվերեն պետություն է և ո՛չ քրիստոնյա Մոսկվայից է վախենում, ո՛չ էլ Ամերիկայից: Ուրեմն վաղը այստեղ ձեզ չտեսնենք, մեր հողից չքվեցեք, որ կարողանանք կերակրել յոթ միլիոն Ադրբեջանին»:

Այդ օրը նրանք լրիվ թալանել են նաև Մանյա Բալասանյանի, Նորա Գրիգորյանի, Միքայել Բաղդասարյանի, Նինա Հովհաննիսյանի, Պավել Հովհաննիսյանի տները, նրանց ամբողջ ունեցվածքը, պարենային մթերքները բարձելով մեքենաները, տարել Զեբրայիլ: Թալանչիներին դիմադրելու համար Արսեն Հովհաննիսյանը, Սամսոն Հակոբջանյանը, Ալվան Հարությունյանը այնքան ծեծ են կերել, որ ուժասպառ են եղել: Ընդ որում, Սամսոն Հակոբջանյանը մի ժամ հետո մահացել է:

Եփրեմ Մկրտչյան: Երեկոյան դեմ ինձ ևս ծուղակ են գցել: Լեյտենանտ Հուսեյնը ինձ սիրաշահելու նպատակով ասաց. «Նախագահ, ես Մամեդովին խնդրել եմ, որ ձեր գյուղը չքոչացնի, որի համար դու պետք է ինձ մի լավություն անես: Դու պետք է գաս Զեբրայիլ, որ Մամեդովին բացատրագիր տաս այն մասին, որ ձեր գյուղը ցանկանում է Հադրութի կազմից դուրս գալ, միանալ Զեբրայիլին: Եթե այդպիսի փաստաթուղթ տաս, ապա ձեր գյուղը չենք թալանի: Դու էլ մինչև մահդ այս գյուղում խանություն կանես»:

-Քո այդ առաջարկը ես սիրով եմ ընդունում, Հուսեյն մուալլիմ: Դա, հիրավի, մեր ժողովրդի օգտին է: Ուստի ինձ 10-12 րոպե ժամանակ տուր, որ գնամ տուն, տոնական հագուստներս հագնեմ, որպեսզի դրանց մեջ բանակցեմ Զեբրայիլի բարձրաստիճան ղեկավարնե-

րի հետ: Դու էլ ինձ հետ արի մեր տուն, որ մի բաժակ օղի խմենք, հետո ճանապարհ ընկնենք Ջեբրայիլ,- ծուղակից դուրս գալու համար ասացի ես:

-Համաձայն եմ: Դու գնա հագուստդ փոխի, ես էլ թալանչիներով կզբաղվեմ: Անամոթ մարդիկ են, գյուղը կուլ կտան, բայց ոչ ոքի մի բան չեն տա, մինչդեռ շատերն են սպասում, որ իրենց էլ մի բան տանք: Ես քեզ սպասելու եմ գրասենյակի մոտ: Մինչև ձեր տուն քեզ մի օմոնական է ուղեկցելու: Նրան օղի չտաս, չհարբացնես,- ասաց նա և օմոնականի ականջին ինչ-որ բան շշնջալով, դարձավ ինձ. -Գնացեք, 10-15 րոպեից հետո այստեղ լինեք:

Ես շտապեցի գյուղի մի ծայրում գտնվող մեր տուն, մտածելով մի կերպ պոկվել օմոնականից, ծլկել անտառ: Հասնելով տուն, ես հագուստս փոխելու փոխարեն վերարկուս վերցրի և օգտվելով, որ օմոնականը ակնապիշ զննում է իմ ունեցվածքը, մյուս դռնով քամու արագությամբ փախա դեպի գյուղի թիկունքի անտառը: Օմոնականը կրակ բացեց իմ ուղղությամբ: Համոզված էի, որ օմոնականի տարազ հագած այդ հովիվը չէր կարող դիպուկ կրակել: Կես ժամից հետո օմոնականները կրակ բացելով՝ մտան անտառ: Բարեբախտաբար, քաշաթղթերն անտառում խտանում էին, ինձ գտնելը դժվար էր: Այնուամենայնիվ, ես զգույշ անցա սարի մյուս կողմը, հետո շտապեցի Տյաք գյուղը, փրկվեցի Ջեբրայիլում խոշտանգվելուց: Ես գիտեի, որ Ջեբրայիլ տարած մեր ամեն մի բնակչից, որպես փրկագին 25-30 հազար ռուբլի էին վերցնում, հետո ազատում, իսկ նախագահների փրկագինը՝ 200-300 հազար ռուբլի էր: Միաժամանակ նրանցից ոմանց սալյարկա էին սրսկում, որպեսզի 2-3 օր հետո մահանան:

Մայիսի 18-ին օմոնականները նորից մտան Ցոր գյուղը: Նրա բնակիչները արդեն լքել էին գյուղը: Միայն մի քանի զառամյալ մարդ ու կին էին մնացել իրենց տներում և չէին ուզում հեռանալ հարազատ օջախներից: Սակայն օմոնականները նրանց էլ ստիպում էին, որ հեռանան գյուղից, գնան ջհանամը: Գյուղի ինքնապաշտպանները անտառից ստեպ-ստեպ կրակում էին նրանց վրա, կաշկանդում նրանց գործողությունները:

Հինգ օր է տևել Ցորի թալանը: Թալանչիները տարել են ամեն

ինչ, ինչպես ասում են, պլոկել են տները, գոմերը, թողել մերկ պատերը: Հետո գյուղում զինվորական պահակակետ է բացվել: Շրջկենտրոնում ապաստան գտած ցորեցիները նորից վերադարձել են գյուղ: Ինձ հաջողվել է գյուղի մուտքի մոտ զրուցել պարեկություն անող կապիտան Ա. Գ. Բելոռուսովի և շարքային Ա. Ա. Բորովիկի հետ:

-Ի՞նչ վիճակում է գյուղը,-հարցնում եմ նրանց:

-Կինոէկրաններում երիտասարդ սերունդը թաթար-մոնղոլների, օսման-թուրքերի, գերմանական ֆաշիստների բարբարոսությունների մասին շատ բաներ է դիտել, սակայն ազերի թուրքերը այդ ամենը գերազանցել են, բարբարոսությունը մեր օրերում մի նոր մակարդակի հասցրել: Ավելի լավ է պտտվեք ավերակների մեջ, ամեն ինչ տեսեք ձեր աչքերով,- ասաց կապիտանը:

Իրենց ավերված տների մոտ մոլոր կանգնել էին գյուղ վերադարձած ցորեցիները: Տխուր էին, բայց լավատեսությամբ լի: Ահա, թե ինչ են ասում նրանք:

Նիկոլայ Հարությունյան: Դարերի ընթացքում մեր գյուղը մի անգամ չեն ավերել, բայց հարատևել է: Մեր այս ձեռքերով ավերված այս գյուղին նորից շունչ կտանք:

Յուրի Բաղիյան: Մեկ-երկու տարվա աշխատանքով նորից կաշխուժացնենք ավերված ու թալանված գյուղը:

Այսպիսի լավատեսությամբ տոգորված մարդիկ, անշուշտ, նորից հարություն կտան հինավուրց Ցորին: Օմոնականների ձեռքերով նրա՝ Մ. Մաշտոցի անվան կոլտնտեսության ավերած ցուցատախտակի վրա նորից կհառնեն մեսրոպյան գրերը մեր:

ՍԱՀՄԱՆ՝ ՔԱՋԱՑ, ՋԵՆՔԸ՝ ՅՈՒՐՅԱՆՑ

Ծամձոր: Խորհրդային բանակի ստորաբաժանումները և Ադրբեջանի օմոնականները ինչպե՞ս են մտել մեր այս գյուղը, կողոպտել բնակիչներին, կոլտնտեսության տեխնիկան, անձնական ավտոմեքենաները, անասունները հափշտակել, տարել: Մարզի հինավուրց այս բնակավայրը ինչպե՞ս է հայաթափվել: Այս և գյուղի բռնագաղթի հետ առնչվող մի շարք այլ հարցերի մասին ծամձորցիների՝ «կլոր

սեղանի» շուրջը ծավալված խոսակցությունը որոշ կրճատումներով ներկայացվում է ստորև:

Լրագրող: Ծամձորը մարզի անառիկ գյուղերից մեկն է: Ճանապարհը դուրս գալով գյուղից՝ երկու տեղ ծունկ է տալիս, հաղթահարում գյուղի փեշի կամուրջը, ապա օձագալար իջնում Կյենու քարի սարալանջն ի վար, Մելիք Հովակիմյանի ջրաղացների ծորում շունչ քաշում, անցնում լեռնային շոնդահոս գետակի կամրջով, գնում միանում է Ջեբրայիլ տանող ուղիներին: Գյուղի թիկունքում էլ սեգ լեռներ են, որոնց գագաթներին տարվա շատ ժամանակ ամպեր են հյուրընկալվում: Այդ բարձունքից մեկում գտնվում է Սարինշեն գյուղը՝ շրջկենտրոնից 6-7 կմ անդին: Ծամձորի աջ և ձախ թևերում էլ խորունկ, անանցանելի ձորեր են: Բավական է գյուղից դուրս եկող միակ ճանապարհը փակել Մելիք Հովակիմյանի ջրաղացների մոտ կամ Կյենու քարի լանջում, որպեսզի օտար հավքն անգամ չկարողանա Ծամձոր մտնել: Ինչու՞ դա ձեզ չի հաջողվել: Իգիթներ չե՞ն եղել, թե՞ կազմակերպիչներ: Գուցե ինչ-որ շահերից դրդված գյուղի դռները լայնորեն բացել եք օմոնականների առաջ, որոնք զենքի ուժով ձեզ վռնդել են ձեր տաք օջախներից, այնտեղ շտապ վերաբնակեցրել Միլի, Մուղանի, Ստորին Ղարաբաղի տոթակեզ հարթավայրերում ապրող ադրբեջանցիներին, մսխեթի թուրքերին:

Համո Հովսեփյան: Օմոնականները և զինվորների առաջին խումբը մայիսի 13-ին, ժամը մոտ 3-ին մեր գյուղն են մտել 4 զրահամեքենաներով, 15 «ՈւԱԶ» և բեռնատար մեքենաներով, ճանապարհ բացելով իրենց կոլեգաների առաջ: Նրանք խմբերի բաժանված մտում էին բնակիչների տները, ջարդում դարպասները, տների դռները, պատուհանները, թալանում նրանց գույքը, ունեցվածքը: Առաջինը գյուղում ձերբալալել էին իմ որդուն՝ կոլտնտեսության նախագահ Կարո Հովսեփյանին, բռնագրավել նրա «Վոլգա» մակնիշի ավտոմեքենան, գարաժը, որտեղ 25-30 հազար ռուբլու պահեստամասեր, ներկեր, ավտոդողեր կային: Ես՝ 80-ամյա ծերունիս, ցանկացել եմ ինչ-որ բան փրկել, բայց ինձ ծանակել, խոշտանգել են, ասելով. «Մենք ամեն ինչ ձեռնարկում էինք, որ այս գյուղը ջնջվեր քարտեզից, իսկ դու քաղաքում ապրող տղայիդ և նրա ռուս ժանանա կնոջը գյուղ ես բերել, որ ճրագդ վառվի՞: Այդ ճրագն այնպես կմարենք, որ

մյուսների համար դաս լինի, որպեսզի երկրի մյուս ռեգիոններում ապրող ոչ մի ծամձորցի այլևս չփորձի դեպի այս կողմ նայել»:

Չնայած ինձ այնքան էին ծեծել, որ չէի կարողանում շունչ քաշել, այնուամենայնիվ, խոսքի տակ չմնացի.

-Դուք 70 տարի անընդհատ բարեկամության և ինտերնացիոնալիզմի մասին խոսքեր էիք շռայլում, բայց իրականում մի նպատակ փայփայում՝ ԼՂԻ Մարզի հայկական բնակավայրերը և այդ թվում՝ մեր Ծամձորը ազատել նրանց հայ բնակիչներից:

-Բա ոնց, թույլ տանք, որ դուք հովասուն լեռներում ապրեք, հարստություն դիզեք և դրոշ բարձրացնեք, որ միանում եք Հայաստանին: Մեր առածն ասում է՝ բուղդա չորագըն բույնզը վար (ցորեն հացը եղջյուրներ ունի): Ձեզ մի կտոր հացի կարոտ պիտի թողնենք, որ տեղներդ հանգիստ նստեք,- ասաց ոչխարի դեմքով մի օմոնական:

-Ձեր մի ուրիշ առածն էլ ասում է՝ գյեչինը բուրախասան, հաջիա չխար (այծին որ բաց թողնես, խորանը կմտնի): Կարմիր Մոսկվան, ձեր իշխանությունները հանցագործությունների ու մարդասպանության համար ձեզ չեն պատժում: Սումգայիթում, Բաքվում, մյուս բնակավայրերում անզեն հայերին ջարդել եք, խորհրդա-իրանական 750 կմ սահմանը ավերել, բայց անպատիժ եք մնացել: Իսկ դրանց կազմակերպիչներն էլ բարձր պաշտոն են ստացել: Դրա համար դուք դարձել եք սանձարձակ: Ինչու՞ եք տղայիս ձերբակալել, նրա գարաժը թալանել, ինչու՞,-ասացի ես և այլևս չկարողացա ոտքի վրա կանգնել:

Արկադի Պետրոսյան: Մեր բակ մտած օմոնականների աչքերից արյուն էր թափվում: Մռայլ էին: Կինս և մայրս սարսափից մի կողմ էին կանգնել: Նրանցից մեկը, դառնալով ինձ, բղավեց. «Այս տանը գրոհայիններ կա՞ն»:

-Ոչ,- պատասխանեցի ես:

-Ձեր բոլոր անձնագրերը ցույց տվեք,- ասաց նա:

Մի քանի րոպե հետո ես նրան մեկնեցի իմ, կնոջս և մորս անձնագրերը: Նա մյուսներին գլխով ցույց տվեց, որ մտնեն բնակարանը, իսկ ինքը սկսեց թերթել անձնագրերը: Մայրս նրանց հետևելով՝ մտավ խոհանոց և այնտեղից կանչեց. «Արկադի, տունդ թալանում

են, ներս արի»: Ես փորձեցի ներս մտնել: Օմոնականը բռնեց թևիցս և շպրտեց դեպի դարպասը, ապա ատրճանակով կրակեց իմ գլխավերևով ու ասաց. «Գիժ էրմանի, ոսկի՞ն, փո՞ղն է քաղցր, թե՞ կյանքը»:

-Իհարկե, կյանքը,- կրակոցից սթափվելով՝ ասացի ես:

-Երևում է, որ գիժ չես, այդքանը գոնե հասկանում ես: Հետևաբար պետք է լավ իմանաս, մեր հողում ինչ վաստակել ես, մեզ է պատկանում: Երեք օրից հետո էլ ձեզ այստեղից տկլոր ուղարկելու ենք Հայաստան, որ իրար միանաք: Ափսոս, որ դեռ արգելում են ձեզ սպանել, թե չէ քո դիակը կփռեմ դարպասի մոտ, կնոջդ էլ կտանեմ Ջեբրայիլ, որ մեր երիտասարդները շինեն (բռնաբարեն):

Նա ինձ դարպասի մոտ այնքան պահեց, որ իր ընկերները քրքջալով դուրս եկան բնակարանից, տանելով 6700 ռուբլի, 5 մատանի, մեկ մագնիտոֆոն, 10-15 տարբեր հագուստներ, 2 գորգ, 20 լ. թթի օղի, 40 կգ պանիր, 3 շիշ կոնյակ:

-Էրմանի, մի վախենա, մենք երախտամոռ չենք, քեզ համար էլ ենք տանը բան թողել: Իսկ հիմա այս դիմումը ստորագրի,-ասաց ինձ վրա պահակություն անողը:

Ես հրաժարվեցի դիմումը ստորագրելուց:

-Պետք չէ, գյուղից տեղափոխելիս ստորագրել կտանք, հիմա ժամանակ չկորցնենք, շտապենք մյուսների տները, թե չէ ոսկեղենը, փողը կթաքցնեն,-ասաց ոչխարի դեմքովը:

Եվ օդում կրակելով հեռացան իմ բակից:

Ալեքսանդր Հայրյան: Հինգ օմոնականներ են մտել մեր տուն: Նրանցից մեկը լպիրշ հայացքով նայելով կնոջս, դարձավ մյուսներին. «Ինձ այս գեղեցիկ կինն է պետք, դուք էլ ինչ ուզում եք վերցրեք, երևում է, որ հարուստ տուն է»:

Եվ նա բռնեց կնոջս թևից և ձգեց դեպի տան մի անկյուն, որ բռնաբարի: Կինս մի հուժկու հարված հասցնելով նրան, մի կերպ պոկվեց նրա ձեռքերից, փախավ դեպի փողոց: Վավաշոտ օմոնականը հետապնդեց նրան: Ես հասցրի նրա թևից բռնել, քաշել դեպի ինձ, ապտակ հասցնել նրա դեմքին: Նա ատրճանակը հանեց, կրակեց իմ գլխավերևով, ապա հետապնդեց իր որսին: Բարեբախտաբար, կինս թաքնվել էր նրա տեսադաշտից:

Այդ անհաջողությունից կատաղած՝ նրանք տունս տառացիորեն պլոկեցին:

-Ադրբեջանի հողը հարուստ է, ինչքան էլ որ տանենք, քեզ համար էլ մի բան կմնա,- ծաղրելով ասաց բարձրահասակ մի օմոնական:

-Եթե կինդ մի օրով ինձ տրամադրես, այս հարստությունը քեզ կվերադարձնենք,-ասաց կնոջս հետապնդողը:

-Ի՞նչ ես անում էրմանու կինը, այս հարստությամբ կարող ես Բաքվում, Սոչիում, Մոսկվայում կույսեր գնել, աջ ու ձախ վայելել,- նրան խայթեց տարիքավոր մի օմոնական:

Միևնույն է, այդ կինը իմ ձեռքից չի ազատվելու,- ասաց վավաշոտը:

Նրանց գնալուց հետո, կինս ուշ գիշերը դուրս եկավ թաքստոցից, եկավ տուն:

Սվետա Կարապետյան: Մի խումբ կանայք հավաքվել էինք կապի բաժանմունքում, որ շրջանի ղեկավարներին հայտնենք, թե ինչ են կատարում գյուղ խուժած օմոնականները: Դեռ չէինք կապվել նրանց հետ, երբ 10-15 օմոնականներ, փշրելով դուռը, ներս մտան, որ շրջկենտրոնի հետ կապն անջատեն: Կանայք դիմադրեցին նրանց, թույլ չտվեցին, որ կապը անջատեն:

-Լավ, չենք անջատի, միայն երկու պայմանով: Առաջինը մենք ենք հերթապահելու այստեղ, որ դուք շրջկենտրոնի հետ չկապվեք: Երկրորդ՝ դուք պետք է ստորագրեք մեզ մոտ գտնվող այս դիմումները, այլապես ձեզ տանելու ենք Ջեբրայիլ, ամեն մի կնոջ 10-15 երիտասարդ ենք հատկացնելու, որ ձեզ բռնաբարեն,- ասաց նրանցից մեկը:

-Ամոթ է, ձեր բռնած գործից ամաչեք, միթե՞ այդ ձևով են սովետն հանրապետություն ստեղծում,- ասաց Վիկտորյա Աղաջանյանը

-Զարափաթ ենք անում, դիմումները ստորագրեցեք,- պնդեց մեզ հետ խոսողը:

-Դուք խնդրում եք Պոլյանիչկոյին, որ ձեզ տեղափոխեն Հայաստան, որպեսզի ազատեք Ադրբեջանի հողը, որովհետև մենք արդեն յոթ միլիոն ժողովուրդ ենք, տեղ չունենք բոլ-բոլ ապրելու, ուստի դուք մեր հողից պետք է հեռանաք,- շարունակեց նա:

-Նախ այս հողը ձերը չէ, այլ հայերինն է: Մեր նախնիներն են գյու-

ղում դեռ 1145 թվականին սուրբ Աստվածածին եկեղեցի կառուցել և ոչ թե ձեր նախնիները: Մյուս կողմից՝ չինացիներն էլ են բազմացել, մեկ միլիարդից էլ շատացել, բայց ոչ մի ժողովրդի չեն ասում, որ իրենց հողից դուրս գան, գնան: Ժողովրդին աշխատանքով են պահում, բայց դուք թալանով եք ուզում պահել, ինչպես ձեր նախնիները և օսման թուրքերը, որոնք Փոքր Ասիայից վտարել են բոլոր բնիկ քրիստոնյաներին: Միլում, Մուղանում, Շիրվանում կարելի է 10-15 միլիոն մարդ կերակրել: Գնացեք այդ տարածքներում ինչ ուզում եք կատարեցեք, բայց մեր հողը մի պղծեք,- ասաց Գալյա Սարգսյանը:

-Այդ պրոպագանդայի համար քո ատամները Ջեբրայիլում հանել կտանք,- ասաց խմբի ատամանը և կարգադրեց, որ Գալյային ձերբակալեն:

Կանայք թափվեցին նրա գլխին: Փողոցի տղամարդիկ ևս ներս մտան: Տեսնելով, որ արյան հոտ է փչում այդ ընդհարումից, նա զիջեց. «Լավ, չեք ստորագրում, մի ստորագրեք: Միևնույն է, երեք օրից հետո բոլոր ծամձորցիներին այստեղից քշելու ենք, հիմա պետք է շտապենք, բոլոր տները ստուգենք, որ ցերեկով հեռանանք այստեղից»:

Էդուարդ Սարգսյան: Մինչև երեկոյան ժամը յոթը օմոնականները գրեթե բոլոր բնակիչների տները կողոպտել են: Բացի այդ, ջարդել, փշրել են նաև 55 տան փակ դռները, որոնց տերերը ապրում են երկրի տարբեր ռեգիոններում: Նրանց օրվա ավարը չափվում էր հետևյալ թվերով՝ 260 մատանի, 57 ձեռքի ժամացույց, 270 գորգ, 450 կարպետ, 790 կանացի և տղամարդու հագուստներ, 190 անկողին, 500-600 տարբեր ձևի ու չափի բյուրեղապակի և ամանեղեն, 5 մագնիտոֆոն, երեք ավտոմեքենա, 10 տրակտոր, 2 կոմբայն, 6 բեռնատար ավտոմեքենա, 900 լ. թթի օղի, 500 կգ մեղր, 167 պարկ ալյուր, 1,5 տոննա պանիր, 24 տոննա կարտոֆիլ, 50 տոննա հացահատիկ:

Հովսեփ Մելքումյան: Ստուգելով իմ անձնագիրը, չաղ մի օմոնական դառնալով խմբի ավագին, ասաց. «Այս մարդը Բաքվի ջարդից է ազատվել, իրենց գյուղը վերադարձել»:

-Քեզ ձերբակալելու ենք, որ Բաքվից վերադարձել ես Ղարաբաղ, նրա դեմոգրաֆիան փոխելու համար: Ուստի պետք է խոսք տաս, որ

մինչև երկու օրը այստեղից հեռանալու ես, ջհանամն ես գնալու,- իմ անձնագիրը թերթելով ասաց մի երիտասարդ լեյտենանտ:

-Ես Բաքուն թողել եմ ձեզ, որը հայերը, ռուսները, հրեաներն են ձեզ համար կառուցել: Իսկ դուք այն ժամանակ ձեր ոչխարի հոտերն էիք պահում սարերում ու դաշտավայրերում: Բայց ես հայրենի գյուղից ոչ մի տեղ չեմ գնա:

-Ղարաբաղյան շարժման առաջին իսկ օրերից մենք ԼՂԻ Մարզի ճանապարհները ամուր փակել ենք, որպեսզի Ադրբեջանի տարբեր բնակավայրերում ապրող ավելի քան 400 հազար հայերը, որոնք հիմնականում ղարաբաղցիների սերունդներից են, մարզ չվերադառնան, ինչպե՞ս է քեզ հաջողվել այստեղ գալ,- անձնագիրը շպրտելով գետնին փրփրեց լեյտենանտը:

-Իմ ընտանիքը այստեղ է փոխադրել ադրբեջանցի մի վարորդ, որը 20 տարի աշխատել է մեր կոլեկտիվում:

-Եթե նրա հասցեն ասես, ապա նրա գլուխը կկտրենք,- օձիքն արձակելով ասաց նա:

-Նախ հայը երախտամոռ չէ, որ իրեն լավություն անողին մատնի: Իսկ գլուխ կտրելով ոչ մի ազգ հաջողության չի հասել: Առավել ևս 21-րդ դարի նախադռանը դուք գլուխ կտրելով ոչ մի հաջողության չեք հասնի, սուվերեն պետություն դառնալ չեք կարող,- սառնասրտորեն ասացի ես:

-Երևում է, որ Բաքվի ջարդերը քեզ համար դաս չեն եղել: Քո լեզուն պիտի կտրենք, որ մեր սուվերեն հանրապետությանը ծաղրում ես,- ատրճանակը ուղղելով ճակատիս ասաց լեյտենանտը և շարունակեց: - Երեք օր քեզ ժամանակ ենք տալիս, որ այս տունը ազատես, որ այստեղ մսխեթի թուրքեր վերաբնակեցնենք:

-Մսխեթի թուրքերին կարող եք իրենց հայրենիքում վերաբնակեցնել, որպեսզի մեր մարզի, քո խոսքերով ասած դեմոգրաֆիան չփոխեք, հայկական մարզը ադրբեջանական մարզ չդարձնեք:

Լեյտենանտը չընդունեց իմ այս երկխոսությունը՝ ավտոմատով ուժեղ հարվածեց գլխիս, մի հարված էլ հասցնելով կնոջս, նրանք հեռացան իմ բակից:

Արծվիկ Ավետիսյան: Քանի որ խոսողները հիմնականում պատմեցին մայիսի 13-ի դեպքերի, գյուղի կողոպուտի ու թալանի մասին,

ես նպատակահարմար եմ գտնում անդրադառնալ գյուղի ինքնապաշտպանների գործունեությանը: Այդ թալանից հետո նրանք որոշել են այլևս թույլ չտալ, որ օմոնականները ոտք դնեն Ծամձոր: Մայիսի 16-ին և 17-ին նրանք և Ջեբրայիլում տեղակայված զորքերը զբաղված էին Առաքելի, Բանաձորի, Քարագլխի, Մուլքադարայի, Դոլանլարի, Արփագյադուկի, Ջիլանի և մյուս գյուղերի բռնագաղթով: Մենք գիտեինք, որ դրանից հետո հարվածի սլաքը ուղղվելու է Ծամձորին: Նախազգացումը մեզ չդավաճանեց: Օմոնականները մայիսի 17-ին և 18-ին փորձել են մտնել մեր գյուղ, բայց Մելիք Հովակիմյանի ջրաղացների մոտ հանդիպելով դիմադրության, վիրավորներ և զոհեր տալով՝ նահանջել են: Մայիսի 21-ին և 22-ին Առաքելում, Ցորում և Բանաձորում զինվորական պահակակետեր են ստեղծվել: Դրանք ընդամենը երեք օր են գործել: Թալանչիները և օմոնականները այդ կետերից դողում էին: Եվ մեր կողմերում այլևս նրանք չէին երևում: Սակայն բռնագաղթի աճպարար կազմակերպիչներին այս անգամ էլ հաջողվել է կենտրոնական իշխանություններին խաբել, ապակողմնորոշել: Մարզի արտակարգ շրջանի պարետը այդ պահակակետերը վերացրել է, որ թալանչիները մեր գյուղերը ավերեն:

Հերթը հասել է մեր գյուղին: Ինչ գնով էլ լինի, այն պետք է պաշտպանենք, այդպիսի եզրակացության եկան գյուղի ինքնապաշտպանները:

Առաջին հարվածը մեզ հասցրին մայիսի 26-ին: Այդ օրը դեղին ուղղաթիռը նախ կրակ է բացել մեր հարևան Քարագլուխ գյուղի վրա, բռնագաղթից հետո գյուղ վերադարձած երեք քարագլխեցիների՝ Վանյա Սարգսյանին, Հովիկ և Վարուժան Գասպարյաններին ձերբակալել, տարել են Ջեբրայիլ: Նրանց հետ գյուղում գտնվող Հենրիկ Ստեփանյանին հաջողվել է թաքնվել: Նույն օրվա երկրորդ կեսին այդ ուղղաթիռը գնդակոծել է մեր գյուղը: Նպատակը մեկն էր՝ ահաբեկել բնակչությանը, ինքնապաշտպաններին ստիպել, որ թողնեն գյուղի տարածքը: Սակայն օդից Ծամձորը գնդակոծելը դեռ նրա գրավումը չէր: Ուստի մենք սպասում էինք մայիսի 27-ի մարտին: Մեզ հաջողվեց (մեզ օգնության էին եկել շրջկենտրոնի ջահելները) օմոնականներին Կյենու քարի լանջում մեր ուժը ցույց տալ: Նրանք զոհերին և վիրավորներին տեղավորելով մեքենայում, ճողոպրեցին մեր տարածքից: Չեմ ուզում երկարացնել, բայց չեմ կարող չընդգծել, որ մինչև մայիսի 27-ը մենք թույլ չէինք տալիս, որ օմոնականները և թալանչիները գյուղը մտնեին: Արտակարգ դրության շրջանի պարետ Ն. Վ. Կրավչենկոյին էլ չէր հաջողվում մեզ ծուղակի մեջ գցել: Սակայն նա շրջանի ղեկավարների միջոցով մեզ ստիպեց, որ թողնենք ինքնապաշտպանության դիրքերը, գյուղի դռները բացենք օմոնականների առաջ, թե չէ արյունահեղություն է լինելու: Մենք այդ վճռից դժգոհ՝ թողեցինք Կյենու քարի դիրքերը: Մյուս օրը 100-120 օմոնականներ մտան գյուղ և նրա բնակչությանը վտարեցին իրենց օջախներից:

Ամսի 26-ին Ռ. Մամեդովը և Ն. Կրավչենկոն եկան մեր գյուղ: Նրանց տեսնելով՝ մենք զղջացինք, որ լսել ենք շրջանի անհեռատես ղեկավարներին և Ծամձորը առանց մի կրակոցի հանձնել թշնամուն:

Արամ Զաքարյան: Ես էլ եմ կիսում Արծվիկ Ավետիսյանի մտքերը: Այո, եթե Մելիքի ջրաղացի կողքի կամուրջը պայթեցվեր, Կյենու քարի լանջի ճանապարհը քանդվեր, ապա օմոնականները չէին կարող գյուղ մտնել: Փոխանակ շրջանի կարող ուժերին մոբիլիզացնեին, որ վերոհիշյալ տեղամասերում գիշեր ու զոր հերթապահեին, շրջանի ղեկավարները հայատյաց Կրավչենկոյի ձեռքին գործիք դառնալով՝ կարգադրեցին, որպեսզի ինքնապաշտպանները թողնեն դիրքերը:

Մեր 14 գյուղերի բռնագաղթի ժամանակ նրանց անգործությունը պետք է դարձնել քննարկման առարկա: Շրջանի համար վճռական այդ օրերին նրանք չէին փայլում իրենց խելքով, ճարպկությամբ, միայն մտահոգվում էին իրենց իրերը խոր թիկունք փոխադրելու մասին: Ինչևիցե: Մի քանի ժամվա ընթացքում օմոնականները Ծամձորը դատարկեցին իրենց բնակիչներից: Հունիսի 7-ի երեկոյան ես դեռ գյուղում էի, երբ իմ տուն մտան մի խումբ օմոնականներ:

-Այ քիշի, ինչու՞ դեռ գյուղում ես, քո կյանքից ձեռք ես քաշե՞լ,- դիմելով ինձ ասաց մի լեյտենանտ:

-Խնդրում եմ կարգին խոսես, ես հաշմանդամ եմ, ոչ ոք իրավունք չունի ինձ հայրենի տնից վռնդելու,-պատասխանեցի ես:

-Երևում է, որ այս մարդը գիժ է, -շարունակեց լեյտենանտը:

-Գիժը նա է, որ մարդկանց զենքի ուժով հեռացնում է իրենց օջախներից: Որ զենք վերցնելը գիտեք, ինչու՞ 1941-45 թվականների կռվի ժամանակ ձեր հարազատներից շատերը դասալիքներ են դարձել, իսկ մեր փոքրիկ մարզը 45 հազար մարդ է ուղարկել կռիվ,- չվախենալով նրանց արյունոտ հայացքից՝ ասացի ես:

-Արամ դայի,- մոտենալով ինձ ասաց ակնոցներով քողարկված միջահասակ մի մարդ,- խորհուրդ եմ տալիս, որ դու էլ գյուղից գնաս: Բոլորը գնացել են, դու մենակ այստեղ ի՞նչ ես անելու, ինչպե՞ս ես ապրելու:

-Սարմազ Զիրֆուղար օղլի՞,- ճանաչելով նրան՝ ասացի ես: Լեյտենանտը անակնկալի եկավ և մեղմ տոնով ասաց

-Սարմազին որտեղի՞ց ես ճանաչում:

-Սարմազի հայրը՝ Զիրֆուղար քիշին, պատերազմի տարիներին մեր գյուղի ջրաղացներից ալյուր մուրալով իր բազմանդամ ընտանիքը պահում էր: Այդ լավության համար նրա կրտսեր տղան այսօր ակնոցով քողարկված Ծամձոր է եկել, որպեսզի գյուղը հայաթափի: Ինչպիսի՜ երախտամոռություն:

Լեյտենանտը լռեց, իսկ Սարմազը շարունակեց.

-Արամ դայի, մենք մեղք չունեինք: Մեզ Զեբրայիլի միլպետ Մամեդովն է կարգադրել, որ Ծամձորն էլ ազատենք հայերից: Նրան էլ մինիստր Ասադովն է կարգադրել, նրան էլ Մութալիբովն է կարգադրել: Մութալիբովի հետ էլ Գորբաչովը համաձայնել է: Այնպես որ, ձեզ պետությունն է աքսորում ձեր օջախներից և ոչ թե ադրբեջանական ժողովուրդը: Ճիշտ ես ասում, որ պատերազմի տարիներին իմ հանգուցյալ հայրը ձեր ջրաղացների հաշվին է իր ընտանիքը պահել, բայց հիմա մենք իրար թշնամի ենք դարձել: Գորբաչովյան Մոսկվան է մեզ իրար դեմ գրգռել: Մենք էլ խելք չունենք, որ չորը գեջից ջոկենք:

Տիրեց երկարատև լռություն, որը խախտեց լեյտենանտը.

-Արամ քիշի, լավ, այսօր մնա, գիշերիր քո տանը, բայց վաղը պետք է գնաս այստեղից: Ես կկարգադրեմ, որ տղաներից մեկը քեզ օգնի:

Մյուս օրը՝ հունիսի 8-ին գյուղի կհոլներում թաքնված Ելենա Սարգսյանի, Ժենյա Զաքարյանի, Ռոզա Ղուկասյանի, Հերսիլե Հովսեփյանի, Ռոզա Գևորգյանի, Հայկանուշ Նարինյանի հետ դուրս եկանք գյուղից և ճանապարհվեցինք դեպի շրջկենտրոն: Կանայք ստեպ-ստեպ հետ նայելով՝ չէին կարողանում զսպել իրենց արցունքները: Հայրենի գյուղի կորուստի վշտից սեղմվել էր նաև իմ կոկորդը:

Բենիկ Մելիքյան: Հունիսի 8-ին Ծամձորը լրիվ դատարկված էր: Դպրոցի շենքը դարձնելով իրենց շտաբը, օմոնականները խորոված էին անում, տոնում հաղթանակը, երբ ինձ ու մորս բերին այդտեղ (մեզ գտել էին կհոլում թաքնված). նրանք խլել են իմ ձեռքի 560 ռուբլին և ստիպել, որ մեծ բաժակով օղի խմեմ: Թեկուզ ստամոքսի հիվանդություն ունեի, բայց օղին խմեցի, որ ազատվեմ նրանց ծաղր ու ծանակից: Մի բաժակ օղի էլ մորս են խմեցրել:

-Դուք ձեր ոտքով պատանդ եք մնացել,- ասաց մի կապիտան և մեզ բանտարկեց դպրոցի փայտանոցում: Այնտեղ մայր ու որդի մտորում էինք. «Ինչու՞ Ծամձորը պարտվեց»: Ես դրա համար մեղադրում էի մարզի ղեկավարներին, որոնք շուտ զարգացող իրադարձություններից համապատասխան հետևություն չէին անում, Հադրութի ինքնապաշտպանության մասին չէին մտածում, արտակարգ դրության պարետներից խաբվում էին...

-Այդ բոլորը ճիշտ է, բալաս, բայց մեր պարտության պատճառը նրա մեջ է, որ մենք նպաստել ենք մեր գյուղերի դատարկմանը, քանի որ մեր զավակներին անընդհատ օտարություն էինք ուղարկում: Եթե մեր գյուղից սերված ծամձորցիների գոնե կեսն այստեղ լիներ, ապա օմոնականները չէին հանդգնի մեր գյուղը մտնել: Մեր պապերը միշտ ասում էին. «Սահման՝ քաջանց, զենքը՝ յուրյանց»:

ՎԵՐՋԻՆ ՕՂԱԿԸ՝ ԹՆԴԱՆՈԹՆԵՐԸ ՈՒՂՂՎԱԾ ԵՆ ՇՐՋԿԵՆՏՐՈՆԻՆ

Ծամձորի անկումը Սարինշենի նվաճման սկիզբն էր, Ադրբեջանի իշխանությունների ծրագրած՝ Առաքել-Արփագյադուկ 14 գյուղերի հայաթափման շղթայի վերջին օղակը: Պետք է ըստ արժանվույն գնահատել թշնամու տակտիկան՝ խորհրդային բանակի ստորաբաժանումները դարձնելով իր հավատարիմ դաշնակիցը,

նրանց հավատացնելով, որ իր կռիվը խորհրդային կայսրության փրկության համար է, օգտագործելով նրա հզոր տեխնիկան՝ ուղղաթիռները, տանկերը, զրահամեքենաները, մեր 14 գյուղերը շրջանի մյուս բնակավայրերից մեկուսացրել է, հնարավորություն չի տվել, որ նրանք իր դեմ համատեղ ուժերով պայքարեն և բռնագաղթի, թալանի, կողոպուտի գործը իրականացրել է կազմակերպված՝ չհանդիպելով որևէ լուրջ դիմադրության: Այդ հաջողությունների ֆոնի վրա միանգամայն աղքատիկ, ամենախիստ դատապարտման է ենթակա մարզի, շրջանի ղեկավարների բռնած դիրքերը: Թշնամու կազմակերպվածությանը չկարողանալով ոչ մի բանով հակադրվել, նրանք Հյուսիսային Արցախի բոլոր հայկական բնակավայրերի, ամբողջ Շահումյանի շրջանի բռնագաղթերից և շրջանի գյուղերում անձնագրային ռեժիմի ստուգման բարբարոսություններից գլուխները կորցրել են՝ դարձյալ հույսները դրել արտակարգ դրության պարետների վրա, որոնք բացահայտ գործում էին Ադրբեջանի ՆԳ նախարարի աջ թևը հանդիսացող փոխգնդապետ Ռաշիդ Մամեդովի թելադրանքով:

Սարինշենում էլ մայիսի 13-ին անձնագրային ռեժիմի ստուգումը ուղեկցվել էր կողոպուտով, թալանով, նրա բնակիչների խոշտանգումներով, անասունների հափշտակումներով: Օրվա կողոպուտը, թալանը բարձելով ուղղաթիռը, օմոնականների ավազը սարինշենցիներին նախազգուշացրել է. «Ձեզ երեք օր ժամանակ ենք տալիս, գյուղից դուրս եկեք, ջհանամը գնացեք: Այս բարձունքում մի հայ էլ չպիտի մնա, որպեսզի մենք մեր կամքը թելադրենք ապստամբության օջախ Հադրութին: Ովքեր մնան այստեղ, Սումգայիթի հայերի պես ջարդվելու են»:

Շրջանից ոչ մի օգնություն չակնկալելով, սարինշենցիները այդ վերջնագրից հետո կանանց, երեխաներին էվակուացրել են շրջկենտրոն: Բնակիչներից ոմանք գյուղից տեղափոխել են նաև իրենց գույքի մի մասը: Բայց երբ Բանաձորում, Առաքելում և Ցորում մայիսի 21-22-ին զինվորական պահակակետեր են բացվել, շրջկենտրոնում ապաստան գտած սարինշենցիները նորից վերադարձել են իրենց գյուղը: «Մենք շրջկենտրոնից նորից մեր գույքը տեղափոխել ենք գյուղ, որովհետև համոզված էինք, որ զինվորական պահակակետերն այլևս թույլ չեն տա, որ օմոնականները նորից ներխուժեն մեր գյուղ»,- պատմում է Շահեն Գրիգորյանը:

Սակայն 3-4 օր հետո ԼՂԻ Մարզի արտակարգ շրջանի պարետի կարգադրությամբ այդ պահակակետերը անսպասելիորեն հանվել են, որ ոչ միայն հիասթափություն է առաջացրել գաղթականների մեջ, այլև մարել նրանց հավատը խորհրդային կարգերի, նրա զինվորների նկատմամբ: Այնուամենայնիվ, սարինշենցիները դեռ մնում էին գյուղում, որովհետև շղթայի մյուս ծայրում Ծամձոր կար, որը Ջեբրայիլից սպառնացող վտանգի դեմ իրենց համար պողպատակուռ վահան էր: Բայց երբ ծամձորցիները օմոնականների հալածանքների ու խոշտանգումների հետևանքով ստիպված թողնում էին իրենց օջախները տաք, Սարինշենի տարածքով շտապում շրջկենտրոն, նրանք ևս վճռեցին իրենց գլուխները փրկել: Հունիսի առաջին օրերին արտակարգ դրության շրջանի Հադրութի պարետ Ն. Վ. Կրավչենկոն յուրահատուկ հետաքրքրություն էր ցուցաբերում այս գյուղի նկատմամբ: Նա հաճախակի ուղղաթիռով գալիս էր Սարինշեն: Իր մի այցելության ժամանակ նա գյուղի բնակիչներին հաղորդել է, որ ազատեն գյուղը, որովհետև Բաքուն պլանավորել է հայերից ազատել նաև Սարինշենը:

-Ինչպե՞ս թե պլանավորել է,- զայրացավ ուսուցիչ, պատերազմի մասնակից Շահեն Հովսեփյանը,- ԽՍՀՄ-ի և Ադրբեջանի Սահմանադրության ո՞ր կետով է նախատեսված մարդկանց վտարել իրենց բնակության վայրերից, նրանց զրկել իրենց օջախներից, գույքից, ունեցվածքից, անասուններից: Եվ Ա. Մութալիբովն էլ հաճախակի կրկնում է, թե ԼՂԻ Մարզը Ադրբեջանի Սահմանադրությունը չի ընդունում: Եթե մի հնար լիներ, ես Ադրբեջանի Սահմանադրությունը նրա աչքը կխոթեի և կասեի՝ ցույց տուր աճպարար նախագահ, թե ձեր Սահմանադրության որ կետով է նախատեսվում ազգային թշնամանքի հունդեր սերմանելը, «Մա՜հ հայերին» կարգախոսով հանրահավաքներ կազմակերպելը, հայերին զանգվածաբար Սումգայիթում, Բաքվում, մյուս բնակավայրերում ջարդելը, հայկական մարզի գյուղերը հայաթափելը, էթնիկական մաքրում կատարելը: Ադրբեջանի բռնած այս գործը ոչ այլ ինչ է, եթե ոչ պետական տեռոր ու ցեղասպանություն:

-Հանգստացիր, վետերան,- սառնասրտորեն ասաց պարետը,- այժմ կռիվ է գնում երկու ժողովրդի միջև, իսկ կռվի ժամանակ ոչ թե Սահմանադրությամբ են առաջնորդվում, այլ զենքով: Եվ քանի որ օմոնականները զինված են, իսկ դուք՝ անզեն, ապա պետք է հեռանաք գյուղից, որպեսզի արյունահեղություն չլինի:

-Իսկ ներքին զորքերի ստորաբաժանումները ինչու՞ չեն պատժում մարդասպան օմոնականներին,- չզիջելով՝ ասաց ուսուցիչը:

-Մենք իրավունք չունենք փոխել Մութալիբովի, Պոլյանիչկոյի կարգադրությունը: Դուք էլ, վերջապես, հասկացեք, որ Ադրբեջանին հաջողվել է հսկա ԽՍՀՄ-ին կռվեցնել ձեր դեմ, իսկ ձեր ղեկավարներն էլ ինքնորոշման, քաղաքական անկախության տուտից բռնելով՝ ձեզ կործանման եզրին են կանգնեցրել: Իրականում Ադրբեջանն ավելի շուտ դուրս կգա ԽՍՀՄ-ի կազմից, քան Հայաստանը,- ասաց պարետը:

Հունիսի 4-ին ավելի քան 30 օմոնականներ, երկու զրահամեքենա շրջափակեցին Սարինշենը: Գյուղի կալերի հարթակում վայրէջք կատարեց ռազմական մի ուղղաթիռ: Այդ օրը օմոնականները ձերբակալեցին Իսահակ Ղազարյանին ու Շահեն Գիգորյանին և տարան Ջեբրայիլ: Նույն օրը նրանք գյուղից քշել տարել են 60 խոշոր եղջերավոր, 200 մանր եղջերավոր անասուններ: Ամբողջովին պլոկել, տարել են նաև սարինշենցիների գույքը, պարենային մթերքները: Ահա թե ինչից են զրկել գյուղի բնակիչներին այդ օրը: Ռաֆիկ Մնացականյանին՝ 2 գորգից, 4 կարպետից, 5 անկողնուց, 2 մատանուց, 2 շղթայից, 1 մագնիտոֆոնից, 1 հեռուստացույցից, մեկ սառնարանից, 25 կգ պանրից, 0,5 տոննա հացահատիկից: Նրա եղբայր Բորիկ Մնացականյանին՝ 0,5 տ հացահատիկից, 20 կգ պանրից, 2 մատանուց, 3 գորգից, 4 կարպետից, 6 անկողնուց: Շահեն Հովսեփյանին՝ 3 գորգից 2 մատանուց, 6 անկողնուց, 17 կգ պանրից: Մովսես Սարգսյանին՝ 2 գորգից, 2 մատանուց, 1 ժամացույցից, 6 անկողնուց: Շահեն Գրիգորյանին՝ 7 անկողնուց, 1 հեռուստացույցից, մեկ սառնարանից, 3 գորգից, 6 կարպետից, 21 կգ պանրից, 15 կգ յուղից և այլն: Բոլորը չես կարող թվարկել:

-Մյուս օրը,- պատմում է Ռաֆիկ Մնացականյանը,- ռազմական ուղղաթիռը նորից վայրէջք է կատարել գյուղում: Գրեթե բոլոր բնակիչները արդեն լքել էին գյուղը, իսկ ձերբակալվածները դեռ Ջեբրայիլում էին: Ես գյուղի վերևի թաղամասում գտնվող մեր տան կողքով կուզեկուզ փախչում էի, որ գնամ շրջկենտրոն, երբ իմ ճանապարհը փակեցին 7 օմոնականներ և քաղաքացիական հագուստով մի ադրբեջանցի, որը քողարկվել էր ակնոցով: Ես նրան ճանաչեցի, նա Յուխարի մազրա գյուղի բնակիչ Սարմազ Ռահիմովն էր: Գիտեի, որ մեր 14 գյուղերից ձերբակալվածների ցուցակը Սարմազն է կազմել, տվել շրջմիլպետին: Մի խոսքով, նա միլպետի արտահաստիքային ավագ խորհրդատուն էր: Ինքն էլ ինձ ճանաչեց: Քանի՜, քանի անգամ նա Ջեբրայիլի շրջհիվանդանոցի «Շտապ օգնություն» մեքենայով մեր գյուղն է եկել, բնակչությունից պանիր, մեղր, կարտոֆիլ, անասուն գնել, տարել սպեկուլյատիվ գներով Ջեբրայիլում վերավաճառել:

-Ռաֆիկ, մի վախենա, Սարմազն եմ,- ասաց նա և ձեռքը մեկնեց ինձ ու շարունակեց,- դու մեզ պետք է տանես հեռուստահաղորդումների ընդունման կայանը:

-Կայանը այստեղից երևում է, կարող եք ինքներդ գնալ,- ասացի ես և փորձեցի ազատվել նրանցից:

-Մենք քեզ մարդավարի առաջարկում ենք, որ մեզ առաջնորդես կայան, իսկ դու խոզություն ես անու՞մ,- ապտակելով ինձ ասաց մի կապիտան և ատրճանակը ուղղելով գլխիս ավելացրեց,- շուտ մեզ առաջնորդիր մինչև կայան, այլապես քեզ անգղի կեր կդարձնենք:

Ես չէի կարող չկատարել նրանց հրամանը:

-Առաջինը, էրմանի, դու մտիր կայան,-նրա դռան մոտ ասաց կապիտանը:

-Ինչու, դուք վախենո՞ւմ եք ներս մտնել, չէ՞ որ զինված եք,- հեգնեցի ես:

-Գիժ, էրմանի, ներս մտիր, թե չէ գլուխդ կկտրենք,-համառեց կապիտանը:

Ես բացեցի դուռը, ներս մտա:

-Պտտվի՛ր սարքավորումների շուրջը, ուշադիր նայիր, տես գրոհայիններ, զենք կա՞ն, թե՞ չէ,- մեղմ ասաց կապիտանը:

-Զենքը, գրոհայինները այստեղ ի՞նչ են անում,- ներսից ասացի ես:

-Մի խոսի՛ր, մեր հրամանը կատարիր,- ավելի մեղմ ասաց կապիտանը:

Ես պտտվեցի շենքի ներսում և ասացի. «Երևի ձեզ ասել են, թե շենքի ներսում ատոմային ռումբեր կան»:

Նրանք իմ հետևից մտան շենքի ներսը, զգույշ պտտվեցին սարքավորումների շուրջը և դուրս գալով՝ լկտիաբար ծիծաղելով, միաբերան ասացին. «Գիժ հայեր, պատերազմական այս պայմաններում փոխանակ այս բարձունքում հրթիռային հարթակ կառուցելու, հեռուստահաղորդումների ընդունման կայան են կառուցել, որ աշխարհի լուրերը լսելով՝ ավելի շաշանան...»:

-Ես հայերին լավ գիտեմ, մեր գիտությունների ակադեմիայի հանձնարարությամբ ուսումնասիրում էի հայոց պատմությունը, Երևանից համապատասխան տեղեկություններ հաղորդում Բաքվին,- միջամտեց խմբում գտնվող մի բարձրահասակ լեյտենանտ: -Հայոց Արտավազ անունով արքան փոխանակ իր հոր՝ Տիգրան 2-րդի աշխարհահռչակ կայսրության սահմանները ամրապնդելու՝ դրամաներ է գրել և հայկական հզոր թագավորության անկման անկյունաքարը դրել, հազար ողորմի նրան, այլապես դժվար է ասել, թե հետագա դեպքերը ու՞մ օգտին կդասավորվեին...

-Ռաֆիկ, անտառում գրոհայիններ չկա՞ն, կարո՞ղ ենք այստեղ խորոված անել, մեր հաղթանակը տոնել, որոհետև ԼՂԻ Մարզի Հադրութի շրջանը արդեն մեր ձեռքին է: Հետևաբար Ադրբեջանի կազմից դուրս եկող մարզը ճյուղահան է եղել, թուլացել, - ասաց կապիտանը:

-Չկան,- եղավ իմ պատասխանը:

Կես ժամ հետո դեղին ուղղաթիռն էլ վայրէջք կատարեց կայանի մոտ: Նրա մեջ էր արտակարգ շրջանի Հադրութի պարետը: Օմոնականները իսկույն մորթեցին ուղղաթիռով բերած երկու ոչխարը, քերթեցին, ապա խորովեցին թեժ կրակի վրա: Բոլորելով խորոված՝ շուրջը, սկսեցին գայլի ախորժակով ուտել: Ինձ էլ, որպես պատանդ, պահում էին իրենց մոտ: Երեք, թե չորս բաժակ կոնծելուց հետո, կապիտանը ոտքի ելնելով, ասաց.

-Հիմա պետք է խմենք ամենից ազիզ կենացը՝ Այազ Մութալիբովի կենացը, որ համարձակորեն, արհամարհելով միջազգային կարծիքը, մեր ազգի օգտին հայաթափել է մարզի հայկական 24 գյուղերը: Մենք էլ այդ սուրբ ծրագիրը կատարելիս միլիոնատեր ենք դարձել:

-Առաջարկում եմ խմել նաև էլմիրա խանում Կաֆարովայի կենացը,-ասաց մի լեյտենանտ: -Այդ նա է, որ ամեն անգամ Մոսկվայում Մ. Գորբաչովին սարսափի մեջ է պահում՝ ասելով, թե Հայաստանը իրավունք չունի խառնվելու Ադրբեջանի ներքին գործերին, անգամ եթե իր տարածքի բոլոր հայերին բնաջնջի: Այդ կնոջ հուշարձանը մեր ազգը պետք է կանգնեցնի Բաքվի՝ Կիրովի հուշարձանի տեղը:

-Այդ երկու կենացից չի կարելի բաժանել մեր թանկագին Ասադովի կենացը,- մի կերպ պահելով իր հավասարակշռությունը՝ ասաց մի գաճաճ օմոնական,-նրա խելքով է, որ մենք՝ նախկին հանցագործներս ու խաշնարածներս, ոչ միայն օմոնականների հագուստներ ենք հագել, այլև միլիոնատեր ենք դարձել: Ես արդեն 500 հազար ռուբլի եմ կորզել: Այսուհետև չեմ աշխատելու, գնալու եմ Մոսկվա, որ ռուս կույսերի հետ ջահելություն անեմ...

-Խելքը պակաս,- նրան հանդիմանեց մի ուրիշը,- Բաքվի կույսերը վա՞տ են, ինչու՞ մեր հարստությունը ուրիշներին տալ, չէ՞ որ արդեն շուկայական հարաբերությունների մեջ ենք մտել:

Մինչև արևի թեքվելը նրանք քեֆ էին անում, տոնում Սարինշենի գրավման, ԼՂԻ Մարզը ճյուղահան անելու հաղթանակը: Երբ նրանց գլուխները տաքացավ, մսավաճառի արտաքինով մի օմոնական, վեր կենալով և ատրճանակը ուղղելով դեպի ինձ, ասաց.

-Այս հաղթանակի համար մի էրմանի պետք է զոհենք...

-Ի՞նչ է ասում այդ գլուխը կորցրած օմոնականը, Սարմազ Զիրֆուղարովիչ,- դիմելով Ռահիմովին՝ ասաց Հադրութի պարետը:

Սարմազը, որ քեֆի ընթացքում խմիչք չէր օգտագործում, իսկույն ցատկեց տեղից, բռնեց ատրճանակն արդեն ինձ ուղղած օմոնականի ձեռքը, նրանից խլեց ատրճանակը և դառնալով պարետին՝ ասաց.

-Զարափաթ է անում, տովարիշչ կապիտան, ուզում է այս ջահել հային վախեցնել:

-Սարմազ, քանի դեռ ես այստեղ եմ, դու նրան ազատիր, թող գնա իրենց շրջկենտրոնը,- կարգադրեց պարետը:

-Ռաֆիկ, ես քեզ այդ հարբած օմոնականից փրկեցի, թե չէ մեր Ալ-

լահը ինձ կպատժեր, ինձ կկուրացներ, որովհետև ես ձեր տանը հաց եմ կերել, իսկ իմ հանգուցյալ հայրը, որ հայերի հետ հայերեն էր խոսում, պատերազմի ծանր տարիներին մեզ հայերի հացով է պահել, գնա, շուտ հեռացիր ձեր հարստություններով հղփացած այս օմոնական-չոբաններից,- երբ խարույկից բավականին հեռացել էինք ասաց Սարմազը:

Թշնամին գրավել էր Առաքել-Արփագյադուկ շղթայի վերջին օղակը: Թնդանոթներն ուղղված էին շրջկենտրոնին:

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻ ԴԺՈԽՔԸ ԿԱՄ ԴՐԱՄ ՇՈՐԹԵԼՈՒ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴ

Հետաքրքրասեր ընթերցողներ, այժմ ես ձեզ ուզում եմ տանել ձերբակալվածների հետքերով: Նախորդ հոդվածներից արդեն գիտեք, որ օմոնականները և ԽՍՀՄ-ի ներքին զորքերի ստորաբաժանումները գրոհայինների քողի տակ ԼՂԻ Մարզի բնակավայրերում անօրեն ձերբակալել, Ադրբեջանի տարբեր շրջկենտրոնների միլիցիայի բաժանմունքների մեկուսարանները, Շահբուլաղի, Շուշվա բանտերն են տարել հարյուրավոր երիտասարդների, աղջիկների, ջահել կանանց, աչքաբաց տղամարդկանց: Նրանց այնպիսի դաժան, անմարդկային տանջանքների են ենթարկել, կողոսկրները և երիկամները ջարդել, ամորձատել, որ մեծ գումարի միջոցով բանտից ազատվելուց հետո մահացել են կամ ցարդ տառապում են իրենց ճզմված մարմնի այս կամ այն մասի ցավից ու հյուծվում: Ես մարզդատախազության հրապարակում, որտեղ հավաքվում էին ձերբակալվածների հարազատները, միջնորդների հանդիպումը, նրանց միջոցով պահանջվող գումարները տալիս մարզդատախազությանը և պարետների գործակալներին, որ իրենց հարազատներին ազատեն Շահբուլաղի և Շուշվա բանտերից, մարզին հարող ադրբեջանական շրջկենտրոնների միլիցիայի մեկուսարաններից, հանդիպել եմ մի շարք տուժածների ու նրանց ծնողների հետ: Ադրբեջանի դատաքննչական մարմինների չինովնիկները, մարզդատախազության ղեկավարները, որոնք հիմնականում Մոսկվայից գործուղված իրավաբաններ էին, բանտերից ազատվածներին խիստ

կարգադրում էին, որպեսզի լրագրողներին ոչ մի տեղեկություն չտան, այլապես երկրորդ անգամ են բանտարկելու: Ուստի նրանք խուսափում էին ինձ հետ հարցազրույց ունենալուց, դա թողնելով մշուշոտ ապագային: Ես խոստանում էի նրանց անունները չհրապարակել, միայն թե նրանք մի քանի խոսքով պատմեին, թե բանտում իրենց ինչպիսի կտտանքների էին ենթարկել, ինչպես էին տանջել, ծանակել: Այդ ամենից հետո էլ շատերը հրաժարվեցին պատմել իրենց գլխով անցածի մասին: Սակայն մի քանիսը տղամարդ գտնվեցին և այս պարագայում ու պատմեցին իրենց տանջանքների ողիսականի մասին: Ինձ հետ հանդիպած բոլոր ձերբակալվածներին ես այսպիսի հարցեր էի տալիս՝ ինչու՞ են ձեզ ձերբակալել, ի՞նչ հանցանքի մեջ են ձեզ մեղադրել, քանի՞ օր են պահել մեկուսարանում և բանտում, ինչպիսի՞ տանջանքների են ենթարկել ձեզ, ի՞նչ գնով եք ազատվել, ինչպիսի՞ պատգամ են տվել մարզդատախազությունից դուրս գալիս: Ահավասիկ, ձերբակալվածների պատումների սղագրությունները.

Բորիս Սևյան: Ինձ, մեր գյուղը Գորիսի շրջան բռնագաղթելիս, Ջեբրայիլ քաղաքում ձերբակալել են, տարել դեպի շրջմիլիցիայի շենքը: Փողոցներում, տարբեր կողմերից ադրբեջանցիները մոտենում էին ինձ, թքում իմ դեմքին, աչքերիս մեջ և ինձ ուղեկցող օմոնականներին ասում. «Սա ցուլ է, այնքան պիտի ծեծենք, որ հորթ դառնա»:

-Լա՜վ, լա՜վ, հեռացե՛ք, մարդ չե՞ք տեսել,- ասում էին ինձ ուղեկցողները:

Սակայն նրանք նորից էին թքում իմ դեմքին, ինձ ամենակոպիտ բառերով վարկաբեկում: Ես չէի կարողանում սրբել երեսս: Շրջկենտրոնի չինարու մոտ մի մարդ մոտեցավ օմոնականներից մեկին, նրան մի գումար տվեց և ասաց. «Թող ես էլ իմ պատիվը տամ այս ցուլին»:

-Այստեղ չի կարելի, կգաս մեկուսարանում քո սրտի փափագը կկատարես,-պատասխանեց նա:

Քաղաքացին մի գումար էլ տալով, համառեց. «Թող այստեղ իմ գործը կատարեմ: Գալան իշա գառ յաղար (հետածգվող գործին ձյուն կգա)»

-Միայն շուտ,-համաձայնեց օմոնականը:

Եվ մարդը շան պես փողոցում ինձ վրա կյուզեց (միզեց), շորերս լրիվ թրջեց ու ասաց.

-Էրմանի, գնա, գիշերը հանգիստ քնիր:

Այդ վիճակում ինձ տարան մեկուսարան, որտեղ արդեն 10-15 հայեր կային:

-Այս ինչ հոտ ես բերել քեզ հետ,- ինձ դիմեցին կալանավորները:

Ես պատմեցի եղելությունը:

-Եթե դրանով բավարարվեն, լավ է,- ասաց խցի տղամարդկանցից մեկը,- երեկ ինձ մի միլիցիոներ պահածոյի տուփ է տվել ու ասել. «Էրմանի, խոզի սարդիլկա է, կեր»: Ինչ եք կարծում, ինչ է եղել այդ տուփի մեջ: Չեք կարող գուշակել՝ շան քաք: Ես տուփը դեն եմ նետել, բայց այնքան ծեծ կերել, որ հիմա էլ չեմ կարողանում տեղիցս շարժվել:

Մինչև առավոտ խցի բանտարկյալները պատմում էին, թե ինչպես են իրենց անպատվել, ծանակել: Ուսուցիչ Երվանդ Ղահրամանյանին ծեծել, փռել են հատակին, ասելով. «Դե, հիմա էլ գնա լեկցիա կարդա, թե ԼՂԻ Մարզը 1921 թվականի հուլիսի 5 ին ՌԿ(Բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի անօրեն որոշմամբ է միացվել Ադրբեջանին»: Կալանավորվածներից ոմանք քնեցին, իսկ ես մինչև առավոտ չկարողացա աչքերս փակել, որովհետև իմ հագուստից շան հոտ էր գալիս: Առավոտյան մեզ մի կտոր հաց և մի բաժակ ջուր տվեցին: Ինձ տարան քննիչի մոտ:

-Նստիր, խոզ էրմանի,- ինձ թունոտ հայացքով նայելով՝ ասաց քննիչը:

Ես նստեցի աթոռին:

-Դու գրոհայիննե՞ր ես պահել քո տանը, այդ էր նրա առաջին հարցը:

-Ոչ, հարգելի քննիչ,-ասացի ես:

Նա ներս հրավիրեց մի աժդահա օմոնականի և ասաց. «Ա՛յ ցուլ, էրմանուն այնքան ծեծիր, որ մոռանա «ոչ» բառը և իմ հարցերին միայն «այո»-ով պատասխանի»:

Աժդահան մի քանի հարված հասցրեց իմ մարմնին: Այդ հարվածներին հնարավոր չէր դիմանալ, ես փռվեցի գետնին, իմ քթից արյուն հոսեց: Աժդահան ինձ արդեն քացիներ էր տալիս: Մի հարված էլ իմ երիկամներին դիպավ, ես անշնչացա:

-Բավակա՛ն է, տար քիթ-մռութը լվա, հետո բեր ինձ մոտ,-ասաց քննիչը:

Կես ժամ հետո ինձ նորից տարան քննիչի մոտ:

-Դու երկու տարի քո տանը գրոհայիննե՞ր ես պահել,-հարցրեց նա:

-Այո,-հիշելով գայլի աչքերի մասին Վ. Այգեկցու առակը՝ ասացի ես:

-Որտե՞ղ ես թաքցրել զենքերը:

-Զենք չեմ ունեցել:

Նա նորից իր մոտ հրավիրեց աժդահային: Ներս մտնելով, դահիճը մասնագիտական վարպետությամբ դարձյալ ինձ ծեծեց: Ինձ՝ գիտակցությունս կորցրած, քննիչի առանձնասենյակից տարան խուցը: Ձերբակալվածներն ինձ մի կերպ ուշքի բերեցին և խիստ նախազգուշացրեցին. «Ոչ մի դեպքում բացասական պատասխան չտաս, թե չէ քեզ Ձեբրայիլում կթաղեն»

Կեսօրին ամենքիս համար մի աման պղտոր ջուր ու մի կտոր հաց բերեցին: Ձզվելով խմում էինք այդ ջուրը, որ մեր գոյությունը պահպանեինք:

Հաջորդ օրը քննիչի տրամադրությունը բարձր էր: Նա ժպտալով ասաց.

-Էրմանի, դուք խոզ եք, մենք՝ ոչխար: Խոզերին կառավարելը դժվար է, մեկը մի ուղղությամբ է գնում, մյուսը՝ այլ ուղղությամբ: Իսկ ոչխարի մեկը ուր գնում է, մյուսները հետևում են նրան: Ահա թե ինչու դուք ոչ մի արդյունքի չեք հասնի, թեկուզ արդարությունը ձեր կողմն է, որովհետև խոզ եք, իսկ մենք՝ ոչխար:

-Ճիշտ եք ասում, ընկեր քննիչ:

Հիմա ասա, թե որտեղ ես թաքցրել զենքերդ,- շարունակեց նա:

-Ընկեր քննիչ, խնդրում եմ կարգադրեք, որ այստեղից մի ավտոմատ տանեն մեր գյուղի մուտքի դարավոր, հաստաբուն ընկուզենու տակ թաքցնեն, ես էլ ասեմ, որ դա իմն է, որպեսզի այլևս ծեծ չուտեմ,- ասացի ես:

-Էրմանի, երևի զենք չունես, բայց քո խնդրանքը կկատարեմ, միայն պետք է ստորագրես, որ ավտոմատը քոնն է,- չզիջելով ասաց նա:

-Կստորագրեմ,- եղավ իմ պատասխանը:

-Քեզ ուղարկում եմ խուցը, վաղն էլ կուղարկեմ Շահբուլաղ, որ ավելի խելոքանաս: Հը՞, հայերը ինչի են նման, շուտ պատասխանիր,- աթոռից վեր կենալով ասաց նա:

-Խոզերի:

-Դե դուրս կորիր քո խոզի հոտով,- դուռը բացելով՝ ասաց նա:

Աժդահան ինձ տարավ խուցը:

Շահբուլաղի բանտը տանելիս ինձ ուղեկցող միլիցիոների գրպանը 25 ռուբլի խոթեցի և ասացի. «Գիտեմ, բոլոր ձերբակալվածներին Աղդամում ծեծում են, հետո տանում Շահբուլաղ: Թույլ չտաս, որ ինձ այնտեղ ծեծեն»:

-Եթե 75 ռուբլի էլ տաս, կարող եմ օգնել,- եղավ պատասխանը:

Ես նրա պահանջը կատարեցի:

Աղդամի շրջմիլիցիայի շենքի մոտ մի խումբ մարդասպաններ դիմավորելով Ջեբրայիլից եկած սև կառեթին, ասացին. «Այս ցուլին մոզի ենք դարձնելու»:

-Նաչալնիկը կարգադրել է, որ սրան ձեռք չտաք,- ասաց ինձանից 100 ռուբլի կորզած միլիցիոները:՝

Սակայն նրանք ինձ խլեցին նրա ձեռքից և մի լավ ջարդեցին: Իմ աղմուկի վրա մի բարձրաստիճան միլիցիոներ եկավ: Մարդասպանները հեռացան: Միլիցիայի պաշտոնյան թքեց դեմքիս, գնաց: Ինձ այդտեղից էլ տարան Շահբուլաղի բանտը, գցեցին մի խուց, որտեղ 12 հայեր կային մարզի տարբեր բնակավայրերից: Բոլորին էլ գրոհայիններ պահելու կամ զենք թաքցնելու մեղադրանքով էին բերել բանտ: Իրականում նրանցից և ոչ մեկը և այդ թվում՝ ես, ոչ զենք ենք թաքցրել, ոչ գրոհային պահել:

Մոտ 25 օր ինձ պահեցին այդ բանտ-դժոխքում: Մեզ ամեն օր ծեծում էին նրա վարժեցրած աշխատողները: Բացի այդ, Աղդամից էլ բանտ էին գալիս լոթի-փոթի «իգիթներ», նրա հերթապահներին կաշառում, մեզ խցից հանում, ծեծում, ծանակում: Նախաճաշին մի բաժակ թեյ, մի կտոր հաց էին տալիս: Մեզ ծաղրելու համար, երբեմն թեյի հետ շաքարի փոխարեն շան չորացած քաք էին տալիս: Ճաշին էլ մի բաժակ ջուր և մի կտոր հաց էին մատուցում: Ով մի ծպտուն էր հանում, բողոքում, տրտնջում, ծեծում էին, ամբողջ օրը աշխատեցնում՝ գիշերը թողնում սոված: Խցում այնքան շոգ էր, որ շունչներս կտրում էր: Նստում էինք մեկս մյուսի վրա հենված, որովհետև պառկելու և շարժվելու տեղ չկար: Ստեպ-ստեպ խցի աչքը բացում էին՝ կյուզ (մեզ) թափում մեզ վրա: Այդ հոտից խեղդվում էինք: Ամեն օր հակահայկական զրույցներ էին կազմակերպում մեզ համար: Նրանց միջով կարմիր թելի պես այն միտքն էր անցնում, որ հայերը կործանման ենթակա են, որովհետև արմատներ չունեն: Ղարաբաղի հայերը ոչ թե հայեր են, այլ ալբանացիների հետնորդներ, որոնք գողացել են նրանց եկեղեցիները, մշակույթը, հողը: Հայոց գիրը ալբանականից է Մեսրոպ Մաշտոցը գողացել: Եվ այսպիսի անհեթեթ այլ շատ բաներ էին ասում ձերբակալվածներիս: Այդ տեսաբան-գիտնականները մեզ մոտ էին գալիս Բաքվից, Աղդամից, նույնիսկ Հադրութի շրջանի Տող գյուղից: Տողեցի «դասախոսների» մեջ ես ճանաչեցի դպրոցի տնօրեն Նիյազ Ջհանգիրովին: Քանի՜-քանի անգամ նա Հադրութում կայացած հանդիսավոր ժողովներում ջերմ խոսքեր է շռայլել հայերի հասցեին, շեշտել, որ իրենք նրանցից շատ բաներ են ընդօրինակել: Իսկ հիմա էլ սրտի մաղձն է թափում հայերիս հասցեին: Մի անգամ մսավաճառի արտաքինով մի դասախոս մեզ ասաց, թե հայերը հնուց ի վեր ոչ մի բնագավառում և մանավանդ մարզական կյանքում չեն փայլել: Ձերբակալվածներից մեկը չհամբերելով, ասաց. «Հայերը աշխարհին շախմատի չեմպիոն Տիգրան Պետրոսյան, օլիմպիական չեմպիոններ Վլադիմիր Ենգիբարյանը, Հրանտ Շահինյան, ծանրամարտիկ Յուրի Վարդանյան և այլ մարզիկներ են տվել, իսկ դու՞ք ինչ էք տվել»: Նրան մեր ներկայությամբ այնքան ծեծեցին, որ անշնչացավ: Հետո նրան առանձնացրին մեզանից:

Չգիտեմ, թե ինչպես նրան «անհետացրեցին»: Չեմ ուզում այդ բանտի մասին իմ խոսքը երկարացնել: Ես ևս 20-րդ օրը արդեն չէի կարողանում ոտքիս վրա կանգնել: Լավ է, որ ինձ 25-րդ օրը փոխադրեցին Շուշիի բանտը: Այդտեղ ևս ձերբակալվածներին ծեծում էին, ծաղր ու ծանակի ենթարկում: Միաժամանակ պայմաններ էին ստեղծում, որ նրանք դրսի հետ կապվեին, հայտնեին իրենց հարազատներին, թե ինչքան գումարով կարող են ազատվել բանտից: Ինձ «փրկողները» հայտնել են, թե 35 հազար ռուբլի են պահանջում, որ ինձ, 30 օրը լրանալուց հետո, ազատեն բանտից: Ես իմ համաձայնու-

թյունն եմ տվել, թե չէ դիակս շան առաջը կգցեին: 32-րդ օրը ինձ ազատել են Շուշիի բանտից: Մարզդատախազը իմ ձեռքին այսպիսի մի փաստաթուղթ է դրել: Խնդրում եմ այդ մասին թերթում ոչ մի բան չհրապարակեք:

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է Բորիս Սևյանին այն մասին, որ նա անձնագրային ռեժիմի խախտման համար 17.05.91թ. մինչև 18.06.91թ. ադմինիստրատիվ կարգով ձերբակալվել է: Բորիս Սևյանը ուղարկվում է մշտական ապրելավայր ք. Երևան:

Մարզի դատախազ՝ Ի. Ա. Պլավսկի

Միայն այս փաստաթղթի համար Ի. Ա. Պլավսկուն կարելի է պատասխանատվության կանչել: Ի՞նչ իրավունքով է նա իմ անձնագիրը կեղծում, չէ՞ որ նրա մեջ գրանցված է, որ ես Հադրութի շրջանի Մուլքադարա գյուղի բնակիչ եմ և ոչ թե Երևան քաղաքի: Ի՞նչ իրավունքով է Պլավսկին ինձ վտարում մարզից, դրանով իսկ նպաստում Ա. Մութալիբովի՝ մարզը հայաթափելու ծրագրի կատարմանը:

Ալիկ Պետրոսյան: Ինձ ձերբակալել են մայիսի 13-ին և մի խումբ համագյուղացիների հետ տարել Զեբրայիլի շրջմիլիցիայի շենքը: Նրա հրապարակում հավաքված, նախօրոք հրահանգավորված մոլեռանդ թուրքերը իսկույն շրջապատել են կալանավորներին, ծաղրել նրանց, ասելով՝ «Էրմանիլար, ինչու՞ այստեղ եք, մի՞թե դեռ չեք միացել Հայաստանին»: Հետո նրանք մեզ քարկոծել են, ապա երկաթե ձողերով մեզ ծեծել: Մեր մեջ գտնվող կանանց ու աղջիկներին փորձել են հենց փողոցում բռնաբարել: Եթե նրանց ծվծվոցի վրա փողոց դուրս չգար միլպետը, ապա նրանք անասնաբար մեր կանանց կխայտառակեին: Տեսնելով նրան, հավաքվածները իսկույն ցրվել են, ասես գետնի տակ են մտել: Ինձ անմիջապես գցել են խուցը, որտեղ արդեն մի խումբ հայեր կային: Նրանցից շատերին ես գիտեի: Առավոտյան ինձ տարան մի երիտասարդ քննիչի մոտ: Նա ինձ արյունոտ աչքերով չափելուց հետո ասաց.

-Էրմանի, ձեզնից ոչ թագավոր կլինի, ոչ էլ զորավար, բայց դու մեքենայումդ ավտոմատ ես պահում, որ Հայոց թագավորությունը վերականգնե՞ս: Ո՞ր հրամանատարի ղեկավարությամբ ես կռվելու, չէ՞ որ, կրկնում եմ, հայերից զորավար չի լինի...

-Դու ինձ քննու՞մ ես, թե ազգային կրքեր ես բորբոքում: Աշխարհը քաջ գիտե հայ և՛ թագավորներին, և՛ զորավորներին, բայց որ սահմանափակ մի իրավաբան դա չի ճանաչում, դա էլ նրա մտավոր կարողության մակարդակն է ցույց տալիս,- հեգնեցի ես:

-Այդ պատասխանի համար դու մեր բանտերում փտելու ես,- սառնասրտորեն ասաց քննիչը և իր աշխատասենյակ կանչեց մի ածդահայի:

Ներս մտավ մսավաճառի արտաքինով մի միլիցիոներ, որի աչքերից, ասես, արյուն էր կաթում: Նա առաջին հարվածով ինձ տապալեց հատակին: Ու սկսեց կոշիկի ծայրով հարվածել իմ երիկամներին: Ես ցավից կծկվեցի և չիմացա, թե ինձ ուր տարան: Ուշքի եկա հաջորդ օրը: Ինձ մի բաժակ ջուր տվեցին և տարան քննիչի մոտ: Միջանցքում հանդիպեցի մի կալանավոր համագյուղացու: Նա տեսնելով իմ ջարդված տեսքը, հուշեց, որ քննչին չհակադրվեմ, թե չէ իմ դիակը Զեբրայիլում կգցեն շների առաջ:

-Հը՞, Էրմանի, անցյալ անգամ ասացիր, որ հայերից և՛ թագավոր կլինի, և՛ զորավար, որի համար լավ ջարդվեցիր: Այսօրվա հարցը սպորտի մասին է՝ հայերից շախմատիստ, սպորտսմեն կլինի՞,- քրքջալով ասաց նա:

-Ազնիվ խոսք, դու աշխարհից անտեղյակ մարդ ես, ուստի ես չեմ վստահում, որ դու ինձ հարցաքննում ես,- այս անգամ էլ խոսքի տակ չմնալով ասացի ես:

Նա այս անգամ էլ ներս հրավիրեց պրոֆեսիոնալ մարդասպանին: Նա ինձ դարձյալ փռեց հատակին: Ես գոռացի, դրսից օգնություն խնդրեցի: Քաղաքացիական հագուստով մի մարդ իմ ձայնի վրա դուռը բացեց:

-Ի՞նչ գոռոց է սա,-ասաց նա:

-Ինձ քննելու փոխարեն սպանում են, խնդրում եմ օգնեք,- անմիջապես ասացի ես:

-Մարդկանց խոշտանգելով սովերեն հանրապետություն կստեղծե՞ն: Միթե՞ չի կարելի կալանավորներին քաղաքավարի քննել: Ինչ անենք, որ հայ են,- ասաց ներս մտածը:

-Ներեցեք, յոլդաշ գեներալ,- դողալով ասաց քննիչը:

-Այսուհետև ոչ մի վայրենություն չանես,- ասաց գեներալը և դուռը փակելով՝ գնաց:

-Էրմանի, վեր կաց, աթոռին նստիր, հարցերիս պատասխանիր, որ արձանագրություն գրեմ, քեզ Շահբուլաղ ուղարկեմ, թե չէ գլխիս փորձանք ես բերելու,- միանգամայն նոր տոնով ասաց քննիչը:

Միլիցիոները ինձ նստեցրեց աթոռին և գնաց:

-Մեքենայումդ ինչու՞ ես ավտոմատ պահում,-ասաց քննիչը

-Իմ մեքենայում ոչ մի ավտոմատ չի եղել,-հանգիստ ասացի ես:

-Ես գեներալին չեմ ասել, որ դու համառում ես, թե չէ կկարգադրեր, որ քո գլուխը կտրեմ: Միևնույն է, իմ բոլոր հարցերին դրական պատասխան պետք է տաս, ասես, որ ավտոմատը ինքնապաշտպանության համար եմ պահել և այլն,-ինձ խրատելով՝ ասաց քննիչը:

-Մեքենայիս ավտոմատը ինքնապաշտպանության համար եմ պահել,- կրկնեցի նրա ասածները, որ ազատվեմ նրա տաղտուկ հարցերից:

-Խելքդ արդեն գլուխդ է գալիս, Էրմանի: Եթե չխոստանաս էլ, միևնույն է, ես արձանագրությունը իմ ցանկացած ձևով եմ գրելու: Այնպես որ, վաղը քեզ ուղարկելու եմ Շահբուլաղ: Այնտեղ միայն իմ դադիրը կիմանաս,- եզրակացրեց քննիչը:

Ներս մտավ միլիցիոները և ինձ տարավ խուց:

Շահբուլաղի բանտի մուտքի մոտ մի խումբ երիտասարդներ էին հավաքվել: Նրանք մեզ դիմավորեցին երկաթե ձողերի, գեջ փայտերի հարվածներով: Մեզ նրանցից ազատեցին արյունաթաթախ վիճակում: Առանց մեր վերքերին դարման դնելու, տարան բանտի խուցը: Ներսում տեղ չկար, որ շարժվեինք: Տասնեկու- տասնչորս բանտարկված հայեր կային ներսում: Շոգից ուղղակի խեղդվում էինք: Դուռը ծեծեցինք, տասը ռուբլի տվեցինք, որ մեզ համար ջուր բերեն:

-Տասը ռուբլին քիչ է, չէ՞ որ այժմ օր օրի գները աճում են, 25 ռուբլի տվեք,- ասաց դուռը բացող հերթապահ միլիցիոները:

Տվեցինք: 10-15 րոպե հետո մի դույլ ջուր բերեց և առաջարկեց, որ այն շուտ դատարկենք, որպեսզի մյուս տղաների համար էլ ջուր տանի, փող վաստակի: Ինձ Շահբուլաղի բանտում պահել են 15 օր, ապա փոխադրել Շուշիի բանտ: Երկու բանտերը և՛ նման են իրար, և՛ տարբեր: Նման են ծեծով, խոշտանգումներով, հայերի արժանապատվությունը ոտնահարելով, ազգային կրքեր բորբոքելով: Երկու բանտերի սնունդն էլ օրական մի-երկու բաժակ ջուր, մի կտոր չոր հաց և մի աման շաղ լակ էր: Շահբուլաղում երբեմն աշխատեցնում էին: Ամեն երեկո մեր դեմքերին, աչքերին թքում: Շուշվա բանտում դա առիթից առիթ էր կատարվում: Շահբուլաղի ռեժիմի դեմ բողոքել ենք: Որպես պատասխան՝ մեզ ոչ միայն ծեծել են, այլև մեզ սալյարկա են ներարկել: Այնտեղ շատ երիտասարդների ամորձատել են, որպեսզի նրանցից սերունդներ չլինեն, հայերը չաճեն, իսկ ադրբեջանցիները աճեն, նրանց կուլ տան:

15-16 օր էլ Շուշվա բանտում եմ մնացել, այն աստիճանի հյուծվել ու թուլացել, որ չէի կարողանում ոտքի վրա կանգնել: Կապվելով հարազատներիս հետ, ես հայտնել եմ, որ ինչ գումար էլ պահանջեն, տան, ինձ բանտից ազատեն: Երեսուն հազար ռուբլով ազատվելով, ես դուրս եկա լույս աշխարհ: Մարզդատախազ Ի. Ա. Պլավսկին ինձ ընդունելով՝ խիստ նախազգուշացրեց, որ մինչև 10 օրը թողնեմ Ղարաբաղի տերիտորիան, թեև իմ տուն-տեղս Հադրութի շրջանի Առաքել գյուղում էր: Հազիվ էի հասել Հադրութ, հարազատներիս տեսել, երբ ինձ իր մոտ կանչեց արտակարգ դրության շրջանի պարետը և նախազգուշացրեց, որ թողնեմ Ղարաբաղը: Ես չէի կարող նրա հրամանը չկատարել, որովհետև եթե նորից բանտ տանեին, այտեղ էլ կփտեի, քանի որ ի վիճակի չէի նորից 30-40 հազար ռուբլի վճարելու:

Կարո Հովսեփյան: Օմոնականները անձնագրային ռեժիմի ստուգման ժամանակ առանց որևէ պատճառաբանության առաջին հերթին ծերբակալում էին ղեկավար մարդկանց, տանում Ջեբրայիլ կամ Ֆիզուլի: Ինձ Ջեբրայիլ են տարել մայիսի 13-ին: Գյուղից հազիվ 100-120 մետր էինք հեռացել, երբ ինձ ուղեկցող օմոնականներից մեկն ասաց.«Նախագահ, 45 հազար ռուբլի տուր, քեզ ազատեմ, Ջեբրայիլ չտանեմ, միայն թե դու էլ մարզում չմնաս, Ռուսաստան գնաս, մանավանդ, որ կինդ էլ ռուս է»:

-Եթե ես Ռուսաստան գնացող լինեի, ապա այնտեղից չէի գա: Ես իմ հայրենի գյուղն եմ եկել, որ իմ զառամյալ ծնողների մոտ լինեմ,- առևտուր անողին ասացի ես:

-Հետո փոշմանելու ես: Նախագահի համար 45 հազար ռուբլին ինչ մեծ գումար է: Թող չլինի կոլխոզի 10-15 գլուխ խոշորը,- համառեց նա:

Ինձ տարեք Ջեբրայիլ, միևնույն է, ինձ ոչ մի հարցով չեն մեղադրելու,- ասացի ես:

-Մենք գիտենք, որ հայերը առհասարակ խելք չունեն, բայց նախանձում ենք նրանց խելքի վերջին փայլատակման համար, ցանկանում, որ մեր խելքն էլ այդպես փայլատակի: Դու Ջեբրայիլից ազատվելու համար առնվազը պետք է 200-250 հազար ռուբլի մուծես, ժլատ էրմանի,- ասաց նա և մինչև Ջեբրայիլ լռեց:

Այդ օրն էլ միլպետը ինձ ընդունեց և ասաց.

-Նախագահ, դու պետք է ձեր բնակիչների անունից ստորագրություն տաս, որ նրանք ցանկանում են կամավոր մեկնել Հայաստան:

-Ես այդպիսի ստորագրություն չեմ կարող տալ,- ասացի ես:

-Մի շտապիր, գնա խցում մտածիր: Եթե այդպիսի ստորագրություն տաս, ապա քո ընտանիքը մեր ծախսերով փոխադրելու եմ Հայաստան կամ Ռուսիա:

Եվ նա իր մոտ հրավիրեց մի միլիցիոների ու կարգադրեց, որ ինձ տանեն խուցը:

-Կասես, որ նախագահին ոչ ոք ձեռք չտա,- ինձ ուղեկցողին ասաց միլպետը:

Մյուս օրվա առավոտյան ինձ տարան քննիչի մոտ: Նա բավականին երիտասարդ էր, գաճաճ հասակով, նեղ ճակատով: Թունոտ հայացքով չափելով իմ ատլետիկ կառուցվածքը, նա ասաց.

-Նախագահ, միլպետի կարգադրությունը կատարե՞լ ես, ձեր համագյուղացիների անունից դիմում ես գրելո՞ւ, որ նրանք կամավոր ցանկանում են մեկնել Հայաստան, որովհետև ադրբեջանցիների կողքին այլևս չեն կարող ապրել, քանի որ նրանց հյուրասիրությունը ոտնահարել են, հակաադրբեջանական ցույցեր կազմակերպել...

-Ո՛չ:

-Խոզ էրմանի, միլպետը ցանկանում է քեզ լավություն անել, բայց դու քո խոզությունն ես ցույց տալիս: Այժմ պատասխանիր իմ հարցին, որպեսզի արձանագրություն գրեմ, քեզ Շահբուլաղի համալսարանը ուղարկեմ:

Եվ նա տվեց իր առաջին հարցերը:

-Քանի՞ գրոհային ես պահել գյուղում, ու՞մ հաշվին ես նրանց կերակրել: Ինչու՞ կոլխոզի միջոցները շռայլել ես նրանց համար:

Ես նրա այդ հարցերը ժխտեցի, ավելացնելով, որ ոչ գրոհայիններ եմ պահել, ոչ նրանց կերակրել, ոչ էլ կոլտնտեսության միջոցները շռայլել:

Քննիչը փրփրեց և ցատկեց նստած տեղից, ներս հրավիրեց մեկին, որը մսավաճառի պես չաղ, բայց միլիցիոների հագուստներում սքողված մի մարդ էր: Նա անմիջապես սկսեց ինձ ծեծել: Իմ մի պատասխան հարվածից մսավաճառը կուչ եկավ սենյակի մի անկյունում, բայց չկարողացավ հավասարակշռությունը պահել: Քննիչը կատաղեց: Ներս հրավիրեց չորս մարդասպանների: Նրանք միասնական ուժով ինձ տապալեցին հատակին և արյունաթաթախ տարան խուցը: Ներսի տղաները իմ հանդուգն քայլը դատապարտելով, ասացին, որ այլևս դատաքննչական աշխատողներին բացասական պատասխաններ չտամ:

Հաջորդ օրը քննիչը կարգադրեց, որ արձանագրությունը ստորագրեմ:

-Միևնույն է, էրմանի նախագահ, ինչ մենք ցանկանում ենք, այն էլ արձանագրում ենք,- մեկնաբանելով իր արարքները՝ ավելացրեց նա: - Առնվազը 30 օր Շահբուլաղի համալսարանում պետք է մնաս, որ խելքդ գա: Իսկ այնտեղ քո կեղտոտ ձեռքը կկտրեն, որ հանդգնել ես բարձրացնել մեր աշխատակցի վրա:

Մյուս օրն արդեն Շահբուլաղի բանտում էի: Ինչպիսի՜ անտանելի պայմաններ: Փոքր մի խցում իրար վրա խեղդվում էին 14-15 ձերբակալվածներ: Երիտասարդները զվարճանալու համար Աղդամից գալիս էին բանտ, մեր դեմքերին թքում, մեզ վրա միզում, շան քաք թափում: Օր օրի գինը բարձրացնելով՝ պահակները նրանց առաջ սիրով բացում էին բանտի խցերը: Ամեն քայլափոխի մեր արժանապատվությունը ոտնահարում էին: Մարտակերտի շրջանից էդիկ Ղուլյանին անպատվելու համար ասել են. «Ղարաբաղի եկեղեցիները, մյուս շինությունները մեր նախնիներ ալբաններն են կառուցել, որովհետև հայից շինարարներ չեն ծնվում: Հետագա դարերում նրանք մեր այդ եկեղեցիները գողացել են»:

-Ամարասի, Գանձասարի, մեր մյուս տաճարների վրա հայկական գրերով են գրված և ոչ թե ալբանական, թեև այդպիսի գրեր մինչև հիմա հայտնի չէ,- պատասխանել է նա:

-Այդ գրերն էլ Մեսրոպ քեշիշը գողացել է ալբանացիներից, դարձրել հայկական,- քոքռալով ասաց Աղդամից եկած դասախոս-անասնագողը:

-Այդ տրամաբանությամբ դուք կարող եք ասել, թե Բյուզանդիան փոքր Ասիայում չի փթթել, որովհետև այնտեղ հիմա Թուրքիան է կամ՝ Ռուսաստանը ոչ թե ռուսներինն է, այլ թաթար մոնղոլներինն է և այլ անհեթեթություն դուրս տալ,- չզիջելով ասաց էդիկը:

Այդ երկխոսությունից հետ նրան ծեծամահ են արել: Հանդուգն երիտասարդը շունչը փչելիս ասել է. «Եթե դուք հին ժողովուրդ լինեիք, ապա սեփական այբուբեն կունենայիք, որովհետև գրեթե բոլոր հին ժողովուրդները իրենց այբուբենը ունեն...»:

Ղուլյանի դիակը երեք օր պահել են բանտի բակում: Մեզ խումբ-խումբ տանում էին դիակի մոտ, 10-15 րոպե պահում այնտեղ, ասում. «Ով կփորձի մեզ հակադրվել կամ գանգատվել մեր ռեժիմից, ապա այս օրն ենք գցելու: Լավ իմացեք, մենք Մոսկվայից, Ամերիկայից չենք վախենում: Մենք սուվերեն հանրապետություն ենք, ոչ ոք իրավունք չունի խառնվելու մեր ներքին գործերին, մանավանդ, որ շատ պետություններ կախված են մեր նավթից ու գազից»:

Երկու ամիս ինձ պահեցին Շահբուլաղի և Շուշվա բանտերում: 200 հազար ռուբլի ստանալով՝ ինձ ազատեցին բանտից:

Մելիք Վարդանյան: Զինվորական ուղղաթիռը, վայրէջք կատարելով մեր Զիրակուս գյուղում, սարսափ և տագնապ առաջացրեց մարդկանց մեջ: «Աստված իմ, հիմա ու՞մ են ծերբակալելու»,-ասում էին բնակիչները, փախչում անտառները, թաքնվում: Ես դպրոցի կողքով գնում էի աշխատանքի, երբ զինվորները և օմոնականները ինձ շրջապատեցին:

-Մելիք Վարդանյանը դու՞ ես,- հարցրեց կարմիր գլխարկավոր մի սերժանտ:

-Ես եմ,- եղավ իմ պատասխանը:

-Քեզ ծերբակալում ենք, որ տանենք Ֆիզուլի, առանց որևէ աղմուկի շարժվիր դեպի ուղղաթիռը...

Եվ ինձ խոթելով ուղղաթիռի մեջ՝ տարան Ֆիզուլու շրջմիլիցիայի բաժանմունք: Այդտեղ ասեղ գցելու տեղ չկար:

-Զենք պատրաստող այդ ավազակին մեզ տվեք, որ գլուխը պոկենք,- այս ու այն կողմից դեպի ինձ գալով՝ ասում էին նրանք:

-Մեր հացը ուտում ես, զենք պատրաստում, որ մեզ բնաջնջե՞ն, խոզ էրմանի,- երկաթե ձողով իմ գլխին խփելով՝ ասաց ցուլի պես կատաղած մի մարդ:

Ազատելով ամբոխից՝ ինձ տարան շենքի ներսը: Բարձրահասակ մի գնդապետ ինձ ընդունեց իր աշխատասենյակում և թքեց դեմքիս, ասաց.

-Զենք պատրաստող, աշխարհ քանդող Մելիք Վարդանյանը դու՞ ես: Ամոթ քեզ: Ադրբեջանի հացը քեզ կուրացնելու է, խոզ էրմանի:

-Ընկեր գնդապետ, ես ոչ թե զենք եմ պատրաստում, այլ արձաններ քանդակում, որի համար ես պարգևատրվել եմ ԽՍՀՄ-ի ԺՏՆՑ ոսկե մեդալով: Դուք երևի ինձ ուրիշի հետ եք շփոթում,- իմ ստացած մեդալով հպարտանալով՝ ասացի ես:

-Քո պատրաստած արձանները զենքից էլ վտանգավոր են: Դու Սումգայիթյան թեմայով էլ արձաններ ես պատրաստել, ցույց տվել, որ ադրբեջանցիները միջնադարյան մեթոդներով իբրև ջարդել են հայերին, մինչդեռ մենք նրանց քաղաքավարի կերպով վտարել ենք մեր այդ քաղաքից, որ նրանց տներում մեր անօթևան ադրբեջանցիները բնակվեն,- նորից թքելով իմ դեմքին ասաց նա:

-Ոչ թե վտարել են, այլ իրոք երեք օր ջարդել են հայերին, ամբողջ աշխարհում Ադրբեջանի անունը խայտառակել,- սառնասրտորեն ռեպլիկ տվեցի ես:

Գնդապետը մեկեն կատաղեց, մի քանի հարված հասցրեց իմ մարմնին, ապա իր մոտ հրավիրեց մի միլիցիոների և ասաց. «Այս խոզին տար մեկուսարան, որպեսզի խելոքանա...»:

Մեկուսարանում արդեն մի քանի հայեր կային, որոնց Հադրութի շրջանի տարբեր գյուղերում ծերբակալել էին, բերել Ֆիզուլի:

-Մենք պետք է կարողանանք այստեղից ազատվել, այլապես Շահբուլաղի և Շուշվա բանտերում կփտենք,- ասաց նրանցից մեկը:

-Ինչպե՞ս,- հարցրի ես:

-Ես արդեն քննիչի հետ խոսել եմ: Նա խոստացել է 10-15 հազար

ռուբլով ինձ ազատել: Ես նրա հետ կխոսեմ, որ քեզ էլ ազատի: Միայն փրկագնի մասին դու պետք է խոսես,- բացատրեց կալանավորը:

Մյուս օրը ինձ տարան քննիչի մոտ:

-Ի՞նչ առաջարկեք, կկատարեմ, միայն իմ փաստաթղթերն այնպես կձևակերպեք, որ ինձ Շահբուլաղ կամ Շուշի չտանեն,- նրա մի շարք հարցերի պատասխանելուց հետո ասացի ես:

-Դժվար բան ես առաջարկում,- իր գինը բարձրացնելով ասաց քննիչը,- բայց մի բան կանեմ, միայն առնվազը 15 հազար ռուբլի է պետք: Գիտե՞ս, թե քանի՞, քանի պաշտոնյայի պետք է հյուրասիրեմ, գլխովն էլ մի բան տամ, որ թույլ տան քո գործը Շահբուլաղ չուղարկեմ:

Երկրորդ հանդիպման ժամանակ քննիչն ասաց.

-Քո գործը միայն մի պայմանով կարող եմ գլուխ բերել՝ այստեղից դուրս գալուց հետո պետք է թողնես ոչ միայն ձեր գյուղը, այլև Հայաստանի տարածքը, գնաս Ռուսաստան...

Ես նրա այդ փրկագնի պայմանը ընդունեցի: Մի քանի օրից հետո ինձ խորհուրդ տվող կալանավոր Խորեն Հայրապետյանին ազատեցին: Ես նրա միջոցով մերոնց հասկացնել տվի, որ քննիչի նշանակած վայրում հանդիպեն նրա ներկայացուցչի հետ, համապատասխան փրկագինը տան: Եվ հինգ օր մնալով Ֆիզուլու մեկուսարանում, ես ազատվեցի բանտից:

Վերադառնալով գյուղ, մտածմունքի մեջ ընկա՝ մնա՞լ գյուղում, թե՞ Ռուսաստան գնալ: Վճռեցի մի առ ժամանակ սպասեմ, տեսնեմ, թե իրադարձությունների անիվը դեպի ուր է պտտվում: Եթե բան է մի անգամ էլ ինձ ձերբակալեն, իսկ դա նրանք ցանկացած րոպեին կարող են անել, ապա չեմ կարող փրկագին տալ: Իսկ այն ձերբակալվածները, որ չեն կարողանում փրկագին վճարել, Շահբուլաղի ու Շուշվա բանտերում փտում են:

Ահա, թե ինչպես էին Ադրբեջանի իրավապահպան մարմինների չինովնիկները դրամ շորթում...

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՉԻՆՎՈՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՎԵՐՆԵՐ ԷԻՆ ԿԱՏԱՐՈՒՄ

ԼՂԻ Մարզում և նրա հարակից շրջաններում արտակարգ դրություն մտցնելով՝ կարմիր Կրեմլը բացահայտ մի նպատակ էր հետապնդում՝ ճնշել ղարաբաղյան շարժումը, զենքի ուժով նրա ազատաբաղձ բնակիչներին ստիպել, որ դարձյալ մնան Ադրբեջանի կազմում, կատարեն նրա իշխանությունների կամքը: Ոտք դնելով մարզի և այդ թվում՝ նրա Հադրութի շրջանի տերետորիայում, ԽՍՀՄ-ի ՆԳՆ ստորաբաժանումները, ֆուտբոլային տերմիններով ասած՝ միշտ մի դարպասի ուղղությամբ էին խաղում, անընդհատ հարվածում հայոց դարպասին, ադրբեջանական դարպասն անառիկ պահում: Որպեսզի ավելի կոնկրետ և համոզիչ լինի մեր խոսքը, դիմենք փաստերի: Քանի որ վերը խոսվել է Հադրութի 14 գյուղերի բռնագաղթերի մասին, փաստերն էլ բերենք Հադրութից:

Արտակարգ դրության ռեժիմը Հադրութի շրջանին մեկը մյուսի հետևից նենգ հարվածներ հասցնելով, վերջապես հասավ վերջնագծին՝ կազմալուծեց կուսշրջկոմը, նրա երիտասարդ ու եռանդուն առաջին քարտուղար Գրիշա Բաղյանին ստիպեց, որ թողնի մարզի տարածքը: Նա խնդրեց շրջանի պարետին, որ թույլ տա իրեն մնալու իր հայրենի Տումի գյուղում և այնտեղ աշխատել իր մասնագիտությամբ:

Այդ առիթով խորհրդակցելով իր վերադասի հետ, պարետը երկու օր հետո նրան պատասխանեց.

-Ադրբեջանի ՊԱԿ-ի կոմիտեն մեզ իրազեկ է դարձրել, որ ձեր համագյուղացի, ցարական բանակի նախկին սպա Թևան Ստեփանյանը 18-20-ական թվականներին, իր փոքրաթիվ հեծելազորով, ադրբեջանցիներին ու թուրք օկուպանտներին դաժան ձևերով հալածելով Լեռնային Ղարաբաղի հարավային տարածքներից ու Դաշտային Ղարաբաղից՝ քշում-տանում էր ընդհուպ մինչև Իրանի հյուսիսային սահմանները: Դուք էլ այժմ փոխանակ Ադրբեջանի կուսակցական գիծը պաշտպանելու, Թևանի նման հայերին եք պաշտպանում, հետևաբար թույլ չենք տա, որ մնաք մարզում: Եթե մինչև հինգ օրը ձեր ընտանիքով չտեղափոխվեք մարզից, ապա ձեզ ձերբակալելու եմ և ուղղաթիռով ուղարկելու եմ Բաքու...

Գ. Բաղյանին շրջանից վտարելուց հետո արտակարգ դրության Հադրութի պարետը Բաքվից կոմիսար Մ. Զուբկովին սվիններով վրա բերել է Հադրութ, նստեցրել հափշտակած կուսշրջկոմի շենքում, նրա անվտանգությունը ապահովել ավտոմատներով, ատրճանակներով ու դանակներով զինված հատուկ զինվորներով, շրջանի բոլոր լիազորությունները կենտրոնացրել նրա ձեռքերում, որպեսզի նա ջլատի մարզի միասնությունը, կարճ ժամանակամիջոցում շրջանի դեմոգրաֆիան փոխի, նրա ադրբեջանցի վերաբնակներին զինի Ստեփանակերտի դեմ կռվելու համար:

Զգալով, որ իրեն չեն ընդունում, Մ. Զուբկովը իսկույն ցույց է տվել իր «ուժը»՝ Ֆիզուլու շրջանում տեղակայված ՆԳՆ ստորաբաժանումների միջոցով 1991 թվականի հունիսի 14-ին անսպասելիորեն շրջափակել է Հադրութի շրջանի Խրմանջուղ գյուղը, մի խումբ երիտասարդների ձերբակալել, Ֆիզուլի տեղափոխել: Նախ, ի՞նչ իրավունքով են Ֆիզուլու շրջանում տեղակայված զորքերը շրջափակել Հադրութի շրջանի վարչական տարածքի մեջ մտնող գյուղը: Եթե, իրոք, անհրաժեշտ է այդ գյուղը շրջափակել, ապա դա կարող էին կատարել Հադրութում գտնվող զորքերը: Մյուս կողմից էլ՝ ձերբակալվածներին պետք է տանեին մարզի տարածքի մեկուսարանները և ոչ թե Ֆիզուլու մեկուսարանները: Այսպես, թե այնպես Մ. Զուբկովը «գործ» է ստեղծել և միաժամանակ միջամտել ձերբակալվածներից ոմանց ազատել: Սակայն նա անզոր է գտնվել Սարգիս և Վարազդատ Սարգսյանների, Բահադուր Թամրազյանի ազատման գործում՝ Ֆիզուլին նրանց նկատմամբ քրեական գործ է ստեղծել: Այնուհետև, Զուբկովը շինարարական մեծ աշխատանք է ծավալել շրջանի խառը բնակչություն ունեցող Նորաշեն, Տող, Հախուլու և Սալաքյարին գյուղերում: Այդ գյուղերում նրա կարգադրությամբ հիմնվել են նոր կոլտնտեսություններ, որոնք կարճ ժամանակամիջոցում նոր տեխնիկա, ավտոմեքենաներ են ստացել հանրապետության բազաներից և սկսել են մշակել հայերից ինքնագլուխ հափշտակած հողերը: Այդ գործողություններով Բաքուն Մ. Զուբկովի ձեռքերով պրակտիկ գործեր էր կատարում հապճեպ մարզի հարավի դեմոգրաֆիան փոխելու ուղղությամբ:

Շրջափակման չորս տարում ադրբեջանցի զինված ավազակախմբերը հափշտակում, տանում էին շրջանի տնտեսությունների և բնակչության անձնական անասունները: Սակայն զինվորները ոչ մի միջոցառումներ չէին իրականացնում այդ հանցագործություններին վերջ տալու համար: Ընդհակառակը՝ նրանք սիստեմատիկաբար սանրում էին հայկական գյուղերը, ֆերմաների պահակներին զրկում նույնիսկ որսորդական հրացաններից, դրանով իսկ նպաստում, որ ադրբեջանցիները հայերի անասունները, տեխնիկան հափշտակեին: Նրանք արգելում էին մարզի գյուղերում Հայաստանից եկող ուղղաթիռների վայրէջքը, մինչդեռ մարզի ադրբեջանական գյուղերում Բաքվից ուղարկած ուղղաթիռների համար կանաչ ճանապարհ էին բացում: Սալաքյաթին գյուղում, օրինակ, ամեն օր ուղղաթիռներ էին վայրէջք կատարում, բայց արտակարգ դրության պարետատունը թույլ չէր տալիս, որ նրա հարևան Դրախտիկ գյուղում ուղղաթիռ վայրէջք կատարի: Գրոհայիններ որոնելու նպատակով զինվորները հաճախակի ստուգում էին հայկական գյուղերը, ադրբեջանական գյուղերը թողնում անձեռնմխելի: Շրջանի հարավ-արևմտյան տարածքի գյուղերի բռնագաղթի նախօրեին զինվորական պարետատները լրիվ անցել էին ադրբեջանական մաֆիայի կողմը: Սահմանադրության անունից խոսող արտակարգ դրության ռեժիմի զինվորական հրամանատարները գործում էին միջնադարյան օրենքներով: Չվախենալով, որ երբևէ իրենց արարքների համար դատապարտվելու են, նրանք ռազմական տեխնիկան տրամադրում էին ադրբեջանցիներին, որ անզեն հայերին հալածեն, ձերբակալեն, նրանց ունեցվածքը թալանեն, հափշտակեն: Հայկական գյուղերի բռնատեղահանության ասպարեզում առանձնապես ակտիվ էին գործում արտակարգ շրջանի Հադրութի պարետ Ն. Վ. Կրավչենկոն և նրա քաղբաժնի պետ Վ. Ա.Կաբաչկոն: Մութ գործարքի մեջ մտնելով ազերի չինովնիկների հետ՝ նրանք հայաթափել են Խանձաձոր, Ծամձոր, Ցոր, Սարիհշեն գյուղերը և հետևաբար թալանչիների առաջ կանաչ ճանապարհ բացել:

Ուղղաթիռի շրջկենտրոնի վայրէջքի հրապարակում Վ. Ա. Կաբաչկոն հաճախակի էր հանդիպում գաղթականների հետ, «բոցավառ ագիտացիա» անում, որ նրանք Ղարաբաղից դուրս գան, գնան: «Ես ձեզ համար կարող եմ Աղդամից հատուկ ուղղաթիռներ բերել տալ,

որ ձեզ մինչև Գորիս տեղափոխեն: Գնացեք ձեր հայերի մեջ ապրեցեք, ի՞նչ կա այս կռվածաղիկ երկրամասում»,- ասում էր նա: Իսկ, երբ գլուխը տաքացած էր լինում (բայց ե՞րբ չէր լինում տաքացած) ասում էր՝ «Չկա՛ հայ, չկա՛ պրոբլեմ»:

Ստորև ներկայացնում եմ նրա հարցազրույցը, որ ինձ հաջողվել է կորզել նրանից մարզային թերթում հրապարակելու համար: Սակայն կապվելով Վ. Պոլյանիչկոյի շտաբի հետ, նա պահանջել է, որ հարցազրույցը չհրապարակվի:

«ՄԵՆՔ ՁԻՆՎՈՐՆԵՐ ԵՆՔ, ՀՐԱՄԱՆ ԵՆՔ ԿԱՏԱՐՈՒՄ...»

Լրագրող: Վալերի Ալեքսանդրովիչ, դուք ի՞նչ գնահատական եք տալիս հայերին զենքի ուժով Առաքել, Բանաձոր, Բինյաթլու, Ջիլան, Քարագլուխ, Մուլքադարա, Դոլանլար, Խանձաձոր, Արփագյադուկ, Սպիտակաշեն, Պետրոսաշեն, Ցոր, Ծամձոր, Սարինշեն գյուղերից բռնագաղթելու փաստին:

Վ. Ա: Այդ փաստի գնահատականը թողնենք քաղաքական գործիչներին, նրանց, ովքեր մշակել են այդ ծրագիրը: Ադրբեջանի իշխանությունները այդ ծայրահեղ միջոցառումը հիմնավորում են ոչխարի հոտերը հանրապետության դաշտային շրջաններից ամառային յայլաղները ապահով տեղափոխմամբ, Լաչինի ձորահովիտում գյուղատնտեսական աշխատանքների անխափան կատարման թելադրանքով: Մենք շրջանի ղեկավարների առաջ վաղօրոք խնդիր ենք դրել, որպեսզի իրենք իրենց ուժերով կազմակերպեն այդ գյուղերի բնակչության տեղահանումը, որ ամեն ինչ անցներ խաղաղ, առանց զոհերի: Մեր այդ պահանջը նրանք չեն կատարել, դրա համար գործին խառնվել է օմոնը: Իսկ թե ի՞նչ է կատարվել այդ գյուղերում, բոլորին արդեն հայտնի է:

Լրագրող: Ոչ միայն ԽՍՀՄ-ի Սահմանադրությամբ, այլև արտակարգ դրության ռեժիմի օրենքներով չեն նախատեսվում բնակչության բռնագաղթեր կատարելը:

Վ. Ա.: Գիտենք: Սակայն հիմա, փաստորեն, պատերազմ է երկու ժողովուրդների միջև: Դրա համար շրջանի ղեկավարները պիտի մեզ լսեին, բնակչությանը տեղափոխեին Հայաստան, հետո միայն հարց

բարձրացնեին, թե ովքեր են խաղում իրենց ճակատագրով: Պատերազմում զենքով են պաշտպանվում և ոչ թե Սահմանադրությամբ, միջազգային նորմերով:

Լրագրող: Ահա երեք տարի է, որ մարզին հարող ադրբեջանական գյուղերի բնակիչները թույլ չեն տալիս հայերին, որպեսզի գյուղատնտեսական աշխատանքներ կատարեն դաշտային գոտիներում: Մասնավորապես, Հադրութի շրջանից ադրբեջանցիները բռնագրավել են ավելի քան 19719 հեկտար վարելահողեր: Ինչու՞ հայկական գյուղերի օրինակով ադրբեջանական գյուղերի բնակիչներին էլ չեք բռնագաղթում, որպեսզի հայերը իրենց հողում ապահով գյուղատնտեսական աշխատանքներ ծավալեն:

Վ. Ա.: Բնակչության բռնագաղթերի ծրագրերը ոչ թե արտակարգ դրության պարետատներն են մշակում, այլ պետական մասշտաբով է ծրագրվում: Մենք զինվորներ ենք, հրաման ենք կատարում...

Լրագրող: -Ի՞նչ է սպասվում իրենց օջախներից վտարված հայերին:

Վ. Ա.: Եթե մեզ հրաման տան, որ նրանց վերադարձնենք իրենց գյուղերը, ապա դա կկատարենք մեկ-երկու օրվա ընթացքում: Քանի որ դեռ այդպիսի հրաման չկա, իրենց դարավոր հողից պոկված այդ մարդկանց ճակատագրի մասին ոչինչ չեմ կարող ասել:

Լրագրող: Արտակարգ դրության պայմաններում ամեն ինչ կատարվում է ներքին զորքերի հրամանատարության թույլտվությամբ: Ինչու՞ օմոնականները ձեր թիկունքում հանցագործություններ, անօրինական բաներ են կատարում, թալանում ու կողոպտում հայկական բնակավայրերը, բայց մնում անպատիժ:

Վ. Ա.: Օմոնականները պետականորեն կազմակերպված միավորումներ են: Այնուամենայնիվ, նրանք իրենց գործողությունները պետք է համաձայնեցնեն մեզ հետ: Ոչինչ էլ չենք կարող կատարել, որ նրանք մեզ չեն լսում... Մենք չենք կարող մի խումբ ապստամբների պատճառով մեր զինվորների արյունը հեղել:

Լրագրող: Ի՞նչ կարող եք ասել մարզի բնակավայրերից ծերբակալած, Ադրբեջանի տարբեր մեկուսարաններում ու բանտերում գտնվող հարյուրավոր հայ երիտասարդների ճակատագրերի մասին:

Վ. Ա.: Մենք լավագույն դեպքում նրանց հարազատներին իրազեկ ենք դարձնում, թե ադրբեջանական որ բնակավայրերում է իրենց ձերբակալված հարազատը: Թե ի՞նչ է սպասվում նրանց, ի՞նչ է կատարվելու նրանց հետ, Ադրբեջանի իշխանությունների գործն է...

Այս հարցազրույցի ոգուց դժվար չէ կռահել, թե ինչ դիրքորոշում է բռնել արտակարգ դրության պարետատունը շրջանի 14 գյուղերի բռնագաղթման ժամանակաշրջանում:

Օգոստոսյան խռովության ճնշումից հետո էլ արտակարգ դրության Հադրութի պարետատունը ոչ մի բան չէր ձեռնարկում գաղթականներին իրենց բնակավայրերը վերադարձնելու համար:

-Մենք չենք կարող այս լեռներում զինվորների արյունը հեղել, հայկական գյուղերը օմոնականներից ազատելու համար, որովհետև նրանց ծնողները պահանջում են, որ իրենց զավակներին չօգտագործենք ազգային կոնֆլիկտների ռեգիոններում,- ամեն անգամ շրջկենտրոնում ապաստան գտած գաղթականների բողոքներին սառնասրտորեն պատասխանում էին պարետատան ստեպ-ստեպ փոխվող ղեկավարները:

-Զինվորների ծնողները միանգամայն ճիշտ են բողոքում: Սակայն դուք ռազմական տեխնիկայով օմոնականներին թիկունք եք դարձել, մեր գյուղերը ավերել, մեզ զրկել մեր տաք օջախներից: Այն ժամանակ զինվորների ծնողները չէի՞ն բողոքում: Ինչու՞ այն ժամանակ նրանց բողոքը արհամարհել եք, իսկ այժմ հարգում եք: Այդ չի՞ ասում այն մասին, որ դուք շահագրգռված եք միայն ադրբեջանական կողմի շահը պաշտպանելու մեջ,- պարետատներին, մյուս զինվորական ղեկավարներին ասում էին ցասումով լի գաղթականները:

Արդարև, ԽՍՀՄ-ի ՆԳՆ զինվորական ստորաբաժանումները ԼՂԻ Մարզում 1988-1991 թվականներին քաղաքական պատվերներ էին կատարում՝ անընդհատ հարվածում հայկական դարպասին...

ՈՎՔԵ՞Ր ԷԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒՄ ԹԱԼԱՆՉԻՆԵՐԻՆ

Իրականացնելով ԼՂԻ Մարզի Հադրութի ու Շուշվա շրջանների 24 գյուղերի բռնատեղահանության ծրագիրը, Ադրբեջանի իշխանություններն առնվազը երկու նպատակ էին հետապնդում: Նախ հայաթափել ստրատեգիական այդ կարևոր տարածքները՝ Հայաստանի և ԼՂԻ Մարզի միջև ստեղծված միջանցքը ևս 40-45 կմ լայնացնել, այսինքն՝ քաղաքական նոր խառը պայմաններում շարունակել 1918-1920 թվականների մուսավաթների և թուրք օկուպանտների այդ ասպարեզում դեռ կիսատ թողած գործը: Մյուս կողմից էլ նրանք ձգտում էին այդ գյուղերի թալանի հաշվին ոսկի կուտակել, լավ գիտակցելով, որ շողշողուն այդ մետաղը քաղաքականության մեջ և մանավանդ պատերազմում միշտ էլ ծանրակշիռ, վճռական դեր է խաղում, նժարը թեքում իր կողմը, ոտնահարում օրենքները, միջազգային նորմերը, բարոյականությունը, արդարությունը:

Այդ հանգամանքները հաշվի առնելով՝ Ադրբեջանի իշխանություններն անընդհատ ադրբեջանցիների ազգային կրքերը բորբոքում էին հակահայկական գործեր կատարելու համար:

Այս հոդվածաշարի նախաբանում արդեն շեշտվել է, թե 1988-91 թվականներին ադրբեջանցիները Հադրութի շրջանից ինչքան խոշոր և մանր եղջերավոր անասուններ են հափշտակել, բռնագրավել շրջանի հողահանդակները: Այս հոդվածում, մասնավորապես, խոսք է ասվելու բռնատեղահան արված 14 գյուղերի բնակչության, այդտեղ գործող չորս կոլտնտեսությունների, երկու խորհտնտեսության, մշակույթի օջախների, կապի բաժանմունքների, բուժհիմնարկների, հասարակական սննդի կետերի, կրթօջախների կողոպուտի, թալանի մասին:

Ճիշտ է, մեր նախորդ հոդվածներում այսպես, թե այնպես անդրադարձել ենք դրան, ցույց տվել, թե ովքե՞ր էին թալանչիները, ուստի այս հոդվածներում նրանց անունները նորից չեմ կրկնի, միայն կձգտեմ պարզաբանել մի կարևոր խնդիր՝ թե ինչպե՞ս էր կազմակերպվում թալանն ու կողոպուտը...

Ջեբրայիլի շրջմիլպետ Ռաշիդ Մամեդովի՝ ձերբակալվածների ու թալանի գծով գլխավոր օգնականն ու խորհրդատուն Սարմազ Զիր-

ֆուղար օղլի Ռահիմովն էր: Ինչպես էր կատարվում այդ գործը՝ տարերայնորե՞ն, թե՞ կազմակերպված: Բոլոր փաստերը վկայում են, որ կողոպուտի ու թալանի մեխանիզմը ևս մշակել է Ադրբեջանի ՆԳ նախարար Մ. Ասադովը: Իսկ Ջեբրայիլի միլպետ Ռաշիդ Մամեդովն էլ այդ ծրագիրը ևս կատարում էր հստակ, մեծ վարպետությամբ:

Նա նախօրեին, ինչպես վկայում են ականատեսները, իր աշխատողներին գործուղում էր շրջանի գյուղերը, որպեսզի բնակչությանը նախապատրաստեն նշանակված ժամին ավտոմեքենաներով, տրակտորներով, ձիերով, էշերով գնան հայկական թալանի ենթակա գյուղը, նրա բնակչության գույքը, ունեցվածքը, պարենային մթերքները, անասունները կողոպտեն, թալանեն: Տները քանդեն, ջարդեն, սրբություններ պղծեն, այլանդակեն, որպեսզի հայերը այլևս չվերադառնան իրենց գյուղերը, գնան Հայաստան:

-Մամեդովը կարգադրել է, որ թալանից բացակայողները խիստ պատժվելու են: Այդ գյուղերի քարը քարի վրա չթողնեք, որպեսզի հայերը երբեք չփորձեն իրենց օջախները վերադառնալ,- ամեն անգամ ընդհանրացնելով թալանչիների հավաքի արդյունքները՝ ասում էր միլպետի ներկայացուցիչը և անմիջապես ավելացնում. -Հայերի ունեցվածքը մենակ չուտեք: Դրանից բոլորին՝ Բաքվի սոված բանվորներին էլ, Մոսկվայի մեր հովանավորողներին էլ, սուվերեն պետության մեր ազգի ղեկավարներին էլ, մեր տաղանդավոր բանաստեղծներին էլ, լրագրողներին էլ փայ է հասնում: Այդ փայը մեզ պիտի տաք, որ մենք էլ նրանց հասցնենք...:

Օմոնականները և ԽՍՀՄ-ի ՆԳՆ ստորաբաժանումները ապահովում էին թալանչիների անվտանգ, բեղմնավոր գործողությունները: Նրանք նախ ռազմական տեխնիկայով հայերին բռնատեղահան էին անում, ապա թալանչիներին կարգադրում, որ գործի անցնեն, իսկ իրենք շրջապատում էին գյուղերը, թույլ չէի տալիս, որ դրսից որևէ ուժ խանգարի նրանց: Բռնատեղահան արված գյուղերի բնակչության ունեցվածքի առյուծի բաժինը օմոնականները կողոպտել էին, այսպես կոչված, անձնագրային ռեժիմի ստուգման ընթացքում: Թալանը այնպիսի բարձր մակարդակով էր կազմակերպված, որ ամբոխը երեք-չորս օրվա ընթացքում, այսինքն՝ մայիսի 16-ից մինչև 19-ը հիմնականում պլոկել էին հայաթափ գյուղերի տները: Բոլոր գյուղերում մնացել էին միայն բնակարանների մերկ պատերը: Ինչը չէին կարողացել տանել, ջարդել էին: Միաժամանակ պղծել էին գերեզմանները, շերեփավոր տրակտորներով քանդել դրանք, հանգուցյալների ոսկե ատամները հանել: Հայրենական պատերազմի վետերան, բժիշկ Սամվել Գրիգորյանը պատմեց, որ իր հայրենի Խանձաձոր գյուղում օմոնականները հանել էին նախօրեին թաղված Գրիգոր Ավագյանի դիակը, նրա ոսկե ատամները պոկել, իսկ մարմինը շպրտել ձորն ի վար: Թալանչիները լրիվ ավերել էին Առաքելի, Բանաձորի, Քարագլխի, Խանձաձորի և մյուս գյուղերի գերեզմանատները:

Ինձ հաջողվել է թալանից անմիջապես հետո լինել մի շարք գյուղերում: Ցորի պահակակետի շարքային զինվոր Ա. Մ. Բորովիկը մեր հարցին, թե ի՞նչ վիճակում է գյուղը, ասաց. «Սարսափելի: Միջնադարյան բարբարոսներին կարելի է փառք տալ: Նրանք չէին կարող պատկերացնել, որ 20-րդ դարի վերջին թալանի և կողոպուտի բնագավառում ադրբեջանցիները կարող են իրենց գերազանցել: Համենայն դեպս, կարող եք մտնել գյուղը, տեսնել, համոզվել»:

Հիրավի, բոլոր բնակարանների դարպասները, դռները, պատուհանները քանդել-տարել էին կամ ջարդել էին: Բնակարաններում ոչ մի բան չէր մնացել, բացի մերկ պատերից և հատակին թափված գրքերից, թղթերից: Մի շարք տների տանիքների թիթեղները, հատակների տախտակները, պատշգամբներ ևս քանդել, տարել էին: Մի առանձին մոլուցքով էին թալանել պարենային մթերքները. գյուղի փողոցներով թափելով տարել էին հացահատիկի, ալյուրի, կարտոֆիլի, սիսեռի, չոր լոբու, մյուս մթերքների բոլոր պաշարները: Կոլտնտեսության գրասենյակը այլանդակել էին, փշրել էին նրա մեսրոպատառ ցուցանակը, նրա պահեստից տարել էին 65 տոննա հացահատիկ, 1500 լիտր թթի օղի, բոլոր ինվենտարը:

Բանաձորի պահակակետի զինվորները, որոնք տեղավորվել էին դպրոցի սենյակներից մեկում, հրաժարվեցին իրենց ներկայացնել: Լրագրողի իմ իրավունքների մասին նրանց հիշեցնելով, պահանջեցի, որ ինձ ընդառաջեն: Վերջապես կրտսեր սերժանտ Վ. Ա. Նիկիտինն ասաց. «Ահա ավերված գյուղը, գնացեք, տեսեք, դուք էլ կարծիք կազմեք, ի՞նչ եք անում մեր խոսքը»:

Համոզվելով, որ նրանցից հնարավոր չէր խոսք կորզել, շարժվե-

ցի առաջ: Նախ դիտեցի դպրոցը: Տառացիորեն ամեն ինչ ավերել, քանդել, ջարդել էին: Նստարանները, գրատախտակները, լաբորատոր սարքավորումները, գրքերը, քարտեզները տարել էին կամ ջարդել: Դասարանների պատերը այլանդակել էին, հայ գրողներ և զինվորական գործիչներ Մ. Մաշտոցի, Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Հովի. Թումանյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Հովի. Բաղրամյանի, Հ. Բաբաջանյանի և այլոց նկարները պատերից պոկել էին, ծվատել, միզել վրան: Ես չշարունակեցի դիտումները, հեռացա ավերված կրթօջախից և հայտնվեցի գյուղի խորհրդային պահեստի մոտ:

-Աստված իմ, մի՞թե այս մակարդակի բարբարոսությունն էլ ես դու ստեղծել...

Բայց շարադրենք փաստերը: Պահեստի 250 տոննա հացահատիկը, սերմացուն, խտացրած կերը, բոլոր ինվենտարը տարել էին, նրա տանիքի թիթեղը, դռները, պատուհանները ջարդել:

Բանիմաց, աշխատասեր, գուծունյա բանածորցիների տները, ինչպես ասում են, հարստության, ունեցվածքի տակ տնքում էին: Նրանց մառանները լիքն էին հացահատիկով, ալյուրով, սիսեռով, պանիրով, թթի օղիով, գինիով, թթու դրած բանջարեղենով և այլ բարիքներով: Երեք օրվա ընթացքում թալանչիները քանդել, տարել էին բոլոր տների դարպասները, դռները, պատուհանները, տանիքների թիթեղները: Բանածորցիների ունեցվածքից, գույքից ոչ մի բան չէր մնացել տեղում, ասես նրանց տները մերկ են եղել: Քանդել էին նաև գյուղի ակումբը, կապի բաժանմունքի շենքը, բուժկետը, տարել նրանց գույքը, նույնիսկ պողպատակուռ սեյֆերը: Այդ ամենով չբավարարվելով՝ նրանք պղծել են մեծ Հայրենականում զոհված բանածորցիների հիշատակին կանգնեցրած հուշարձան-կոթողը:

Ասում են, թե թալանի թեժ օրերին Ռ. Մամեդովի կարգադրությամբ Բանածոր է այցելել իր տեղակալը, թալանչիներին ժողովել ու հայտարարել. «Գյուղում ոչ մի բան չպիտի մնա: Այն, ինչ չկարողանաք տեղափոխել, կջարդեք, որ հայերը երազում էլ իրենց գյուղը չտեսնեն: Ով որ տունը հետագայում վերցնելու է, թող պատի վրա խոշոր տառերով իր ազգանունը գրի, որ ուրիշները չմտնեն նույն տունը...»

Առաքել: Մարզի հարթավայրային տարածքի այս գյուղին ադրբեջանցիները փոքրիկ Թբիլիսի էին անվանում: Առաքելցիներն այնպես ճաշակով ու մաքուր էին հագնվում, որ անծանոթները կարծում, էին թե գյուղում միայն մտավորականներ են ապրում: Բոլոր տներն էլ կահավորված էին բարձր ճաշակով: Ընտիր կահույքը, գորգերը, կենցաղային օգտագործման իրերը՝ սառնարանը, հեռուստացույցը, մագնիտոֆոնը, գրքերը, յուղաներկ նկարները անպակաս էին առաքելցիների տներից: Երվանդ Ղահրամանյանը 1500 գեղարվեստական գրքերից բաղկացած անձնական գրադարան ուներ: Հարուստ էին նաև անասնաբույժ Սարգիս Հովհաննիսյանի, ուսուցիչ Շահեն Իսախանյանի, գյուղատնտես Բաբկեն Գյուլիլանյանի գրադարանները:

Թալանչիները յուրահատուկ վրեժ լուծելով առաքելցիներից՝ նրանց բնակարանները հողին էին հավասարեցրել, հարստությունը, գույքը, պարենային մթերքները կողոպտել, տարել: Ինչպես Բանածորում, այնպես էլ այստեղ, բոլոր բակերի դարպասները, տների դռները, պատուհանները, հատակների տախտակները, տանիքները քանդել-տարել են: Քանդել են գյուղի ակումբը, գրադարանը: Ինչպես գրադարանի, այպես էլ անձնական գրադարանների գրքերը վառել էին խարույկի վրա: Խորհրդային պահեստները ավերել են, տարել 250-300 տոննա հացահատիկը, սերմացուն, խտացրած կերը, մյուս մթերքները: Գյուղի կրթօջախի, կապի բաժանմունքի, հիվանդանոցի բոլոր գույքը անհետացել էին: Այդ բարբարոսությունը կատարելով հանդերձ՝ յուրաքանչյուր տան պատերին խոշոր տառերով գրել էին իրենց ազգանունները: Շրջելով գյուղում՝ տների պատերին կարդում էի Օրուջև Հասան, Ալիև Մամեդ, Բալի օղլի, Հումբաթ Հասանով, Իսա Մամեդով, Ալեքպեր Դաշտամիրով, Իսլամ Գամբարով և այլն:

Ոսկի որոնելու ձգտումով այս գյուղի գերեզմանատունը ևս քարուքանդ էին արել: Տասնյակ ջարդված գանգեր, ոսկորներ կային թափված գետնին: Պղծել էին հուշարձանը:

Քարագլուխ: Երևի հիշում եք, հայրենասեր ընթերցողներ, որ մեր հոդվածաշարի «Գյադայից բեկ չի լինի» հոդվածում շեշտել ենք, որ այս գյուղին հարող Յուխարի մազրա ադրբեջանական

գյուղը ակտիվ հենակետ էր դարձել մարզի հարավ-արևմտյան տարածքի գյուղերի հայաթափման գործում: Հասկանալի չէ՞, թե մազրացիները ինչպիսի մոլուցքով թալանած կլինեին Քարագլուխը: Այս գյուղից թալանչիները տարել էին ոչ միայն կենցաղային իրերը, գույքը, անկողինները, այլև նավթամանները, ապակե տարաները, գյուղատնտեսական գործիքները, թուխս նստած հավերը, հնդկահավերը: Քանդել, տարել էին նաև տների շինանյութերը: Իսկ հետո Սարմազ Ռահիմովը կարգադրել է, որ գյուղը հիմնահատակ հրկիզեն, որ նրա բնակիչները երբեք-երբեք չվերադառնան հայրենի գյուղ:

Դոլանլար: Մտնելով այդ գյուղը, մարդ չէր հավատում, թե չորսհինգ օր առաջ այդտեղ մարդիկ էին բնակվում: Ոչ միայն դոլանլարցիների ունեցվածքը, պարենային մթերքները, այլև շինությունները քանդել, տարել էին: Գյուղի կոլտնտեսության պահեստները, կրթօջախի շենքը, կապի բաժանմունքը, գյուղխորհրդի շենքը, ինչպես ասում են՝ պրիշակ են արել: Բուլդոզերով քանդել էին գերեզմանատունը: Տեսնելով գետնին թափված գանգերը, փշաքաղվում ես, մարմնովդ ցուրտ մի հոսանք է անցնում:

Արփագյադուկ, Սպիտակաշեն: Հայաստանի Գորիսի շրջանին հարող այս գյուղերը (ցարական կառավարության ժամանակ նրանք գտնվում էին Գորիսի վարչական կազմի մեջ) բարբարոսաբար հողին էին հավասարեցրել, որպեսզի ղարաբաղցիները մոռանան Հայաստանը այս գյուղերով Ղարաբաղի հետ կանոնավոր ճանապարհով կապվելու մասին: Լինելով գյուղում, մենք դժվարացանք գուշակել, թե որտեղ են եղել այս գյուղերի բնակիչների տները, որովհետև նրանց հիմնաքարերն էլ տարել էին:

Ինչպես ասվել է վերը, բռնագաղթված գյուղերում գործում էին չորս կոլտնտեսություններ և երկու խորհտնտեսություններ: Նրանց ամբողջ տեխնիկան, անասունները, պահեստների մթերքները, սերմացուն, տարաները ամբողջովին հափշտակել էին: Մասնագետների հաշվառումներով, յուրաքանչյուր կոլտնտեսություն և խորհտնտեսություն 1991 թվականի գներով ավելի քան 600-650 հազար ռուբլու վնաս է կրել: Բռնագաղթած 14 գյուղերի 14 գրադարանները, 12 ակումբները, 10 կրթօջախները, 12 բուժկետերը, մեկ հիվանդանոցը, կապի հինգ բաժանմունքները, 5 խնայդրամարկղները, 12 խանութները, որոնց բալանսային արժեքը 480-500 հազար ռուբլի էր, հողին էին հավասարեցրել...

Ինչպես տեսնում եք, պետականորեն բռնագաղթված 14 այս գյուղերի կողոպուտը, թալանը ևս կազմակերպվել է պետական մասշտաբով, որպեսզի ղարաբաղցիները ոչ միայն հրաժարվեին անկախության և ինքնորոշման համար մղվող պայքարից, այլև երբեք չվերադառնային իրենց բնակավայրերը:

Մնում է հարցնել, թե այդ բռնատեղահանության կազմակերպիչները և առաջին հերթին Ադրբեջանի նախկին նախագահ Ա. Մութալիբովը և նրա մոսկովյան հովանավորները (խորհրդային վերջին մոհիկանները) այս հանցագործությունների համար երբևէ պատիժ են կրելու՞, թե՞ դարձյալ անպատիժ են մնալու...

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Ղարաբաղյան շարժման արշալույսին Ադրբեջանի Հանրապետության Կուբաթլիի և Հայաստանի Հանրապետության Գորիսի շրջանների սահմանների միացման տարածքում սահմանապահ ուղեկալ է կառուցվել, որտեղ տանկերով, զրահամեքենաներով, ուղղաթիռներով գիշեր ու զօր պահակություն էին անում ԽՍՀՄ-ի ՆԳՆ զորքերի ստորաբաժանումները և Ադրբեջանի օմոնականները:

1991 թվականի մայիսի 16-ի գիշերը և 17-ի առավոտյան դեմ այդ ուղեկալն են հասել Հադրութի շրջանի 14 բռնատեղահան արված գյուղերի բնակչությանը փոխադրող ավտոշարասյուները: Գաղթականներին և նրանց ավտոմեքենաների թափքերում հրաշքով մնացած բեռների կտորները հապճեպ թափելով նախօրեին տեղացած անձրևից առաջացած ցեխի ու ցեխաջրերի մեջ, ավտովարորդները իսկույն իրենց մեքենաները շրջել էին հետ, շտապել Ադրբեջանի խորքը: Ուղեկալի մոտերքում ևս ադրբեջանցիներ էին հավաքվել: Նրանք ճարպկորեն թռցնում էին մեքենաներից թափած բեռները, անհետացնում թանձրացած խավարի մեջ: Հոգնած, մրսած, բռնատեղահանության սարսափից իրենց ոսկորների մեջ սարսուռ զգա-

ցող գաղթականները չէին կարողանում նրանց դիմադրել, օմոնականները քաջալերում էին նրանց, իսկ զինվորները մի կողմ կանգնած՝ դիտում էին այդ ամենը, ռազմական ահեղ տեխնիկայով ապահովում նրանց անվտանգ գործողությունները: Լսենք, թե ինչ են պատմում դեպքերի ականատես գաղթականները:

Գրիգոր Ստեփանյան (Քարագլուխ գյուղից): Առաջինը մեր գյուղը բռնատեղահան անող ավտոշարասյունն է հասել սահմանապահ ուղեկալ: Արդեն մութ էր: Սյունյաց լեռներից ցուրտ քամի էր փչում: Անձրևը նոր էր դադարել: Գետինը ցեխոտված էր: Տեղ-տեղ անձրևաջրերի փոսեր կային: Ճանապարհին լկտի թալանչիներից մի կերպ փրկած մեր գույքի, հագուստների մի մասն էլ ուղեկալում են կողոպտել: Հենց որ մեր բեռների կապոցները մեքենայի թափքից իջեցնում էինք ցած՝ ասես գետնի տակից թալանչիներ էին դուրս գալիս, այն անհետացնում: Մերոնք ցածում, ես ավտոմեքենայի թափքում, չկարողացանք մեր իրերի կեսը փրկել: Ես իմ ձեռքին ամուր պահում էի իմ բաճկոնը: Երբ ավտոմեքենայից իջա, մի թալանչի փորձեց այն ինձանից խլել: Ես բաճկոնը ձեռքիցս բաց չէի թողնում: Նա ծգելով բաճկոնից, ինձ մերոնցից բավականին հեռացրեց և ինձ մի ուժգին ապտակ հասցրեց, ապա ատրճանակը հանելով և իմ ճակատին ուղղելով, ասաց. «Գիժ էրմանի, ուզում ես մի ժիլետի համար արյունդ թափեմ, քյալադ ցրիվ տա՞մ: Բաց թող, գնա ջհանամը»: Եվ ատրճանակի կոթով խփելով ծոծրակիս, բաճկոնը խլեց ինձանից ու անհետացավ խավարի մեջ: Մեզնից 100-150 մետր հեռավորությունից անընդհատ ավտոմատով և հրացանով կրակում էին մեր ուղղությամբ, որպեսզի գաղթականները խուճապի մատնվեին: Խավարի մեջ չգիտեինք, թե ինչ անել՝ մեր մարմինը տաքացնե՞լ, թե՞ կապոցները փրկել:

Ուղեկալում հազիվ էինք մեկ-երկու ժամ մնացել, երբ նրա տարածք բերեցին նաև առաքելցիներին, դոլանլարցիներին, ջիլանցիներին, բինյաթլվեցիներին, մուլքադարացիներին, բանաձորցիներին, առավոտյան դեմ էլ խանձաձորցիներին:

Բոլոր գաղթականները երեք օր մնացել են ուղեկալում, բաց երկնքի տակ: Բանն այն էր, որ երկու հանրապետությունները վիճում էին: Հայաստանը պահանջում էր, որ գաղթականներին վերադարձնեն իրենց օջախները: Դա բխում էր մեր սրտից: Սակայն Ադրբեջանը լկտիաբար փակել էր հետդարձի ճանապարհը: Քանի որ Գորբաչովյան Մոսկվան ադրբեջանամետ էր, Հայաստանը ստիպված մեզ ապաստան է տվել իր հողում: Մեզ փոխադրել են Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղը: Խնձորեսկցիները մեզ ընդունել են ինչպես իրենց հարազատներին, իրենց կարեկցանքով, վերաբերմունքով, ջերմ խոսքերով մեր վիշտը կիսել: Մեզ տեղավորել են գյուղի ակումբում, վրաններում: Շատերը գաղթականներին տեղավորել են իրենց հարկի տակ: Մեկ-երկու շաբաթ մնալով Խնձորեսկում, մեր համագյուղացիները գնացել են Հայաստանի և երկրի տարբեր ռեգիոններում ապրող իրենց հարազատների մոտ՝ հասցեները թողնելով իրենց ավագի մոտ՝ հույս ունենալով, որ շուտով կլուծվի իրենց վերադարձի հարցը: Սակայն Մ. Գորբաչովը ԽՍՀՄ-ը թաղեց, որ Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելու հարցը չլուծի...

Կիմ Սեյրանյան (Առաքելի բնակիչ): Մեր բնակիչներին Կուբաթլիի ուղեկալ էին հասցրել երեկոյան ժամը մոտավորապես 8-ին: Քարագլխեցիները արդեն այնտեղ էին: Մեր տեղ հասցրած կապոցները ադրբեջանցի վարորդները դես ու դեն էին շպրտում, որպեսզի ուղեկալի մոտերքում վխտացող թալանչիները այն անհետացնեին: Նրանք լկտիաբար ասում էին. «Օղի տվեք, որպեսզի սաղ-սալամաթ Հայոց հող հասնելու առթիվ ձեր կենեցաը խմենք: Հիմա կարող եք միանալ Հայաստանին, որ մենք էլ ձեր տներում վերաբնակվենք...»:

Եվ ապա ավելացնում էին. «Ժլատություն չանեք, մեզ էլ մի բան տվեք, չէ՞ որ այդ հարստությունը Ադրբեջանի հողում եք վաստակել»:

Մինչև լուսաբաց մենք պայքարում էինք թալանչիների դեմ, կուչ գալով մեր մի կերպ փրկած կապոցների վրա: Լեռնային սառը քամին ասես թրատում էր մեր ոսկորները: Մեզ հաջողվեց խարույկ վառել: Նրա շուրջը բոլորեցին կանայք, երեխաները, ծերերը: Նրանց մի-մի բաժակ տաք թեյ տվեցինք: Հետզհետե լեռներում մեզ համար բացվում էր սև մի լուսաբաց...

Ինչպես բոլոր գաղթականները, այնպես էլ առաքելցիները երեք օր ուղեկալում սպասեցին, թե մեր հարցը ինչպես կվճռվեր: Քանի որ կենտրոնը հովանավորում էր Ադրբեջանին, առանց որի նա չէր կա-

ղող իրականացնել մեր գյուղերի բռնագաղթը, մենք գիտակցում էինք, որ հազիվ թե մեզ վերադարձնեն մեր օջախները, թեկուզ ինչքան էլ աղմկեն միջազգային կազմակերպությունները: Ինչևիցե. չորրորդ օրը Հայաստանը մեզ ընդունեց: Նախ հյուրընկալվեցինք Խնծորեսկում, ապա մեկնեցինք Հայաստանի և երկրի տարբեր բնակավայրերում ապրող մեր հարազատների մոտ: Իսկ որտե՞ղ չկային առաքելցիներ: Միայն Կրասնովոդսկում մեր գյուղից սերված 200 ընտանիք կար: Այդքան էլ կային այլ բնակավայրերում: Իսկ եթե նրա կեսը գյուղում լիներ, հազիվ մեզ այդքան հեշտ գյուղից բռնատեղահան անեին: Մինչդեռ մեր սակավաթիվ ուժերի դեմ թշնամին ոտքի է կանգնեցրել 200-250 օմոնականներ, այդքան թալանչիներ, 50-60 զինվորներ...

Նատաշա Մնացականյան (Բանաձոր գյուղից): Երբ մեր գյուղացիներին տեղահանող ավտոշարասյունը անցնում էր մեր հարևան Աֆանդիլար և Չարաքյան գյուղերի կողքով, նրանց բնակիչները ծափերով մեզ ուղեկցում էին, երգում, պարում, մեր հետևից կանչում. «Էրմանիլա՜ր, էրմանիլա՜ր, շատ եք «Միացու՜մ, միացու՜մ» պոռացել, հիմա կարող եք գնալ, միանալ ձեր Հայաստանին»:

Ես իսկույն հիշեցի Հայաստանի 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի առթիվ Բաքվի փողոցներում, Ափշերոնյան թերակղզու տարբեր անկյուններում կազմակերպված ցինիկ տոները: Աստված իմ, այս ինչպիսի՜ ժողովրդի հարևանությամբ ենք ապրում: Ինչպիսի՜ պատիժ ես սահմանել մեզ համար՝ այդպիսի հարևան տալով: Ինչևիցե. նրանք տոնում էին իրենց հաղթանակը, իսկ մենք տաք, հարազատ օջախից զրկված՝ մեկնում էինք անհայտ ուղղությամբ: Երեկոյան ժամը 9-ին մեզ հասցրին ուղեկալ, ուր գաղթականների առաջին խմբերը կրակ էին վառել, բոլորել նրա շուրջը: Ընդունելով մեզ, նրանք ակամա լաց էին լինում, իսկ թալանչիները, գետնից բուսնելով, մեր կապոցները գողանում էին, մեր ձեռքերից խլում, տանում էին պարենային պաշարներով լի պայուսակները: Կես գիշերին ադրբեջանցի ավազակախմբերը հարձակվել են մեզ վրա: Ասացինք վերջ՝ մեզ այստեղ ջարդելու են, բարեբախտաբար, մի քանիսի մոտ որսորդական հրացաններ կային: Տղամարդիկ պատասխան կրակոցով դիմավորեցին

նրանց: Վառոդի հոտ զգալով՝ նրանք հեռացան: Այդպես սարսափի մեջ լուսացրինք գիշերը: Հորիզոնում արդեն մարում էին մեր սև աստղերը...

Մաշո Հովսեփյան (Ջիլան գյուղից): Ես, մասնավորապես, ուզում եմ խոսել Հայաստանի կառավարության՝ մեր նկատմամբ ցուցաբերած հոգատարության մասին: Ամեն օր գաղթականների ճամբար էին գալիս տասնյակ ղեկավար ընկերներ, հասարակական գործիչներ, մամուլի աշխատողներ, մեզ հետ զրուցում, մեր դառնությունը կիսում: Սրտառուչ էր Կիլիկիո Տան կաթողիկոս Գարեգին Առաջինի հետ մեր հանդիպումը: Մեզ Խնծորեսկում ոչ միայն ապահովել էին կացարաններով, այլև օրական երեք անգամ կերակրում էին: Բացի այդ, մեզ նաև նյութական օգնություն էին ցույց տալիս: Շնորհակալություն հայտնելով այս ամենի համար՝ մենք խնդրում ենք նրանց, որ մեզ վերադարձնեն մեր օջախները հայրենի:

Աշոտ Սևյան (Մուլքադարա գյուղից): Ես ուսուցիչ եմ, հայոց լեզվի և գրականության մասնագետ: Հայ և համաշխարհային գրականությանը ծանոթ եմ: Մարդասպանության, թալանի, կողոպուտի, բարբարոսության մասին բազմաթիվ գեղարվեստական և վավերագրական գործեր եմ կարդացել: Սակայն այն վայրենությունները, որ կատարել են Ադրբեջանի օմոնականները հայերի նկատմամբ 1991 թվականի մայիս-հունիս ամիսներին, աննախադեպ են: Մի՞թե մեկնաբանությունների կարիք են զգում նրանց գործողությունները՝ 70 տարի իրենց ինտերնացիոնալիստներ հորջորջվող ադրբեջանցիները մեզ պոկել են մեր արմատներից, զրկել օջախներից, ունեցվածքից, պարենից, տարել թափել են բաց դաշտում: Նրանց այս վայրենությունը միայն կարելի է համեմատել 1915 թվականի ցեղասպանության հետ, որ գեղարվեստական մեծ ուժով նկարագրել է տաղանդավոր գրող, մեծ հումանիստ Ֆ. Վերֆելը իր «Մուսա լեռան 40 օրը» վեպում:

Չնայած մենք ճանապարհին կորցրել էինք մեր բեռների ընտիր կտորները, բայց Սյունյաց աշխարհում մեր նկատմամբ ցուցաբերած հոգատարությունը, կարեկցանքը դա մեղմացրել էր: Սակայն մեր օջախները մոռանալ չէինք կարող: Մեզ այցի եկած հայ և արտասահմանյան լրագրողներին խնդրում էինք, որ ոչ միայն մերկացնեն

այս բարբարոսությունը, այլև միջազգային դատ բացեն նրա կազմակերպիչների հանդեպ:

Բռնատեղահան արված 14 գյուղերից շուրջ 3000 բնակիչներ, թողնելով իրենց տուն-տեղը, ճեղքել են օմոնականների և զինվորների շրջափակած օղակը, լեռնային կածաններով, սարերով, ձորերով հասել շրջկենտրոն: Հադրութ ավանը և նրա շուրջը բոլորած Վանք, Վարդաշատ, Քոչբեկ (Այգեստան), Տյաք, Կերմրակուճ և Թաղասեռ գյուղերի բնակիչների մեջ եռացել է իրենց հայրենասեր նախնիների արյունը: Նրանք գաղթականներին շրջապատել էին հոգատարությամբ, հրավիրել իրենց տները, տաքացրել, հանել նրանց հոգեկան ծանր, ճնշված վիճակից:

Շրջխորհուրդը նրանց ապահովել է անհրաժեշտ կացարաններով: Ստեղծվել է գաղթականների օգնության ֆոնդ: Կարճ ժամանակամիջոցում մարզի բնակիչներն այդ ֆոնդն են փոխանցել ավելի քան 200 հազար ռուբլի: Բացի այդ, մարզի տարբեր բնակավայրեր, հիմնարկ-ձեռնարկություններ Հադրութ են առաքել անկողիններ, մահճակալներ, կենցաղային օգտագործման պարագաներ, մթերքներ:

Դրվատանքի են արժանի առանձին քաղաքացիների՝ իրենց տնից-տեղից զրկվածների նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքը: Ինչպես հաղորդել է «Խորհրդային Ղարաբաղ» օրաթերթը, Հադրութի արխիվի վարիչ Ազնիվ Եղյանը իր հարկի տակ երեք ամիս ոչ միայն պահել է Քարագլուխ գյուղի բնակիչներ Հրաչիկ և Էդուարդ Պետրոսյաններին, այլև նրանց տրամադրել է իր հագուստները, կոշիկները: Բելլա և Ալեքսանդր Ղուկասյանները իրենց հարկի տակ չորս ամիս պահել են 14 գաղթականների, ընդ որում՝ նրանց ազգությամբ ռուս հարս Կատյան պակաս հոգատարություն չէր ցուցաբերում նրանց նկատմամբ:

Առաքել և Քարագլուխ գյուղերից յոթ ընտանիքներ տեղավորվել էին կրթօջախի և նրա մոտ գտնվող ԴՕՍԱՖ-ի շենքերում: Նրանց հարևանը Արտյուշա Աբրահամյանն էր: Նրա կինը՝ Լիդան, ամեն օր ոչ միայն այցելում էր գաղթականներին, այլև որևէ բանով՝ հագուստներով, կենցաղային օգտագործման պարագաներով օգնում էր նրանց: «Թող նրա մոր կաթը նրան հալալ լինի»,-

պատմելով այդ ամենի մասին, ավելացնում էր առաքելցի Մարո Համբարձումյանը:

Այրի Մարուսյա Ղուկասյանը, որը ապրում էր երկու տղաների, հարսերի և թոռների հետ, ընդ որում՝ տղաներից մեկը՝ Ռազմիկը, Սումգայիթի ջարդից է մազապուրծ ազատվել, չորս ամիս պահել է Նելա Վանյանի երեխաներին: Սլավիկ Պետրոսյանը իր հարկի տակ պահել է խանձաձորցի Նապոլեոն Հայրյանի ընտանիքը: Վանք գյուղի բնակիչ Լուսյա Թայրյանը հյուրընկալել է ծամձորցի Հրանտ և Ոսկի Զաքարյաններին, կենսաթոշակառու Սիմոն Վարդանյանը՝ խանձաձորցի Սմբատ Գրիգորյանի ընտանիքը, Վազգեն Բաղդասարյանը՝ նույն գյուղից Արզուման Բաղդասարյանի ընտանիքը: Թաղասեռցի ամուսիններ Հենրիկ ու Լիդա Հովսեփյանները, գրեթե ամեն օր իրենց տանը կերակրում էին գյուղում ապաստան գտած խանձաձորցի Նապոլեոն Գասպարյանի բազմանդամ ընտանիքին, նրա դպրոցական երեխաներին ապահովում հագուստներով և դպրոցական պիտույքներով:

Գաղթականներին օգնության ձեռք են մեկնել նաև շրջանի մյուս գյուղերի բնակիչները: Մոխրենես գյուղի բնակիչ Մանվել Ստեփանյանը չորս ամիս հյուրընկալել է գաղթական Կոլյա Բաբայանի հինգ հոգուց բաղկացած ընտանիքը: Մարդասիրական այդպիսի օրինակները շատ են, բոլորը հնարավոր չէ թվարկել:

Ինչքան գեղեցիկ է, որ այդպիսի ծանր օրերին մեր ժողովուրդը ոտքի է ելնում, դրսևորում իր մարդասիրական, հումանիստական լավագույն հատկանիշները: Դա, ես կարծում եմ, մեր ժողովրդի ամենից մեծ հարստությունն է: Աստված չանի, որ այդ բնագավառում մենք աղքատանանք:

Այնուամենայնիվ, ուրիշի տանը լավ է, իր տանը գերազանց: Սյունյաց աշխարհում և Հադրութում իրենց գյուղերը վերադառնալու կարոտով սպասող գաղթականները, տեսնելով, որ իրենց փափագը չի կատարվում՝ հուսալքվում էին, կորցնում հավատը և պանդխտության ցուպ վերցնում, օտար ափեր մեկնում, այնտեղ իրենց փշրված կյանքի մնացած մասն անցկացնելու համար:

Օգոստոսյան խռովությունը պարտվեց: Սակայն երկրի դեմակրատական ուժերը դեռ անզոր էին Ադրբեջանի իշխանությունների հան-

դեպ, որը իր օմոնականներով ամուր շրջապատել էր բռնագաղթած գյուղերը և թույլ չէր տալիս, որ նրա բնակիչները վերադառնան իրենց օջախները:

ՎԵՐՋԱԿԵՏԻՑ ԱՌԱՋ ԿԱՄ ԱՌԱՋԻՆԸ ՀՅՈՒԾՎԱԾ ՕՂԱԿՆ Է ԿՏՐՎՈՒՄ

Սիրելի ընթերցողներ, ձեզ տանելով Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի հարավ-արևմտյան տարածքի գյուղերի բռնատեղահանության արյունոտ հետքերով, ձեր ուշադրությունը սևեռելով նրանց բնակիչների խոշտանգումների, կողոպուտի, թալանի, սպանությունների, բռնաբարության ծով փաստերի միայն մի քանիսի վրա, ուզում եմ վերջակետ դնել՝ այդ վայրենության հետ կապված մնացած հարցերը թողնելով ԼՂ Հանրապետության Ազգային ժողովի կողմից ստեղծվելիք հատուկ հանձնաժողովի ուսումնասիրությանը և միջազգային դատի ներկայացմանը:

Վերջակետից առաջ, այնուամենայնիվ, ուզում եմ, որ միասին խորհենք, դատենք, թե ինչու՞ Ղարաբաղի նշանավոր պետական գործիչ, դիվանագետ, ամենայն հայոց գահակալ Մելիք Ավանի, որի նստավայրը Տող բերդն էր, 1918-20 թվականների հայ-թուրքական կռիվների լեգենդար հերոս Թևան Ստեփանյանի, որը իր փոքրիկ խմբով անառիկ էր պահում Արցախի հարավային տարածքը, ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյանի հայրենիքը մի ամսվա ընթացքում զրկվեց իր 14 գյուղերից: Որտե՞ղ որոնել նրա այդ պարտության արմատները: Երևի դուք էլ հավանություն կտաք իմ որոշմանը՝ այս պարագայում ևս ասպարեզը տալով տուժածներին՝ ձեր դատին ներկայացնելով այդ գյուղերում, Գորիսում, Հադրութում և այլուր իմ ծոցատետրում սղագրած նրանց մտքերը:

Սուրեն Աբրահամյան (Դոլանլար): Ես շատ տարիներ աշխատել եմ շրջկենտրոնում, ապա փոխադրվել մեր գյուղը, աշխատել կոլտնտեսության գլխավոր հաշվապահի և գյուղական խորհրդի քարտուղարի պաշտոններում: Մարզի, շրջանի և մեր գյուղի անցուդարձերին քաջատեղյակ եմ: Ես շրջանի և մանավանդ մեր հեռավոր գյուղի անհաջողությունների պատճառները տեսնում եմ կոմունիստական վարչակարգի ժամանակ մեկը մյուսին փոխարինած շրջանային և տեղական ղեկավարների վարած անհեռատես քաղաքականության մեջ: Որ Ադրբեջանը մեր մարզի նկատմամբ բացահայտ խտրական քաղաքականություն էր վարում, ակնհայտ էր: Նա առաջին հերթին ցանկանում էր բաժան-բաժան անել նրա հարավային՝ մայր Արաքսին հարող Հադրութի շրջանը, այն բաժանել հանրապետության Լաչինի, Կուբաթլիի, Ջեբրայիլի, Ֆիզուլու շրջանների միջև: Ահա թե ինչու մեր շրջանում ճարտարի, մարզի մյուս խոշոր տնտեսությունների պես հարուստ տնտեսություններ չէին աճում: Այդ ուղղությամբ կատարվող փորձերը զառնվում էին հանրապետական մարմինների թշնամական ժայռաբեկորին: Հիշում եմ, 60-ական թվականներին կուսշրջկոմի երկրորդ քարտուղար Սուրեն Հակոբյանը թողել է իր ապահով բազկաթոռը, ստանձնել Մեծ թաղերի խորհտնտեսության տնօրենի պաշտոնը, որպեսզի այն դարձնի հզոր տնտեսություն և երկրի այլ ռեգիոններում ապրող ավելի քան 800 մեծ թաղլարցիների շառավիղներին հրավիրի իրենց պապերի հայրենիքը: Մասնագիտությամբ լինելով գյուղատնտես, նա լավ էր պատկերացնում հարուստ խարհտնտեսություն ստեղծելու դժվարությունները: Գյուղի շուրջ 500 հեկտար հողահանդակները փռված են Իշխանագետի մերձակայքում: Եթե նրա ջրերով ոռոգվեր այդ հողատարածքների գոնե մի մասը, ապա անհամեմատ կբարձրացվեր դաշտավարության եկամտաբերությունը: Այդ պլանով ոգևորված՝ նա մտել է հանրապետության գյուղտնտեսության նախարարի աշխատասենյակ:

-Դուրս իմ կաբինետից,- լսելով նրան՝ ասել է նախարարը: - Ես չեմ կարող հանրապետության միջոցները տրամադրել քո դաշնակցական այդ պլանի կատարման համար:

Համարձակ ղարաբաղցին Բաքվից դեռ հայրենիք չէր վերադարձել, երբ մարզկոմի բյուրոն նրան ազատել է աշխատանքից:

70-ական թվականներին, երբ Ադրբեջանի աստվածը խորհրդային բանակի դասալիք Հ. Ալիևն էր, մարզի նկատմամբ ազգային խտրականությունն ավելի էր սրվել: Այդ տարիներին Հադրութի կուսշրջկոմի քարտուղար Վ. Գրիգորյանը մարզկոմի պլենումում հարց է բարձրացրել շրջանի Վարդաշատ գյուղի գրանիտի անսպառ պաշարի մո-

տերքում կառուցել կոմբինատ, հանքաքարը մշակել տեղում, որպեսզի նրա եկամուտներից օգտվի շրջանը: Մարզկոմի քարտուղար Բ. Կևորկովը հոխորտացել է նրա վրա. «Վարդաշատի գրանիտը միայն Բաքվում, մասամբ էլ Ստեփանակերտում է մշակվելու: Այլևս այդ մասին քեզնից ոչ մի խոսք չլսեմ, թե չէ քեզ նորից ծեր գյուղի նախագահ կնշանակեմ»:

Հիշում եմ, շրջանին հատկացված բտման հարթակը կառուցելու համար Վ. Գրիգորյանը եկել է մեր գյուղ, նրա տեղանքն ուսումնասիրել, որպեսզի այդ հարթակը կառուցվի մեր գյուղում: Սակայն նույն Բ. Կևորկով Գրիգորյանին հուշել է. «Այդ հարթակում միայն ադրբեջանցիներ են աշխատելու, որովհետև նրանք անասնապահության լեզուն լավ գիտեն, հետևաբար այն պետք է կառուցել Գևորգավանի հարթավայրում՝ ադրբեջանական գյուղերին հարող այդ տարածքում և ոչ թե լեռնային Դոլանլարում»:

Այդ մեծ օբյեկտը կառուցելով ադրբեջանական գյուղերի մոտ՝ Հադրութը 40-50 աշխատատեղ է կորցրել, իսկ դրսից այդքան ադրբեջանցի եկել են մեր մարզ, աշխատանքի անցել, այդ օբյեկտի հաշվին անասուններ պահել, փող դիզել...

Այդ ամենը տեսնելով, շրջանային և տեղական ղեկավարները լոկ իրենց մասին էին մտածում, իրենց գլուխները պահում, սև օրվա համար էլ համապատասխան գումար դիզում: Այդ չինովնիկները չէին տեսնում մեր գյուղերի ամայացումը: Պատերազմից հետո մեր գյուղն էլ է դատարկվել՝ երկրի այլ ռեգիոններում 350-400 դոլանլարցիներ ընտանիք են կազմել: Սակայն մեր հարևան Ջեբրայիլի շրջանի Իսախլու գյուղը, որը նախկինում ընդամենը հինգ-վեց վրանաբնակներ ուներ, այժմ իր 150-200 ծխերով ծավալվել է մեր գյուղի փեշին և ցանկացած րոպեին փակում է մեր ճանապարհը: Այո, մեր հարևանները նպատակասլաց աճում էին, իսկ մենք մեր ձեռքերով մեր գյուղերը դատարկում, մեր զավակներին անընդհատ օտար ափեր էինք ուղարկում: Այս սովորության իներցիան հայերս դժվար թե կարողանանք վերացնել...

Ղարաբաղյան շարժման առաջին, այսպես կոչված, միտինգային էտապում մարզային և շրջանային մարմինների ղեկավարներից շատերը, ցավոք, բրեժնևյան ոգով դաստիարակված կադրեր

էին: Արտակարգ դրության պայմաններում ավտոմատներով զինված ադրբեջանցիները հափշտակում-տանում էին մեր հանրային և անձնական անասունները, իսկ մեր ղեկավարները այդ դեպքերը նույնիսկ քննարկման առարկա չէին դարձնում: Ինչ խոսք, նրանցից ինքնապաշտպանության գործի կազմակերպում չէինք սպասում...

Առաջին հերթին ես դրանով եմ բացատրում Հադրութի 14 գյուղերի պարտությունը:

Գյանջում Գրիգորյան (Խանձաձոր): Ես էլ եմ կիսում Սուրեն Աբրահամյանի մտքերը: Հիրավի, Ադրբեջանը շահագրգռված էր Հադրութի շրջանի էկոնոմիկայի քայքայմամբ, հյուծմամբ, նրա գյուղերի ամայացմամբ: Այդ պայմաններում մեր ղեկավարները փոխանակ մի ազգօգուտ բան կատարելու, Ադրբեջանի ձեռքին գործիք էին դառնում, մեր տունը մեր ձեռքերով քանդում: Ես երկար տարիներ կոլտնտեսության նախագահ, ֆերմայի վարիչ եմ աշխատել: Հաճախակի շփվում էի շրջանային մարմինների ղեկավարների հետ: Նրանք շատ հարցերի լուծման գործում միանգամայն անճարակ էին: Քանի՜, քանի անգամ ես հարց եմ բարձրացրել, որ մեր գյուղը շրջկենտրոնի հետ միացվի Հարսնաքար-Խեժ-Սարինշեն գծով, որը ոչ միայն մեզ կազատեր 4-5 ադրբեջանական գյուղի միջով գնացող ճանապարհից, այլև հնարավորություն կտար վառելանյութեր տնտեսել: Այդ կարճ և հուսալի ուղուց կօգտվեին նաև Դոլանլարի, Հին թաղերի, Խծաբերդի գյուղերի աշխատավորները: Եթե շրջանի կոմունիստական առաջնորդներից յուրաքանչյուրը իր օրոք 2-3 կիլոմետր սեփական ճանապարհ կառուցեր, հազիվ թե ադրբեջանցիները մեր գյուղերը 1988-92 թթ. կրկնակի եռակի շրջափակման ենթարկեին...

Ընդհուպ մինչև 60-ական թվականները, մեր տնտեսությունների ֆերմաներում բացառապես հայեր էին աշխատում: Մի ոչխարով, այլևայլ փեշքեշներով գայթակղելով մեր ղեկավարներին, 60-ական թվականների սկզբներից սկսած դրսի ադրբեջանցիները ներխուժում էին մեր ֆերմաները, այնտեղ տնտեսությունների հաշվին անձնական անասուններ պահում, հարստանում: Մեր տնտեսությունների ղեկավարները հայ անասնապահներին հալածում էին, ադրբեջանցիների առաջ կանաչ ճանապարհ բացում: Թողնելով ֆերմանե-

ռում աշխատելը՝ հայերը թողնում էին նաև հայրենի գյուղը, գնում օտար ափերում հաց վաստակում: Ղարաբաղյան շարժման առաջին էտապում մենք մեր գյուղերը տարերային ձևով էինք պաշտպանում, որովհետև ղեկավարները մասսաներից մի կողմ էին կանգնել, իսկ ադրբեջանցիները՝ մեզ վրա հարձակվում էին պետականորեն կազմակերպված, խորհրդային բանակի հետ դաշնակցած:

Իմ կարծիքով սրանք են նպաստել մեր 14 գյուղերի հեշտ բռնատեղահանությանը:

Հայկ Ավագյան (Հադրութ): Ես երկար տարիներ աշխատել եմ կուսշրջկոմի ու շրջսովետի գործկոմի ապարատներում: Կատարել եմ նաև այլ պատասխանատու աշխատանքներ: Այնպես որ, մեր մարզի, շրջանի իրադարձություններին քաջատեղյակ եմ: Ծանոթանալով մեր 14 գյուղերի բռնատեղահանության մասին պարոններ Սուրեն Աբրահամյանի, Գյանջում Գրիգորյանի, (նրանց ես լավ եմ ճանաչում, իմ պաշտոնավարության տարիներին հաճախակի եմ շփվել նրանց հետ) մտորումներին, ամբողջովին կիսում եմ նրանց կարծիքները: Ճիշտ է, որ մեր մարզի, շրջանների ղեկավարները տառացիորեն կատարում էին և՛ Մոսկվայի, և՛ Բաքվի բոլոր որոշումները, իսկ մեր հարևան ադրբեջանցիներն այդ որոշումները նույնիսկ չէին ընթերցում, այլ մի կողմ էին շպրտում, իրենց բնակչության հանապազօրյա հոգսերով ու շահերով մտահոգվում, պայմաններ ստեղծում, որ իրենց բնակավայրերը թևերը տարածեն, նրանց բնակիչները շատանան:

Ադրբեջանը, քանի՜, քանի հակասահմանադրական որոշումներ է ընդունել ԼՂԻ Մարզի մասին, բայց մարզի ղեկավարները այդ մասին Մոսկվային չեն անհանգստացրել: Օրինակ, նախապատերազմյան տարիներին մեր Հողեր խոշոր գյուղը մի հարվածով անջատվել է Հադրութի շրջանից, միացվել ադրբեջանական Մալականի (այժմ Ֆիզուլի) շրջանին: Պատերազմի տարիներին Բաքուն Իմիշլիի շրջանի Թալիբխանլու գյուղից 20-25 ընտանիք է վերաբնակեցրել մեր Տող գյուղում, հիմնավորելով այդ որոշումը հայերին ոչխարաբուծություն սովորեցնելու անհրաժեշտությամբ: Մինչդեռ իրականում Բաքուն ձգտում էր փոխել հայկական լեռնային գյուղերի նախադռանը գտնվող Խամսայի Դիզակի մելիքության կենտրոն Տողեր-Բերդ գյուղի դեմոգրաֆիան, այն կարճ ժամանակամիջոցում հայաթափել: Տող գյուղում վերաբնակեցված 20-25 ընտանիքների մեջ 15-20 զինծառայության ենթակա ջահելներ էլ կային, որոնք տարբեր պատճառաբանություններով արտոնագրեր էին ստացել բանակ չգնալու համար: Մինչդեռ պատերազմի տարիներին Բաքուն հայկական բնակավայրերը փաստորեն դատարկել է, անգամ հաշմանդամներին բանակ ուղարկել, իսկ անչափահասներին՝ նավթահանքերում աշխատացնելով հյուծել: Ինչպես տեսնում եք, նույնիսկ պատերազմի ծանր տարիներին, երբ ֆաշիստական Գերմանիան օկուպացրել է ԽՍՀՄ-ի գլխավոր ռեգիոնները, Բաքուն ԼՂԻ Մարզի, մյուս հայկական բնակավայրերի հայաթափման ծրագրի կատարումը գոնե ժամանակավորապես չէր դադարեցնում:

Հետպատերազմյան տարիներին ևս Բաքուն մի շարք հակահայկական որոշումներ է ընդունել: Մասնավորապես, Հայաստանի Գորիսի շրջանի սահմանին հարող Հադրութի շրջանի Արփագյաղուկ, Թեսխարաբ, Սպիտակաշեն, Պետրոսաշեն գյուղերը (դրանք ցարական կայսրության օրոք ենթարկվում էին Գորիսին) մարզի միլիցիայի ուժերով բռնագաղթել են այլ բնակավայրեր, որպեսզի Ադրբեջանի ու Հայաստանի միջև եղած միջանցքը Ադրբեջանի օգտին 15-20 կիլոմետրով լայնացվեր: Ինձ թվում է, որ եթե մարզի ղեկավարները այդ հարցով պաշտոնական բողոք գրեին Մոսկվային, ապա Կրեմլն անտարբեր չէր մնա: Ինչևիցե, տեսնելով, որ մարզի ղեկավարները ոչ մի բողոքով չէին անհանգստացնում Մոսկվային, Բաքուն մեկը մյուսի հետևից նոր հակահայկական որոշումներ էր ընդունում: Մեզ համար առանձնապես թշնամական էր լեռնային գյուղերում (մեր գրեթե բոլոր գյուղերն էլ լեռնային են) ձիերի պահումը արգելելու մասին որոշումը (ասում են, թե այդ որոշումը թելադրել է թուրք մի էմիսար, հիշեցնելով, որ 18-20 թվականներին Գարեգին Նժդեհը իր փոքրաթիվ հեծելազորով դիմադրել է կարմիր Մոսկվայի 11-րդ բանակին, որն ընդառաջելով Ադրբեջանին ու Թուրքիային, ցանկանում էր Հայաստանի Զանգեզուրի մարզը ևս միացնել Ադրբեջանին). ձին ու ջորին մեր պայմաններում ֆիզիկական ծանր աշխատանքները թեթևացնող էժան միջոցներ էին: Գյուղացիները նրանց միջոցով էին կատարում իրենց աշխատանքների 50-60 տոկոսը:

«Ձին ու ջորին վերացնելով՝ լեռներում ապրող հայերը ծանր աշխատանքներից կհյուծվեն, հեռավոր դաշտերն ու արոտավայրերը գնալ-գալուց ուժասպառ կլինեն, հետևաբար իրենց անհծյալ լեռներից կքոչեն, իսկ հետագայում էլ հնարավորություններ չեն ունենա, մեր դաշտային գոտիների վրա հարձակվելու»,- այսպես էին իրենց գաղտնի ժողովներում հիմնավորում իրենց այդ ֆաշիստական որոշումը ինտերնացիոնալիզմի անունից խոսող Ադրբեջանի առաջնորդները:

Հիշում եմ, մեր գրեթե բոլոր գյուղերից այդ որոշման առիթով շրջկոմ բողոքի եկած տասնյակ մարդկանց լացակումած հայացքները, այդ թվում՝ սարինշենցի Արսեն Հայրապետյանի խոնավ աչքերը: «Եթե մեզ արգելում են ձի պահելը, ինչու՞ մեր հարևան ադրբեջանցիներին ևս չեն արգելում, որ ձի պահեն: Չէ՞ որ մենք նույն հանրապետության լեռնային գյուղերի քաղաքացիներ ենք»,-ասում էին նրանք: Մենք ամոթից, անպատվությունից մեր գլուխները խոնարհում էինք ցած: Այդ տարիներին մեր գրեթե բոլոր գյուղերում մի միկրոգաղթ է կատարվել, որը նրանց զրկել է 20-25-ական ընտանիքներից, 50-60 դպրոցականներից, մտավորականների հոծ բանակից: Հակահայկական որոշում էր նաև մարզի գյուղերում թթի օղու թորման, գինու պատրաստման արգելման մասին Բաքվի որոշումը: Ղարաբաղցիները օղին ու գինին օգտագործում էին ոչ թե հարբեցողության համար, այլ համապատասխան կալորիա ստանալու համար, որպեսզի կարողանան ֆիզիկական ծանր աշխատանքներ կատարել: Մեր աշխատավորները երբեք չէին չարաշահում ո՛չ օղին, ո՛չ գինին: Այդ բնական խմիչքի չափավոր օգտագործումը (սովորաբար օրեկան 50-100 գրամ օղի, 100 գրամ գինի) նպաստում էր երկարակեցությանը: Մեր բոլոր գյուղերում էլ կային 10-15-ական երկարակյացներ՝ 85-95 տարեկան մարդիկ, որոնք երբեք դեղ չէին օգտագործել, առույգ էին և դեռ աշխատում էին: Մի՞թե մեր մարզի ղեկավարները չէին կարող այդ որոշումների մասին բողոքել Մոսկվային: Կարո՛ղ էին, բայց իսկույն կզրկվեյին իրենց տաք աթոռներից: Հետևաբար նրանցից շատերը ոչ թե մարզի բնակչության մասին էին մտահոգվում, այլ իրենց պաշտոնական աթոռների համար էին դողում: Ադրբեջանը հետպատերազմյան, այսպես կոչված, կոլտնտեսությունների խոշորացման տարիներին հափշտակել է նաև մեր Ղոչալար գյուղը՝ միացրել Ջեբրայիլի շրջանին, բայց մենք դարձյալ լռել ենք:

Օրինակներ կարելի է շատ թվարկել, բայց, հարգելի ընթերցողներ, ես ուզում եմ ձեր ուշադրությունը սևեռել մի այլ կարևոր հարցի վրա: Ղարաբաղյան շարժումը մեր ժողովրդին թե արտասահմանում, թե Հայաստանում, թե այլ վայրերում մի բռունցք է դարձրել իր սահմանադրական իրավունքների համար մղվող պայքարում: Ճիշտ է Ադրբեջանին այս անգամ էլ հաջողվել է խորհրդային բանակը, նրա ռազմական տեխնիկան օգտագործել, որպեսզի ԼՂԻ Մարզը խեղդամահ անի, բայց նրանք այդ ահեղ զենքերով էլ չեն կարողացել մեր ոգուն, մեր միասնությանը, մեր կամքին հաղթել:

Արտակարգ դրության մարզի պարետ Ժուկովը և նրա կամակատարները, մանավանդ Հադրութի պարետ Կրավչենկոն, ամեն ինչ անում էին, որ մարզի հարավը (Հադրութի շրջանը) կտրեն կենտրոնից, սեպարատ պայմանագրով միացնեն Ջեբրայիլի ու Ֆիզուլու շրջանների հետ, բայց նրանք այդ գործը կատարելու համար մեր բնակչության մեջ ոչ մի հենակետ չէին կարողանում ստեղծել: Մեր ժողովրդի ոգու միասնության շնորհիվ է, որ մենք կարողացել ենք ԼՂԻ Մարզը, նրան հարող շրջանները, որոնք մինչև ցարական կայսրության մեջ մտնելը Խամսայի մելիքությունների տարածքներն էին, ազատագրել խորհրդա-ադրբեջանական 70 տարվա լծից: Հետևաբար ղարաբաղյան շարժման այս դասերի ոգով մեր ժողովուրդը իր կուռ միասնականությամբ ի վիճակի է կատարել իր առաջ ծառացած բոլոր խնդիրները:

Հ. Գ

1991թ. դեկտեմբերի վերջին Մ. Ս. Գորբաչովը դամբանական ճառ արտասանելով՝ թաղեց Խորհրդային Միությունը: Նույն ժամանակաշրջանում էլ ԼՂԻ Մարզում և նրա հարակից ադրբեջանական շրջաններում արտակարգ դրության ռեժիմ պահպանող նրա ՆԳՆ հարյուր հազարանոց բանակը, իր տրամադրության տակ գտնվող ռազմական տեխնիկան ու զինամթերքները ջրի գներով ազերի իր կոլեգաներին վաճառելով, շտապեց դեպի հյուսիս...

Բռնապետական երկրի վախճանին սրտատրոփ սպասող, ԼՂԻ Մարզի չորսամյա շրջափակման տարիներին ժամանակակից զենքի բոլոր տեսակներով, բացի ատոմային ռումբից, զինված ու պատերազմի նախապատրաստված սուվերեն Ադրբեջանը լայնամասշտաբ ագրեսիա սկսեց իր հանրապետության 600 հազար հայ խաղաղ բնակիչների (պաշտոնական փաստաթղթերում այդ թիվը դիտավորյալ փոքրացնում էին) և այդ թվում՝ ԼՂԻ Մարզի «ապստամբների» դեմ:

Հույսը դնելով ինտենսիվ հրետակոծությամբ և ռմբակոծությամբ մարզի բնակչությանը արագ զանգվածային բնաջնջման վրա՝ թշնամին նրա գրեթե բոլոր բնակավայրերի ուղղությամբ «գրադներով» օր ու գիշեր 1000-1200 անգամ շիկացած արկեր էր թափում, անմեղ տղամարդկանց ու կանանց, երիտասարդների ու երեխաների արյունը հեղում: Իսկ նրա պետական, քարոզչական մեքենաները տարբեր լեզուներով ազերի ժողովրդին հավատացնում էին, թե իրենց ազգային քաջ բանակը շուտով ոչ միայն բնաջնջելու է իրենց գլուխները ահա չորս-հինգ տարի ցավացնող մարզը, այլև Հայաստանից ազատագրելու է իրենց Զանգեզուրի գավառը (ԽՍՀՄ-ի ճահճացման տարիներին Հ. Ալիևի թելադրանքով Բաքուն 60 հազար ադրբեջանցիների ստորագրությամբ նամակ է ուղարկել կարմիր Կրեմլին և պահանջել, որ Զանգեզուրի երկրամասը վերադարձնեն Ադրբեջանին), Սևանի ավազանը և Նախիջևանով Թուրքիայի հետ իր կապի պորտն ընդարձակելու է ընդհուպ մինչև Երևանի արվարձանները: Սակայն նրա «քաջ» բանակը ոչ մի կերպ չէր կարողանում ճեղքել հայ առյուծների պաշտպանության պողպատե գծերը: Թշնամին միայն խորհրդային 4-րդ բանակի ուժերով է որոշակի հաջողությունների հասել Հյուսիսային Արցախում, ավերել նրա հայկական բնակավայրերը, ամբողջ Շահումյանի շրջանը, նրանց բնակիչներին տանկերի ու զրահամեքենաների ուղեկցությամբ բռնագաղթել իրենց հայրենի հողից, տարել ընդհուպ մինչև Հայաստանի սահմանների բաց դաշտերն ու ձորերը: Նրա բանդիտական որոշ խմբեր էլ «աչքի էին ընկնում» մարզի սահմանամերձ բնակավայրերի զառամյալ մարդկանց, կանանց ու երեխաների անգութ գնդակահարություններով ու խոշտանգումներով:

Այնուամենայնիվ, հիտլերականների պես չկարողանալով կայծակնային արագությամբ մարտական մեծ հաջողությունների հասնել, թշնամին ավելի կատաղի էր հրետակոծում մարզի բնակավայրերը, Բաքու ու Գանձակ, Մինգեչաուր ու Աղդամ, Շաքի ու Եվլախ քաղաքներում, Շամախիի ու Իսմայլվի, Կուտկաշենի ու Վարդաշենի, Շամխորի ու Դաշքեսանի, Գետաբեկի ու Զեբրայիլի, Ֆիզուլու ու Ժդանովի շրջաններում և այլ բնակավայրերում ֆաշիստական դաժանությամբ հայերի էթնիկական մաքրում ու ցեղասպանության կատարում, տանկային անընդհատ գրոհներով փորձում ուղիներ որոնել դեպի Ստեփանակերտ: Հադրութի վրա հարձակման նախապատրաստվելիս, օրինակ, թշնամին 2-3 օր ու գիշեր հարյուրավոր «գրադներով» ավելի քան 3500-3600 անգամ հրետակոծել է նրա շրջակայքը և նրա շրջապատի Այգեստան, Տյաք, Վանք, Թաղասեռ, Վարդաշատ, Կերմրակուճ գյուղերը: Ընդ որում, մարզի շրջափակման տարիներին ազերիները Հադրութի շրջանից բռնագրավել էին վերոհիշյալ գյուղերի հետ օրգանապես շաղկապված Նորաշեն գյուղը, նրա հայ բնակիչներին վտարել իրենց տներից, այդնտեղ ոչ միայն քոչվորներ, մսխեթի թուրքեր վերաբնակեցնել, այլ ադրբեջանական կոլտնտեսություն հիմնադրել, միաժամանակ շրջկենտրոնից ընդամենը 5 կիլոմետր հեռավորության վրա գտնվող հայոց այդ գյուղում թնդանոթներ, «գրադներ» տեղադրել, ծովային ականանետներով զինված հատուկ ջոկատներ կենտրոնացնել:

Ազերիները, կարծելով, որ նման ինտենսիվ հրետակոծությունից հետո Հադրութում և նրա շուրջպարի գյուղերում այլևս ոչ մի կենդանի շունչ չի մնացել, հետևաբար իրենք ոչ մի դիմադրության չեն հանդիպելու, փորձել են այս անգամ շրջկենտրոնի դեմ դիմացի լեռնաշղթայի խորհատի բարձունքով մտնել Հադրութ, քանի որ Հադրութի ձորահովիտով նրանց տանկային գրոհները միշտ էլ անհաջողությամբ էին պսակվում: Գիշերը Զեբրայիլի կողմից համապատասխան զորք ու ռազմական տեխնիկա կենտրոնացնելով լեռնաշղթայի մյուս կողմին, նրանք առավոտյան դեմ գրոհի էին անցել: Սակայն հանդիպելով Հադրութի կորյուն ինքնապաշտպանների անսպասելի հակահարվածներին, ազերի «իգիթները» իրենց մարտական ընկեր-

ների դիակներն ու ռազմական տեխնիկան թողնելով բարձունքում ու սարալանջին, ճողոպրել են դեպի Արաքսի հովիտ:

Նույն ինտենսիվությամբ թշնամին զոր ու գիշեր Աղդամի, Դաշտային Ղարաբաղի տասնյակ բնակավայրերից, Ֆիզուլիից, Ջեբրայիլից, Միրբաշիրից, Կուբաթլիի սահմանամերձ բնակավայրերից, Լաչինից, Քելբաջարից, Հորադիզից և հարյուրավոր այլ կետերից անընդհատ հրետակոծում էր մարզի խաղաղ բնակավայրերը: Չէին դադարում նաև մարզի այս կամ այն բնակավայրի վրա նրա տանկային գրոհները, ռմբակոծությունները: Կատաղի էին գործում նաև թշնամու՝ մարզի ներսի կրակակետերը, որոնց Ադրբեջանը ԼՂԻ Մարզի շրջափակման տարիներին հումանիտար օգնություն ցույց տալու պատրվակով զինել էր ավտոմատներով, նռնակներով և ծովային ականանետերով: Մարզկենտրոնին, օրինակ, մի կողմից հրետակոծում էր Շուշին, մյուս կողմից էլ նրա վրա կրակ էին թափում իր չորս կողմի Խոջալու, Քյոսալար, Կրկժան բնակավայրերը:

Թշնամու հրետակոծություններին, տանկային գրոհներին վերջ տալու, նրա հազարավոր կրակակետերը ոչնչացնելու, մարզը շրջափակման կրակե օղակից ազատելու համար հայ առյուծները, վերջապես, 1992 թվականին բոլոր ուղղություններով հակահարձակման անցան: Չկարողանալով դիմանալ նրանց ճնշումներին, ազերի «իգիթները» թեև 20-25 անգամ գերազանցում էին հայերին, կորուստներ տալով՝ նահանջում էին, մեկը մյուսի հետևից կորցնում իրենց ռազմա-ստրատեգիական կետերը: Իսկ երբ կորցրին Շուշին, Լաչինը ու Աղդամը, որտեղ մարզի շրջափակման տարիներին Ադրբեջանն այնքան ռազմական տեխնիկա ու զինամթերք էր կենտրոնացրել, որոնցով հնարավոր էր դեպի հյուսիս, ընդհուպ մինչև Վոլգոգրադը գրավել, դեպի հարավ մինչև Թեհրան հասնել, յոթ օր սուգ պահեցին:

Սուվերեն պետությունը սրտի դող զգաց, քանի որ այդպիսի վտանգ էր սպասվում նաև իր մյուս բնակավայրերին և այդ թվում՝ Բաքվին, եթե որևէ խորամանկությամբ հայերի առաջխաղացումը չկանգնեցվեր: Երկիրը օրհասական կործանումից փրկելու համար Հ. Ալիևը դիմեց իր ավագ եղբոր փորձին՝ չոքեց Մոսկվայի առաջ և նրա փեշերը համբուրելով՝ խնդրեց, որ կանգնեցնի ղարաբաղցիների առաջխաղացումը, այլապես նրանք Բաքվից՝ իրենց 300-350 հազար հայրենակիցների (այդ թիվը ևս ազերիների շովինիստական պետական մարմինները փոքրացնում էին) էթնիկական մաքրման համար վրեժ կլուծեն, նավթահանքերն ու նավթավերամշակման գործարանները կհրկիզեն, և բռնկված հրդեհը մեծ վնասներ կհասցնի նաև Ռուսաստանի Դաղստանին ու Հյուսիսային Կովկասին...

Այս պարագայում ես չեմ կարող օբյեկտիվ մեկնաբանություններ կատարել, բայց մի բան պարզ է, որ եթե ազերիները լինեին մեր տեղը, մենք էլ ազերիների տեղը, այսինքն՝ նրանք լինեին հաղթանակներով առաջ շարժվողները, մենք էլ պարտվողն ու խայտառակաբար նահանջողը, ապա նրանք ոչ մի միջնորդի և նույնիսկ իրենց Ալլահին չէին լսի, մինչև որ Երևանը չբնաջնջեին...

Ինչևիցե, հայերը այս անգամ էլ ցույց տվեցին, որ իրենք զավթիչներ ու ագրեսորներ չեն և աչք չունեն ուրիշների հողերի վրա, այլ պարզապես ցանկանում են իրենց հարազատներին ազատագրել ազերի ֆաշիստներից, այլապես նրանք նրանց արյունը կհեղեն, քանի որ իրենց մասսայական միտինգները միշտ ավարտում էին «Մա՜հ հայերին...» շովինիստական կոչով...

Ընդառաջելով Մոսկվային, ղարաբաղցիների անունից Ս. Բաբայանը ստորագրեց ԼՂԻ Մարզի և Ադրբեջանի միջև զինադադար կնքելու մասին պայմանագիր: Դրժելով հենց նոր ստորագրած այդ պայմանագիրը, Հ. Ալիևը իր ցաք ու ցրիվ զինվորներին ժողովելով՝ զենք ու զրահը ցած դրած հայ ազատամարտիկներից խլեց մի շարք ստրատեգիական կարևոր կետեր և այդ թվում՝ Մարտակերտի շրջանի Չայլու և Մարաղա բնակավայրերը, Արաքսի հովտի Հորադիզ ավանը և երկաթուղային կայարանը... Մեկնաբանությունները այստեղ ավելորդ են:

...1993թ. սեպտեմբերին ազերիներից ազատագրվեցին նաև Հադրութի շրջանի հարավ-արևմտյան տարածքի 14 գյուղերը, որոնք 1991թ. գարնանն ու ամռանը նրանք խորհրդային զորքերով բռնագաղթել էին: Երբ ես նորից այցելեցի մեր այդ բնակավայրերը, տարբեր տեղերում ապաստան գտած նրանց բնակիչները արդեն վերադառնում էին իրենց գյուղերը, իրենց տների փլատակների մոտ ժամանակավոր կացարաններ կառուցում, որ նրանց մեջ ապրեն, ապա

շինանյութեր հայթայթեն նոր բնակարաններ կառուցելու համար: Զրուցելով նրանց հետ, ես նոր միայն հասկացա, թե ինչպիսի ձգողական ուժ ունի հայրենի հողը, հայրական տունը, տաք օջախը: Թո՛ղ այդ ուժը արյան հետ այսուհետև ևս ընդմիշտ բաբախի մեր ժողովրդի ու նրա ցաքուցրիվ զավակների սրտերում, քանզի ոչ մի թշնամի ի վիճակի չէ հաղթել այդ անդիմադրելի ուժին...

Խանձաձորում գտնվելիս մի խումբ մարդկանց հետ բարձրացանք Դիզափայտ լեռան բարձունքը, որ այդտեղ կառուցված մատուռում, մեր նախնիների սովորության պես, մոմեր վառենք ԼՂԻ Մարզը ազերիների 70-ամյա լծից ազատագրելիս զոհված քաջ ազատամարտիկների հոգիների հիշատակին: Վեհափառ, երկնի մովի մեջ մխրճված այդ լեռան բարձունքից, ինչպես ձեռքի ափի մեջ, երևում են Սյունյաց սարերը, մարզի իր բարձրությամբ 2-րդ լեռը՝ Քիրսը, մեր ամբողջ Դաշտային Ղարաբաղը, մայր Արաքսի հովիտը: Այդտեղ Նապոլեոն Գասպարյանը, ձեռքը մեկնելով Սյունյաց սարերին, ասաց.

-Ազերիները 18-20 թվականներին թուրքական բանակի միջոցով են ավերել մայր Հայաստանի ու Արցախի կամուրջ Հաքարլվի ձորահովիտի հայկական բնակավայրերը, այդտեղ քոչվոր քրդեր ու ազերիներ վերաբնակեցրել և դրանով իսկ որդին բաժանել մորից: Այդ նույն բանը նրանք խորհրդային զորքերի միջոցով կրկնել են 1991թ. գարնանն ու ամռանը՝ Հադրութի ու Շուշվա շրջանների՝ Հայաստանի սահմաններին հարող 24 գյուղերը բռնագաղթել: Մենք, անկասկած, վերականգնելու ենք այդ գյուղերը: Ես արդեն իմ հայրենի գյուղում սկսել եմ իմ նոր բնակարանի կառուցումը: Մի քանի տարի հետո էլ բնակարաններ կկառուցեմ իմ Գարիկ ու Սուրիկ տղաների համար, որպեսզի նրանք ևս հայրենի հողում, սուրբ Դիզափայտ լեռան հարևանությամբ օջախ ունենան, և նրա պատիվը պահեն աչքի լույսի պես: Որպեսզի մեր Հայաստանը այսուհետև ոչ մի թշնամի այլևս չկարողանա ծվատել, նրան թուլացնել, ապա և ստրկացնել, մենք պետք է մի բան պակաս ուտենք, մի կահ-կարասի պակաս ունենանք, բայց հզոր բանակ պահենք և նրա նկատմամբ էլ ծնողական հոգատարություն ցուցաբերենք...

Երբ ես վերադառնում էի տարածաշրջանի կամուրջ Քարինգ գյուղից, լեռներում կարճատև անձրև տեղաց, ապա քամիները հալածեցին ամպերը, և նորից բացվեց լազուր երկինքը: Արևի գունդը ժպտալով՝ գլորվում էր սարի անդին: Աստծո հրաշք ծիածանը այդ գյուղի երկնաքեր Գարեսարի բարձունքը յոթ գույներով միացրեց Սյունյաց սարերի հետ:

Թո՛ղ Աստծո օգնությամբ Նաիրի աշխարհից հափշտակված մեր բոլոր բնակավայրերն ու տաճարները, լեռներն ու գետերը, դաշտերն ու անտառները մեր անառիկ Շուշիի բերդի պես ազատագրվեն և ծիածանի յոթ գույներով այդպես ամուր ու ջերմ գրկախառնվեն...

ԱՐՄԱՏՆԵՐԻ ԿԱՆՉԸ

Հրապարակախոսական դրամա չորս գործողությամբ: Առաջին, երկրորդ, երրորդ գործողությունները կատարվել են 1937 թվականին. չորրորդը՝ 1992 թվականին:

Գործող անձինք

Ներսես Սաթունց - ուսուցիչ
Աշխեն - նրա կինը, ուսուցչուհի
Լուսիկ - նրանց աղջիկը, դպրոցական
Ստեփան Բաբունց - կոլտնտեսության նախագահ
Օհան Քոլյան - կոլտնտեսության հաշվապահ
Արփիկ - նրա կինը
Բախշի Հուրյան - կոլտնտեսական
Երեմ Ծափունց - կուսշրջկոմի առաջին քարտուղար
Վալի Գուլուզադե - կուսկենտկոմի պատասխանատու աշխատող
Սայմազ Սայմազով - կուսշրջկոմի առաջին քարտուղար
Բիլալ Թոփուշով - շրջդատախազ
Արկադի Տեր-Թադեւոսյան - Գնդապետ, Արցախի ազատամարտիկների գլխավոր հրամանատար
Մանվել Գրիգորյան - Արևասարի դաշտային հրամանատար
Արթուր Աղաբեկյան - Հադրութի ազատամարտիկների հրամանատար
Սամվել Բաբայան - մարզկենտրոնի ազատամարտիկների հրամանատար
Աշոտ - Լուսիկի որդին
Թուրք սպա - Վալի Գուլուզադեի որդին
Սպասարկող կին
Հերթապահ ազատամարտիկ, ազատամարտիկներ
Ծանոթություն - 1-ին, 2-րդ, 3-րդ գործողություններում իրենց դերը կատարած դերասանները (սիրողական կատարողները) 4-րդ գործողությունում կարող են նոր դեր կատարել, մասնավորապես՝ Ներսեսը՝ Արկադի Տեր-Թադեւոսյանի դերը, Բախշին՝ Մանվելի դերը, Ծափունցը՝ Արթուրի դերը, Ստեփանը՝ Աշոտի դերը, Վալին՝ թուրք սպայի դերը, սպասարկող կինը՝ Արփիկի դերը, մյուսները՝ ազատամարտիկների դերերը:

Առաջին գործողություն

Տեսարան 1

Բեմը ներկայացնում է Արևասարի փեշին ծվարած Հողեր գյուղի համայնապատկերը: Առաջին պլանի վրա լուսավորվում է Ն. Սաթունցի բնակարանը: Լուսիկը հափշտակված գիրք է ընթերցում: Թևի տակ ամսագրեր ու լրագրեր ժողոված՝ աջ դռնից մտնում է Ներսեսը, մոտենում աղջկան:

Ներսես, - Լուսիկ, աղջիկս, շնորհավորում եմ, հոյակապ շարադրություն ես գրել: Մի շնչով, հափշտակված եմ ընթերցել քո այդ գործը: Ես նրանից մի հատված եմ ընտրել, արտագրել իմ ծոցատետրում: Ահավասիկ (ծոցատետրը հանում է գրպանից, հանդիսավոր ընթերցում), «Լեռնային Ղարաբաղի հարավային տարածքի բնակավայրերը բոլորել են բարձրաբերձ Դիզափայտ լեռան շուրջը: Երկնի մովի մեջ մխրճված ալեհեր այդ նահապետն ահա երկու հազարամյակ զորավիգ է նրանց: Նրա արքուն հայացքի տակ գտնվող իմ հայրենի Հողեր գյուղը մարզի հարթավայրային և լեռնային գյուղերի պողպատակուռ կամուրջն է: Որքան հզոր լինի Հողերն, այնքան անսասան կլինեն այդ բնակավայրերը: Իսկ եթե որևէ ուժ նվաճի այդ գյուղը՝ կջլատի մարզի բռունցքը» *(ծոցատետրը դնելով գրպանում)* Ինչպիսի՜ խորաթափանցություն...

Լուսիկ *(վեր կենալով աթոռից)*, - Հայրիկ, գիտեմ, դու ատելով ատում ես ամեն մի կեղծիք և չես սիրում ավելորդ բառեր շռայլել որևէ աշխատանք գնահատելիս, մինչդեռ իմ գրավորն այդքան բարձր ես գնահատում, թեև ես սովորական շարադրություն եմ գրել՝ խուսափելով տրորված շավիղներից ու ծամծմված մտքերից:

Ներսես *(շոյելով աղջկա մազերը)*, - Արդարև, քո գրավորը ինքնատիպ է, տրաֆարետ մտքերից զերծ: Համառորեն գեղարվեստական գրքեր ընթերցելով՝ դո՛ւ բավականին մտքով փթթել ես, լեզուդ դարձել է ճարտար: Իսկ լեզվի նրբությունները իմացողը միշտ էլ կարող է իր թուրը փայլեցնել իր ընդդիմախոսների դեմ: Քո թուրը, աղջիկս, այս անգամ փայլեցրել ես ճոխ բոլանդակությամբ: Քո մտքերը, որոնց մեջ հայկյան պողեր են մխում, ոսկեծուփ արտերի հասկերի պես հասունանում են...

Լուսիկ, - Հայրիկ, դու հաճախակի հորդորում ես, որ մենք՝ դպրոցականներս, թափանցենք գրողների, մեծ մտածողների երկերի ակունքները, նրանց մտքերի բևեռացումը հանդիսացող հատվածները անգիր սովորենք: Մեր ականջներում միշտ հնչում է քո այն միտքը, թե հայ դասական գրողների քերթվածքների ընթերցողները չեն կարող հայրենասերներ չլինեն: Ես չեմ սահմանափակվում դպրոցական աղքատիկ ծրագրով, հափշտակված ընթերցում եմ նաև քո թաքցրած գրքերը: Նրանց հայաշունչ խոսքի ներգործությամբ է, որ իմ կանաչ մտքերը հասունանում են...

Ներսես *(զգույշ չորս բոլորը նայելով)*, - Դո՛ւ իմ թաքցրած գրքերին տեղյա՞կ ես, աղջիկս...

Լուսիկ, - Այո, հայրիկ: Ես հափշտակված ընթերցում եմ քո թաքցրած բոլոր գրքերը: Նրանց հայրենասեր հերոսների սրտերի կրակից իմ սրտում էլ հուր է բռնկվել...

Ներսես *(ցածր ձայնով)*, - Աղջիկս, ոչ ոքի այդ մասին ոչինչ չասես, քանզի կարող են մեզ մատնել, քեզ էլ զրկել համալսարանում սովորելուց: Մեզ զրկելով հայրենասիրական ու հումանիստական գաղափարներով տոգորված այդ գրքերից՝ մեր գլուխները հեշտությամբ լցնում են կոմունիստական վերացական - սխեմատիկ մտքերով: Ողջունում եմ, աղջիկս, որ իմ թաքցրած գրքերը ընթերցում ես, միայն, կրկնում եմ, ոչ ոք չպիտի իմանա, որ ես արգելված հեղինակների գրքեր եմ պահում, այլապես ամենուր վխտացող լրտեսները և նրանց հազար ու մի կամակատար որդերը ինձ Սիբիր կուղարկեն...

Լուսիկ, - Գիտեմ, մի անհանգստանա, հայրիկ: Ես քեզ չեմ մատնի, այդ գրքերը միանգամայն գաղտնի եմ ընթերցում...

Ներսես, - Կարմիր Մոսկվայի՝ մեր նկատմամբ կատարվող բարոյական և ֆիզիկական հալածանքներով չբավարարվելով՝ Բաքուն էլ ճարպկորեն օգտվելով ժամանակի ոգուց, մարզի ապիկար ղեկավարների ձեռքերով անխնա ավերում է մեր արմատները, մեր երկրամասի հայկական հնությունները, պատմա-

ճարտարապետական հուշարձանները բնաջնջում, մեր հին գրքերը խարույկի մեջ նետում: Կատաղի մոլուցքով մեր սրբատաշ քարերից քերում են մեսրոպյան գրերը, ոչնչացնում հոգևոր տաճարները, որոնք հայերիս փրկել են քոչվոր ցեղերի մեջ միաձուլվելուց, Ասորեստանի, Բաբելոնի, Բյուզանդիայի պես կուլ գնալուց...

Լուսիկ, - Մի՞թե կարելի է ձեռք բարձրացնել սրբությունների վրա, հայրիկ...

Ներսես, - Հիշո՞ւմ ես, Լուսիկ, որ ձեր դասարանցիներին Դիզափայտը, Գանձասարը, Գտիչ վանքը էքսկուրսիա եմ տարել: Դրա համար շրջդատախազը քիչ է մնացել, որ ինձ զնդան նետի: Կոլխոզի ազդեցիկ նախագահ Ստեփանի միջնորդությամբ ազատվել եմ նրա ճիրաններից...

Լուսիկ, - Այդ էքսկուրսիաները երբեք չեն խամրի մեր հիշողության մեջ: Մենք հիացել ենք մեր իմաստուն նախնիների ձեռքերով պատրաստված այդ հուշարձաններով, մանավանդ վեհաշուք Գանձասարով, Գտիչ վանքով, նրանց մոտ գտնվող նրբագեղ խաչքարերով:

Ներսես, - Լուսիկ, ինչպես գիտես, ես գաղտնի լինում եմ այդ հուշարձանների մոտ, ուսումնասիրում և վերծանում եմ այդ սրբությունների խորհուրդները, որ հանձնեմ սերունդներին, այլապես նրանք կխամրեն դարերի փոշու մեջ կամ կավերվեն ինտերնացիոնալիստական լոզունգներով կուրացած մեր չինովնիկ - բյուրոկրատ ղեկավարների ձեռքերով *(պաուզա)*:

Լուսիկ, - Քո այդ հանդգնությունը, հայրիկ, սերունդներն ըստ արժանույն կգնահատեն:

Ներսես, - Ես հենց նոր եմ այցելել Գտիչ վանքը և քիչ է մնացել խելագարվեմ: Մեր կոմսոմոլները քարուքանդ են արել 12 - րդ դարում կառուցած՝ Տողասարի վեհության հետ միահյուսված այդ տաճարը, որն անգամ թաթար մոնղոլները չեն կարողացել նվաճել: Մեր երիտասարդները օտարներից փրկված վանքի սրբատաշ քարերը այլանդակել են, նրա հին գրքերը մոխիր դարձրել: Իսկ վանքի հսկա զանգը, որը դարեր շարունակ բարբարոսների ներխուժումից արթուն էր պահում մեր լեռնաշխարհի բնակիչներին, նրանց արհավիրքի ժամին համախմբում, մարտի կանչում մեր հողը ներխուժած զավթիչների դեմ, ծվատել են: Մի խումբ ծպտված մարդիկ էլ, տեղացիների վկայությամբ, անհետացրել են այդտեղ գտնվող խաչքարերը: Իրադարձություններից օգտվելով՝ Բաքուն մեր ձեռքերով մեզ զրկում է մեր արմատներից: Իսկ երբ ծառերը զրկվում են արմատներից, չորանում են, անհետանում, կորչում...

Լուսիկ *(ընդոստանալով)*, - Հայրի՛կ, կարելի՞ է, որ մենք՝ դպրոցականներս, այդ մասին նամակ գրենք մեծ Ստալինին, հիշեցնենք, որ քաղաքակիրթ աշխարհը սրբությամբ է պահպանում հնությունները, մինչդեռ Լեռնային Ղարաբաղում դրանք անխնա քարուքանդ են արվում, ավերվում...

Ներսես, - Չհամարձակվե՛ս, Լուսիկ: Ռուսաստանում ևս Ստալինի և նրա մերձավորների նախաձեռնությամբ բազմաթիվ հոյակապ հուշարձաններ, որոնք ռուս մեծ ժողովրդի հանճարեղ մտքի մարմնացումն են, բարբարոսաբար ավերվում են: Սովետական երկիրն ասես հատուկ պատվերով ռուսների արմատները ևս ավերում է, միլիոնավոր ռուսների արյամբ նվաճած տարածքները հանուն կոմունիզմի համաշխարհային հաղթանակի, շռայլում է օտարներին...

Տեսարան 2

Աշխեն *(ներս է մտնում սփռոցը ձեռքին)*, - Ներսես, ճաշը պատրաստ է, սեղանը բացե՞մ:

Լուսիկ, - Մամա, հայրիկը մտադիր չէ ճաշելու: Իմ գրավորը հայրիկին այնպիսի հոգևոր սնունդ է տվել, որ ախորժակը կորցրել է...

Աշխեն *(հետաքրքրվելով)*, - Ի դեպ, Ներսես, Լուսիկը ինչպե՞ս է գրել շարադրությունը:

Ներսես, - Հոյակապ: Սակայն ես վախենում եմ, որ նրա համարձակ մտքերի համար մեզ Սիբիր աքսորեն: Ահավասիկ, եթե Տողա-

գետի վրա ջրամբար կառուցվի, նրա ջրերը հասցվի Արևասարի փեշերի գյուղերը, անհամեմատ բարեկեցիկ կապրեն նրանց բնակիչները:

Աշխեն, - Հիրավի, Ներսես, այդ գետակը *(մոտենում է պատին ամրացված մարզի քարտեզին, ցույց տալիս գետակը)* թեև հոսում է մարզի հարավային տարածքով, բայց նրա ջրերով միայն մեր հարևան ադրբեջանցիներն են ոռոգում բամբակի պլանտացիաները, իսկ մեր դաշտերը պապակ են մնում, վազերը տոթից խեղդվում են, բանջարանոցները՝ չորանում: Մի՞թե դա էլ մուսուլմանական աշխարհում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի արագացման հետ է կապված...

Ներսես, - Ահա թե որտեղից է գալիս Լուսիկի հայրենասիրությունը: Երևի քո աշխարհայացքի ձևավորման վրա մեծ ներգործություն է ունեցել հայաշունչ Գանձասարը, որի թարթիչների տակ է գտնվում ձեր գյուղը: Քո այդ հայացքների համար է, որ մեր ինստիտուտի բոլոր աղջիկների մեջ քեզ եմ ջոկել, ընտրել, սիրել: Սակայն որպեսզի մենք իրար չկորցնենք, այլևս այսպիսի մտքեր չպիտի արծարծենք:

Լուսիկ, - Հայրիկ, մի՞թե հանցագործություն ենք անում, երբ շիտակ մտքեր ենք արտահայտում:

Ներսես, - Միայն այդ շիտակ մտքերի համար մեր մարզից ամեն օր չորս - հինգ ընտանիք են Սիբիր աքսորում: Մենք պետք է անչափ զգույշ լինենք, ուրիշների հետ մտքեր չփոխանակենք, քո շարադրությունն էլ պետք է թաքցնենք...

Տեսարան 3

Ստեփան *(տխուր, մտամոլոր մտնում է բեմ)*, - Կարելի՞ է, Ներսես:

Ներսես *(գնալով ընդառաջ)*, - Համեցեք, խնդրեմ:

Աշխեն, - Նախագահ, աչք - ունքդ թթված են, ի՞նչ է պատահել:

Ստեփան, - Առանձին բան չկա, Ներսեսի հետ մի փոքր գործ ունեմ: Ավելի ճիշտ՝ այս պահին նրա խորհրդի կարիքն եմ զգում, ինչպես հնձվորը զեփյուռ է փափագում արևակեզ ժամին:

Աշխեն, - Ներսես, թող ճաշասեղանը բացեմ, նրա շուրջը մարդու տրամադրությունն անհամեմատ բարձրանում է *(Աշխենը և Լուսիկը բեմի մի անկյունում սեղան են բացում)*:

Ներսես, - Ստեփանը երևի չհրաժարվի գյուղական ուսուցչի տանը մի կտոր հաց վայելելուց:

Ստեփան, - Ճիշտ է, շտապում եմ, բայց չեմ կարող հրաժարվել ձեր սեղանից: Ձեր ընտանիքի հետ շփվելը ինձ հոգևոր սնունդ է տալիս այս խառը - գորշ ժամանակաշրջանում և ցրում իմ գլխավերևում թանձրացող մշուշը:

Տեսարան 4

Ստեփանը և Ներսեսը բոլորում են սեղանի շուրջը: Աշխենը և Լուսիկը թողնում են բեմը:

Ներսես *(բարձրացնելով օղու գավաթը)*, - Ողջ լինենք: Փառք Աստծո, որ այս մռայլ տարիներին, երբ երկրի բոլոր մարզերում էլ կարկտաբեր ամպեր են կուտակվում, մեր գյուղին դեռ կայծակ չի խփել: Դրա համար գյուղը պարտական է քեզ, Ստեփան: Մինչդեռ մեր հարևան գյուղերի ղեկավարները, տոն տալով երկրում տիրող բռնությանը, յուրովի հաշվեհարդար են տեսնում իրենց դուր չեկող մարդկանց հետ, նրանց դաշնակցականի, տրոցկիստի, ազգայնամոլի պիտակներ կպցնելով՝ սրբում են մարզից: Տումու և Ծամձորի կոլտնտեսությունների նախագահները ռեկորդ են սահմանել իրենց համագյուղացիների աքսորման գործում: Եթե այսպես շարունակվի, մեր Արցախում լուսավոր գլուխներ չեն մնալու, հետևաբար խավարամիտ տգետներն են մեզ ուղղություն տալու: Այս կրակի մասին ով խոսում է, նրան էլ Սիբիր են աքսորում կամ գնդակահարում: Իսկ եթե չխոսենք, սրտներս կպայթի: Ուղղակի շիկացած աքցանի մեջ ենք...

Ստեփան, - Թեկուզ այդ հարցում շրջանային մարմինները ինձ անընդհատ նախատում են, պահանջում, որ ես էլ մի քանի հոգու մեղադրեմ հակասովետական որևէ հարցում, բայց ձգտում եմ, որ մեր գյուղից ոչ ոքի չձերբակալեն: Այսուամենայնիվ, զգում եմ՝ սև ուղտը մեր դռանն էլ է չոքելու, մանա-

վանդ որ այս գիշեր մի չարագուշակ երազ եմ տեսել: Մի խումբ ավազակներ մեր գյուղի գեղեցիկ կանանց ու աղջիկներին մեզնից խլում - տանում են Մալական և մենք չենք կարողանում նրանց փրկել: Այդ երազի տպավորության տակ առավոտյան հազիվ եմ գրասենյակ մտել, երբ կուսշրջկոմի առաջին քարտուղար Երեմ Ծափունցը հեռախոսով կապվել է ինձ հետ, կարգադրել, որ վաղը լինեմ Մալականի կուսշրջկոմում՝ Կենտկոմի ներկայացուցիչ Գուլուզադեի մոտ: «Չուշանա՛ս, թե չէ քեզ պարտիայից կվռնդեմ», - հեռախոսով հոխորտացել է նա: Որպես խելոք, խավարի մեջ լույս տեսնող մտավորական, եկել եմ քեզ մոտ: Ինչ ես կարծում, ինչո՞ւ են ինձ Մալական հրավիրում: Ինչո՞ւ մեր հանդիպումը Հադրութի կուսշրջկոմում չի կայանում: Ի՞նչ կապ ունի մեր գյուղը Մալականի հետ, չէ՞ որ մենք ԼՂ - ի Մարզի վարչական կազմի մեջ ենք գտնվում: Գուցե՞ ինձ ուզում են թակարդ գցել, որ քեզ պաշտպանել եմ դատախազի անհիմն մեղադրանքից...

Ներսես, - Ստեփան, այդ հարցերը, իրոք, տագնապահունչ են: Դրանց պատասխանները, ցավոք, չեմ կարող կռահել: Համենայն դեպս, խորհուրդ եմ տալիս, որ հանդիպես բարձրաստիճան ղեկավարի հետ և շռշափես նրան նաև մեր շրջանի վերելքի համար օդ ու ջրի պես անհրաժեշտ Տողագետի վրա ջրամբար կառուցելու հարցում:

Ստեփան, - Ճիշտ ես ասում կարելի է փորձել այդ հարցի մասին ևս խոսել, որովհետև երբ Երեմ Ծափունցն այդ մասին խոսք է լսում, բուլդու նման պտտվում է իր շուրջը:

Ներսես, - Ստեփան, մենք էլ այսուհետև պետք է զգույշ լինենք, այլապես մեզ ևս կարող են զրպարտել, քանզի շրջանում Ծափունցի, Օհանի պես մարդիկ սնկի պես արագ աճում են, որոնք առիթը ձեռքից բաց չեն թողնում խելոք մարդկանց սևացնելու համար: Վտանգավոր տիպ է հատկապես Օհանը, որը իր կնոջ միջոցով հիմա նաև գյուղական սովետի նախագահի աթոռն է գրավել: Ծափունցը, ըստ երևույթին, նրան նախապատրաստում է քո աթոռի համար: Երբ Արփիկը իր ցուցամատը ուղղի քո աթոռին, ամուսինը կբազմի նրա վրա և առաջին հերթին իմ ու քո տուն կքանդի...

Ողջ լինենք *(գավաթը նորից խփում է Ստեփանի գավաթին և խմում)*: Կարծում եմ, ինձ իրազեկ կդարձնես քո հանդիպման արդյունքներին:

Ստեփան, - Անշուշտ *(գնում է)*:

(Վարագույրը ծածկում է բեմը, ապա բացում)

Տեսարան 5

Խոշոր պլանի վրա լուսավորվում է բեմի մյուս թևում գտնվող կոլտնտեսության գրասենյակը: Օհանը քթի տակ երգելով ադրբեջանական մեղեդի, համրիչի վրա հաշիվներ է կատարում: Ներս է մտնում Ստեփանը:

Ստեփան, - Օհան, կոլխոզնիկները ինձ հանգիստ չեն տալիս, հաց չունեն, գուցե՞ մինչև տարվա վերջը չսպասենք, ավանսի կարգով նրանց մթերքներ բաշխենք:

Օհան *(սեղանի թղթերը մի կողմ դնելով)*, - Խոսքի օրինակ, ի՞նչ մթերքներ, նախագահ:

Ստեփան, - Առաջին հերթին՝ հացահատիկ:

Օհան, - Խոսքի օրինակ, եթե այդ պատասխանատվությունը քեզ վրա ես վերցնում, կարող ես չսպասել: Սակայն եթե իմ հայր Օհանջանն էլ գերեզմանից ելնի, չեմ նահանջի, որովհետև Ծափունցից վախենում եմ: Մի խոսքով, իմ պարտիական տոմսի պատիվը չեմ կարող կոլխոզնիկների ոտքերի տակ գցել...

Ստեփան, - Խորոմի պես ճռճռան այդ ֆրազները ե՞րբ ես սերտել, Քոլունց Օհան: Կոլխոզնիկները քեզ հաշվապահի պաշտոն են վստահել, դու էլ նրանց վարձը տալու համար նա՞զ ես անում:

Օհան *(վիրավորված)*, - Խոսքի օրինակ, շրջանի բոլոր պաշտոնները ընկեր Ծափունցն է բախշում: Հետևաբար, հաշվապահի պաշտոնը նա է ինձ վստահել և ոչ թե կոլխոզնիկները: Համոզվելով սոցիալիզմի գործին իմ հավատարմության մեջ՝ նա հիմա էլ ինձ համատեղության կարգով գյուղական սովետի նա-

խագահի պատասխանատու պոստն է վստահել: Երկրորդը՝ ես օրիորդ չեմ, որ նազ ու տուզ անեմ: Երրորդը՝ ես կոմունիստական պարտիայի անդամ եմ, սրբությամբ կատարում եմ նրա շրջանային շտաբի կարգադրությունը: Ինչպես գիտես, մեր աստված Ծափունցը կարգադրել է, որ մինչև տարեվերջ բերքաբաշխում չկատարենք: Ես էծ չեմ, որ վերադասի վրայով ցատկեմ, որովհետև մի գլուխ ունեմ, այն էլ մեր դարաշրջանի խելքի ու մտքի կամքն է կատարում... Ես իմ այդ սկզբունքներից չեմ շեղվի, քանի որ ապրում եմ սոցիալիստական երկրում...

Ստեփան *(հեգնելով)*, - Բնականաբար, սեփական գլուխ չունես...

Օհան, - Նախագահ, խոսքի օրինակ, դու չե՞ս զգում, որ ստալինյան դարաշրջանում սեփական գլուխը ավելորդ է, փորձանք: Ո՞ւմ է պետք այն կարկաժը, որ իր տիրոջը, նրա ընտանիքին պատուհասի մեջ է պահում: Ավելի լավ չէ՞, որ պողպատե առաջնորդին փառաբանենք մեր գլխները փորձանքի մեջ չգցելու համար...

Ստեփան, - Քո այդ փիլիսոփայությունը, ինչ խոսք, ժամանակի ծնունդ է, բայց դարաբաղցի տղամարդը կաղնու պես անսասան պետք է լինի և ոչ թե դամիշի պես ամեն մի քամու առաջ ծռվի: Ուստի ես չեմ կարող կոլխոզնիկներին մինչև տարեվերջ սոված պահել...

Օհան, - Ստեփան, երևում է, որ գլուխդ, խոսքի օրինակ, ցավում է: Չլինի թե ուսուցիչ Ներսես Սաթունցի՝ Արևասարի լանջին հարատևելու մասին քարոզները քեզ վրա ևս ներգործություն են ունենում: Դու քանի գլուխ ունես ուսերիդ, որ փորձում ես Ծատունցի կարգադրությունը փոխել: Նա նոր է ինձ հետ հեռախոսով կապվել և միանգամայն պարզ հուշել. «Ի պատիվ ստալինյան կոնստիտուցիայի հերթական տարեդարձի, ձեր կոլտնտեսությունը 400 տոննայի փոխարեն «հայրենիքի շտեմարանը» պիտի առաքի 600 տոննա հացահատիկ»:

Ստեփան *(զարմացած)*, - 600 տոննա՞: Եթե այդքան հացահատիկ տանք պետությանը, մեր պահեստում բան չի մնա կոլխոզնիկներին բաշխելու համար:

Օհան, - Ինչ էլ մնա, չմնա՝ իմ և քո բաժինը բոլ - բոլ կլինի: Ինչ ես գլուխդ կորցրել. կոլխոզնիկների՝ Արևասարի լանջին հարատևելու մասին ես մտահոգվում: Այսօր բոլ - բոլ ապրիր՝ վաղը ինչ կլինի թող լինի: Որպես տեղական սովետի նախագահ, քեզ զգուշացնում եմ՝ Ներսես Սաթունցի հետ այլևս չշփվես: Նրա խորթ մտքերը մոլորեցնում են մարդկանց: Ես խուսափում եմ նրան հանդիպելուց, որպեսզի նրա թունավոր մտքերով չվարակվեմ...

Ստեփան *(սառնասրտորեն)*, - Դու Ներսես Սաթունցին իզուր ես հոլովում: Նա իր գործին է՝ ո՛չ ինձ հետ է շփվում, ո՛չ կոլխոզնիկների: Ինձ մտատանջում է այն միտքը, որ սոված մարդիկ կոլխոզում չեն աշխատելու, լքելու են գյուղը, մարզը...

Օհան, - Լքում են, թող լքեն, իմ և քո աշխատավարձը չի պակասի, բոլ - բոլ կլինի...

Ստեփան, - Գյուղը, մարզը կդատարկվեն: Բուի նման ես ու դու կմնանք նրանց ավերակներում:

Օհան, - Դատարկ գյուղը ղեկավարելն ավելի հեշտ է: Չարախոսներից գյուղը կազատվի, ես էլ շրջանի աստված Ծափունցին հաճախակի իմ տունը կհրավիրեմ: Դու էլ նրան կոլխոզի հաշվին շռայլ պատիվ կտաս, որպեսզի մինչև մահդ նախագահի գահին մնաս: Խոսքի օրինակ, դա Բաբելոնի թագավորությունից գերազանց բան չէ՞...

Ստեփան, - Քեզ ինչ ասեմ, չասեմ, քո էշն ես քշելու: Ես վաղը Մալական եմ գնալու: Ինձ ընդունելու է Կենտկոմի պատասխանատու աշխատող Գուլուզադեն: Կփորձեմ նրա միջոցով լուծել մեր խրթին հարցերը:

Օհան *(զարմանալով)*, - Սովորաբար նախագահի հետ ժողովներին հրավիրում են նաև հաշվապահին: Ինչո՞ւ ինձ Մալական չեն հրավիրել, որ ես էլ իմ մտքերն ասեմ մեր հարազատ Կենտկոմի բարձրաստիճան ներկայացուցչին:

Ստեփան *(հեգնելով)*, - Երբ լուլա - քյաբաբը պատրաստեն, քեզ էլ են հրավիրելու...

Տեսարան 6

Բախշի *(ներս է մտնում մանգաղը ձեռքին)*, - Բարև ձեզ: Նախագահ, ինչու՞ մթերքներ չեք բաշխում կոլխոզնիկներին: Սոված փորով ո՞վ կաշխատի դաշտում:

Օհան, - Կուսշրջկոմը թույլ չի տալիս:

Բախշի, - Ինչու՞ Մալականի կուսշրջկոմը թույլ է տալիս: Մեր հարևան ադրբեջանցիներն արդեն երկու անգամ կոլխոզներից բերք են ստացել: Մենք նույն հանրապետությունում չե՞նք ապրում:

Ստեփան, - Բախշի: Ես վաղը Մալականում հանդիպելու եմ Կենտկոմի ներկայացուցիչի հետ և ձգտելու եմ մթերքների բաշխման հարցը ձեր օգտին լուծել:

Բախշի, - Ստեփան, այսօր մի քանի հոգի խորհուրդ ենք արել՝ հացի համար ղարիբության գնալ: Ես նրանց անունից եմ քեզ մոտ եկել, եթե նրանց հաց չտաք, ապա գյուղից քոչելու են...

Ստեփան, - Բախշի, մեր Արևասարը նեղ օրեր շատ է տեսել: Սև ամպերը նրա գլխին հաճախակի են չոքել, բայց մեր նախնիները գյուղը չեն լքել՝ գիտակցելով, որ ամպամած օրերին պայծառ օրեր, գիշերներին՝ ցերեկներ են փոխարինում, այդպես նրանք հարատևել են իրենց ապուպապերից ժառանգած այս արգավանդ երկրամասում, ծանրությունը տարել իրենց ուսերին *(պաուզա)*:

Մալականից կգնամ Ծափունցի մոտ *(հնչում է հեռախոսի ձայնը: Ստեփանը վերցնում է լսափողը)* Հասկանալի է, ընկեր Ծափունց, անպայման կգամ ձեզ մոտ *(լսափողը դնում է ցած)*

Օհան, - Նախագահ, ձայնդ աշնան առվակի պես կտրվեց: Երևի քարտուղարը քեզ հուփ տվեց...

Բախշի *(դառնալով Օհանին)*, - Վերևից նա է մեզ հուփ տալիս, այստեղ՝ դու, բայց մենք մեր յախան ձեզնից կազատենք...

Օհան *(հեգնելով)*, - Ջորու բիիրը միշտ իր փորն է ծակում: Լոք - լոք անելու փոխարեն՝ ոչխարի պես գլուխներդ խոնարհեցեք վար, աշխատեցեք: Եթե հոգնում եք, օդի խմեցեք, որ ոչ մի բան չտեսնեք: Աշխարհի բանն է այդպես, ե՞րբ եք մի բան հասկանալու, բռի գյուղացիներ...

Ստեփան *(վրդովված)*, - Օհան, մարդկանց ներվերի հետ մի խաղա...

Բախշի *(ցասումով)*, - Ճիշտ է ասում՝ ցորեն հաց չունես, ցորեն լեզու էլ չունե՞ս...

Օհան *(բորբոքված)*, - Ստեփան, դու արդեն վարագույրը անցնում ես: Ես ոչ թե մարդկանց ներվերի հետ խաղում եմ, այլ նրանց մեղվի պես խայթում եմ, որպեսզի պարտիայի ու սոցիալիզմի գծերից չշեղվեն...

Բախշի, - Ամբողջ տարին աշխատացնե՞լը, տարեվերջին մի թուլափայ տա՛լը ճի՞շտ ուղի է, Քոլունց Օհան:

Օհան, - Ամբողջ երկրում է այդպես, Բախշի, բայց դու ոտքդ բարձրացնում ես, իսկ Ստեփանը, իր լռությամբ, քեզ սատար է լինում: Որպես գյուղական սովետի նախագահ, ես այդ չեմ հանդուրժի: Ուստի ձեր դեմ բողոքելու եմ, թե չէ մեր պողպատե առաջնորդի հասցեին կարող եք մի անհամ բան ասել, մեզ խայտառակել ամբողջ երկրում...

Ստեփան, - Փոքրոգի տղամարդկանց, իրոք, յուրահատուկ է սրան - նրան զրպարտելը *(գնում է)*

Բախշի, - Քոլունց Օհանջանի որդի, ես զգում եմ՝ մեր հինավուրց գյուղի գլուխը դու ուտելու ես *(գնում է)*

Օհան *(մեն - մենակ)*, - Իզուր չեն ասում, թե ցորեն հացը պոզեր է ունենում: Ստեփանը կոլխոզի հաշվին հարստացել է: Այդ հարստությունն է նրա պոզերը հանում, մեզ պոզահարում: Չէ, այդ պոզերը պետք է կտրեմ, թե չէ Բախշու նման անգրագետները գլուխ կբարձրացնեն, պարտիայի գծից կշեղվեն, մեր գլխին փորձանք կբերեն, ինձ նմաններին էլ կգլորեն ցած...

Պետք է շտապեմ, նրանց լեզուները կտրեմ, պոզերը՝ քանդեմ...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Երկրորդ գործողություն

Տեսարան 1

Բեմը ներկայացնում է Ադրբեջանի Մալականի շրջկենտրոնի՝ ծառերով բոլորված մի անկյունը, որի մեջ մխրճված է կուսշրջկոմի հյուրանոցը: Նրա գորգերով զարդարված ընդունարանում ճաշում են Վալի Գուլուզադեն և Սայմազ Սայմազովը: Գեղեցիկ, փարթամ արտաքինով մի կին սպասարկում է նրանց, ապա թողնում բեմը:

Վալի *(գինովացած, օղու բաժակը մի կողմ հրելով, ատամները քչփորելով՝ ծեմելով բեմում)*, - Սայմազ մուալլիմ, անկասկած, գյոզալ կին ես ընտրել ինձ սպասարկելու համար, բայց մի կոպիտ սխալ ես կատարել, որի համար քեզ ներել չեմ կարող...

Սայմազ *(զարմանալով)*, - Խոստանում եմ իմ սխալն անմիջապես ուղղել, Վալի Հեյդարովիչ: Ձեր ամեն մի իմաստուն դիտողություն ես կարմիր տառերով կգրեմ իմ ծոցատետրում, որպեսզի կուսշրջկոմի բյուրոյի քննարկման հատուկ առարկա դարձնեմ, մեր կադրերի ուշադրությունը սևեռեմ նրա վրա...

Վալի, - Քո գլխից ծե՞ռք ես քաշել, որ Կենտկոմի պատասխանատու աշխատողի դիտողությունը չկատարես: Քո սխալը, գարդաշ, կայանում է նրանում, որ ինձ սպասարկելու համար մի կին ես ընտրել և այն էլ ադրբեջանուհի: Ո՞ւր են քո խանության ուռենու պես նազող հայերը, կապուտաչյա մալականները, սլացիկ քրդերը, լեզգիները: Ինչո՞ւ նրանցից մի - մի գոզալ չես ջոկել, ընտրել քո վսեմափայլ հյուրին սպասարկելու համար: Չէ՞ որ ամեն մի ծաղիկ իր բուրմունքը ունի, ամեն պտուղ՝ իր համը: Իմ մազերին, ինչպես տեսնում ես, արդեն եղյամ է իջնում: Հետևաբար՝ ինձ պետք է ոչ թե մի գյոզալով գոհացնես, այլ երեք - չորսով, որ նրանց բուրմունքն ու համը ինձ հարբեցնեն և ոչ թե այս դառը արաղը *(օղու լի շիշը հրելով մի կողմ)*:

Սայմազ *(անակնկալի գալով)*, - Մինչև մեկ - երկու ժամը շրջանի ամենագյոզալ հայ, մալական, քուրդ, լեզգի կանայք այստեղ կլինեն...

Վալի, - Ուշ է, գարդաշ, շուտով Լեռնային Ղարաբաղի Հողեր գյուղի կոլտնտեսության նախագահը կգա: Ես Կենտկոմի հանձնարարությամբ նրան պիտի ընդունեմ: Սակայն եթե այսուհետև էլ այդ մակարդակով ղեկավարես շրջանը, Բաքուն քեզ չի վստահի: Չէ՞ որ խոսքը ոչ միայն ինձ երկու օրով սպասարկելու բարձր ճաշակի մասին է, այլ քո խանության ոչ ադրբեջանցիների տարազը կարճ ժամանակամիջոցում անխտիր փոխելու ծրագրային խնդրի մասին: Բնականաբար, քո խանության մյուս ազգերը, մասնավորապես՝ այլ հավատի հայերը, պետք է ադրբեջանցիների հետ անընդհատ շփվեն, որպեսզի իրենց արմատներից, սովորություններից, երգ ու պարից և մանավանդ մեսրոպյան գրերից, որոնցով նրանք մեր հոգին հանում են, զրկվեն, իրենց դեմքը կորցնեն, սառույցի պես մեր մեջ հալվեն, անհետանան:

Սայմազ, - Հայոց լեռների ձնաշերտերը, դժբախտաբար, նույնիսկ շիկացած արևը չի հալեցնում, բայց այդ գործը դուք հեշտ եք պատկերացնում: Այստեղ էլ հայերն ամուր են կառչել իրենց արմատներին: Մեր տարածքներում և Լեռնային Ղարաբաղում հայկական բազմաթիվ հուշարձաններ կան, որոնց ճակատներին հայոց գրերով անխտիր մի բան է գրված: Մենք չենք կարող այդ քարերից ջնջել հայկական գրերը: Իսկ Ալլահը մեզ չի ների, եթե Գանձասարի վանքից, մյուս հոգևոր տաճարներից հայկական գրերն ու քանդակները ավերենք...

Վալի, - Երևում է, որ աչքդ վախենում է մեր այդ ծրագրի կատարումից, բայց մենք այս կողմից, օսման թուրքերի նոր ժառանգներն այն կողմից, հայոց լեռները կչոքացնենք մեր առաջ, նրանց գրերը աշխարհից կանհետացնենք, դարավոր հուշարձանները՝ կավերենք: Մի խոսքով, նրանց կզրկենք իրենց արմատներից: Բաքուն այդ ուղղությամբ արդեն հատուկ ծրագիր է իրականացնում՝ փակում է հայկական դպրոցներն ու թատրոնը, քաղաքի աչքում գտնվող հայկական եկեղեցին քանդելու ենք, որ նրա տեղը կոնսերվատորիա կառուցենք, որպեսզի այնտեղ ոչ թե հայոց հոգևոր երգեր հնչեն, այլ մեր մեղեդիները... Այլ կերպ ասած՝ ինչ երիտթուրքերն ու քեմալականները հայերի բնաջնջման ասպարեզում կիսատ են թողել դարասկզբին, Բաքուն ու Անկարան դա կկատարեն դարավերջին: Ան-

համբեր սպասում ենք, որ իրադարձությունները հասունանան, Կրեմլում նորից Լենինի պես մուսուլմանական աշխարհի բարեկամ մի շահնշահ նստի, որպեսզի մեր կիսատ մնացած ծրագիրը կատարենք, առանց հայերի թևակոխենք 21-րդ դար, որովհետև նրանք սև սեպի պես խրվել են թուրքալեզու մեր գարդաշների մեջ և թույլ չեն տալիս, որ Օսմանլուն նրանց համախմբի իր կանաչ դրոշի տակ, նորից մի հզոր կայսրություն ստեղծի ու ձեռնամուխ լինի Ռուսիայի ու Եվրոպայի թուրքացման ծրագրի կատարմանը...

Սայմազ, - Իսկ Ռուսիան ու Եվրոպան քնած սպասում են, որ Թուրքիան իրենց կուլ տա՞...

Վալի, - Նրանց քնեցնելու դեղատոմսն էլ ունենք: Ի՞նչ ես կարծում, եթե նրանց թուրքերը չքնեցնեին, ապա կարո՞ղ էին Միջին Ասիայի կիզիչ ավազուտներից 11 - րդ դարում Փոքր Ասիա քոչել, չորս դար այնտեղ՝ Բյուզանդական կայսրության տաք գրկում նախապատրաստվել, ապա նրան 1453 թվականին Եվրոպայի աչքերի առաջ կործանել ու մեկընդմիշտ նրան թաղել: Մեր օրերում էլ՝ հայերին 15 - 23 թվականներին բնաջնջել, նրանց Ղարսի, Նախիջևանի, Ղարաբաղի խանությունները՝ մեր ազիզ Լենինի ու նրա զինակիցների ձեռքերով բռնագրավեին...

Սայմազ, - Թո՛ղ Ալլահը օգնի ձեզ այդ գործում...

Վալի, - Ինչո՞ւ ձեզ և ոչ թե մեզ: Միթե՞ այդ հարցում դու համամիտ չես մեր իմաստուն ծրագրի հետ:

Սայմազ, - Համամիտը՝ համամիտ եմ, սակայն հայերի արմատների բնաջնջման ձեր պատրանքները չեմ կարող կիսել: Թալյաթ փաշան ևս ամբողջ ձայնով բացականչել է, թե աշխարհում մի հայ կթողնի, այն էլ թանգարանում և դրանով իսկ թուրք ժողովրդի վրա մի սև, անջնջելի բիծ է թողել, բայց հիմա էլ հայերն են մեր Բաքուն, հանրապետության մյուս քաղաքները կառուցում, մեր գործարանների ու ֆաբրիկաների ղեկավար պոստերում աշխատում, գիտության ու արվեստի բնագավառում ակնառու դեր կատարում:

Վալի, - Դա այդպես էլ պետք է լինի ըստ Ստալինի այն թեորիայի, թե զարգացած ազգերը սոցիալիստական հասարակության առաջին փուլում պետք է օգնեն հետ մնացած ազգերին, իսկ նրանք էլ այդ փուլում, օգտվելով սոցիալիզմի բոլոր արտոնություններից, իրենց ազգային կադրերը պատրաստեն, անընդհատ աճեն, զարգանան, որ կարողանան պայքարել դասակարգային թշնամիների դեմ ու իրենց երկրների տերը դառնան, զարգացած ժողովուրդներին էլ իրենց տարածքներից դուրս քշեն...

Սայմազ, - Դուրս քշե՞ն...

Վալի *(բորբոքված)*, - Դու ըմբոստանում ես մեր քաղաքական գլխավոր գծի դեմ: Ուրեմն՝ այսպես, թե այնպես պաշտպանում ես հայերին, այսինքն՝ հարում ես դաշնակցական կուսակցությանը, որն արտասահմանում քայքայիչ, զրպարտչական աշխատանք է կատարում կարմիր ԽՍՀՄ - ի դեմ:

Սայմազ, - Վալի Հեյդարովիչ, Ալլահի օրենքներով հյուրին չեն անպատվում, սակայն ես չեմ կարող չընդգծել, որ իմ ազգին ավելի շատ եմ սիրում, քան հանրապետության կենտրոնական մարմիններում ազգի և սոցիալիզմի մասին շաղակրատող, բայց պարապությունից ճանճերին հալածող չինովնիկները...

Վալի *(հեգնանքը կուլ տալով)*, - Ես մեր ալլահին իրազեկ կդարձնեմ քո այդ դիրքորոշման մասին:

Սայմազ, - Կարծում եմ, որ կարիք չկա գործը հասցնել հանրապետության ալլահին: Նախ նա կկարծի, թե դու անկարող մարդ ես, որ սրա - նրա մասին կնոջ պես բամբասում ես: Հետևաբար ձեզ կզրկի Կենտկոմի բազկաթոռից: Երկրորդը՝ ես պաշտոնական վայրում չեմ, այլ հյուրանոցում եմ, ուր կարելի է երբեմն նաև կատակել: Ինչ վերաբերվում է գործնականին՝ ապա այսօր էլ կարող եմ վերադասի ամեն մի կարգադրություն կատարել, Լեռնային Ղարաբաղի մեր հարևան Հադրութի շրջանը այնպես կուլ տալ, որ ոչ ուղտը երևա, ոչ էլ ուղտապանը...

Վալի, - Մոլոդեց, դու կատակել էլ գիտե՞ս...

Սայմազ *(տհաճ խոսակցության թեման կտրուկ փոխելով)*, - Վալի Հեյդարովիչ, հայ նախագահը ուշանում է, թող ես գնամ նրա հետևից, դուք էլ մի քիչ հանգստացեք, որ նրան թարմ գլխով ընդունեք:

Վալի *(մեղմանալով)*, - Խելոք բան ես ասում: Ես ուտելուց հետո սովորաբար 1 - 2 ժամ հանգստանում եմ, որպեսզի Լենինի սկզբունքներից չշեղվեմ...

Տեսարան 2

Սայմազը մոտենում է բեմ մտած սպասարկող կնոջը, նրա ականջին ինչ - որ բան հուշում, դուրս գալիս ձախ դռնով:

Սպասարկող կին *(թեյի բաժակը ձեռքին մոտենում է Վալուն)*, - Հանգիստ քնելու համար, Վալի քիշի, մի բաժակ թեյը չի խանգարի...

Վալի *(բռնելով նրա թևից)*, - Հաճույքով, քո պատրաստած թեյը անուշ է:

Սպասարկող կին *(փարվելով հյուրին)*, - Թեյից հետո ձեզ համար ի՞նչն է հաճելի:

Վալի, - Թեյից հետո դարձյալ թեյն է անուշ:

Սպասարկող կին *(բարձրաձայն ծիծաղելով)*, - Այդ բառերից արխիվի հեղձուցիչ հոտ է փչում, մինչդեռ սովրոմենն՝ ղեկավարները այլ բան են ասում:

Վալի *(հետաքրքրվելով)*, - Այսինքն:

Սպասարկող կին *(նազանքով նստում է նրա ծնկներին)*, - Թեյից հետո առյուծ տղամարդիկ մրգի հյութ են խմում: Ինչի՞ հյութ է փափագում ձեր սիրտը առյուծի:

Վալի *(գրկելով սպասարկող կնոջը)*, - Ինչ քո ճաշակով է:

Սպ. կին *(փարթամ կուրծքը հարճի պես օրորելով)*, - Ոչ, դուք պետք է ասեք...

Վալի, - Ծիրանի հյութ:

Սպ. կին *(թևը գցելով Վալու ծոծրակով)*, - Այն տղամարդիկ, որոնք ցանկանում են ինձ պես գյոզալ կնոջը յոթ օր ու գիշեր անխափան վայելել, պետք է նռան հյութ խմեն, կախարդական ուժ ստանան, կնոջը մի անգամ գրկելով չկշտանա՞ն, նրանից չհեռանա՞ն: Ես յոթ գիշեր ձեզ կքրտնեցնեմ իմ բորբ գրկում, թույլ չեմ տա, որ իմ մերկ, օձագալար մարմնից պոկվեք, որովհետև սիրո՞ւն եք, սիրո՞ւն, սիրո՞ւն...

Վալի *(բարձր տրամադրությամբ)*, - Շուտ ինձ համար նռան հյութ բեր, որպեսզի քեզ և՛ աջ պտտեմ և ձախ...

Սպ. կին *(ուրախանալով)*, - Մի րոպե *(նա բեմահարթակի մյուս ծայրում գտնվող պահարանից մի բաժակ հյութ է լցնում, տալիս Վալուն)*, - Ահա և կյանքի հյութը, խմեցեք, կրքերդ բորբոքեցեք և իմ գիրկը մտեք...

Վալի *(բաժակը պարպելով)*, - Ուխա՜յ, սա, իրոք, անմահական հյութ է, առյուծի կաթ, կյանքի արմատ: Այսպիսի հյութ խմողը նա սամոմ դելե, քառասուն օր ու գիշեր քեզ պես գյոզալից չի կշտանա, ինչպես բուլբուլը վարդից, թիթեռը կրակից...

Սպ. կին *(նազանքով)*, - Դե, իմ կրակ գիրկը մտեք, բուլբուլ իմ աննման *(Վալու թևից ձգում է դեպի բազմոցը, կիսամերկանում, պառկում, տղամարդուն ձգում դեպի իր գիրկը)*

Տեսարան 3.

Սայմազ *(աննկատ բացում է դուռը, դիտում իր թելադրանքով սարքած տեսարանը)*, - Վալի Հեյդարովիչ, ներեցեք, ես մի քիչ շուտ եկա: Այսինքն՝ չգիտեի, թե հյուրանոցը լրբանոց եք դարձրել: Ավելի ճիշտ, հայ նախագահն է մեղավոր: Նա շատ շուտ է եկել: Ես նրան կկարգադրեմ, որ ձեզ սպասի...

Վալի *(սթափվելով)*, - Ես նախագահին վաղը կընդունեմ, դու էլ սոցիալիստական Կենտկոմի պատասխանատու աշխատողի հանգիստը դիտավորյալ խանգարելու համար գլխովդ պատասխան ես տալու:

Սայմազ, - Ես իմ խանությունում ձեզ մի այնպիսի պատիվ եմ տալու, որ ստիպված եք լինելու բարեխոսել, որպեսզի Կենտկոմի ապարատում ինձ մի չաղ - յուղալի պոստ տան... Հիմա դրսում ձեզ սպասում են իմ խանության ամենից գյոզալ հայ, մալական, քուրդ, լեզգի կանայք, ընդունեցեք նրանց, մի լավ հարբեցեք նրանց համով, բուրմունքով, որպեսզի երբեք - երբեք չմոռանաք իմ խանությունը...

Սպ. կին *(ձեռքերը լայնորեն տարածած մոտենալով Վալուն)*, - Ես ոչ մի օրիորդի՝ ոչ ադրբեջանուհու, ոչ մալականի, ոչ հայի, ոչ քր-

դի թույլ չեմ տա, որ ինձնից խլեն իմ առյուծ Վալուն *(նրա թևից ձգելով՝ տանում է դեպի բազմոցը)*: Դուք խոսք եք տվել քառասուն օր ու գիշեր իմ գրկում մնալ: Թե իգիթ եք, խոսքը գործ դարձրեք *(պառկում է բազմոցին, իր կողմը ձգում հյուրին)*:

Վարագույրը դանդաղ փակվում է, 3 - 4 րոպեից հետո բացվում:

Տեսարան 4.

(Վալին՝ ինտիմ կապերից խոնջացած, պառկել է բազմոցին: Հնչում է հեռախոսի զանգը: Վալին պառկած դիրքից վերցնում է լսափողը), - Ձեր այդ հրահանգներն անպայման կկատարեմ: Երեկոյան դեմ նրանց կոլեկտիվ դիմումը իմ թղթապանակում՝ կաճապարեմ Բաքու: Ամեն ինչ զգույշ եմ կատարում: Մոսկվան ոչ մի բան չի իմանա: Հայերի արմատների քանդման ձեր միտքը ինձ դուր է գալիս: Այո, մինչև որ Լեռնային Ղարաբաղը ներսից չպայթեցնենք, այսինքն՝ չադրբեջանականացնենք, Հայաստանը իր այդ գյոզալ մարզը մեզ չի զիջելու: Ճիշտ եք ասում՝ հայերի տները հայերի ձեռքերով պիտի քանդենք: Սաղ օլում *(լսափողը դնում է ցած, վեր կենում բազմոցից, մոտենում հայելուն)*, - Այ քեզ կին: Ինձ ուղղակի քամեց, ճզմեց, ինչպես լիմոնն են ճզմում բաժակի մեջ: Ափսոս, որ ջահել ժամանակս չեմ քեզ հանդիպել, որ քո հոգին հանեմ, քեզ լիմոնի պես ես ճզմեմ: Բայց հիմա էլ վատ չճզմեցի, ինձնից գոհ մնաց, թույլ չտվեց, որ մյուս օրիորդներին էլ ընդունեմ...

(Սեղմում է կոճակը: Ներս է մտնում Սայմազը):

Տեսարան 5.

Սայմազ *(ներս է մտնում աջ դռնից)*, - Վալի Հեյդարովիչ, գյոզալը ձեզ դուր եկա՞վ:

Վալի *(լուրջ տոնով)*, - Կատակի ժամ չէ, մեր սոցիալիստական Կենտկոմը շատ անհանգիստ է: Շուտ հայ նախագահին հրավիրիր ինձ մոտ: *(Սայմազը դուրս է գալիս)*:

Տեսարան 6.

(Գուլուզադեն ճեմում է գորգերի վրա: Ներս են մտնում Սայմազը և Ստեփանը):

Ստեփան, - Բարև ձեզ, ընկեր Գուլուզադե:

Վալի *(լուրջ)*, - Բարև: Նստիր, Ստեփան քիշի: *(Ստեփանը նստում է աթոռներից մեկի վրա)*: Ստալինյան, լուսապայծառ, սոցիալիստական դարաշրջանում ո՞նց է փթթում քո ղեկավարած կոլխոզը: Բաքուն ինչո՞վ կարող է իր ինտերնացիոնալ պարտքը կատարել ձեր գյուղի հանդեպ, որպեսզի ավելի շատ մթերքներ տաք մեր ազիզ պետությանը:

Ստեփան, - Շնորհակալություն այդ հոգատարության համար, ընկ. Գուլուզադե: Մեր կոլխոզի պլանները շատ ծանր են, քան հարևան ադրբեջանական կոլխոզներինը: Մենք, օրինակ, տարեկան 600 տոննա հացահատիկ ենք մթերում պետությանը, իսկ նրանք՝ հազիվ 20 - 30 - ական տոննա:

Վալի *(հազիվ զսպելով վրդովմունքը)*, - Դա այդպես էլ պետք է լինի: Դա բխում է մեծ Լենինի՝ Ադրբեջանին յուրահատուկ արտոնություններ տալու թեորիայից, որպեսզի մեր օրինակով մուսուլմանական աշխարհում ռևոլուցիոն սիտուացիաներ հասունանան... Եվ միայն այդ չնչին հա՞րցն է ձեզ անհանգստացնում:

Ստեփան, - Մեր շրջանին հուզում է նաև Տողագետի վրա ջրամբար կառուցելու խնդիրը, որը հնարավորություն կընձեռի անհամեմատ բարձրացնել Արևասարի փեշերի կոլխոզների դաշտերի և այգիների բերքատվությունը: Մեր կոլխոզնիկները դժգոհ են նաև բերքաբաշխման պրակտիկայից, այլ կերպ ասած՝ նրանք հիմա հաց չունեն, որովհետև իրենց վաստակած ցորենից դեռ բաժին չեն ստացել...

Վալի *(մեկեն բռնկվելով)*, - Դրանք դաշնակցական և հակասովետական հարցեր են, որոնց հեղինակը եթե դու ես, ենթակա ես բանտարկության ու գնդակահարության:

Ստեփան *(գունատվելով)*, - Մի՞թե ես թշնամական բան ասացի, ընկեր Գուլուզադե: Առհասարակ, երբ հայերս մեր օգտին որևէ հարց ենք բարձրացնում, Բաքուն մեզ դաշնակցականի պի-

տակ է կպցնում, որպեսզի մենք ոչ մի պահանջ չներկայացնենք նրան, նույնիսկ չասենք, որ աղբյուրի մոտ ծարավ մեռնում ենք...

Վալի *(հիստերիկ պտտվելով բեմում)*, - Դու հանդգնում ես ինձ առարկե՞լ: Ի՞նչ տոնով ես խոսում Կենտկոմի պատասխանատու աշխատողի հետ, գյադա...

Ստեփան, - Կենտկոմի ներկայացուցիչը իրավունք ունի՞ այդպես մարդկանց վիրավորել...

Վալի, - Ես կարող եմ քո աչքերն էլ հանել, հենց այս ժամին քեզ Սիբիր աքսորել, որովհետև քո գլխում դաշնակցական և հակասովետական գաղափարներ են պտտվում...

Ստեփան *(սառնասրտորեն)*, - Ես դաշնակցության հետ առնչություն չունեմ, Վալի Հեյդարովիչ, բայց պարտավոր եմ մեր վերադասին իրազեկ դարձնել մեր դժվար խնդիրների մասին, որպեսզի նա մեզ օգնի Ստալինյան կոնստիտուցիայի հերթական տարեդարձը աշխատանքային ծանրակշիռ հաջողություններով նշանավորելու համար:

Սայմազ *(միջամտելով խոսակցությանը)*, - Վալի Հեյդարովիչ, Ստեփանը առաքինի մարդու տպավորություն է թողնում և միանգամայն իրավասու խնդիրներ է դնում վերադասի առաջ: Իզուր եք նրա հետ այդ տոնով խոսում...

Վալի *(փոքր - ինչ մեղմացած)*, - Իր դաշնակցական և հակասովետական գաղափարներո՞վ...

Սայմազ, - Երեմ Ծափունցը Հադրութի բոլոր դաշնակցականներին Սիբիր է աքսորել:

Վալի *(մեկեն զղջալով)*, - Ստեփան քիշի, ես խենթ մակույկի պես իմ ափերից դուրս ելա, կներես, մի քիչ կոնծած եմ: Ես պատրաստ եմ քո խելոք առաջարկությունները մեր սոցիալիստական Կենտկոմ հասցնել և ձգտել, որ դրանք ձեր օգտին լուծվեն:

(Պաուզա. Վալին մոտենում է Ստեփանին, ձեռքը դնում նրա ուսին). քեզ ընկերական մի խորհուրդ եմ տալիս. եթե ուզում ես, որ ձեր կոլխոզի մթերումների պլանները նվազեցնենք, ապա պետք է ԼՂԻ Մարզի կազմից դուրս գաք, միանաք հարևան Մալականի շրջանին, քանի որ մահմեդական աշխարհում սոցիալիստական ռևոլյուցիոն խմորումները արագացնելու համար Լենինի պահանջով ադրբեջանցիներին ավելի շատ արտոնություններ է տրվում, քան մյուս ազգերին և այդ թվում՝ հայերին: Քեզ դրա համար եմ հրավիրել այստեղ, որ ձերոնք այդ մասին չիմանան: Դու այդ մասին ձեր կոլխոզնիկների ստորագրությամբ մի դիմում պետք է սարքես՝ հասցեագրված մեր ազիզ ու հոգատար Կենտկոմին *(պաուզա)*: Հը՞, կկարողանա՞ս պարտիական այդ հանձնարարությունը մինչև 2 - 3 ժամը կատարել:

Ստեփան *(հազիվ զսպելով վրդովմունքը)*, - Դա հնարավոր բան չէ, ընկեր Գուլուզադե: Ինքնավար մարզի վարչական կազմից ինչպե՞ս կարելի է քմահաճույքով մի գյուղ անջատել և միացնել այլ շրջանի, մանավանդ որ նա իր էթնիկական կազմով հայկական գյուղ է և սերտորեն միաձուլված է իր հարևան մյուս հայկական գյուղերի հետ:

Վալի *(նորից փրփրելով)*, - Հնարավոր է, ստալինյան էպոխայում եզից՝ հորթ, ջորուց՝ քուռակ պահանջելը ևս օրինավոր է: Ձեր Լեռնային Ղարաբաղի Մարզը իր էթնիկական կազմով հայկական չէ՞, բայց հանուն մուսուլմանական աշխարհում սոցիալիստական ռևոլյուցիաների արագացման 23 թվականին պողպատե Ստալինի կարգադրությամբ միացվել է Ադրբեջանին: Ախր ո՞վ կարող է շեղվել մեծ Լենինի մարգարեական՝ ռևոլյուցիոն սիտուացիաներ ստեղծելու համար հատուկ զոհեր տալու մասին ծրագրից... Ուստի մենք կարող ենք այդ ճանապարհին ոչ միայն ձեր Հողեր գյուղը, այլև ձեր ամբողջ մարզը և անգամ Հայաստանը զոհել... Թե կասկածում ես ինձ՝ ականջներդ սրիր և լսիր, թե ի՞նչ է ասել մուսուլմանական աշխարհի մեծ բարեկամ Լենինը այդ մասին...

Տեսարան 7

Վալի Գուլուզադեն, Սայմազը և Ստեփանը նստում են բեմի մյուս ծայրում, իսկ ռեժիսորը հեռուստացույցի միջոցով կամ դերասանների կատարմամբ ցույց է տալիս տեսապատկերներ 21 թվականին Կրեմլում Լենինի հանդիպումը թուրքական պատվիրակության ներկայացուցիչներ Յուսուֆ Քեմալ բեկի ու Ալի Ֆուադ փաշայի հետ:

Լենինը գրասեղանի հետևում նստած ինչ - որ բան էր գրում: Ներս են մտնում պատվիրակները: Լենինը գնում է ընդառաջ, սեղմում նրանց դեպի իրեն մեկնած ձեռքերը: Առաջինը Յուսուֆ Քեմալ բեկը չոքում է Լենինի առաջ, ապա փոքր - ինչ բարձրանալով՝ անընդհատ համբուրում նրա աջը:

Յուսուֆ Քեմալ բեկ, - Մուսուլմանական աշխարհի նոր աստղ Մուստաֆա Քեմալ փաշա անհաղթ զորավարից հազար ողջույն արար աշխարհի պրոլետարիատի շահնշահ, աշխարհի նախկին բոլոր իմաստուններից ավելի իմաստուն, մուսուլմանական աշխարհի անշահախնդիր բարեկամ Լենինին:

Լենին *(քա՜հ, քա՜հ ծիծաղելով)*, - Իմ պրոլետարական բոցավառ ողջույնն էլ հասցրեք մուսուլմանական աշխարհի բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության շահերի անզիջում պաշտպան, պետական հմուտ գործիչ ու տաղանդավոր զորավար Մուստաֆա Քեմալ փաշային:

Յուսուֆ Քեմալ բեկ *(Լենինին շողոքորթելով)*, - Ձեր ջերմ ու սրտաբուխ ողջույնը, անկասկած, կհասցնենք ձեր հավատարիմ բարեկամ, ձեր ռևոլյուցիոն գործերի ջատագով Մուստաֆա Քեմալ փաշային: Նա մեզ պատվիրել է, որ ձեզ հաղորդենք, թե ժամանակակից կապիտալիստական կեղծ ու խարդախ աշխարհում սոցիալիստական Ռուսիայի շահերը միայն Թուրքիան ու Ադրբեջանն են պաշտպանում և այսուհետև էլ հնարավոր ամեն մի բանով կաջակցեն նրան կապիտալիստական վայրի բլոկադայի դեմ պայքարելու գործում: Նա սիրում է ձեր աշխատությունները կարդալ և հիանում է ձեր ռևոլյուցիոն մտքերի իմաստությամբ ու շատ է ցանկանում, որ ձեր օրինակով Թուրքիայում ևս սոցիալիստական ռևոլյուցիա կազմակերպի: Սակայն ափսոսում է, որ Թուրքիայում այժմ դեռ զարգացած բանվոր դասակարգ չկա, ուստի խնդրում է ձեզ, որ Թուրքիային ինչպես արդեն օգնել եք, այսուհետև էլ օգնեք ոսկով, զինամթերքներով, այլ նյութական միջոցներով, որպեսզի Թուրքիայում կարճ ժամանակամիջոցում բանվոր դասակարգ ստեղծենք, ապա նրանց պողպատե ձեռքերով սոցիալիստական ռևոլյուցիա կատարենք և Ռուսիայի նման ընթանանք զարգացման սոցիալիստական ուղիով...

Լենին *(միանգամայն լուրջ տոնով)*, - Դա, նեսամնեննո, նախ պետք է բանվոր դասակարգ ստեղծել, ապա և սոցիալիստական ռևոլյուցիա կատարել: Ես շատ ուրախ եմ, որ Մուստաֆա Քեմալ փաշան լավ է հասկանում մարքսիստական թեորետիկական այդ կարևոր դրույթը: Նրան հաղորդեցեք, թե սոցիալիստական Ռուսիան իր հավատարիմ բարեկամ Թուրքիային ինչպես օգնել է, այնպես էլ կօգնի և՛ ոսկով, և՛ զինամթերքով, և՛ զենքով, և՛ զինված հատուկ ջոկատներով, և՛ այլ նյութական միջոցներով, որպեսզի նա մուսուլմանական աշխարհում սոցիալիստական ռևոլյուցիայի լաստոչկա դառնա...

(Խոսակցությանը մասնակցում է պատվիրակության մյուս ներկայացուցիչը)

Ալի Ֆուադ փաշա *(դարձյալ անընդհատ համբուրելով Լենինի աջը)*, - Մեր արևաշող Մուստաֆա Քեմալ փաշան մեզ պատվիրել է, որ Ձեզ իրազեկ դարձնենք, թե ինքը հայերին խրատելու ու պատժելու համար ստիպված է եղել ցարական կայսրության Ղարսի վիլայեթը՝ օկուպացնել, ապա մեծ բանակով Հայաստանի մյուս վիլայեթները ավերել, որովհետև նա ոչ թե կարմիր Մոսկվայի հետ է դաշնակցում, այլ իմպերիալիստական Եվրոպայի հետ:

Լենին *(լուրջ տոնով)*, - Դա, ովքեր սոցիալիստական ռևոլյուցիոն արդի բուռն էպոխայում մեզ հետ չեն, մեր թշնամիներն են, իսկ թշնամիներին ոչ միայն պատժում են, այլև գնդակահարում են...

Ալի Ֆուադ փաշա *(Լենինի պատասխանից գոտեպնդված)*, - Դեպի Եվրոպա ձգտող Հայաստանի այդ քայլերը շատ վտանգավոր

են հատկապես սոցիալիստական Ռուսիայի, ապա նաև նրա հարևաններ Թուրքիայի ու Ադրբեջանի համար, քանի որ նրա այդ վատ օրինակին կարող են հետևել ցարական Ռուսիայի մյուս ժողովուրդները, մասնավորապես՝ Միջին Ասիայի, Վոլգայի վերին տարածքի, Հյուսիսային Կովկասի մահմեդական ժողովուրդները, որոնց վիլայեթները նավթի, գազի այլ ստորգետնյա գանձերի անսպառ պաշարներ ունեն: Հետևաբար սոցիալիստական Ռուսիան կզրկվի այդ պաշարներից և առանց դրանց ի վիճակի չի լինի, ինչպես դուք եք մարգարեաբար գրել ձեր «Սովետկան իշխանության հերթական խնդիրները» աշխատության մեջ, հաղթել կապիտալիզմին...

Լենին *(լրջորեն մտահոգված)*, - Դա, ոչ մի կերպ թույլ չէի տա, որ անտիռևոլյուցիոն վատ օրինակը տարածվի...

Ալի Ֆուադ փաշա *(Լենինի պատասխանից թևավորված)*, - Այդ փաստերը հաշվի առնելով՝ Մուստաֆա Քեմալ փաշան ձեզ խնդրում է, որ կարմիր Կրեմլը, քանի դեռ ուշ չէ, Հայաստանին խիստ պատժի, նրա Նախիջևանի, Ղարաբաղի խանությունները և նրանց հարող հայաբնակ շրջանները միացնի նավթի ու գազի հարուստ պաշարներ ունեցող Ադրբեջանին: Նրան էլ յուրահատուկ արտոնություններ տա, որ կարմիր Ռուսիայի կազմում ամենածաղկուն սոցիալիստական հանրապետությունը դառնա, որպեսզի մուսուլմանական աշխարհը հետևի նրա օրինակին և ընթանա սոցիալիզմի ուղիով: Թուրքիան այդ պայմաններում ցարական կայսրության բոլոր թուրքալեզու ժողովուրդներից կպահանջի, որ հլու - հնազանդ ենթարկվեն սոցիալիստական Կրեմլին և ակտիվորեն մասնակցեն նոր կյանքի կառուցման գործին...

Լենին *(լուրջ մտահոգված)*, - Նեսամնեննո, նեսամնեննո...

Ալի Ֆուադ փաշա *(Լենինի ռեպլիկից գոտեպնդված)*, - Մուստաֆա Քեմալ փաշան գտնում է, որ Նախիջևանի ու Ղարաբաղի խանությունները Ադրբեջանին միացնելու գործը չպետք է ուշացնել, քանի որ ձեր առածը հուշում է, թե երկաթը տաք - տաք են ծեծում, այլապես Հայաստանը իր այդ ստրատեգիական կարևոր երկրամասերը կտրամադրի իմպերիալիստական Եվրոպային՝ կարմիր Ռուսիայի ու նրա հավատարիմ բարեկամներ Թուրքիայի ու Ադրբեջանի դեմ ռազմական գործողություններ ծավալելու համար:

Լենին *(միանգամայն լուրջ)*, - Դա, վեկ ժիվի, վեկ ուչիս: Այդ գործը, նեսամնեննո, կվճռենք մեր հավատարիմ Ադրբեջանի օգտին՝ մեր կառավարության անդամների հետ խորհրդակցելուց հետո:

Ալի Ֆուադ փաշա *(շողոքորթելով)*, - Մուստաֆա Քեմալ փաշան իր զորավարական տաղանդով կանխազգում է, որ իմպերիալիստական Եվրոպան ու Հայաստանը նորից պատերազմ են սկսելու կարմիր Մոսկվայի, Թուրքիայի ու Ադրբեջանի դեմ, որպեսզի Հայաստանի կորցրած վիլայեթների ազատագրման պատրվակով հափշտակեն Ադրբեջանի ու Հյուսիսային Կովկասի նավթի ու գազի անսպառ պաշարները: Հենց այդ գանձերի համար է, որ եվրոպական երկրները՝ Սեւրիում հայամետ միջազգային պայմանագիր են կնքել, Հայաստանին Տրապիզոն քաղաքի տարածքով Սև ծովի ափից բավականին տարածություն հատկացրել, որ այդտեղով նրանք մուտք գործեն դեպի Անդրկովկաս: Բայց ձեր հոգատարությամբ ու իմաստությամբ մեզ նախօրոք տրամադրած հատուկ զինջոկատներով Թուրքիան այսուհետև էլ հակահարված է տալու Եվրոպային ու Հայաստանին: Մենք արդեն ֆրանսիացիներին վռնդել ենք Կիլիկիայից և չեղյալ ենք համարել Սեւրի միջազգային հակաթուրքական, հակառուսական ստորացուցիչ պայմանագիրը...

Լենին *(հանկարծ գունափոխվելով)*, - Ռուսներն ասում են, թե հրազենի գնդակները համարձակներից վախենում են: Այնպես որ Մուստաֆա Քեմալ փաշայի այդ բավականին համարձակ որոշումներից Եվրոպան դողալու է, մանավանդ որ մենք ձեր դաշնակիցն ենք: Բայց, այնուամենայնիվ, աշխարհում արդար ու օբյեկտիվ որոշումներ կլինեն միայն այն ժամանակ, երբ պրոլետարիատը համաշխարհային մասշտաբով իշխանության գլուխն անցնի...

Յուսուֆ Քեմալ բեկ *(նորից միջամտելով զրույցին)*, - Ձեր իմաստուն ծրագրի շնորհիվ աշխարհը, անկասկած, այդ օրը ևս

կտեսնի, ուստի Ղարաբաղի և Նախիջևանի կոնֆլիկտների լուծումը հանձնարարեք ձեր հավատարիմ զինակից Ստալինին, որպեսզի դուք ձեր թանկագին ժամանակը ամբողջովին հատկացնեք պրոլետարիատի համաշխարհային հաղթանակի անհետաձգելի գործերի կազմակերպմանը...

Լենին *(ուրախացած)*, - Դա, Ստալինը այդ գործը ավելի լավ կկատարի, քան որևէ այլ մեկը *(պառկա)*: Ավարտելով մեր այս շատ կարևոր բանակցությունները, ուզում եմ կրկին հայտնել ձեզ, որ մեր հավատարիմ Մուստաֆա Քեմալ փաշան կարող է միանգամայն վստահ լինել, որ սոցիալիստական Ռուսիան՝ կապիտալիստական բլոկադայի պայմաններում մեզ բարեկամական ձեռք մեկնած Թուրքիային կօգնի և՛ ոսկով, և՛ զինամթերքով, և՛ հատուկ զինվորական ջոկատներով, որպեսզի նա դառնա մուսուլմանական աշխարհի սոցիալիստական ռևոլյուցիայի դրոշակակիր լաստոչկան և իմպերիալիստական Եվրոպայի դեմ պայքարում մեր հավատարիմ դաշնակիցը:

Ալի Ֆուադ փաշա, Յուսուֆ Քեմալ բեկ *(խոնարհվելով Լենինի առաջ և նորից համբուրելով նրա փեշերը)*, - Անշուշտ, անշուշտ...

Վալի, - Տեսա՞ր, գլուխդ հաստ նախագահ, թե Հայաստանը կուլ տալու հարցը ովքե՞ր են որոշել, դու նրանց մոտ մի որդ ես...

Ստեփան, - Սերունդները չեն հանդուրժի այդ կեղտոտ գործարքը: Այնպես որ, եթե Ադրբեջանը նույնիսկ իր մի բնակավայրը զիջի Իրանին, Լեռնային Ղարաբաղը Հողեր գյուղը չի զիջի Ադրբեջանին...

Վալի *(նորից կատաղելով)*, - Նախ՝ սերունդների կարծիքով երբեք հարց չեն լուծում: Երկրորդը՝ մենք ոչ մի բնակավայր չենք զիջի կապիտալիստական, ֆեոդալական, հետամնաց Իրանին: Ընդհակառակը՝ նրանից կխլենք Հարավային Ադրբեջանը, պատմական Ատրպատականը: Սակայն Հողեր գյուղը, հանուն ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության, կխլենք Լեռնային Ղարաբաղից: Անպայման կխլենք *(պառկա)*: Ահա թե ինչ՝ մինչև երկու ժամ ձեր կոլխոզնիկների անունից

դիմում ես պատրաստում այդ մասին, թե չէ քեզ Սիբիրում կսառեցնենք...

Ստեփան, - Ես Սիբիր կգնամ, բայց այդ դավաճանությունը չեմ կատարի *(գնում է)*:

Վալի *(դիմելով Սայմազին)*, - Կայծակի արագությամբ այստեղ հրավիրիր Ծափունցին:

Սայմազ, - Այս րոպեին *(դուրս է գնում)*:

Վալի *(մեն - մենակ)*, - Ես քեզ ցույց կտամ, քո կապույտ աչքերը կկուրացնեմ, ատամներդ կհանեմ, դաշնակ նախագահ: Դու հանդգնում ես մուսուլմանական աշխարհում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի լենինյան թեորիայից շեղվե՞լ... Այսօր քեզ գործից կշպրտեմ, պարտիայից կվռնդեմ և կպահանջեմ, որ քեզ Սիբիրստան աքսորեն *(հնչում է հեռախոսի զանգը, Վալին վերցնում է ընկալուչը)*, - Կենտկո՞մ: Ես, ըստ երևույթին, վաղը չեմ կարող լինել ձեզ մոտ: Հայերին հանկարծակիի բերելու մեր պլանը ձախողվել է: Հողեր գյուղի նախագահը մեր հաշիվները խճճել է: Ճիշտ եք ասում՝ Նախիջևանը և Ղարաբաղը հայերից պետք է մաքրենք լոկ հայերի ձեռքերով... *(Լսափողը դնում է ցած)*:

Տեսարան 8

Երեմ *(ներս է մտնում ձախ դռնից, խոնարհվում Վալու առաջ)*, - Բարով, հազար բարով եք եկել, ընկեր Գուլուզադե: Ես եկել եմ ձեզ այս տոթ երկրամասից մեր հովասուն, սոցիալիստական լեռնաշխարհը հրավիրելու համար: Չեմ կասկածում՝ դուք ձեր թարմ, ինտերնացիոնալիստական մտքերով կնպաստեք մեր շրջանի առաջընթացին: Խոստանում եմ մեր սոցիալիստական անտառների վճիտ աղբյուրներից մեկի մոտ ձեր գալուստի պատվին յոթ ամլիկ գառ մատաղ անել...

Վալի *(լուրջ)*, - Երեմ Ղազարովիչ, քո նախագահը ինձ մի այնպիսի հարված է հասցրել, որ ձեր լեռներում ախորժակս չի բացվի... Ըստ երևույթին, դու շեղվել ես մեր պարտիայի կադրային քաղաքականությունից և միանգամայն թույլ ես պրոպագանդում

պրոլետարական ռևոլյուցիայի համաշխարհային հաղթանակի համար զոհեր տալու լենինյան գաղափարները: Քո նախագահը դեռ չգիտի, որ այդ ճանապարհին մենք կարող ենք զոհել գյուղեր, քաղաքներ, հուշարձաններ, երկրամասեր, ազգեր, պետություններ...

Երեմ *(հանկարծակիի գալով)*, - Իհարկե, բայց ի՞նչ է արել այդ անասուն նախագահը: Ես նրան մի այնպիսի խուց կգցեմ, որ արևի երեսին կարոտ կմնա...

Վալի *(շոյվելով)*, - Նրա գլխում դաշնակցական, հակասովետական պլաններ են պտտվում: Առաջարկում է Տողագետի վրա ջրամբար կառուցել: Ինչպիսի՜ նենգ թշնամություն: Նա չի իմանում, որ Տողագետի ջրերը ոռոգում են Մալականի բամբակի պլանտացիաները: Ստրատեգիական այդ կարևոր կուլտուրան տապալենք, թե ինչ է հայերը Արևասարի փեշերին խաղող աճեցնեն, գինի պատրաստեն, հարբեցողությամբ զբաղվեն, սոցիալիստական ապրելակերպի նորմերը խախտե՞ն...

Երեմ, - Իհարկե, բամբակը ստրատեգիական բացառիկ նշանակություն ունի մեր պետության համար: Հետևաբար, մենք Լեռնային Ղարաբաղի բոլոր գետակների ու առուների ջրերը ոչ միայն պիտի ուղղենք մեր հարևան ադրբեջանցիների պլանտացիաները, այլև ամեն կերպ օգնենք բամբակի արտադրության ավելացմանը, թեկուզ մարզի այգիները չորանան, արտերը խանձվեն, անասունները գոմերում բառաչեն... Այլ կերպ ասած՝ մենք կարող ենք նույնիսկ մեր բնակավայրերը զոհել, միայն թե մուսուլմանական աշխարհում լենինյան սոցիալիստական արևը շողշողա:

Վալի *(զինաթափվելով)*, - Քո նախագահը, ցավոք, այդպես չի դատում: Նրան Սիբիր աքսորելը թողնում եմ քո պարտիական խղճին, սակայն կտրականապես պահանջում եմ, որ այս ժամին նրան շպրտես գործից, զրկես պարտիական տոմսից: Նոր նախագահին կարգին հրահանգավորելուց հետո ուղարկիր ինձ մոտ, չէ՞ որ գյուղացիները դեռ անասուններ են, սոցիալիզմի սկզբունքներից բան չեն հասկանում *(պառկում)*: Ստեփանի գլուխն այնքան հաստ է, որ ինչքան էլ տաշես նրա մեջ ոչ ինտերնացիոնալիզմ կմտնի, ոչ մուսուլմանական աշխարհում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար Ադրբեջանին առանձնահատուկ արտոնություններ տալու լենինյան գաղափարները: Նա դեմ է ձեր Հողեր գյուղը Ադրբեջանի շահերին պարգևելու մեր ազիզ Կենտկոմի իմաստուն գծին:

Երեմ *(զայրանալով)*, - Ես նրա եղունգները քանդելուց հետո Սիբիր կաքսորեմ: Մի՞թե կարելի է ինտերնացիոնալ, հոգատար, իմաստուն Կենտկոմի գծին հակադրվել: Մինչև երկու ժամը ձեզ մոտ կլինի նոր նախագահը: Նա հլու - հնազանդ կկատարի ձեր կամքը *(գնում է)*:

Վալի *(մեն - մենակ պտտվելով բեմում)*, - Ստեփանի պես հայերն են մեր նախնիներին ստիպել, որ բնաջնջեն նրանց: Ճիշտ են արել: Սակայն այժմ հայերին հայերի միջոցով պետք է մորթենք, թեկուզ սոցիալիստական հասարակության ստալինյան դարում ենք ապրում: Փանահ խանը չէր կարող Շուշիի բերդին տիրանալ, եթե Մելիք Շահնազարը նրան չաջակցեր: Մենք էլ կարծում ենք, թե հայերը խելքի են եկել: Չէ՜, սապատավորին գերեզմանն է ուղղում: Բայց Ստեփանը կարող է աղմուկ բարձրացնել, Մոսկվային հայտնել մեր պլանի մասին: Պետք է նրան շուտափույթ Սիբիրստան աքսորենք, գործը Ծափունցի միջոցով կատարենք: Նա իր գահին մնալու համար մարզն էլ կծախի, իր կնոջն էլ *(պառկում)*:

Որպես Կենտկոմից ԼՂԻ Մարզը սպասարկող պատասխանատու աշխատող, ինձ անընդհատ նախատում են, ասում, թե Երևանի քթի տակ գտնվող Նախիջևանի մարզը ահա - ահա լրիվ հայաթափվում է, իսկ հանրապետության Դաշտային Ղարաբաղի, Միլի, Մուղանի դաշտավայրերին հարող Լեռնային Ղարաբաղի մարզում այդ գործն աններելիորեն ձգձգվում է: Հետևաբար, եթե այդ գործում բեկում չմտցնեմ, ինձ Կենտկոմից կվռնդեն: Ես կզրկվեմ չաղ պաշտոնից: Իմ աթոռին անսասան մնալու համար ես Ծափունցի պես կադրերի առաջ լայն պողոտա պիտի բացեմ, ստեփաններին ասպարեզից սրբեմ... Միայն այդ ճանապարհով կարագացվի Լեռնային Ղարաբաղի սոցիալիստական հայաթափման պրոցեսը: Հայերին

այդպես զրկելով իրենց դարավոր արմատներից՝ Նախիջևանն ու Ղարաբաղը կփոխադրենք սոցիալիստական ռելսերի և կկատարենք մեծ Լենինի պատգամը՝ Ադրբեջանը դարձնել Արևելքի ամենից հզոր, սոցիալիստական հանրապետությունը...

Տեսարան 9

Օհան *(ներս է մտնում աջ դռնից, խոնարհվում հյուրի առաջ)*, - Ընկեր Գուլուզադե, ես Հողեր գյուղի նոր նախագահ Օհան Քոլյանն եմ: Ես հանուն մուսուլմանական աշխարհում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի, ի վնաս իմպերիալիստական Եվրոպայի, պատրաստ եմ ինձ ժայռից գլորել անդունդը *(պառզա)*:
Ես անչափ գոհ կլինեմ, եթե դուք ձեր սոցիալիստական կոմանդիրովկայի ժամանակ բարեհաճեք իմ տունը մի կտոր հաց վայելեք, մանավանդ որ իմ կինը չքնաղ՝ հյուրերի համար ընծաներ չի խնայում...

Վալի *(առաջ գնալով, սեղմելով Օհանի ձեռքը)*, - Շնորհավորում եմ քեզ Հողերի կոլխոզի նախագահ ընտրվելու առթիվ: Ճիշտ են արել, որ Ստեփանին վռնդել են այդ պոստից...

Օհան, - Այդ դեռ քիչ է, ես նրա միսը հում - հում կուտեմ:

Վալի *(ոգևորված)*, - Իրավացի ես, նա իրավունք չունի ապրել ձեր ինտերնացիոնալ գյուղում:

Օհան, - Մանավանդ որ Ադրբեջանը մեր երկրի ամենից ինտերնացիոնալ հանրապետությունն է, մեր գյուղում էլ արդեն երկու ադրբեջանական ընտանիք ենք տեղավորել:

Վալի *(հետաքրքրվելով)*, - Ի՞նչ են անում այդ ընտանիքների աղսախկալները:

Օհան, - Մեկը ոչխարաբուծական, մյուսը՝ տավարաբուծական ֆերմաներում են աշխատում: Ես նրանց թույլ կտամ, որ կոլխոզի կերերի հաշվին մեր ֆերմաներում երկու - երեք բոլուկ անձնական անասուններ պահեն, հարստանան: Ստեփանը դա արգելում էր...

Վալի, - Քո այդ քայլը ևս կնպաստի մուսուլմանական աշխարհում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակին: Նրանց հոգատարությամբ շրջապատելով հանդերձ՝ պետք է նաև պատասխանատու աշխատանքի դնել: Ադրբեջանցիները հաշիվները մաքուր են պահում: Երաշխավորում եմ մեկին նշանակել ֆերմայի վարիչ, մյուսին՝ պահեստապետ *(պառզա)*:
Ես էլ Կենտկոմից ձեր գյուղը հոգատարությամբ կշրջապատեմ...

Օհան, - Ընկեր Գուլուզադե, պարտիական այդ հանձնարարությունը անմիջապես կկատարեմ: Դուք էլ կմիջամտեք, որ մեր պլանները թեթևացնեն, արաղի մթերումից էլ ազատեն:

Վալի *(գյուտ արած մարդու ուրախությամբ)*, - Արաղի մթերման պլանից անպայման կազատենք: *(Մեկուսի)*, թող արաղը մնա Հողերում, հայերն այնքան խմեն - կոնծեն, որ գլուխները կորցնեն, շաշանան: Իսկ շաշ գլխներից միայն շաշեր են ծնվում: Թող այսուհետև մի խելոք հայ չծնվի, որ նրանք չհպարտանան՝ իրենց գրերը, գիտնականները, գրողները, գյուտարարները, զորավարները, մարզիկները մեր աչքը չկոխեն... Այո, պետք է պայմաններ ստեղծենք, որ հայերը միայն կոնծաբանությամբ զբաղվեն, շաշեր արտադրեն, մոռանան իրենց արմատները: Ի դեպ, ռուսներին էլ ասպարեզից պիտի հանենք արաղով, թմրադեղերով:

Օհան, - Դուք մեր գյուղի աչքի լույսը կդառնաք, եթե մեզ ազատեք արաղի մթերումից:

Վալի *(սթափվելով)*, - Արաղից էլ կազատենք, մյուս պլաններից էլ, բայց քանի որ ձեր գյուղը Լեռնային Ղարաբաղին է ենթարկվում, դա հնարավոր չէ կատարել: Ուստի դուք պետք է շուտափույթ դուրս գաք ԼՂԻ Մարզի կազմից և միանաք ադրբեջանական Մալականի շրջանին, քանի որ մուսուլմանական աշխարհում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի լենինյան թեորիայի համաձայն, Ադրբեջանին ու ադրբեջանցիներին առանձնահատուկ արտոնություններ են տրվում: Ահա այդ մասին մի դիմում պետք է սարքես հասցեագրված մեր Կենտկոմին: Եթե այդ գործը գլուխ բերես, ապա մինչև մահդ նախա-

գահի թախտին կմնաս: Կկարգադրեմ, որ քո կնոջն էլ պատասխանատու սոցիալիստական աշխատանք տան...

Օհան, - Այդ հոգատարության համար մենք հավիտյան կհիշենք ձեր անունը: Մեկ - երկու ժամից հետո այդ դիմումը կլինի ձեր թղթապանակում, մանավանդ որ ընկեր Ծափունցը այդ հարցով զրուցել է գյուղի ակտիվի հետ, նրանց նախապատրաստել մեր գյուղի նեղ շահերը ինտերնացիոնալիզմի, պրոլետարական ռևոլյուցիայի համշխարհային հաղթանակի լայն շահերին զոհելու համար...

Վալի *(բարձր տրամադրությամբ)*, - Օհան քիշի, դու գյուղի սոցիալիստական վերափոխման հոգսերով համակված կադր ես: Սոցիալիստական հասարակության արդի փուլում մեզ միայն քեզ պես կադրեր են պետք, այլապես չենք կարող դիմանալ կապիտալիզմի բլոկադային...

Իսկ Ստեփանը ուղղակի դաշնակցական է: Չեմ կասկածում, որ նրա միսը հում - հում ուտելու մասին քո խոսքը գործ կդառնա *(ձեռքը մեկնում է Օհանին)*:

Օհան *(սեղմելով իրեն մեկնած ձեռքը)*, - Կարող եք չանհանգստանալ *(գնում է)*:

Վալի *(ձեռքերը շփելով)*, - Հողերի տարազափոխման, Լեռնային Ղարաբաղի ներսից պայթեցման գործը օհանների և ծափունցների ձեռքերով պիտի կատարենք, որպեսզի Մոսկվան, աշխարհը մեզ ոչ մի հարցում չմեղադրեն ինչպես թուրքերին են մեղադրում հայերի ցեղասպանության համար: Արմատները ավերելով՝ անտառը չորանում է: Եթե Թուրքիան հայոց անտառը ավերելով՝ ամբողջ աշխարհում խայտառակվել է, ապա մենք պատմական այդ փորձից դաս պիտի առնենք, խորամանկորեն հայերի արմատները իսպառ վերացնենք...

Վարագույր

Վերջ 2 - րդ գործողության

Երրորդ գործողություն

Տեսարան 1

Բեմի խորքում երևում է վեհափառ Արևասարը: Լուսավորվում է նրա աջ թևը: Խոշոր պլանով լուսավորվում է Սաթունցի բանջարանոցի թթենի ծառը: Նրա թանձր սաղարթների տակ զրուցում են Ստեփանը և Ներսեսը:

Ստեփան *(հուզված)*, - Ներսես, Բաքուն ծրագրել է մի հրեշավոր գործ կատարել մեր գյուղի և մարզի հանդեպ: Անհապաղ Մոսկվային իրազեկ պիտի դարձնենք այդ մասին...

Ներսես *(անհանգիստ)*, - Ստեփան, դու կարասում եփող գինու պես եռում ես, ի՞նչ գործ է դա, որ քեզ հավասարակշռությունից հանել է:

Ստեփան *(չորս դին նայելով)*, - Ադրբեջանը ցանկանում է իմ ձեռքերով մեր գյուղն անջատել ԼՂԻ Մարզից, միացնել հարևան ադրբեջանական Մալականի շրջանին: Ես հրաժարվել եմ գործիք դառնալուց, ուստի Ծափունցը ինձ զրկել է պարտտոմսից, վռնդել գործից:

Ներսես, - Բաքուն ինչպե՞ս է հիմնավորում այդ ոճրագործությունը:

Ստեփան, - Մեզ սիրաշահում է՝ կոլխոզի պլանները նվազեցնելով: Գյուղը մարզից բաժանելը՝ հիմնավորում ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության լոզունգներով, մուսուլմանական աշխարհում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի արագացման լենինյան տեսությամբ: Ասում են Հողեր գյուղը կոմունիստական հասարակության առաջին փուլում ինտերնացիոնալիզմի դարպաս պիտի դառնա Լեռնային Ղարաբաղի և Մալականի շրջանի միջև:

Ներսես, - Ինչպիսի՞ անհեթեթություն...

Ստեփան, - Խնդրում եմ իմ, Բախշու և եթե համաձայն ես նաև քո ստորագրությամբ մի նամակ պատրաստես, որպեսզի լույսի արագությամբ ուղարկենք Կրեմլ՝ ծախողենք մարզը ծվատելու Բաքվի ծրագիրը:

Ներսես, - Մեր նամակը, համոզված եմ, հար և նման կլինի գրող Ակսել Բակունցի միամիտ հերոսի ռուսաց թագավորին ուղար-

կած նամակին: Կոմունիստական Մոսկվան ոչ մի բանով մեզ չի օգնելու, բացի նրանից, որ նամակի հեղինակներին զնդան են նետելու: Այնուամենայնիվ, խեղդվողը ծղոտից էլ է բռնում...

Տեսարան 2

Պայուսակը ձեռքին ներս է մտնում Աշխենը, մոտենում զրուցակիցներին:

Աշխեն, - Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ դարձյալ լարված եք...

Ներսես, - 20-րդ դարն է լարված, որի պղտոր հորձանուտում փորձում են խեղդել հայ ժողովրդին և ձգտում իսպառ բնաջնջել նրան...

Ստեփան, - Բաքուն ցանկանում է մեր գյուղը մեր մարզից անջատել, միացնել Մալականի շրջանին, որպեսզի ջլատի մարզի հարթավայրային և լեռնային գյուղերի միասնությունը...

Աշխեն *(վրդովված)*, - Մենք կոմունիստական դարաշրջանո՞ւմ ենք ապրում, թե՞ խանական - ֆեոդալական դարաշրջանում, երբ այս կամ այն խանը իր մի գյուղը ազատ, համարձակ ընծայում է իր ցանկացած մարդուն կամ իր պոռնիկին *(պաուզա)*:
Ինչո՞ւ եք լռում, դիմեք ԽՍՀՄ - ի Գերագույն խորհրդին...

Ներսես, - Լենինն է մեր դարում խանականությանը հարություն տվել՝ հայոց գավառները հանուն մուսուլմանական աշխարհում ռևոլյուցիոն խմորումների արագացման ընծայել օսման և ազերի թուրքերին: Այնուամենայնիվ, մենք չենք հաշտվի այն մտքի հետ, որ Արցախի հինավուրց գյուղը խլեն մեր մարզից:

Ստեփան, - Եթե բոլոր հողերցիները մեզ պես դատեն, հազիվ թե Բաքուն իր մուսավաթական ծրագիրը իրականացնի: Դժբախտաբար, մեր մեջ կան ծափունցներ, օհաններ: Նրանք մասսաներին այդ հարցում ևս մոլորեցնելու են կոմունիստական ապագայի մասին դատարկ խոսքերով: Մեր գյուղացիներն էլ դեռ չորը գեջից չեն ջոկում՝ գերադասելու են այսօր մի բաժակ օղի խմել, քան վաղը շենշող հայկական գյուղ, մարզ, Հայաստան ունենալ...

Ներսես, - Կարծում եմ, որ նրանց երակներում, այնուամենայնիվ, դեռ հայկյան արյուն է բաբախում և չնայած կոմունիստական պրոպագանդան նրանց բորբ սրտերին սառույցի կտորներ է դրել, չեն ների, որ մարզի մարմնից մի հատված պոկեն Մալականի համար խորոված պատրաստելու համար: Եթե մեզ հաջողվի նրանց ոտքի հանել Բաքվի այդ ստոր ոտնձգության դեմ, երևի գուլուզադեներին չհաջողվի ջլատել մեր մարզը, քանզի՝ գեղ կանգնի, գերան կկոտրի:

Ստեփան, - Թող Աստված մեզ օգնի, Ներսես: Դե, ես գնամ: Երևի այսուհետև չկարողանանք շուտ - շուտ հանդիպել: Նամակը Լուսիկի միջոցով կհասցնես տղայիս: Ես այն Մոսկվայում բնակվող իմ քրոջ որդու ձեռքով գաղտնի Կրեմլ կհասցնեմ:

Աշխեն, - Քո այդ հայրենասիրությունը, Ստեփան, սերունդները չեն մոռանա *(Ներսեսը և Աշխենը նրան ուղեկցում են, դուրս գալիս բեմից)*:

Վարագույրը փակվում է, 2 - 3 րոպեից հետո բացվում:

Տեսարան 3

(Արևասարի ֆոնի վրա լուսավորվում է լեռնապռնկից բխող մի աղբյուր: Դարավոր կաղնու շվաքում Վ. Գուլուզադեն, Ե. Ծափունցը և Ս. Սայմազովը խորոված են խժռում, օղի ու գինի կոնծում: Գուլուզադեն բավականին գինովացել է: Քթի տակ երգում է ադրբեջանական մեղեդի, ապա դիմում Ծափունցին):

Վալի, - Երեմ Ղազարովիչ, դու հանուն մուսուլմանական աշխարհում ռևոլյուցիոն սիտուացիաների արագացման Հողեր գյուղը նվիրել ես Ադրբեջանին, իսկ Սայմազ մուալլիմը մեզ ի՞նչ է խոստանում այդ գյոզալ գյուղը իր խանությանը միացնելու առթիվ...

Սայմազ, - Դուք ինձ մի այնպիսի գանձ եք տալիս, որ դժվար է ոսկով գնահատել, Վալի Հեյդարովիչ: Հողեր գյուղը կոմունիստական հասարակության առաջին փուլում կդարձնենք ինտերնացիոնալիզմի դարպաս երկու ազգերի միջև: Այդ հուսա-

լի դարպասը մեր Կենտկոմին հնարավորություն կընձեռի իր ինտերնացիոնալ գաղափարները տարածելու նաև ԼՂԻ Մարզում: Մյուս կողմից էլ այդ փաստը կնպաստի մուսուլմանական աշխարհի բնակիչներին ռևոլյուցիոն ոլորտի մեջ ընդգրկելու համար...

Վալի, - Անշուշտ: Անկասկած: Դա ճիշտ է: Այն էլ է ճշմարտություն, որ մենք լուսնի շողերով, աստղերի փայլով հրապուրվող երեխաներ չենք և մեր շահերը քաջ գիտենք: Հետևաբար մեզ աստղեր խոստանալու փոխարեն՝ կոնկրետ մի բան *(բութ և ցուցամատը իրար շփելով բարձրացնում է վեր)* խոստացիր...

Սայմազ, - Դուք իմ և Ծափունցի հյուրն եք: Մենք ձեզ այնպես կճանապարհենք, որ աստղերի փայլը, լուսնի շողերը թողած՝ այստեղից տարած գանձերով կհրապուրվեք...

Երեմ, - Չէ, դա չեղավ, Սայմազ մուալլիմ: Ես, օրինակ, պատրաստ եմ Վալի Հեյդարովիչի պատվին մեր պատմական Տող գյուղը ևս նվիրել Մալականի շրջանին, միայն թե մուսուլմանական աշխարհում լենինյան արևը շողշողա, իսկ դու ժլատություն ես անում...

Տեսարան 4

Բեմ են գալիս Օհանը և պճնված Արփիկը:

Օհան *(բարևելով)*, - Ներեցեք, որ ձեր սոցիալիստական հանգիստը խանգարում ենք: Ես իմ խոստումը կատարել եմ, ահա դիմումը: *(մեկնում է Վալուն)*:

Վալի *(ակնպիշ նայում է Արփիկին)*, - Նստիր, խանում *(դիմումը վերցնում է, դնում թղթապանակում)*:

Արփիկ *(նստելով Վալու կողքին)*, - Շնորհակալություն:

Վալի *(մի կտոր խորոված մեկնելով Արփիկին)*, - Խանում, օգտվիր մեր համեստ, սոցիալիստական սեղանից *(պառզա)*: Երեմ Ղազարովիչ, հիմա ես ամբողջ սրտով պաշտպանում եմ քո կադրային քաղաքականությունը: Կոմունիստական հասարակության արդի փուլում, երբ կարմիր ԽՍՀՄ - ը շրջապատված է թշնամական երկրներով, միմիայն այսպիսի *(ձեռքը ուղղելով Օհանի և Արփիկի կողմը)* կադրերը հնարավորություն կտան նվաճելու կոմունիզմի շողշողուն գագաթները... *(դիմելով Օհանին)* Օհան քիշի, արդեն որոշել ենք՝ արաղի մթերումից ձեր կոլխոզին ազատում ենք: Այն բոլ - բոլ բաշխեցեք կոլխոզնիկներին, որ գիշեր - ցերեկ խմեն, իրենց դարդերը մոռանան *(պառզա... դիմելով Սյմազովին)*, - Սայմազով, դու էլ այս մարդ քիշուն մինչև իր մահը կոլտնտեսության նախագահի գահին կպահես: Այս գյոզալ կնոջն էլ քո սոցիալիստական շրջկենտրոնում մի պատասխանատու աշխատանք կտաս, որպեսզի պաշտոնական այցերով հաճախակի Բաքվում լինի, շփվի Կենտկոմի հետ...

Օհան *(ոտքի ելնելով)*, - Թույլ տվեք, որ մենք գնանք, նախապատրաստվենք ձեզ այս երեկո հյուրընկալելու համար:

Արփիկ *(հետևելով ամուսնուն)*, - Իմ խոսքը չմերժեք՝ այս գիշերը լուսացնելու մեր հարկի տակ... *(Օհանը և Արփիկը գնում են)*:

Երեմ, - Վալի Հեյդարովիչ, թույլ տվեք ես էլ նրանց հետ գնամ, որպեսզի համապատասխան աշխատանք ծավալեմ մասսաների մեջ Հողեր գյուղը սոցիալիստական ինտերնացիոնալիզմի դարպաս դարձնելու համար: Ես նորից կգամ ձեր հետևից: Մինչև իմ գալը վայելեցեք բնության այս գողտրիկ անկյան հմայքները...

Վալի, - Գնա: Ես հանրապետության ալլահին կզեկուցեմ քո անսահման հավատարմության մասին և կպահանջեմ, որ քեզ անմիջապես մարզկոմի քարտուղարի բազկաթոռին նստեցնեն: Ինտերնացիոնալիստական քո գաղափարներով դու արժանի ես այդ բարձր պաշտոնին: Այդտեղից էլ քեզ կտեղափոխենք Կենտկոմ...

Երեմ *(խոնարհվելով)*, - Ձեր բարձր գնահատականը ինձ կոգևորի հարազատ հանրապետությանը անմնացորդ ծառայելու համար *(գնում է)*:

Վալի *(ուրախացած ձեռքերը շփելով)*, - Հողեր գյուղի, հետևաբար նաև ԼՂԻ Մարզի սոցիալիստական տարազափոխման հիմքը այս էտապում ամուր ենք դնում, Սայմազով: Մի առ ժամանակ թույլ կտաս, որ Օհանը մնա նախագահի պոստում: Նրա ձեռ-

քերով կխեղդես մեր հակառակորդ մարդկանց: Այնուհետև նրա հաշիվները կմաքրես մեր նախնիների մեթոդով, որովհետև այն մարդը, որ իր ազգին հավատարիմ չէ, ոչ մի ազգի էլ հավատարիմ չի լինի... Նրա կնոջից զգույշ կլինես, հա՜: Նա և՛ գյոզալ է, և՛ օձ: Նրան ոսկեղեն շռայլելով՝ այս էտապում քո աջ թևը կդարձնես մեր ծրագիրը իրականացնելու համար: Երկրորդ էտապում՝ նրանից քո տված ոսկին կխլես, իրեն էլ ամուսնու մոտ կուղարկես: Այդպես պիտի արագացնենք հայերի արմատների քանդման պրոցեսը *(քա՜հ - քա՜հ ծիծաղում է)*...

Սայմազ, - Դուք ինձ իմաստուն խորհուրդներ եք տալիս, Վալի Հեյդարովիչ...

Վալի, - Որքան շուտ Հողերի նախագահը ադրբեջանցի նշանակես, այնքան շուտ Դաշտային Ղարաբաղի, Միլի, Մուղանի տափաստանների խաշնարածներին կվերաբնակեցնես այս գյոզալ սարի ստորոտում, որպեսզի մեր ծրագրի կատարման երկրորդ էտապում հայերին շպրտենք այս լեռներից... Իսկ այդ գործում հապաղելը հանցագործություն է: Ո՞վ է իմանում, թե վաղը մեզ ինչ է սպասվում, մանավանդ որ Եվրոպայում քրիստոնյաները իրար կրծում են: Այո, միայն Եվրոպան կարող է հայերին արթնացնել սոցիալիստական նիրհից: Հետևաբար, մինչ այդ լրիվ պետք է հայերի արմատները ավերենք... Ես շուտով Ծափունցին մարզկոմի քարտուղար կդարձնեմ: Նրա ձեռքով Դիզակի մելիքության կենտրոն Տող գյուղի արմատները ևս քանդել կտամ: Այսպիսով, այստեղ մենք, այնտեղ՝ օսման թուրքերը մինչև այս դարամուտը կավարտենք հայերի արմատների ավերումը...

Սայմազ, - Իհարկե, Տող գյուղն էլ պետք է միացնենք մեր շրջանին, մանավանդ որ կարևոր դիրք ունի հայկական լեռնային գյուղերի նախադռանը...

Վալի, - Տողը կարևոր կետ է մեր ծրագրում, բայց շտապողի կինը տղա չի ծնում: Մենք չենք կարող մարզից մի հարվածով երկու գյուղ պոկել՝ Կրեմլի ալկաշներին քնից արթնացնել: Նախատեսել ենք Տողի համար մի այլ կերակուր եփել՝ Միլի, Մուղանի խաշնարածներից այդտեղ 20 - 30 ընտանիք վերաբնակեցնել, որ հայերին ոչխարաբուծություն սովորեցնեն: Նրանք, փառք Ալլահին, 30 - 40 տարվա ընթացքում այնքան երեխաներ կծնեն, որ գյուղի հայկական կլիման կփոխեն...

Սայմազ, - Ինչպիսի՜ իմաստուն քաղաքականություն...

Վալի, - Մեծ Իսկենդերը, Չինգիզ խանը, օսման թուրքերի մեր նախնիները, Նապոլեոնը աշխարհ չեն կարողացել նվաճել սրով, բայց ժամանակակից թուրքերը իրենց ոսկով ու լեզվով կնվաճեն աշխարհը: Այդ ծրագրում հատուկ առաքելություն է դրվում Ադրբեջանի վրա: Մենք երեխաներ արարելով պիտի թուրքացնենք Անդրկովկասը, առաջին հերթին կուլ տանք Նախիջևանը, Ղարաբաղը և ամբողջ Հայաստանը... Այդ պլանի կատարման համար մեր ձեռքին է Շուշին՝ աշխարհի ամենից անառիկ բերդը, որը թեև Լեռնային Ղարաբաղի կազմում է, բայց ենթարկվում է միայն Բաքվին, մեր Կենտկոմին...

Սայմազ, - Ուրեմն՝ գիշեր - ցերեկ երեխաներ պիտի արարենք...

Վալի, - Հայերին՝ Տողում վերաբնակեցված խաշնարածները այնքան կզզվեցնեն իրենց երեխաներով, որ գյուղը, տունը տեղը կթողնեն մեզ, իրենք ջհանամը կգնան *(քա՜հ - քա՜հ ծիծաղում է)*:

Սայմազ, - Ինչպիսի՜ հիասքանչ պլան: Մեր Կենտկոմը, հիրավի, կենսագործում է մեծ Լենինի պլանը՝ Արևելքում հզոր Ադրբեջան ստեղծելու համար: Ափսո՜ս, շատ ափսոս, որ մենք էթնիկական կազմով միատարր չենք: Քրիստոնյա հայերից ու ռուսներից բացի, մեզ մոտ կոմպակտ ապրում են նաև մուսուլման քրդեր, լեզգիներ, թալիշներ...

Վալի, - Լենինյան - ստալինյան ուսմունքի համաձայն, կոմունիստական հասարակության 2 - րդ փուլում փոքր ազգերը միաձուլվելու են մեծ ազգերի մեջ: Հետևաբար 30 - 40 տարվա ընթացքում քրդերը, լեզգիները, թալիշները միաձուլվելու են ազերիների մեջ: Ահա թե ինչու այժմ մեզ ձեռնտու է լենինյան - ստալինյան ուսմունքը: Հետագայում մենք դեն կշպրտենք այդ կեղծ - սխեմատիկ ուսմունքը և կառաջնորդվենք մեր մուսավաթական պարտիայի իմաստաճաճանչ ուսմունքով՝ կամուրջ

կդառնանք թուրքալեզու ցեղերին մի դրոշի տակ համախմբելու ծրագիրը կատարելու գործում: Դրա համար մեզ մի բուռ Հայաստանն է խանգարում: Նա սև սեպի պես խրված է թուրքական աշխարհի մեջ: Նայիր *(Վալին թղթապանակից հանում է մի քարտեզ, կախում ծառից և ցույց տալով Հայաստանը՝ փրփրած շարունակում)*, տես, թե նա ինչպես է մեզ բաժանում մեր ազիզ գարդաշներից: Մենք, օգտվելով ստալինիզմից, մի ուսմունք պետք է մոգոնենք որ Կասպիականից մինչև Արարատ սարը ալբանական - ադրբեջանական հող հռչակենք, հետևաբար հայերին այդ տարածքից վռնդենք... Հայաստանը մեր արանքից բնաջնջելով՝ մենք կարող ենք ազատ Անկարա, Իստամբուլ գնալ, օսման թուրքերը՝ Բաքու, Բայկալ հասնել և համաշխարհային կայսրության հիմքեր դնել: Բոլոր թուրքերը այդ ծրագրում մեզ հատուկ տեղ են տալիս *(պաուզա)*...
Իհարկե, դա ժամանակի խնդիր է, իսկ այժմ պետք է մարսենք Նախիջևանն ու Ղարաբաղը...

Սայմազ, - Իսկ հանրապետության հայերի ու ռուսների նկատմամբ ի՞նչ կձեռնարկվի, որպեսզի մենք էթնիկապես միատարր լինենք...

Վալի, - Նրանք այժմ մեզ համար էշի պես մեր ծանր աշխատանքները պիտի կատարեն: Երբ գործը հասունանա, նրանց սրբելու ենք Ադրբեջանից, որպեսզի Կասպիականի փոքր Թուրքիա դառնանք...

Սայմազ, - Ափսո՜ս, որ այդ Ադրբեջանը մենք չենք տեսնելու...

Վալի, - Դու ջահել ես, նոր Ադրբեջանն էլ ես տեսնելու, բայց իմ գլխին, ավաղ, արդեն ձյուն է իջնում...

Սայմազ *(լեռների բարձունքներին նայելով)*, - Ծափունցը ուշացավ, իսկ հայոց լեռներում սև ամպեր են կուտակվում, պետք է հեռանանք այս լեռներից՝ ուր - որ է կարկուտ է տեղալու, փոթորիկ է լինելու լեռներում...

Վալի, - Այս լեռները թեև գյոզալ են, բայց մեզ չեն հյուրընկալում...

Սայմազ, - Որովհետև մենք նրանց փեշերին օտար, խորթ գաղափարներ ենք տարածում և ցանկանում ենք փոխել նրանց դարավոր սովորությունները:

Վալի *(կայծակի հուժկու ձայնից սարսափելով)*, - Կգա ժամանակ, որ այս հպարտ, երկնաքեր լեռները կխոնարհվեն մեր առաջ: Այդ գործի հաջողության հիմնաքարը դրել ենք՝ Հողեր գյուղը միացրել քո խանությանը: Մնացածը ինձնից, քեզնից, մյուս ղեկավար կադրերից է կախված...
(Հանկարծ եղանակը կտրուկ փոխվում է: Կարկուտի տարափը ծեծում է գետինը: Մրրիկը կատաղում է լեռներում):

Սայմազ *(սարսափելով)*, - Անիծվի այդ ծրագիրը, Վալի Հեյդարովիչ: Վեր կաց փախչենք, փոթորկից ազատվենք, այլապես սելավը մեր դիակները տիղմի մեջ կթաղի:
(Մրրիկը կատաղում է, քամին պոկում է ծառերը, ոռնում լեռներում: Սայմազը, բռնելով կուչ եկած Վալու ձեռքից, ճողոպրում է սարն ի վար...):

Վարագույրը փակվում է, 4 - 5 րոպեից հետո բացվում:

Տեսարան 4.

Արևասարի ֆոնի վրա լուսավորվում է Հողեր գյուղի անշուք գրասենյակը: Սայմազովը մեն - մենակ աջ ու ձախ քայլում է գրասենյակում, մենախոսում:

Սայմազ *(պատուհանից նայելով դեպի լեռները)*, - Կատաղի փոթորիկը քիչ առաջ այս սարերն ու անտառները քանդում էր, ամեն ինչ իր պղտոր հորձանուտում խեղդում: Բայց երբ ես ու Գուլուզադեն մազապուրծ այս անիծված լեռներից փախանք, նա հրաշքով պապանձվեց: Հիմա էլ Ալլահի հրաշքով լեռների առաստաղից փիրուզե երկինքն է ժպտում: Այ՜ քեզ բան: Դրա համար է, որ մեր իմաստուն Օմար Խայյամն ասել է, թե աշխարհի բաները ո՛չ ես կիմանամ, ո՛չ էլ դու: Այո, այս հպարտ լեռների բաները ո՛չ ես կիմանամ, ո՛չ էլ Ծափունցը: Այնուամենայնիվ, մի բան ես էլ, Ծափունցն էլ քաջ գիտենք, որ այս կեղծ, խաբեբա, խարդախ աշխարհի շարժիչ ուժը ոչ թե արևն է, այլ ոսկին, շահը, դրամը... Աշխարհի քաղաքական ու պետական գործիչները, զորավարներն ու բանկիրները, գործարանատե-

ներն ու նավթի, գազի, ստորգետնյա այլ գանձերի արքաները կեղծ ժպիտներով իրար խաբում են, որ իրենց ոսկու տոպրակները շատացնեն... Այդպես է հիմա աշխարհի բաները, Խայյամ... Ոսկու, փառքի, գյոզալ կնոջ համար Ծափունցն այս հարուստ գյուղը, որը իր հողահանդակներով Լյուքսեմբուրգ պետությունից մեծ է, մեզ փեշքեշ տվեց: Գուլուզադեն խաբեց Օհանին, ես՝ Ծափունցին ու Գուլուզադեին, Ծափունցը՝ Ստեփանին... Այդպես է հիմա պտտվում կյանքի անիվը, Խայյամ: Օհանն նախ իր կնոջը զիջեց Ծափունցին, հիմա էլ ինձ, որ նախագահի գահին մնա, փող վաստակի, փող... Ի՜նչ կեղծ լոզունգներ, ի՜նչ ամպագոռգոռ բառեր, երբ դու ես քո կամքը թելադրում սոցիալիստական կենտկոմներին, կաշառակեր դատախազներին, մարդկանց բախտը շուռ տվող դատավորներին...

Վալի գյադան Բաքվից այստեղ գալով՝ քիչ էր մնում, որ ինձ շորերով կուլ տար, բայց երբ նրա երախը փողով կապեցի՝ կոմունիստական հասարակության առաջին փուլն էլ մոռացավ, երկրորդն էլ: Հիմա կատվի պես իմ առաջ մլավում է: Վախենում է Կենտկոմին հայտնեմ հյուրանոցում պոռնիկին բռնաբարելու մասին: Չէ, ես փոքրոգի մարդ չեմ: Իմ ինչ գործն է, թե նա հյուրանոցում իր անասնական կրքերը ոնց է մարել, լրբի գրկում փալաս դառել, սոցիալիստական հասարակության նորմերը մոռացել: Կարևորն այն է, որ ես նրան թակարդն եմ գցել: Այժմ պետք է ինձ մի լավություն անի՝ Կենտկոմում ինձ համար մի չաղ բազկաթոռ նախապատրաստի: Իհարկե, դա ևս փողով է, փողով: Այնտեղ աշխատելու մյուս բոլոր նախադրյալները՝ ջահելությունը, բոյը, շնորհքը, ֆիգուրան ունեմ: Փողն էլ ինչքան ասես՝ կգռփեմ, իմ խանության բոլոր թղթադրամները անընդհատ իմ տանը կժողովեմ...

Սակայն ինձ փորձարկում են Հողեր գյուղի հարցում: Եթե ոսկի էլ ունենամ, բայց այս գյուղը չադրբեջանականացնեմ, ինձ հազիվ Կենտկոմ տանեն: Կենտկոմում պաշտոն ստանալու համար ես այս գյուղից հայերին պետք է սրբեմ, գյուղի քարերի մեսրոպյան գրերը քերեմ *(պաուզա)*...

Միամիտ այս հայերն էլ կարծում են, թե Մոսկվային դիմումներ, բողոքներ ուղարկելով՝ Հողերը կվերադարձնեն իրենց: Միամիտ անասուններ: Մենք փողով արդեն Կրեմլի բերանը փակել ենք: Եթե փորձենք՝ Սպիտակ տունն էլ մեր կողմը կթեքենք *(պաուզա)*... Այո, ոսկին է ամեն ինչ կատարում, աշխարհը պտտում, Խայյամ...

Հա՜, անպայման պետք է ոտքս Կենտկոմ գցեմ... տասնյակ շրջանների խանը դառնամ, ոսկի կուտակեմ, նրա շողշողուն ուժով հանրապետության ալլահի պաշտոնը գնեմ, վալիների պես գյադաներին վռնդեմ ասպարեզից՝ իմ բարեկամների, ազգականների, համախոհների միջև բաժանեմ արևի երկրի բոլոր պաշտոնները: Այո, արևի երկրի արևափայլ գահին ես պետք է նստեմ, ե՛ս...

Փառքի այդ ճանապարհին այս սարերը, այս քարերը պետք է տարազափոխեմ...

Տեսարան 5.

Օհան *(ներս է մտնում ձախ դռնից, խոնարհվում)*, - Բարև, ընկեր Սայմազով: Կներեք, ֆերմայում էի, չէի կարծում, թե այս սարսափելի մրրիկից հետո մեզ մոտ եք գալու, այլապես ձեզ կանաչ դրոշով կդիմավորեի:

Սայմազ *(մտքերից սթափվելով՝ գնում է ընդառաջ)*, - Ինչպե՞ս ես, նախագահ, ազիզմ: Լավ բարեկամին նեղ օրում են ճանաչում: Իմ ինտերնացիոնալ պարտքը ձեր հանդեպ կատարելու նպատակով փոթորիկից հետո աճապարել եմ այստեղ:

Օհան *(ուրախացած)*, - Այդ հոգատարության համար այս գյուղը ձեզ չի մոռանա, Սայմազ Սալմանովիչ:

Սայմազ, - Այսօրվանից ձեր գյուղի համար սկսվում է սոցիալիստական մի դարաշրջան: Ձեր ժողովուրդը ի՞նչ կարծիքի է ձեզ անհեռանկար Լեռնային Ղարաբաղի մարզից պոկելու, ինտերնացիոնալ ավանդույթներով հարուստ Մալականին միացնելու դարաշրջանի մասին:

Օհան, - Նրանք չեն կասկածում, որ այսուհետև լավ կապրեն, քիչ

մթերքներ կտան պետությանը, արաղի մթերումից էլ կազատվեն...

Սայմազ, - Իհարկե, ինտերնացիոնալիզմի դիրքերից ձեր պլանները կթեթևացնենք, արաղի պլանից էլ կազատենք: Սակայն նախագահին բնավ էլ չենք ազատի այս *(բութ և ցուցամատը իրար շփելով՝ ձեռքը վեր է բարձրացնում)* պլանից: Ազիզմ, ձեր կոլտնտեսությունը տարեկան 30 - 40 տոննա արաղ էր մթերում պետությանը, բայց այս տարվանից մի լիտ արաղ էլ չեք վաճառի նրան: Այդ արաղի երկու տոննան նվիրում եմ քո գյոզալ կնոջ հմայիչ աչքերին, որն այնքան բարձր մակարդակով հյուրասիրել է Վալի Գուլուզադեին: Մյուս բաժնի կեսը կբաշխես կոլխոզնիկներին: Պայմաններ կստեղծես, որ նրանք կոնծաբանությամբ զբաղվեն, շաշանան՝ իրենց ազգությունը, սովորությունները մոռանան, քանի որ դրանք սոցիալիզմին խորթ են... Մյուս 20 տոննայի արժեքը ինձ կտաս: Նման ձևով կվարվես բոլոր մթերքների հետ...

Օհան *(ձայնը փոխելով)*, - Ես չեմ կարող պարտիական այդ հանձնարարությունը չկատարել: Միայն գյուղի խորթ էլեմենտներից վախենում եմ: Նախկին նախագահ Ստեփանը և դպրոցի դիրեկտոր Ներսեսը վերադաս մարմիններին բողոքի նամակներ են առաքում...

Սայմազ, - Ի դեպ, ոչ մի փոստատան և այդ թվում Մոսկվայի փոստատներում մեր մարդիկ չեն հայտնաբերել նրանց՝ Կրեմլ ուղարկած նամակը:

Օհան, - Ստեփանը Մոսկվայում ապրող իր բարեկամի միջոցով նամակը անմիջաես հանձնել է Կրեմլին::

Սայմազ, - Ուրեմն՝ մինչև Մոսկվայից այդ նամակի հետքերով մեզ մոտ ալկաշ չինովնիկների գալը, մենք շուտափույթ նրանց ընտանիքները պետք է Սիբիր աքսորենք:

Օհան, - Ինչպիսի՞ խելոք առաջարկություն: Նրանց ազգայնամոլական կրքերը միայն Սիբիրի սառնամանիքները կհանգստացնեն:

Սայմազ, - Ժամանակ չկորցնենք: Շուտով այստեղ կգա դատախազը: Ես նրա հետ արդեն խոսել եմ: Դու էլ նրա հրահանգներով

ամբաստանագիր կսարքես, որ գործը շուտ ավարտենք չունքի գալան իշա գառ յաղար...

Տեսարան 6.

(Ներս է մտնում շրջդատախազ Բիլալ Թոփուշովը, մինչև հատակը խոնարհվում քարտուղարի առաջ):

Բիլալ, - Ձեր իմաստուն կարգադրությամբ ես ժամանել եմ Հողեր: Եթե հրամայեք՝ այս սարն էլ, այս գյուղն էլ, այս ծառերն էլ Սիբիրստան կաքսորեմ, որ Լեռնային Ղարաբաղի հաշվին խորթ էլեմենտների աքսորման արևի երկրի պլանները կատարենք...

Սայմազ, - Ինչպես պատմում է մեր այս հավատարիմ քիշին՝ երկու ընտանիք այստեղ հակասովետական, դաշնակցական գործ են ծավալել: Այդ գործը հանգամանորեն ուսումնասիրիր, ապա զեկուցիր ինձ: Ես ձեզ սպասելու եմ Օհան քիշու տանը:

Տեսարան 7.

(Ներս է մտնում Արփիկը, ճոճվում Սայմազի առաջ)

Արփիկ, - Սայմազ Սալմանովիչ, թեյը պատրաստ է, գնանք:

Սայմազ, - Գնանք, խանում *(գնում են)*:

Տեսարան 8.

Բիլալ *(Արփիկի հետևից նայելով)*, - Օհան քիշի, դու մեծ տպավորություն ես թողնում ինձ վրա: Դու աննախադեպ հերոսություն ես կատարել, որ ձեր գյուղի նեղ շահերը զոհել ես ինտերնացիոնալիզմի լայն, մասշտաբային շահերին: Անտարակույս, մարդ առաջին հերթին պետք է ինտերնացիոնալ շահերը պաշտպանի, հետո՝ ազգային, անձնական շահերը: Դա է ստալինիզմի ոգին: Դու Ադրբեջանի շահերը բարձր ես դասել, քան Լեռնային Ղարաբաղի մարզի ազգային նեղ շահերը: Այլ կերպ ասած՝ դու ձեր գյուղը ազգային նեղ կածանից հանել, ինտերնացիո-

նալիզմի լայն պողոտա ես մտցրել: Որպես փաստաբան, շրջդատախազ, մուսուլմանական աշխարհում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի երկրպագու՝ պատրաստ եմ քեզ պաշտպանել քո բոլոր գույնի թշնամիներից:

Օհան, - Ձեր այդ հավատամքը ինձ կթևավորի իմ թշնամիների տապալման գործում:

Բիլալ, - Անշուշտ, անկասկած: Աճապարենք՝ անցնենք բուն նյութին: Ովքե՞ր են քեզ խանգարում գյուղի սոցիալիստական վերափոխման գործում:

Օհան *(ուրախացած)*, - Ստեփան Բաբունցը և Ներսես Սաթունցը:

Բիլալ *(ձեռքերը շփելով իրար)*, - Ինչպիսի՞ հարցերում կարող ենք նրանց մեղադրել:

Օհան, - Քայքայիչ պրոպագանդա մղելու մեջ, արգելված հեղինակների գրքեր թաքցնելու մեջ, հայկական հուշարձաններ ֆետիշացնելու մեջ, դաշնակցական գաղափարներ սերմանելու մեջ: Դրանք ապացուցելու համար բավական է թերթել Ներսեսի աղջկա դպրոցական գրավորները:

Բիլալ, - Այդքան մեղադրանքները մեզ հիմք կտան, որպեսզի նրանց փոշիացնենք, Սիբիրստանում սառեցնենք: Հիմա նստիր, համապատասխան ամբաստանագիր սարքիր: Ես գնում եմ քարտուղարի մոտ, որ պայմանավորվենք, թե նրանց ե՞րբ աքսորենք Սիբիրստան, քանզի երկաթը տաք - տաք են ծեծում *(գնում է)*:

Տեսարան 9.

Օհանը սեղանի հետևում լարված աշխատում է, ստեպ - ստեպ նայում դռան կողմը: Ցակատը ձեռքին բեմ է մտնում Բախշին:

Բախշի, - Բարի օր, նախագահ:

Օհան *(վրդովված)*, - Ժամանակ չունեմ, կարճ կտրիր, ինչո՞ւ ես եկել:

Բախշի, - Երեխաներս սոված են, ինչո՞ւ հացահատիկ չեք բախշում կոլխոզնիկներին:

Օհան, - Մինչև որ պետության պլանները չկատարենք, մեր պահեստից մի գրամ հացահատիկ էլ դուրս չի գալու:

Բախշի, - Դու մեզնից ստորագրություններ վերցնելիս ասել ես, որ մթերումների պլաններից ազատվելու ենք: Ինչո՞ւ չենք ազատվում...

Օհան, - Մոսկվան մի օրում չի կառուցվել: Մալականը այս տարի մեզ ազատել է օղու պլանից: Հետո էլ ազատելու է մյուս պլաններից:

Բախշի, - Օհան, դու մոլորվել ես: Քեզ մեր գյուղը, ամբողջ Ղարաբաղը կործանելու ցանցի մեջ են գցել: Քեզ խաբել են, որ մեր գյուղը իր արմատներից պոկեն, Արևասարի և Տողասարի միացման հուսալի կամուրջը քանդեն: Դու այդ կամուրջը առանց որևէ կրակոցի հանձնում ես հակառակորդին: Քո այդ քայլը ոչնչով չի տարբերվում Մելիք Շահնազարի՝ Շուշիի բերդը խաշնարածների ցեղապետ Փանահ խանին տրամադրելու դավաճանությունից:

Օհան *(փրփրելով)*, - Դա քո գլխի կերակուրը չէ, Բախշի: Ո՞վ է քեզ այդ հուշել:

Բախշի, - Իմ աչքերը բացել է Ներսեսի զրույցը:

Օհան *(սիրաշահելով)*, - Բախշի, իզուր ես վրդովվում: Մարզից բաժանվելով՝ մենք, Ծափունցի բառերով ասած, ինտերնացիոնալիզմի լայն պողոտա ենք մտնում: Պետությանը այլևս օղի չենք մթերելու:

Բախշի, - Լավ է պետությանը օղի, ծիծեռնակի կաթ էլ մթերենք, քան մեր դարավոր արմատներից զրկվենք...

Օհան, - Ոչ ոք մեր արմատները չի քանդելու: Դա միայն Ներսեսի գլխի զառանցանքն է, մի հիվանդություն, որով դու ևս վարակվել ես...

Բախշի, - Քանի դեռ ուշ չէ, Օհան, սխալդ ուղղիր, թե չէ այս գյուղում 30 - 40 տարուց հետո մի հայ էլ չի լինելու...

Օհան, - Սխալվում ես, Բախշի: Մալականի կազմում էլ մեր գյուղը ևս բարգավաճելու է...

Բախշի, - Ականջիդ հետևը կտեսնես, բայց այդ մեկը չես տեսնի: Վաղը, մյուս օրը քեզ պաշտոնազուրկ են անելու, որ գյուղը ադրբեջանցիներով լցնեն, հայերին հալածեն...

Օհան, - Կրկնում եմ. դա ընդամենը զառանցանք է: Կոմունիստական

հասարակության օրոք բոլոր ազգերն էլ համահավասար բարգավաճելու են...

Բախշի *(ձեռքը թափ տալով)*, - Սապատավորին գերեզմանն է ուղղում *(գնում է)*:

Օհան *(մեն - մենակ)*, - Աչքս լույս, անգրագետ Բախշին ինձ բան է սովորեցնում: Քեզ էլ Ներսեսի ու Ստեփանի հետ Սիբիր կուղարկեմ, որ կարկաժդ այդ գաղափարներից ազատվի: Լավ է, որ Աստված Սիբիրը ստեղծել է, թե չէ Բախշու նմանները մեզ կուլ կտան...

Տեսարան 10.

Երեմ *(անսպասելի ներս է մտնում բեմ ձախ թևից)*, - Բոցավառ ողջո՜ւյն, Օհան Օհանջանովիչին: Ինչպե՞ս են ամրապնդվում ձեր և Մալականի ինտերնացիոնալ կապերը:

Օհան *(սեղմելով Ծափունցի աջը)*, - Հաջող: Լավ է, որ մեզ համար դժվար այս էտապում մեզ չեք մոռացել:

Երեմ, - Ինչո՞ւ դժվար ես հռչակում կոմունիստական հասարակության ստալինյան լուսաշող այս էտապը:

Օհան, - Ստեփանը, Ներսեսը և նույնիսկ անգրագետ Բախշին մեր գյուղը ադրբեջանական շրջանին միացնելը ուժերի ջլատում, դավաճանություն են որակում, ինձ ու ձեզ էլ Մելիք - Շահնազարի հետ համեմատում...

Երեմ, - Նրանց գլուխներում հազիվ տեղավորվի մուսուլմանական աշխարհում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի արագացման համար զոհեր տալու լենինյան ուսմունքը: Դու պատմության մատյանն ես մտնելու, քանի որ մարզի խղճուկ շահերը զոհում ես համամարդկային շահերին...

Տեսարան 11.

Արփիկ *(ներս է մտնում, նազանքով ճոճվում Ծափունցի առաջ)*, - Բարև, ընկեր Ծափունց: Ես այդպես էլ գիտեի, որ մեզ չեք մոռանա:

Երեմ, - Թեև Տումի գյուղում անհետաձգելի գործ ունեմ՝ երկու հոգի հակասովետական նամակ են գրել Մոսկվա, պահանջելով, որ Թևան Ստեփանյանը հռչակվի որպես ազգային հերոս, որովհետև 18 - 20 թվականներին իր փոքրաթիվ կտրիճներով Ղարաբաղի հարավային տարածքի գյուղերը փրկել է մուսավաթների և թուրք օկուպանտների ավերածություններից...

Արփիկ *(դառնալով Օհանին)*, - Ինչո՞ւ ինձ չես զգուշացրել, որ ընկ. Ծափունցի պատվին ճոխ սեղան պատրաստեմ...

Օհան *(զղջալով)*, - Այս րոպեին ֆերմայից մի գոճի կբերեմ *(դուրս է գալիս)*:

Արփիկ *(փարվելով Ծափունցին)*, - Խորին շնորհակալություն, Երեմ-չիկ, որ Օհանիս նախագահ եք նշանակել: Իսկ մեր գյուղը Մալականին միացնելը քո սխրանքի արդյունք է:

Երեմ *(գրկելով Արփիկին)*, - Ես դրա համար չեմ զղջում, բայց վախենում եմ, որ վավաշոտ Սայմազովը քեզ ինձնից խլի:

Արփիկ *(ամուր փաթաթվելով Ծափունցին)*, - Մի անհանգստանա, Սայմազովին թույլ չեմ տա, որ իմ մազին էլ կպչի, ես միայն քեզ եմ սիրում, քեզ *(պաուզա)*...Այժմ մենք հաճախակի պիտի հանդիպենք, մտածենք ոսկի կուտակելու մասին, որ կարողանանք մայրաքաղաք տեղափոխվենք...

Երեմ, - Գեղեցիկ մարմնից գեղեցիկ մտքեր են դուրս գալիս: Այո, պիտի նախապատրաստվենք մայրաքաղաք գնալու համար:

Արփիկ, - Կգնանք մայրաքաղաք: Այնտեղ անկաշկանդ կլինենք՝ գիշեր ու զոր իրարից չենք բաժանվի, ինչպես ծուկը ջրից, սոխակը՝ վարդից:

Երեմ *(գրկելով Արփիկին)*, - Գեղեցիկ կնոջ ստվերն էլ գեղեցիկ է լինում...

Արփիկ, - Այստեղ անշուք է, գնանք տուն, որ քո անուշ գրկում տաքանամ...

Երեմ, - Գնանք, քանի դեռ Օհանը ֆերմայում է *(գնում են)*:

Տեսարան 12.

Հևիհև ներս է մտնում Օհանը

Օհան, - Խոզը պատրաստ է *(դես ու դեն է նայում)*: Սրանք ուր չքվեցին, հը՞...

Բիլալ *(բեմ է մտնում բարձր տրամադրությամբ)*, - Օհան քիշի, որոշել ենք երկաթը, այո, տաք - տաք ծեծել՝ վաղը քո թշնամիներին աքսորել Սիբիրստան:

Օհան, - Ես նրանց թվում ավելացրել եմ նաև Բախշի Հուրյանին:

Բիլալ, - Եթե այս սարերը, այս ծառերը, ամբողջ Ղարաբաղն էլ ավելացնես, մենք չենք առարկի, միայն թե արագացնենք պրոլետարական ռևոլյուցիայի համաշխարհային հաղթանակը:

Վարագույր

Վերջ երրորդ գործողության

Չորրորդ գործողություն

Տեսարան 1

Բեմը ներկայացնում է Արևասարի անտառածածկ բարձունքի մի բացատը: Երևում են գետնափոր տնակներ ու խրամատներ: Մարզի կոմանդոս Արկադի Տեր-Թադեւոսյանը, Արևասարի դաշտային հրամանատար Մանվել Գրիգորյանը և Հադրութի ազատամարտիկների հրամանատար Արթուր Աղաբեկյանը խորհրդակցում են ազատամարտիկների հետ:

Արկադի *(դիմելով ազատամարտիկներին)*, - Կորյուններ իմ քաջ, հապճեպ դուրս գալով Խորհրդային Միությունից՝ Ադրբեջանը անհապաղ լայնամասշտաբ պատերազմ է սկսել մեր մարզի և իր հանրապետության մյուս բնակավայրերի հայերի դեմ և հուսով է այն կայծակնային արագությամբ ավարտել մեր երկրամասի լրիվ բնաջնջումով, Հայաստանից Զանգեզուրի մարզի ու Սևանի ավազանի բռնագրավումով, Նախիջևանով Թուրքիայի հետ իր կապի պորտ - միջանցքն ընդհուպ մինչև Երևանի արվարձաններն ընդարձակումով...

Արթուր, - Նրա այդ ֆաշիստական ծրագիրը ոչնչով չի տարբերվում քեմալականների հայաջինջ ծրագրից, որոնք ևս 18 թվականին, օգտվելով փոքր ազգերին թուրքական բարբարոսություններից ու հավատափոխություններից, միաձուլումներից ու առևանգումներից անշահախնդիր պաշտպանող ցարական կայսրության տապալումից, անմիջապես պատերազմ են սկսել 15 թվականի ցեղասպանությունից մազապուրծ փրկված որբերի ու սովամահ լինող, անօթևան գաղթականների ծով հոգսերի մեջ մխրճված Հայաստանի դեմ՝ նրանից նոր երկրամասեր հափշտակելու, նրա հազարամյա մայրաքաղաքի անունը Կոստանդնուպոլիսի պես աշխարհի քարտեզից բնաջնջելու, Ուրարտուի հարազատ զավակ Նաիրի երկիրը՝ Բյուզանդական Կայսրության նման վերջնականապես թաղելու համար:

Մանվել, - Բայց Աստծո կամքով մեր ցաքուցրիվ ժողովուրդը և նրա առյուծ որդիները, 18 թվականին մի պողպատակուռ բռունցք

դառնալով, նրանց Սարդարապատի հերոսական ճակատամարտում ջախջախեցին և աշխարհը փրկեցին թուրքական միջնադարյան բարբարոսության մի նոր մոլեգնման հետևանքներից: Հիմա էլ, պարոն հրամանատար, այդպիսի մի դաս պիտի տանք թուրքական ծրագիր կենսագործող Ադրբեջանին...

Արկադի, - Անշուշտ, քաջ իմ զինակիցներ: Եվ այդ ճակատամարտը, կարծում եմ, պետք է սկսենք Արևասարի այս բարձունքից, մեր Հողեր ու Տող գյուղերի ազատագրումից, որպեսզի առաջիկա վճռական մարտերից առաջ բարձրացնենք մեր ժողովրդի ու նրա աննկուն որդիների մարտական ոգին, մանավանդ որ թշնամին ուրիշի ձեռքերով, այսինքն՝ Գանձակում տեղակայված խորհրդային 4 - րդ բանակի ուժերով որոշակի հաջողությունների է հասել՝ ավերել է մեր մարզի սահմանակից հյուսիսային տարածքների հայկական բնակավայրերը, ամբողջ Շահումյանի շրջանը, նրանց բնակիչներին զենքի ուժով քշել - տարել ընդհուպ մինչև Հայաստանի սահմանամերձ բաց դաշտերը, մեզ էլ այս պատերազմում զրկել մեր այդ առյուծ եղբայրների նյութական, բարոյական ու մարտական օգնությունից *(պաուզա)*...

Արթուր, - Վերջնականապես հայաթափելով արծիվների բույն մեր այդ երկրամասերը, որոնց զավակներից երկուսը հիտլերականների դեմ կռվելիս ձեռք բերած մարտական ակնառու հաջողությունների համար արժանացել են մարշալի կոչման, մեկը՝ ծովակալի, ավելի քան 60 հոգու սխրանքներն էլ պսակվել են հերոսների աստղերով ու գեներալների ուսադիրներով, թշնամին ցանկացել է մեր երիտասարդների սրտերում մեր ժողովրդի մարտական փառքը խամրեցնել: Բայց նրանք անհավասար այս պատերազմում էլ իրենց նախնիների պես պաշտպանում են հայրենի հողը, իրենց օջախների պատիվը և թույլ չեն տալիս, որ թշնամու մինչև ատամները զինված հրոսակախմբերը ճեղքեն մեր պաշտպանության գծերը...

Մանվել, - Եթե հայ բոլշևիկները դարասկզբին չհավատային սոցիալիստական հեղափոխության համաշխարհային հաղթանակի

սին գաղափարախոսությանը, ապա հույսները չէին դնի երկնքի կոմունիստական կարապների վրա, այլ իրենց ատամներով կպաշտպանեին մեր երկրամասերը, դրանք չէին զիջի ո՛չ թուրքերին և ո՛չ էլ ազերիներին և մեր գործն էլ այսօր այսպես չէին դժվարացնի:

Արթուր, - Մինչդեռ ազերի բոլշևիկները Լենինին ու Ստալինին փառաբանելով, նրանց փեշերը համբուրելով, նրանց միջոցով իրենց հանրապետության համար օգտակար գործեր են կատարել, դեռևս 23 թվականին «Բաժանիր՝ տիրիր» սկզբունքով մեր մարզի կարգավիճակ ու սահմանները որոշելիս ոչ թե իրար հետ օրգանապես միաձուլված, դարեր շարունակ իրենց հայրենի հողում կողք կողքի ապրող, լեզվա - էթնիկական հատկանիշներով ու հավատով իրար հետ ամուր շաղկապված, հայերին մեր մարզի կազմում միավորել, այլ նրանց պոկելով մեր մարմնից՝ մեզնից բաժանել են, Բաքվին ենթակա անկախ շրջանային միավորումների մեջ ընդգրկել: Իսկ հայ բոլշևիկներն էլ կարծում էին, թե, այնուամենայնիվ, աշխարհի սահմանները վերանալու են, քանզի այն կոմունիստական մի տուն է դառնալու, որի ճոխ սեղաններից համահավասար իրավունքներով օգտվելու են բոլոր ազգերը և այդ թվում նաև՝ հայերն ու թուրքերը...

Մանվել, - Չբավարարվելով մեր մարզի չորս կողմերի հայոց երկրամասերի հափշտակումներով, ազերի բոլշևիկները խորհրդային տարիներին այդ երկրամասերում, ինչպես նաև Երևանի քթի տակ գտնվող Նախիջևանում, մուսավաթական հետևողականությամբ թուրք ու քուրդ քոչվորներ են վերաբնակեցրել, իսկ բնիկ հայերին ազգային խտրականության գերանդիներով անընդհատ հնձել, նրանց նոսրացրել իրենց հայրենի հողում, իսկ նրանց պատմաճարտարապետական հուշարձաններն էլ ավերել կամ ադրբեջանականացրել...

Արկադի, - Իհարկե, Ադրբեջանը իր հայ բնակիչներին չէր կարող այդպես համարձակորեն «սպիտակ եղեռնի» սև մանգաղով անխնա հնձել, նրա դարավոր հուշարձանները ավերել կամ ադրբեջանականացնել, ինչպես, օրինակ, մեր Գանձասարի

վանքը, մյուս հայկական տաճարները, մեր պատմիչներ Մովսես Կաղանկատվացուն, առակագիր ու հայոց դատաստանագրքի հեղինակ Մխիթար Գոշին և այլոց են ադրբեջանականացրել, եթե խորհրդային Կրեմլի առաջին մեծ երազամոլը հայոց գավառները, հանուն սոցիալիստական հեղափոխության համաշխարհային հաղթանակի սին գաղափարախոսության, Թուրքիային ու Ադրբեջանին շռայլելու անկյունաքարը չդներ, ցարական կայսրության դարավոր թշնամուն չաջակցեր Սևրի միջազգային պայմանագիրը անվավեր ճանաչելու գործում...

Արթուր, - Շարունակելով իր ուսուցչի այդ թուրքամետ քաղաքականությունը՝ 30 տարի Կրեմլում բազմած «Ժողովուրդների հայր» բռնակալը Հայրենական պատերազմի տարիներին պահանջել է հայերի ձեռքերով ազատագրել դարասկզբին Թուրքիային նվիրած հայոց Ղարսն ու Անին՝ եղբայրական Վրաստանին միացնելու համար:

Մանվել, - Իսկ Կրեմլի նոր լիդեր Մ. Գորբաչովը, հավատարիմ մնալով նրանց ժառանգությանը, կոմունիստական ռեժիմի վերջին շնչում ԽՍՀՄ - ի ՆԳՆ 100 հազարանոց բանակը տրամադրել է Ադրբեջանին, որ մեր մարզը ևս, վերջնականապես, բռնագրավի ու թուրքացնի...

Արկադի, - Իսկ «Թուրքի բարեկամը միայն թուրքը կարող է լինել» կարգախոսով հակահայկական գործեր կատարելու մեջ վարպետացած Ադրբեջանը իր 60 հազար օմոնականներով ու զինված ուժերով ուղղություն տալով խորհրդային այդ բանակին՝ 1988 - 91 թվականներին միջնադարյան դաժան մեթոդներով շրջափակեց մեր մարզը և արտակարգ դրության օրենքները վահան դարձնելով՝ արգելեց արտասահմանյան երկրների լրագրողների ու հասարակական գործիչների մուտքն այդ ռեգիոն և աշխարհի աչքերից հեռու, «փակ դռների» ռեժիմի պայմաններում, իր հանրապետության 600 հազար *(ազերիները այդ թիվը դիտավորյալ փոքրացնում էին)* բնիկ հայերի էթնիկական մաքրումներ, բռնագաղթեր ու ցեղասպանություն կատարեց...

Արթուր, - Կիսելով ձեր մտքերը, պարոն գնդապետ, կարող եմ փաստարկել, որ մեր մարզի 1988 - 91 թվականների շրջափակումը, որի ընթացքում հազարավոր խաղաղ բնակիչներ են զոհվել, 1988 թ. փետրվարի 25 - ից մինչև 29 - ը Սումգայիթ քաղաքում հայ խաղաղ բնակիչների ջարդերը, 1991թ. գարնանն ու ամռանը ԽՍՀՄ -ի 4-րդ բանակի ու ՆԳՆ ուժերով, Ադրբեջանի օմոնականներով Հյուսիսային Արցախի հայոց բնակավայրերի, ամբողջ Շահումյանի շրջանի, ինչպես նաև մեր մարզի Հադրութի ու Շուշվա շրջանների 24 գյուղերի բռնագաղթերը, 1989 - 91 թվականներին անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով քողարկված՝ հայ բնակչության, մանավանդ երիտասարդներին Ադրբեջանի տարբեր շրջկենտրոնների միլիցիայի մեկուսարաններում, Շահբուլաղի ու Շուշվա բանտերում զանգվածային ծերբակալումները, նրանց ֆիզիկական ու բարոյական խոշտանգումները, ապա ֆիզիկական ոչնչացման սպառնալիքով նրանց հայրենի հողից վտարելը, Ադրբեջանի՝ իր հանրապետության հայ խաղաղ բնակիչների և այդ թվում՝ մեր մարզի դեմ սկսած այս հափշտակողական պատերազմը և, վերջապես, երկու թուրքական պետությունների կողմից Հայաստանի շրջափակումը հնարավոր չէ այլ անուններով կոչել, բացի էթնիկական մաքրումներից, բռնագաղթերից, պետական տեռորից ու ցեղասպանությունից:

Արկադի, - Թշնամու այդ բռնություններին վերջ տալու համար, քաջ իմ զինակիցներ, մենք արդեն ինքնապաշտպանությունից պետք է անցնենք հակահարձակման, ոչնչացնենք նրա հազարավոր կրակակետերը, մեր Շուշի անառիկ բերդը ազատագրենք, որն ազերի բոլշևիկները 20 թվականի մայիսին քուրդ ավազակապետ Սոլթանովի ձեռքերով հրկիզել են, նրա 30 հազար հայ բնակիչներին սրի քաշել, իսկ 23 թվականին մերժել իրենց հայ կոլեգաների՝ Շուշին դարձյալ մարզի մայրաքաղաք դարձնելու պահանջը ու նրան տալով հանրապետական ենթակայության քաղաքի կարգավիճակ՝ փաստորեն անջատել են մեր մարզից, որպեսզի բարձր լեռնային գոտու այդ բերդի միջոցով նախ ճնշեն 20 - ական թվականների անկա-

խության և մայր Հայաստանին միանալու համար երկրամասում ծավալված բուռն ապստամբությունները, ապա և կատարեն հայաջինջ մյուս ծրագրերը *(պաուզա)*...

Արթուր, - Իսկ 70 տարի իրար կողքի ու իրար մեջ ապրելուց հետո էլ երախտամոռ ազերիները հիմա մեր այդ բերդից անընդհատ հրետակոծում են մեր բնակավայրերը, խաղաղ բնակիչների արյունը հեղում...

Մանվել, - Պարոն գնդապետ, մենք պատրաստ ենք ձեր հրամանը կատարել, մեր Հողեր ու Տող գյուղերը ազատագրել, որպեսզի արագացնենք Շուշիի բերդի գրավումը:

Արկադի, - Անվեհեր իմ զինակիցներ, ես վստահ եմ, որ ձեր քաջերը թույլ չեն տա, որ թշնամին ներխուժի մարզի հարավային տարածքները, դրանք անջատի կենտրոնից, մանավանդ, որ այդ նպատակով նա մեծ ուժ ու ռազմական տեխնիկա է կենտրոնացրել Արաքսի հովտում: Նրա Ժդանովի ու Աղաջաբեդու կողմերից տանկային գրոհներով Մարտունին գրավելու, ապա Ննգու բարձունքը հասնելու ու այնտեղից մարզկենտրոնն ու Շուշին վերահսկելու փորձերը Մոնթե Մելքոնյանի քաջերը կձախողեն: Մարզի միջնաբերդի դարպասն էլ մեր պապերի կառուցած Զինավանի բերդի մոտ ամուր են պահում Սամվել Բաբայանի և Զինավանի կորյունները: Հետևաբար մարզկենտրոնի արծիվները, շուտով կազատագրեն Շուշին, ապա կճեղքեն Լաչինի պատը և իրարից բաժանած մայր ու որդին, վերջապես կգրկախառնվեն...

Մանվել, - Թո՛ղ Աստված այս գործում մեզ հետ լինի:

Տեսարան 2

Հերթապահ զինվոր *(հևիհև մտնում է բեմ, դիմում գնդապետին)*, - Պարոն գնդապետ, երկու հոգի ցածում ձեզ են սպասում և խնդրում են, որ իրենց ընդունեք...

Արկադի *(զարմացած)*, - Ովքե՞ր են նրանք:

Հ. զինվոր, - Մեկը ճերմակահեր մի կին է, մյուսը՝ միջահասակ տղամարդ: Մոսկվա քաղաքից են եկել:

Արկադի, - Ստուգիր, ապա ուղեկցիր նրանց այս բարձունքը *(հ. զինվորը գնում է)*:

Տեսարան 3

Լուսիկ, - Բարև, որդյակ *(խոնարհվում է, համբուրում հրամանատարի աջը)*:

Արկադի, - Վայրի շրջափակման և պատերազմական այս պայմաններում ի՞նչ հոգս է ձեզ բերել այս բարձունքը, մայրիկ:

Լուսիկ, - Ես այս գյուղի *(ձեռքը մեկնում է դեպի Հողերը)* դուստրն եմ, 37 թվականին այստեղ էլ չոքել է ստալինյան գազազած ուղտը: Երկու ժամվա ընթացքում հորս, Ստեփան Բաբունցի, Բախշի Հուրյանի ընտանիքները աքսորել են Սիբիր: Այնուհետև ազերիները կոլխոզի նախագահ Օհանին թունավորել են, կոլխոզի ղեկը հանձնել մի ադրբեջանցու: Արփիկին առևանգել է մի առևտրական ադրբեջանցի, տարել քաղաք, իր երկրորդ հարճ - կինը դարձրել: Ծափունցը փորձել է ազատել իր սիրուհուն: Այդ հողի վրա նրան հանել են քաղաքական գործունեության թատերաբեմից, այնուհետև խորհրդավոր պայմաններում գլխատել...

Հայրս, Ստեփանը և Բախշին Սիբիրում մահացել են: Ես այնտեղ ամուսնացել եմ Ստեփանի որդի Հրայրի հետ: Տղաս՝ Աշոտը, հազիվ երեք տարեկան էր, երբ խորհրդավոր պայմաններում սպանել են ամուսնուս: Երբ լուսահոգի Խրուշչովի նախաձեռնությամբ կոմունիստական բռնապետության մութ ծալքերը սկսել են լուսավորվել, ես և տղաս տեղափոխվել ենք Մոսկվայի մեր բարեկամների մոտ: Չնայած օտար միջավայրում էինք ապրում, ես նրա անդաստանում նահրյան հունդեր էի սերմանում, նրա արյան մեջ հայրենի գյուղը ազերիներից ազատագրելու վրեժխնդրության շիթեր ներարկում: Երբ ղարաբաղցիները կոմունիստական ռեժիմի և ազերիների բացահայտ խտրականության դեմ 1988 թվականին պայքարի դրոշ են պարզել, Աշոտը որոշել է վերադառնալ իր նախնիների հայրենիքը՝ մասնակցել Արցախի ազատագրման սուրբ

գործին: Եվ մեր դարավոր արմատների կանչով մենք եկել ենք մեզ սնած - պահած Արևասարի բարձունքը, որ կռվենք ձեր արդար դրոշի տակ, թեև Աշոտս դժբախտ Բաբունցների միակ արու շառավիղն է...

Մանվել *(կարեկցելով)*, - Ցավում եմ, մայրիկ, որ ստալինյան տեռորին զոհ դարձած հազարավոր հայերի պես ձեր հոր ոսկորները ևս ամփոփված են օտար հողում:

Լուսիկ, - Եթե մեր գյուղն ազատագրվի, ես հորս ոսկորները Արևասարի փեշի մեր դարավոր գերեզմանատունը կփոխադրեմ, մանավանդ որ մինչև հիմա իմ ականջներում հնչում են նրա վերջին խոսքերը՝ «Լուսիկ, ես ոչինչ էլ չեմ կտակում, բայց եթե կոմունիստական արևը մի օր խավարի, իմ ոսկորները կփոխադրես մեր գերեզմանատունը...»:

Աշոտ *(հուզված դիմելով հրամանատարին)*, - Պարոն հրամանատար, ինձ էլ ընդունեցեք ձեր կամավորականների շարքերում, խնդրում եմ: Գուցե օտար ափերում ձևավորված իմ հայացքները ձեզ դուր չգան, բայց ես իսկական հայ եմ և ամեն անգամ դատապարտում եմ այն հայերին, որոնք պատմական Հայաստանից բռնագրաված հողերի ու բնակավայրերի ազատագրման պատրանքները կապում են մեծ տերությունների օգնության հետ: Նրանց՝ մեզ օգնելու և աջակցելու հնարավորությունները բնավ էլ չժխտելով՝ համոզված եմ՝ ո՛չ ամերիկացին, ո՛չ ռուսը, ո՛չ ֆրանսիացին և ո՛չ անգլիացին շահագրգռված չեն արյուն թափելու մեզնից հափշտակված հողերի ազատագրման համար: Մեզնից բռնությամբ, արյամբ զավթած հողերը մենք պետք է բռնությամբ, արյամբ վերադարձնենք մեր ժողովրդին և ոչ թե Եվրոպային, մեծ տերություններին վիզ ծռենք...

Արկադի, - Արդարև, թուրք - սելջուկները միջինասիական ավազուտներից Փոքր Ասիա ներխուժելով՝ ոչ թե Եվրոպային, մեծ տերություններին վիզ ծռելով են իրենց լայնածավալ կայսրությունը ստեղծել, այլ Հայաստանը, Բյուզանդիան, մյուս երկրները անխնա բնաջնջելով նրանց գեղեցիկ աղջիկներին ու կանանց առևանգելով, նրանց հարստությունը թալանելով...

Արթուր, - Արյամբ, բռնությամբ, թալանով հիմնադրված այդ պետությունը այժմ ամեն կերպ իր արյունոտ թաթերով ջուրը պղտորում է, որպեսզի ղարաբաղյան հիմնահարցը չլուծվի, և Ադրբեջանը Նախիջևանի օրինակով կուլ տա նաև Արցախը: Դա նշանակում է՝ նորից սեղմել քրիստոնեական աշխարհի շրջանակները, իսկ իսլամականը՝ ընդլայնել...

Արկադի, - Այո, քրիստոնեական ազդեցության ոլորտները սեղմվում են, նեղացվում, որովհետև մահմեդականներն ավելի են համախմբված, քան քրիստոնյաները, և աճում են երկրաչափական պրոգրեսիաներով...

Մանվել, - Հետևաբար, եթե մենք պատմությունից դաս չառնենք, նորից Եվրոպային ու Ամերիկային վիզ ծռենք, ապա Արցախից զրկվելու ենք: Եվ Հայաստանի վրա էլ կախվելու է լինե՞լ - չլինե՞լու դամոկլյան սուրը...

Աշոտ, - Ես դրանում համոզված եմ: Ահա թե ինչու թողել եմ իմ անդորր բնակարանը, եկել Արևասար, որ մասնակցեմ Արցախի ազատագրման, մեր հավատի պահպանման, քաղաքական անկախության համար մղվող վեհ կռվին...

Արկադի, - Այո, եթե հիմա էլ խաբվենք, հույսներս դնենք Եվրոպայի ու մեծ տերությունների վրա, Արցախը կորցնելու ենք, որովհետև նրանք գործնական ոչ մի բան չկատարելով՝ 1988-91 թվականներին Ադրբեջանի և ԽՍՀՄ-ի բարբարոս ուժերով շրջափակված Լեռնային Ղարաբաղը փրկելու համար, փաստորեն, չեն դատապարտել նրանց՝ փոքր ազգերին խեղդամահ անելու քաղաքականության համար թեև ամենուր շաղակրատում էին մարդու իրավունքների պաշտպանության մասին...

Արթուր, - Պատմությունից քաջ հայտնի է, որ քրիստոնյա Բյուզանդիան անընդհատ հալածելով իր հարևան Հայաստանին՝ վերացրել է հայոց Բագրատունյաց թագավորությունը, զրկվել իր հավատարիմ դաշնակցից և մարել իր արևը, թուլացրել իր սահմանները, որից հմտորեն օգտվեցին 11 - րդ դարում Անդրկովկաս ու Փոքր Ասիա ներխուժած թուրք - սելջուկները՝ կործանեցին վեհաշուք այդ երկիրը, շարժվեցին դեպի Եվրոպա, ավերեցին նրա բնակավայրերը, բարբարոսաբար հավատա-

փոխեցին իրենց հափշտակած տարածքների բնակիչներին *(պաուզա)*...

Մանվել, - Եթե քրիստոնյա երկրները հիմա էլ սատար չկանգնեն Ղարաբաղին ու Հայաստանին, ապա թուրքալեզու ցեղերը համախմբվելու են Անկարայի դրոշի տակ և Բյուզանդիայի օրինակով կործանելու են Ռուսաստանը և Ստամբուլից մինչև Բայկալ հզոր կայսրություն են ստեղծելու ու կենսագործելու են Եվրոպան, արար - աշխարհը թուրքացնելու իրենց փայփայած ծրագիրը...

Արկադի, - Ամեն ինչից երևում է, որ քրիստոնյա Եվրոպան այդ վանգը չի զգում, որովհետև դեռ պարում է Թուրքիայի նվագի տակ: Ինքներդ դատեցեք՝ աշխարհը նպաստել է Բեռլինի ցեմենտակուռ պատի քանդմանը, երկու Գերմանիայի վերամիավորմանը, բայց Լաչինի արհեստական պատը չեն քանդում, որ միավորվեն խարդախ պետությունների քաղաքական խաղերով իրարից անջատված երկու Հայաստանը:

Արթուր, - Մի այլ տարօրինակություն ևս՝ ԽՍՀՄ-ի ու Հարավսլավիայի և այլ երկրների տերիտորիալ ամբողջությունից մեր օրերում մի շարք ժողովուրդներ են անջատվել, անկախ հանրապետություններ հռչակվել, բայց Ադրբեջանի և Թուրքիայի տերիտորիալ ամբողջությունն անձեռնմխելի են: Հետևաբար նրանց կազմից Լեռնային Ղարաբաղը և մաքառող Քրդստանը իրավունք չունեն ինքնորոշվելու, անկախ պետություններ հռչակվելու...

Արկադի, - Աշխարհը այս հարցերում մեզ չի հասկանում, քանի որ Թուրքիան և հիմա էլ նրա սիմին խփող Ադրբեջանը միլիարդներ են ծախսում նրան ապակողմնորոշելու և կաշառելու համար: Այդպիսի պայմաններում, երբ թուրքական ոսկին դեռ կուրացնում է աշխարհի քաղաքական ու պետական գործիչներին, նրանց գլուխները թմրեցնում, մեզնից զավթած հողերը, մեր Արցախը մենք պետք է ազատագրենք, այլապես ազերիներն այս խառը հանգամանքներում կբնաջնջեն նրա ամբողջ բնակչությանը, ինչպես Եվրոպայի աչքերի առաջ Թուրքիան բնաջնջել է Փոքր Ասիայի բոլոր քրիստոնյա բնիկ ժողովուրդներին, իսկ 15 - 23 թվականներին էլ սրի է քաշել երկու միլիոն հայերի *(պաուզա)*...

Սակայն, Աշոտ, հաշվի առնելով, որ դու Բաբունցների միակ արու զավակն ես, քեզ ազատում եմ հայրենի գյուղի ազատագրման կռվից:

Աշոտ, - Ես անհաշտ եմ այն մարդանց նկատմամբ, որոնց խոսքի և գործի մեջ հակասություն է լինում: Ինձ համար ամենից ատելի բանը կեղծ հայրենասիրությունն է: Հայոց տունը քանդվել է նաև այն բանի համար, որ շատ - շատերը հայրենասիրական կրքոտ ճառեր արտասանելով հանդերձ՝ ազգի շահերն անխնա ոտնահարում էին, իրենց գրպանի, փորի շահերն ատամներով պաշտպանում: Մեր մեջ, ցավոք, դեռ կան այնպիսի մարդիկ, որոնց աստվածը, կուռքը ոչ թե հայրենիքն է, այլ անձնական շահը, դրամը, գեղեցիկ կինը, օգուտը... Ղարաբաղյան դեպքերի կապակցությամբ շատերն էին տրիբուն բարձրանում, փայլուն ճառեր արտասանում: Սակայն հիմա, երբ վճռվում է Արցախի կենաց ու մահու խնդիրը, խուսափում են նրա ազատագրական մարտերին մասնակցելուց և թաքնվում են կանանց թիկունքներում: Ահա թե ինչու ես համամիտ չեմ իմ մասին ձեր որոշմանը, թեկուզ Բաբունցների միակ արու շառավիղն եմ:

Լուսիկ, - Ապրես, որդիս, որ այդպիսի հավատամք ունես: Անտարակույս, հայրենիքի ազատագրումը բարձր է ամեն մի սրբությունից, շահից:

Արթուր, - Մայրիկ, ազգային - ազատագրական կռիվներն ուղեկցվում են զոհերով: Աստված ձեր որդուն պահի, բայց կռիվներն իրենց անողոք օրենքներն ունեն...

Լուսիկ, - Գիտեմ: Աշոտը իր ճակատագրից չի խուսափի: Եթե մենք ազգի համար ճակատագրական, կենաց ու մահու օրերին մեր զինապարտ զավակների ապահովության մասին միայն մտածենք, նրանց տաք անկյուններում թաքցնենք, հավիտյան կզրկվենք հայրենիքից:

Ցավոք, որոշ ծնողներ, որոնք ազգի հաշվին ոսկի ու մարջան են կուտակել, փոխանակ մեր հողը ազերիների ներխուժումից պաշտպանելու, իրենց զինապարտ զավակներին թաքցնում

են խոր թիկունքում, իրենք էլ իրենց հարստությունը ժողովում, ճողոպրում են Ռուսաստան, Ամերիկա...

Աշոտ, - Գուցե անցյալում էլ մեր նախնիների մեջ այդպիսի մարդիկ են եղել, - չգիտե՛մ, չեմ վիճում, - որ կորցրել ենք հզոր Հայաստանը, մի երկիր, որ Պարսկաստանի, Հռոմի նման տոն էր տալիս անտիկ Արևելքի քաղաքականությանը: Եվ այդ հզոր երկիրը, որ իր տարածքից հետ էր շպրտում հռոմեական անպարտ լեգեոններին, Պարսկաստանին փրկում քուշանների վայրի արշավանքներից, դարերի ընթացքում հոշոտել են, ծվատել *(աջ ափը բարձրացնելով և բութ ու միջին մատները շփելով իրար հետ)* մի բուռ դարձրել...

Լուսիկ, - Այդ մի բուռ հողում կոմունիստական ռեժիմը փլուզվելուց հետո ցանկանում ենք մեր կորսված փառքը վերականգնել, ժողովրդավարական հիմունքներով հանրապետություն հռչակել, սակայն հայակեր Թուրքիայի հետ դաշնակցած մեր դեմ զավթողական պատերազմ է սկսել նորաթուխ Ադրբեջանը, որ իսպառ բնաջնջի Արցախը: Իսկ աշխարհը լռում է, որովհետև մենք ո՛չ Քուվեյթի նման նավթ, ո՛չ էլ նավթամղիչ խողովակաշարեր ունենք: Այդպիսի պայմաններում մեզ համար որդի կորցնելը ցավալի է, իսկ հայրենիքից զրկվելը՝ մահ է *(պառզա):* Եթե այդ գիտակցությամբ չհամախմբվեն բոլոր հայերը, պարտադիր կարգով զենք չվերցնեն զինապարտ տղամարդիկ, անգամ կանայք, մենք դարձյալ կմնանք առանց հայրենիքի և ուզած - չուզած վիզ կծռենք օտարներին, պանդխտության ցուպ կվերցնենք և աշխարհի բավիղներում փշոտ կանհետանանք, ինչպես մի կաթիլ ջուրը օվկիանոսի ալիքների մեջ...

Արկադի, - Ձեր այդ համոզմունքները, մայրիկ, մեզ թևավորում են: Եթե մեր բոլոր մայրերը իրենց զավակներին այդ ոգով դաստիարակեն և ոչ թե հայրենիքին վտանգ սպառնալիս նրանց կանանց գրկում թաքցնեն, եթե նրանք շատ երեխաներ ծնեն և ոչ թե մեկ - երկուսով բավարարվեն, իսկ մեր հարևանների կանայք իրար հետ մրցում են 10 - 15 երեխա ծնելու և մեծացնելու համար, վրանաբնակների՝ մեր հողին աչք տնկած արդի ժառանգները հազիվ թե մեր դեմ զենք բարձրացնեն...

Լուսիկ, - Ասելու բաներ շատ կան, որդիներ, բայց չեմ ուզում ձեր ժամանակը խլել: Մեր գյուղն ազատագրելուց հետո նորից կհանդիպենք *(դառնալով որդուն).* Աշոտ, ես համոզված եմ, որ քո խոսքի ու գործի միջև խզում չի լինի մեզ համար ճակատագրական այս օրերին:

Աշոտ, - Եթե անգամ սուր ճոճվի իմ գլխին, ես չեմ շեղվի իմ համոզմունքից, մայրիկ:

Լուսիկ, - Թող Աստված մեր արդար գործում մեզ պահապան լինի *(համբուրում է հրամանատարի՝ Մանվելի, Աշոտի, Արթուրի ճակատները, գնում):*

Տեսարան 4

Արևասարի բարձունքում որոտում են թնդանոթները: Գնդապետ Արկադի Տեր - Թադեւոսյանը մարտից առաջ գոտեպնդում է իր սաներին: Դաշտային հրամանատար Մանվել Գրիգորյանը, Հադրութի ազատամարտիկների հրամանատար Արթուր Աղաբեկյանը ուշադիր լսում են հրամանատարին:

Արկադի, - Եկել է ժամը ազատաբաղձ՝ դեպի մարտ, քաջ կորյուններ: Կրկնում եմ, առաջինը պետք է ազատագրենք Տող գյուղը՝ Խամսայի Դիզակի մելիքության կենտրոնը: Նա պիտի դառնա Արցախը ազերիների լծից ազատագրման ծիծեռնակը: Երկրորդը պիտի ազատագրենք նրա աջ թևի Հողեր գյուղը: Մենք ագրեսորներ չենք և երբեք չվախենանք, եթե թշնամին և նրա կաշառված արբանյակները մեզ ագրեսոր հորջորջեն: Մենք ընդամենը հայակեր թշնամուց, որի իշխող կուսակցության միտինգներն ավարտվում են «Մա՜հ հայերին» ֆաշիստական կոչերով, ազատագրում ենք մեր հարազատներին: Նորից եմ կրկնում, թող մեր թշնամիների միջոցով աշխարհում բարձրացված հակահայկական աղմուկը ձեզ չշեղի ազատագրական սուրբ պայքարից...

Արթուր, - Տողում դարաբաղյան շարժման տարիներին Ուզբեկստանից վերաբնակեցված մսխեթի թուրքերն էլ հեռուստացույցի ծրագրերով արար աշխարհով մեկ գոռում են, թե այդ գյու-

ղը իրենց պապերի գյուղն է, իսկ Ղարաբաղը՝ իրենց հայրենի հողը:

Արկադի, - Այդ երկու գյուղերը հենակետեր դարձնելով՝ Բաքուն հալածում է սուրբ Դիզափայտի շուրջը ահա 1,5 - 2 հազարամյակ բոլորած հայկական բնակավայրին, փակում Արցախի հարավը մարզկենտրոնին կապող ճանապարհը: Եթե անհապաղ չազատագրենք այդ գյուղերը, Դիզակի շրջանին կործանում է սպասվում, մանավանդ որ Մութալիբով - Պոլյանիչկո - Ասադով եռյակին հաջողվել է խորհրդային բանակի և իրենց օմոնականների ուժերով բռնագաղթել նրա հարավ - արևմտյան տարածքի 14 գյուղերի բնակչությանը:

Մանվել, - Եթե թշնամուն հաջողվի մարզը զրկել հարավից, ապա կզրկի նաև հյուսիսից, հետևաբար նրա կենտրոնի վրա կկախվի լինել - չլինելու սուրը: Ուրեմն արյան գնով էլ պիտի ազատագրենք մարզի հարավը:

Արկադի, - Արդար այդ կռվում ձեզ հաջողություն եմ մաղթում: Թող Մելիք Ավանի, Անդրանիկի, Նժդեհի, Գայի, Բաղրամյանի, Նելսոն Ստեփանյանի, մարշալ Խամփերյանի, մեր մյուս զորավարների ու քաջերի սրերը մեզ նեցուկ լինեն: Դե, արծիվներ, իմ հետևից *(Արկադին, ավտոմատը վեր բարձրացնելով՝ նետվում է առաջ: Մանվելը, Արթուրը և ազատամարտիկները հետևում են նրան):*

Մանվել *(ոգևորված),* - Միայն հաղթանակ: Արյուն կթափենք, բայց չենք թողնի, որ մեր Արցախը մնա թշնամու ձեռքին: Այն ազգը, որ ընդունակ չէ ազատագրելու իր հայրենիքը, դատապարտված է մահվան, որովհետև օտար դրոշի տակ գոյատևելով՝ դանդաղ ուծանում է, մահանում, կորչում... *(Բոլոր ազատամարտիկները թողնում են բեմը, հրամանատարի հետևից մտնում դահլիճ, հանդիսատեսների ծափերի ներքո մեկնում կռիվ):*

Վարագույրը դանդաղ փակվում է,
4 - 5 րոպեից հետո բացվում:

Տեսարան 5

Լեռներում ծագում է օրը: Տողի և Հողերի ազատագրման մեկնած ինքնապաշտպանները դեռ չեն վերադարձել: Արևասարը անհանգիստ է: Տխուր խշշում է անտառը: Բեմ է մտնում հերթապահ զինվորը և օդային հեռախոսով զեկուցում:

Հ. զինվոր *(անհանգիստ, տխուր, ազդեցիկ),* - Ազատամարտիկները դեռ չեն վերադարձել: Ստույգ ոչ - մի բան չեմ կարող ասել: Կրակոցները դեռ չեն դադարել:

Տեսարան 6

Գնդապետ Արկադի Տեր - Թադեւոսյանի գլխավորությամբ բեմ են մտնում հաղթանակած ազատամարտիկները:

Արկադի, - Քաջ ազատամարտիկներ, Տողի և Հողերի ազատագրման փայլուն հաղթանակի համար շնորհավորում եմ ձեզ: Ուրախ եմ, որ ձեր երակներում բաբախում է մեր աննկուն նախնիների, անձնուրաց ֆիդայիների, փառապանծ զորահրամանատարների արյունը: Տողի հորիզոնում արդեն ճախրում են ծիծեռնակները: Նրանք նոր, ազատ գարուն պիտի բերեն Արցախ աշխարհին:

Արթուր, - Երբ այլևս զիջելու տեղ չկա, ամբողջ ազգը պետք է կռվի, այլապես նրան կբնաջնջեն, նրա հայրենիքն էլ կուլ կտան, ինչպես կուլ են տվել Բաբելոնը, Ասորեստանը, Բյուզանդիան, մեր Արևմտյան Հայաստանը...

Արկադի, - Հարկավ, բոլոր հայերը պետք է ոտքի ելնեն, Արցախում, Ավարայրի, Սարդարապատի պես մի հաղթանակ կռեն, որովհետև եթե կորցնենք Արցախը, ինչպես մարգարեաբար գրել է ռուս տաղանդավոր բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկին, Հայաստանն էլ ենք կորցնելու: Ճիշտ այնպես, ինչպես թուրքերը մեզնից նախ բռնագրավել են Դաշտային և Լեռնային Կիլիկիան, ապա ճանապարհ բացել և լրիվ բնաջնջել Արևմտյան Հայաստանը, այնպես էլ հիմա ազերիները ուզում են մեզնից գրավել Լեռնային Ղարաբաղը, իսկ Դաշտային Ղարաբաղը բոլշևիկնե-

ը նրանց նվեր են տվել, որպեսզի այնուհետև բնաջնջեն ողջ Հայաստանը:

Մանվել, - Դարերի ընթացքում մեր հայրենիքը թշնամիները գազանաբար բզկտել են: Այժմ իրավունք չունենք մի թիզ հող էլ զիջելու նրանց, այո, հրամանատար, այժմ Հայաստանի լինել - չլինելու հարցն է վճռվում:

Հերթապահ զինվոր, - Պարոն գնդապետ, շտաբն անհանգիստ է: Ի՞նչ հաղորդեմ նրան:

Արկադի *(դիմելով Արթուրին),* - Արթուր, կորյուն իմ քաջ, զեկուցիր շտաբին:

Արթուր *(օդային հեռախոսով),* - Մեր երկու գյուղերի ազատագրման մարտերը համառ են եղել, անզիջում: Երեքժամյա փոխհրաձգությունից հետո մեր ազատամարտիկները ճեղքել են ազերիների պաշտպանության գիծը: Չդիմանալով մեր ճնշմանը՝ նրանք մեծ կորուստներ տալով և ռազմական տեխնիկան թողնելով մարտադաշտում, ճողոպրել են դեպի Ֆիզուլու շրջկենտրոն: Տող գյուղի համար թշնամին ավելի կատաղի է դիմադրել: Մենք թշնամու գրոհայիններին աքցանի մեջ ենք գցել. գլխովին կործանումից փրկվելու համար նրանք փախել են մեր կողմից բացված մարդասիրական միջանցքով: Առավոտյան դեմ Դիզակի մելիքության կենտրոնի կանգուն բերդի վրա ծածանվել է հայոց եռագույն դրոշը: Երկու մարտերում մի զոհ ենք տվել: Չորս հոգի վիրավորվել են: Մոսկվացի Աշոտ Բաբունցի ճակատագիրը դեռ անհայտ է: Նա անհետացել է Հողեր գյուղի գերեզմանատան շրջանում: Հետախույզները նրան որոնում են:

Տեսարան 7.

Աշոտ Բաբունցը բեմ է բերում ձեռքերը կապած մի հաղթանդամ սպայի:

Մանվել *(ուրախ գրկելով Աշոտին),* - Աշոտ, քաջ իմ արծիվ, ես էլ կարծում եմ, թե մեր անտառներում մոլորվել ես:

Աշոտ *(հուզված),* - Ազերիները իմ հայրենի Հողեր գյուղի գերեզմանատունը ևս քարուքանդ են արել: Ոսկի որոնելու մարմանջով նրանք հանգուցյալների կմախքները հանել են հողից, նրանց ոսկե ատամները պոկել: Այժմ այնտեղ տասնյակ ջարդված - ընկած գանգեր կան: Այդ պատկերները իմ ոսկորների մեջ սարսուռ են առաջացրել: Մի պահ ինձ կորցրել եմ, իսկ տապանաքարերի հետևում դարան մտած այս սպան, ատրճանակը վեր պարզած՝ գոռգոռում էր իր գրոհայինների վրա, որպեսզի փակի նրանց փախուստի ուղին: Զգալով, որ իրեն չեն լսում, նա ցանկացավ իր ողջ զայրույթը ինձ վրա թափել: Մեր պապերի տապանաքարերը ինձ փրկել են նրա գնդակներից: Հետո ինձ հաջողվեց նրան գերել: Ահա նրա փաստաթղթերը, պարոն գնդապետ *(մեկնում է հրամանատարին)*:

Արկադի *(նայելով փաստաթղթերին),* - Աշոտ, դու թուրքական բարձրաստիճան սպա ես գերել: Այդ խիզախության համար շնորհակալություն եմ հայտնում:

Մանվել *(ուրախացած),* - Աշոտը իզուր չէ Մոսկվայից Արցախ եկել...

Արկադի *(դառնալով թուրք սպային),* - Պարոն գնդապետ, ի՞նչ նպատակով ես հյուրընկալվել մեր լեռնաշխարհում...

Թ. սպա *(շողոքորթելով),* - Խորհրդային բանակի ձեր ղեկավարած գնդերը Աֆղանստանում հալածում էին մեր մուսուլմաններին, պարոն գնդապետ, որի համար դու մոխրագույն գայլի անուն ես վաստակել: Անկարան էլ գիտի այդ մասին: Հուսով եմ, որ ինձ չեք հալածի *(պառկում)*: Այնուամենայնիվ, ես թուրքական անպարտ բանակի սպա եմ, ուստի ձեռքերս ազատեցեք, ապա հարցաքննեցեք...

Արկադի *(ազատելով գերու ձեռքերը),* - Թուրքական բանակը բազմիցս խայտառակաբար պարտվել է ռուսական բանակին և նաև հայ կամավորականներին՝ 1918 թվականին Սարդարապատում ձեր բանակի պարտության դասերը չպետք է մոռանալ:

Թ. սպա, - Եթե թուրքական բանակը անցյալում պարտության դառնություն է ճաշակել, բայց թուրքական դիվանագիտությունը երբեք չի պարտվել *(պառկում)*: Թուրքիան թեև 18 թվականին Սարդարապատում, հիրավի, պարտվել է, բայց ձեր Ղարսը,

նրան հարող մարզերը, ձեր սուրբ սար Արարատը բռնագրավել է, ձեր Նախիջևանն ու Ղարաբաղը նվիրել է Ադրբեջանին: Դատեցեք ինքներդ՝ 18 թվականին հայե՞րն են պարտվել, թե՞ թուրքերը... Ադրբեջանա - արցախյան այս պատերազմում էլ դեռ ազերիներն են շահում: Նրանք ավելի քան 350 - 400 հազար հայերի բռնատեղահան են արել Ադրբեջանի տարածքում գտնվող իրենց բնակավայրերից, նրանց ունեցվածքը կողոպտել, թալանել: Սումգայիթում, Գանձակում, Բաքվում և այլ բնակավայրերում հազարավոր հայերի արյուն է հեղվել: Հայերն էլ Հայաստանից ընդամենը 160 հազար ադրբեջանցիների խաղաղ ճանապարհել են Ադրբեջան: Ընդ որում Բաքուն նրանց կազմակերպված փոխադրել է իրենց վաքանը: Իսկ Ադրբեջանի հայերին, որոնք հիմնականում ղարաբաղցիներ են, թույլ չեն տվել որ վերադառնան Ղարաբաղ, Հայաստան: Նրանք ցրվել են աշխարհով մեկ, իսկ հայրենիքից, հարազատ օջախից կտրված մարդը որտեղ էլ լինի, արմատից կտրված ծառի պես չորանում է...

Արկադի, - Ադրբեջանա - արցախյան պատերազմը դեռ շարունակվում է: Նրա վերջնական արդյունքներով կկշռենք, թե ով ի՞նչ է շահել: Թուրքական դիվանագիտության անպարտելիության առասպելը կաշառք տված ոսկու տոպրակներով է չափվում: Սակայն պատմության գնահատականը թողնենք մասնագետներին: Դառնանք գործնականին՝ ինչո՞ւ հատկապես Հողեր գյուղն ես բերել քո պատրաստած վաշտերը...

Թ, սպա, - Գիտեմ, եթե ճշմարտությունը չասեմ, հոգիս հանելու ես: Իսկ ճշմարտությունն այն է, որ Հողեր գյուղը իմ հայր Վալի Գուլուզադեն, օգտվելով ստալինիզմից, 37 թվականին ԼՂԻ Մարզից պոկել է ու միացրել ադրբեջանական շրջանին: Երբ սկսվել է խորհրդա-գերմանական պատերազմը, նա ինձ ասել է. «Որդի, եկել է Թուրքիայի աստեղային ժամը: Նա այս անգամ Ռուսիայից խլելու է Անդրկովկասը և Միջին Ասիան: Դու Նախիջևանով ծլկիր Թուրքիա: Ես իմ մուսավաթ ընկերներին նամակ կգրեմ, նրանք քեզ կօգնեն, որպեսզի այնտեղ ռազմական կրթություն ստանաս, վերադառնաս Ադրբեջան, որ տիրություն անես Հողեր գյուղում: Նրա արգավանդ դաշտերը, զմրուխտ անտառները, վճիտ աղբյուրները, բերրի այգիները հնարավորություն կտան, որ դու խան հորջորջվես, հուրի-փերի կանայք պահես, թուրքերին շատացնես, որ արար աշխարհին տիրանան...»: Ավաղ, Հիտլերը պարտվեց: Թուրքիայի երազանքը չկատարվեց՝ Անդրկովկասը և Միջին Ասիան դարձյալ մնացին Ռուսիայի ձեռքին: Իսկ այժմ կարմիր Ռուսիան մեր ազիզ Գորբաչովի ձեռքով քանդվել է և Թուրքիան առանց կրակոցի ձեռքը դրել է և՛ Անդրկովկասի, և՛ Միջին Ասիայի վրա: Ռուսական վայրագ արջը ընկել է թուրքական խորամանկ աղվեսի ոտքերի տակ: Ես էլ շտապել եմ իմ վաքանը և այստեղ բերել իմ վաշտերը: Սակայն ձեր գրոհայինները նրանց ջարդեցին: Ես անզոր եղա կանգնեցնել նրանց նահանջը: Մի խոսքով, 37 թվականին Վալի Գուլուզադեն հաղթել է, 92 թվականին՝ Սուլդուզ Գուլուզադեն խայտառակաբար պարտվել...

Արկադի, - Համոզված եմ, որ Տողի և Հողերի նման իմ ազատամարտիկները ողջ Արցախը կազատագրեն...

Թ. սպա, - Մի պարծենա, պարոն գնդապետ: Չնայած մեր այս պարտությանը, ազերիները շուտով Լեռնային Ղարաբաղը կմաքրեն հայ ապստամբներից և նրա ինքնորոշման հարցը այնպես կլուծեն, ինչպես թուրքիան է լուծել Արևմտյան Հայաստանի ինքնորոշման հարցը 15 - 23 թվականներին...

Արթուր, - Պարոն գնդապետ, դու շատ սանձարձակ ես խոսում: Մի մոռանա, որ աշխարհը փոխվել է: Հայերն էլ եկել են այն գիտակցության, որ իրենցից զավթած տարածքները միայն զենքով ու կուռ միասնությամբ կարելի է ազատագրել և ոչ թե Եվրոպայի դռները ծեծելով...

Թ. սպա, - Աշխարհը ինչքան էլ փոխվի, Չավուշի ժառանգ, նրանից պրոբլեմների արդար լուծում մի սպասեք, իսկ Թուրքիան չի հրաժարվի թուրքալեզու ժողովուրդներին ու ցեղերին իր դրոշի տակ համախմբելու ծրագրից: Այդ նպատակին հասնելու համար մենք ոչ մի բան չենք խնայում: Այս անգամ մեզ չի հաջողվել ձեր միասնության մեջ սեպ խրել, բայց չեմ կասկածում՝

ձեր մեջ նորից Մելիք - Շահնազարներ կգտնենք և նրանց ձեռքերով նժարը դեպի մեր կողմը կթեքենք:

Արկադի, - Իսկ եթե չհաջողվի՞...

Թ, սպա, - Թեկուզ ռազմական գաղտնիք եմ բացում՝ Շուշին շուտով կբնաջնջի ողջ ԼեռնայինՂարաբաղը...

Արկադի *(սառնասրտորեն),* - Այդպես բարբաջելու ի՞նչ հիմքեր ունես, գնդապետ:

Թ. սպա, - ԽՍՀՄ-ի ՆԳՆ զինվորների օգնությամբ, Շուշիում կուտակած ռազմական տեխնիկայով ազերիների ազգային բանակի ընտիր զորամասերը շուտով թուրքավարի կլուծեն Ղարաբաղի պրոբլեմը: Այս գաղտնիքը հաղորդելով, կարծում եմ ինձ կազատեք գերությունից:

Արկադի, - Կարող եմ այս րոպեին քեզ ազատել, բայց ցանկալի է, որ մենք հանդիպենք նաև Շուշիի մարտից հետո: Համոզված եմ, քեզ երկար սպասել չեմ տա *(դառնալով հերթապահ զինվորին):* Այս սպային սպայավայել պայմաններում պահում եք մինչև մեր երկրորդ հանդիպումը *(հ. զինվորը թուրք սպային տանում է):*

Վարագույրը փակվում է, 2 - 3 րոպեից հետո բացվում:

Տեսարան 8

Բարձունք՝ Շուշիի և Լաչինի ֆոնի վրա: Ռեժիսորը խոշոր պլանով ցույց է տալիս մի շարք տեսապատկերներ Շուշիի ազատագրման ու Լաչինի պատի ճեղքման ճակատամարտերից:

Հնչում է ֆիդայական երաժշտություն: Ազատամարտիկները երգում են: Հեռվում թնդում են թնդանոթները: Բեմ են մտնում Արկադին, Սամվել Բաբայանը և մի խումբ ազատամարտիկներ:

Արկադի *(դիմելով ազատամարտիկներին),* - Շնորհավորում եմ փայլուն հաղթանակի համար: 1992 թվականի մայիսի 9 - ը երբեք չպետք է խամրի հայերի հիշողության մեջ: Վերջապես, մեր փառապանծ Շուշին, որը խաշնարածների ցեղապետ Փանահ խանը Մելիք - Շահնազարի դավաճանությամբ խլել է Խամսայի մելիքություններից, ջլատել նրանց միասնությունը, ազատագրված է: Լաչինի պատը ճեղքել ենք: Ղարաբաղն ազատվել է չորսամյա խորհրդա - ադրբեջանական վայրենի շրջափակումից: Ես համոզված եմ, որ այս փայլուն ճակատամարտը հնարավորություն կտա, որպեսզի ազատագրենք ամբողջ Արցախը...

Տեսարան 9.

Հ. զինվորը բեմ է բերում թուրք գնդապետին:

Արկադի *(դիմելով թուրք սպային),* - Պարոն գնդապետ, Շուշիի հետ կապված քո պատրանքները չիրականացան: Շուշին ազատագրել ենք, Լաչինի պատը՝ ճեղքել, մայր Հայաստանին միացել:

Թ. սպա *(անակնկալի գալով),* - Երևի հայերի այդ ուրախությունը դառնությամբ վերջանա: Մենք հայ դավաճանների օգնությամբ, կաշառքով Շուշին և Լաչինը նորից կվերադարձնենք, անկասկած, այդ գործում մեզ կօգնեն նաև ձեր շահամոլները, որոնք ընդունակ են անգամ ձեր Սևանա ծովը թունավորելու, Երևանը հրկիզելու՝ միայն թե ոսկու տոպրակներ կուտակեն, Ռուսիա ու Ամերիկա ճողոպրեն, իսկ Հայաստանը ժառանգեն եզդիներին...

Սամվել, - Մենք արդեն սթափվել ենք, քանի որ զիջելու տեղ չունենք: Մենք այլևս իրավունք չունենք խաբվելու թե՛ օտարների, թե՛ մեր կուսակցական լիդերների խոստումներից, այլապես մի բուռ Հայաստանն էլ կկորցնենք: Մենք ծովի պես ինքնամաքրման ճանապարհով կազատվենք մեր խոցերից: Ուրեմն՝ հազիվ թե մեր մեջ այսուհետև օտարամոլ դավաճաններ ծնվեն...

Թուրք սպա, - Լավ երազ է, եթե կատարվի: Անկարայում ես հաճախում էի ձեր թարիխը ուսումնասիրող խմբակ: Գիտեմ, դեռևս 5 - րդ դարում ձեր մեծ պատմիչ Մովսես Միրզան իր պատմության «Ողբ» բաժնում բոցաշունչ խոսք է ասել ազգին՝ ինքնամաքրման համար, բայց ձեր մի ականջով մտել է, մյուսով դուրս եկել, որովհետև անկազմակերպ ժողովուրդ եք: Առաջ-

նորդ ընտրելու, նրա կարգադրությունը կատարելու համար անընդհատ վիճում, կռվում եք իրար հետ: Մինչդեռ թուրքերը իրենց ցանկացած առաջնորդի կամքը անթերի կատարում են, հետևաբար՝ նրանք ավելի կարգապահ, ավելի կազմակերպված ժողովուրդ են, քան դուք: Եթե ասեմ՝ հայերը ընդունակ չեն ինքնամաքրման, չնեղանաք: Կան ազգեր, որոնք թարիխի թատերաբեմ են ելել ձեզնից շատ ուշ, բայց իրենց պետությունը ունեն, իսկ հայերը իրենց թագավորներին անընդհատ մատնել են, հալածել, հայոց պետությունը կործանել: Հիմա էլ ազիզ Գորբաչովի ձեռքերով ավերված ԽՍՀՄ-ի փլատակների վրա փորձում եք վերականգնել ձեր պետությունը, սակայն փողի, անձնական շահի, պաշտոնի, գեղեցիկ կնոջ, թալանի, կողոպուտի համար եք կռվում, իրար գլուխ ջարդում, հանրապետության եղած - չեղած հարստությունը Իրան - Թուրան փոխադրում, միայն թե դոլարներ վաստակեք, իսկ ձեր ժողովրդին էլ չոր հացի կարոտ պահեք... Այս ճշմարտությունն ասելու համար, պարոն գնդապետ, պարտավոր եք ինձ ազատել գերությունից:

Արկադի, - Հայերը ձեզ պես գերիներին ոչ խոշտանգում են, ոչ հրկիզում, այլ քաղաքակիրթ ձևով նրանց ազատում են գերությունից, բայց քեզ կազատեմ մի պայմանով:

Թ. սպա, - Ի՞նչ պայմանով:

Արկադի, - Դու՝ իրենց լիդերների կողմից մոլորեցված ազգերի ժողովրդին պետք է սթափեցնես, բացատրես, որ հայերի հողերի, հուշարձանների հափշտակման, պատմիչների ու գրողների, հայկական ճարտարապետական կոթողների ավերման ու ալբանականացման բունյաթովյան փորձերը հաջողությամբ չեն պսակվեու: Ուստի նրանք պետք է անհաշտ լինեն իրենց բունյաթովների, ախունդովների, էլչիբեյների, ալիևների պես գործիչների նկատմամբ...

Սամվել, - Հայերը և ազերի թուրքերը այսուհետև էլ պետք է ապրեն կողք կողքի: Ովքեր այդ երկու ժողովրդի միջև երկպառակության հունդեր են սերմանում հանուն թուրքալեզու ազգերին մի կայսրության մեջ համախմբելու շովինիստական գաղափարախոսության հաղթանակի համար, այնպիսի անփառունակ վախճան կունենան, ինչպիսին ունեցել են կոմունիզմի համաշխարհային հաղթանակի հնարավորությունը շաղակրատող երազամոլները...

Թ. սպա *(միանգամայն այլ տոնով)*, - Չեմ կարող ձեր այդ մտքերը չկիսել, պարոններ: Սակայն աշխարհը ևս մեղավոր է, որ չի դատապարտում թուրքական նացիզմը, պանթուրքիզմը: Բանն այն է, որ թուրքական ոսկին կուրացնում է աշխարհի աչքերը, թմրացնում նրա գլուխը: Մինչև որ այդ ոսկուն գերի՝ աշխարհի պետական և հասարակական գործիչները պատասխան չտան պատմության դատարանի առաջ, թուրքական նացիզմը, պանթուրքիզմը նոր պայմաններում ավելի են փթթելու, 15 - 23 թվականների հայերի ցեղասպանությունը չի ճանաչվելու, մուսուլմանական և քրիստոնեական աշխարհում էլ արյունահեղությունները կրկնվելու են հաճախակի: Այնուամենայնիվ, ձեր այդ մտքերը կհասցնեմ ազերի ժողովրդին: Այո, նրան պետք է սթափեցնել...

Արկադի *(դիմելով հ. զինվորին)*, - Տար գնդապետին և փոխանակիր հայ պատանդի հետ:

(հ. զինվորը թուրք սպային տանում է)

Տեսարան 10.

Աջ դռնից բեմ է մտնում Լուսիկը:

Լուսիկ, - Ողջույն, մեր քաջ կորյուններին: Շուշիի ազատագրման, Լաչինի պատի ճեղքման համար հայ ժողովուրդը ձեզ միշտ երախտապարտ կլինի: Ես հայ կանանց անունից օրհնում եմ այդ հաղթանակը:

Սամվել, - Ես համոզված եմ, տիկին Լուսիկ, որ մեր գալիք սերունդները, իրենց կուռ միասնությամբ, մրրկաշունչ բանակով, Շուշիի օրինակով կազատագրեն նաև մեր Վանն ու Նախիջևանը, Արարատն ու Եփրատը...

Լուսիկ, - Մեր ժողովրդի այդ երազը, Սամվել, անշուշտ, հաջողությամբ կկատարվի, եթե մենք անընդհատ կատարելագործենք

Տունը Հայոց, այն Հիսուսի Սիրո անսասան հիմքերի վրա դնենք, շարունակ ամրապնդենք մեր պետությունը, որպեսզի նա հավերժական լույսի ջահը վեր կարկառի ու Նաիրի երկիր հրավիրի աշխարհասփյուռ իր զավակներին, այլապես նրանք օտար, անսիրտ միջավայրում կմոռանան պոետի բառերով ասած՝ քաղցրահամ մեր լեզուն և ինչպես մի կաթիլ ջուրը՝ կանհետանան աշխարհի անհանգիստ օվկիանոսների մարդակուլ ալիքների մեջ...

Արկադի, - Տիկին Լուսիկ, կարծում եմ, որ մեր ժողովուրդը պատմության դեռ չսպիացած հարվածներից ու դառը փորձից իմաստուն հետևություն կանի և ձեր մայրական սրտից բխող այդ բարեմաղթանքը սիրով կկատարի, որ մենք նոր առողջ արմատներ ձգենք մեր դժբախտ նախնիների արյամբ ողողված հողում հայոց և արևի տակ հարատևենք մեր վեհափառ Մասիս սարի նման...

(Հնչում են ֆիդայական ու զինվորական երաժշտություն ու երգեր: Լուսիկը, Արկադին, Սամվելը, Արթուրը, Մանվելը, Աշոտը, ազատամարտիկները և դահլիճը հոտնկայս երգում են.

Հայեր, աշխարհից մի սպասեք արդարություն,
Քանզի դեռ կա լոկ ոսկու թագավորություն...
Միացեք, Չարենցի պատգամը կատարեցեք,
Հայոց երկրի նոր ոսկեդարը կերտեցեք...

Վարագույրը դանդաղ իջնում է:

Վերջ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 5
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՐԶԻ ՀԱՂՈՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ
ՀԱՐԱՎ - ԱՐԵՎՄՏՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ 14 ԳՅՈՒՂԵՐԻ 1991 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍ - ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻ ԲՈՆԱԳԱՂԹԵՐԸ 9
ՈՐՊԵՍ ՆԱԽԱԲԱՆ 9
ԱՄՊԵՐԸ ԿՈՒՏԱԿՎՈՒՄ ԷԻՆ, ՓՈԹՈՐԻԿՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ԷՐ 19
ՉԱՐԱԲԱՍՏԻԿ 13 - Ը. ԱԳՈԱՎԻ ԱՆՀԱՆԳԻՍՏ ԿԱՆՉԸ 27
ՎԵՐՋՆԱԳԻՐ՝ ԴԻՄՈՒՄ ԳՐԵԼ Վ. ՊՈԼՅԱՆԻՉԿՈՅԻՆ. 35
ՄԱՐՇԱԼԸ ԳՆԴԱԿՈԾՎԱԾ Է, ՍՊԱՆԵՐԸ ԽՈՒՃԱՊԻ ԵՆ ՄԱՏՆՎԵԼՈՒ 45
ԳՅԱՂԱՅԻՑ ԲԵԿ ՉԻ ԼԻՆԻ 52
ՄՈՒԼՔԱՂԱՐԱՅԻ (ՋՐԱԲԵՐԴ) ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ 59
ԵՐԲ ԲԱՑԱԿԱՅՈՒՄ Է ԲՈՌՈՒՆՑՔԸ 64
ԿՀԱՐԱՏԵՎԵՆՔ ՄԻԱՅՆ ՀՈՂՈՒՄ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ 75
ԿԱՄՈՒՐՋ ԳՅՈՒՂԸ ՍԵՎ ՇՐՋԱՆԱԿԻ ՄԵՋ. 87
ՋՈՐԱՎԻԳ Է ԴԱՒՋԱՓԱՅՏ ԼԵՌԸ ՍՈՒՐԲ 93
ԹԵՐԹԵԼՈՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՕՐԱԳԻՐԸ 102
ՄԵՍՐՈՊԱՏԱՌ ԳԻՐԸ ՄԵՐ 111
ՍԱՀՄԱՆ՝ ՔԱՋԱՆՑ, ՋԵՆՔԸ ՅՈՒՐՅԱՆՑ 117
ՎԵՐՋԻՆ ՕՂԱԿԸ՝ԹՆԴԱՆՈԹՆԵՐԸ ՈՒՂՂՎԱԾ ԵՆ ՇՐՋԿԵՆՏՐՈՆԻՆ 127
ՋԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻ ԴԺՈՒՔԸ ԿԱՄ ԴՐԱՄ ՇՈՐԹԵԼՈՒ
ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴ 134
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՁԻՆՎՈՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՊԱՏՎԵՐՆԵՐ ԷԻՆ ԿԱՏԱՐՈՒՄ. 149
ՈՎՔԵ՞Ր ԷԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒՄ ԹԱԼԱՆՉԻՆԵՐԻՆ 155
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ 161
ՎԵՐՋԱԿԵՏԻՑ ԱՌԱՋ ԿԱՄ
ԱՌԱՋԻՆԸ ՀՅՈՒԾՎԱԾ ՕՂԱԿՆ Է ԿՏՐՎՈՒՄ 168
Հ. Գ 175
ԱՐՄԱՏՆԵՐԻ ԿԱՆՉԸ 183

ՀՐԱՆՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ, ԲՌՆԱԳԱՂԹԵՐ ՈՒ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ 1988-1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Պատվեր՝ 1640: Տպաքանակ՝ 300:

Տպագրված է «**Տիգրան Մեծ**» հրատարակչություն ՓԲԸ տպարանում